

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<b>ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ — ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ</b>	
Ս. ԶԱՏԿՈՒՄԱՆ ՊԱՏԳԱՍԸ՝ «Ամուր Պահենք Մեր Հաւատքը» .....	313
<b>ՀԱՅՐԱԽՕՍԱԿԱՆ</b>	
<b>ԹԱՄԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ — Յակոբ Պատրիարք Նալեան Բարոզգիրք</b>	
ի Վերայ Յայտնութեան Յօհաննու (Մատենադարան 2238) .....	318
<b>ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ</b>	
<b>ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՄԷԶԵԱՆ — Եկեղեցւոյ Պատմութիւն (Թրգմ.)</b> .....	326
<b>ԳԱՌՆԻԿ ԲՅՆՅ. ԳՈՅՈՒՆԵԱՆ — Աստուածաշունչ եւ Մշակոյթ</b> .....	329
<b>ՂԱԿՏ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ — Թուրք Ազգի եւ Ազգայնութեան Երկունքը</b> .....	338
<b>ԱՐԽԻԱՅԻՆ ՆԻԹԵՐ</b>	
<b>ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ — «Կիլիկիան»</b> .....	347
<b>ԽԱԶԻԿ ԲՅՆՅ. ԳՈՒՌԶԵԱՆ — Ս. Ծնունդը Քրիստոսի</b>	
Հրեշտակաց Երգը (Ղկ 2.14 = Ես 11) .....	349
<b>ՅԱԿՈՐ ԱՐՍԷՆԵԱՆ — Մահէն Անմահութիւն</b>	
Յուշագրութիւն Լորտ Մէյրսֆօն Որբանոցի (1920-1924) .....	359
<b>ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ</b>	
<b>ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹՃԵԱՆ — Ղատարկ Գերեզմանին Խորհուրդը</b> .....	363
<b>ՍԱԿԱՐ ԱԲՂ. ԱՇԳԱՐԵԱՆ — Ճանապարհորդութեան Հացը (Թրգմ.)</b> .....	365
<b>ՀԱՄԱԳՈՒՄԱՐ</b> .....	
*** — Գրողներու Համահայկական Գ. Համաժողովը	
Անթիլիասի Մայրավանքին մէջ .....	368
<b>ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Հայ Գրողը՝ Ճշմարտութեան Զահակիր</b> .....	395
*** — Հաղորդագրութիւն Գրողներու Համահայկական Գ. Համաժողովի .....	402
<b>ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ — Հայ Գրականութեան Ծաղկազարդը</b> .....	405
<b>ՇԱՀԱՆՂՈՒԽՏ — Գրողներու Գ. Համաժողովէն Ետք Անդրադարձ</b> .....	407
<b>ՅԱԿՈՐ ՊԱԼԵԱՆ — Գրողներու Համահայկական Ժողովի Լուսանցքին Վրայ</b> .....	413
<b>ՅԱԿՈՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ — Մշակութային Աննախընթաց Երեւոյթ մը</b> .....	415
*** — Տպաւորութիւններ Վկայութիւններ ... ..	417
<b>ՀԱՐՅԱԶՐՈՅՑ</b> .....	441
<b>ՏՕՆԱԿԱՆ</b> .....	451
<b>ԼՈՒՐԵՐ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ</b> .....	469
<b>ՀԵՅՈՍ</b> .....	471
<b>ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ</b> .....	473

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.....	474
ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ.....	476
ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ.....	478
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆՈՒԷՐ ՍՏԱՅԱԾ ԳԻՐՔԵՐ.....	481
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ.....	486

ՓՈՒՍԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

## ԱՄՈՒՐ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ՀԱԲԱՏՔԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Քրիստոսի Հրաշափառ Յարութեան Տօնին առիթով Հայրապետական Պատգամ ուղղեց մեր ժողովուրդի գառակներուն, զոր փոխան խմբագրականի կը մատուցենք մեր ընթերցողներուն:

«Ամո՛ւր պահենք մեր դաւանած հաւաքքը» (Եբր. 4. 14): Բոլոր ժամանակներու Քրիստոսի հետեւորդներուն ուղղուած պարզամ մըն է սա: Առաքելալին այս պարզ բայց խորիմաստ պարզամին մէջ անհրաժեշտ է լուսարձակի փակ բերել երեք հիմնական մտածումներ.- առաջին, հաւաքքին ինչութիւնը ու կարեւորութիւնը. երկրորդ, մեր դաւանած հաւաքքին իւրայարուկ ինքնութիւնը. եւ երրորդ, հաւաքքը ամուր պահելու հրամայականը:

Առաջին, հաւաքքի սահմանումը Պօղոս Առաքելալը ինք կու փայ Եբրայեցիներուն ուղղած նոյն նամակին մէջ. «**հաւաքք կը նշանակէ վարսահ ըլլալ այն բաներուն՝ որոնց կը յուսանք, եւ համոզուած ըլլալ այն բաներուն՝ որոնք չեն երևիր**» (11.1): Մարդու գոյութեան հետ սերտօրէն առնչուած երեւոյթ մըն է հաւաքքը: Անկարար արարած ըլլալով ու ամէն փեսակի ու ձեռի սահմանափակումներով շրջապարուած ըլլալով, կարարեալին ու ամենահագօրին ձգարումը մարդուն մէջ բնական մղում մըն է: Հետեւաբար, մարդ իր անմիջական պարունակէն ու սովորական շրջագիծէն անդին ու վեր բանի մը պիտի

հաւարայ, թէկուզ իր հաւարքի առարկան ըլլայ փարօրինակ իրականութիւն մը, եւ նոյնիսկ՝ բացարձակութեան ու կարարելութեան ասփիճանի բարձրացուցած իր անձը ...: Հին ժամանակներէն սկսեալ կրօններ փորձած են մարդու կեանքին այս բնական երեւոյթին փայ գիտակից խորք ու հոգեմտաւոր փարածք՝ իւրաքանչիւր կրօն իր հաւարքի առարկային շուրջ կազմաւորելով ու զարգացնելով իր մտածողութիւնը, ինքնութիւնը ու նպատակը:

Պօղոս Առաքեալ հաւարքին կու փայ իր ճշմարիտ բովանդակութիւնը զայն սահմանելով որպէս Աստուծոյ նկատմամբ մարդու ունեցած բացարձակ վստահութիւնը, ենթակայութիւնը, հնազանդութիւնը եւ յոյսը՝ խարսխուած պատմութեան մէջ փեղի ունեցած աստուածային յայտնութեան վրայ: Այս խոր համոզումէն մեկնելով, Առաքեալը արդարօրէն հաւարքը կը նկատէ մարդկային պատմութեան բոլոր մեծ իրագործումներուն ու իրադարձութիւններուն մոլիջ ուժը երբ ան կ'ըսէ թէ՛ հաւարքի ճամբով է որ կու գանք հասարակելու փիեզերքին ոչինչէն սպեղծագործութիւնը Աստուծոյ կողմէ: Հաւարքով է որ Նոյր փապանը շինեց եւ մարդկութիւնը փրկեց յաիփեան կորուստէ: Աստուծոյ նկատմամբ ունեցած իր հաւարքով է որ Աբրահամ հնազանդեցաւ Աստուծոյ կոչին եւ ճամբայ ելաւ որպէս պանդուխտ առանց գիտնալու թէ ո՞ր կ'երթայ: Հաւարքով է որ Սառա, որ ամուլ էր, իր յառաջացած փարիքին զաւակ մը ունեցաւ: Հաւարքով է որ Եբրայեցի ժողովուրդը Կարմիր Ծովէն անցաւ՝ չոր գետնի վրայէն անցնելու պէս: Հաւարքով է որ Երիքովի պարիսպները կործանեցան երբ Եբրայեցի ժողովուրդին զաւակները եօթը օր անոնց շուրջը դարձան: Շարունակելով իր խօսքը Առաքեալը կը հաստատէ թէ՛ հաւարքի զօրութեամբ է որ Քրիստոսի հետեւորդները քարկոծուեցան, բանտարկուեցան, հալածուեցան ու սպաննուեցան դառնալով հաւարքի պիտեանները (Եբր. 11):

Արդարեւ, Քրիստոսի անմիջական հաղորդութեան մէջ ապրած առաքեալները իրենց գոյութենական փորձառութեամբ, ո՛չ փեսական վերլուծումներով, իրենց խոր համոզումով, ո՛չ զգացական արտայայտութիւններով, կը վկայեն հաւարքի մեծ ուժին մասին, որ կրնայ լեռներն իսկ փեղէն շարժել (Մտ 17.19):

Երկրորդ, հաւարքը համամարդկային երեւոյթ ըլլալով հանդերձ, որպէս քրիստոնէաներ փարբեր մօտեցում պէտք է ունենանք մեր հաւարքին խորքին, բնոյթին ու էութեան նկատմամբ: Ի՞նչ է **«մե՛ր դաւանած հաւարքը»**: Քրիստոնէայ մարդը իր հաւարքը փեսական յղացքի մը, վերացական ճշմարտութեան մը, գալիք իրականութեան մը, անդրանձնական երեւոյթի մը չէ կապած երբեք: Քրիստոնէայ մարդուն հաւարքի աղբիւրը Քրիստոս ինքն է, Աստուծոյ Միածին Որդին. **«Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը»** (Յն 1.14):

Աւերարանիչները շեշտակի կերպով կը պարզեն, թէ Բեթղեհէմի մէջ ծնած, խաչուած ու յարութիւն առած Քրիստոսն է ամբողջ մարդկութեան փրկիչը. եւ թէ Աստուծոյ Որդին աշխարհ եկաւ մարդը մեղքէն փրկութեան առաջնորդելու, մարդը ազատագրելու չարէն ու անոր կեանքը բարիով պայծառակերպելու: Աւերարանները այնքան գեղեցկօրէն կը պարզեն հաւարքի կենսական կարեւորութիւնը մարդկային կեանքէն ներս:

Արդարեւ, Քրիստոսի արքայասանամ իւրաքանչիւր բառին, անոր կարարած իւրաքանչիւր հրաշքին, անոր պարամամ իւրաքանչիւր առակին, անոր երկրաւոր կեանքի իւրաքանչիւր քայլափոխին մէջ հաւապքը փիրական ներկայութիւն է: Հաւապքն է, որ համրերուն լեզու, կոյրերուն լոյս, խուլերուն ձայն, հիւանդներուն բժշկութիւն, մեղաւորներուն թողութիւն, բանտարկեալներուն ազատութիւն, եւ նոյնիսկ մեռելներուն կեանք կու տայ: «**Քու հաւապքդ քեզ փրկեց**» (Մտ 9.22) խօսքը Քրիստոսին իր մէջ կը խորացնէ Աստուծոյ մարդեղացեալ Որդւոյն առաքելութեան նպատակը ու անոր պարզամը:

Այդ հաւապքին մասին իր կենդանի վկայութիւնը տուաւ Պեպրոս Առաքեալ Քրիստոսին ուղղած իր խօսքով, թէ՛ ուրիշներ քեզ կը նկատեն Յովհաննէս Մկրտիչ, Եղիա մարգարէն կամ Երեմիան. սակայն դուն Քրիստոսն ես, Աստուծոյ Որդին (Մտ 16.13-16): Արդ, հաւապակ կը նշանակէ վկայել հաւապքի առարկային մասին, վկայել կեանքով, գործով ու մտածումով: Ահա հաւապքին քրիստոնէական ըմբռնումը:

Երրորդ, Առաքեալը կոչ կ'ուղղէ մեզի թէ **«ամո՛ւր պահենք մեր հաւապքը»**: Չի՛ բաւեր միայն գիտնալ ու վկայել հաւապքի մասին, անհրաժեշտ է, որ մեր քրիստոնէական հաւապքը ամուր պահենք:

ա) Ամուր պահել քրիստոնէական հաւապքը կը նշանակէ՝ զայն **անքակտելիորէն շաղախել մեր կեանքին՝** մեր մտածումներուն, մեր ապրումներուն, մեր երազներուն, մեր գործերուն հետ: «**Տաւապքո՛վ է որ կ'ապրինք**» (Բ. Կր 5.7), կ'ըսէ Առաքեալը: Այլ խօսքով, մարդու գոյութիւնը սոսկ ֆիզիքական չէ. առանց հաւապքի մեր կեանքը կը կորսնցնէ իր ճշմարիտ, ինքնութիւնը ու նպատակը: Արդեօք որքանո՞վ ներկայ է հաւապքը մեր կեանքին մէջ. կը լսենք Քրիստոսի խօսքը՝ **«ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. տակաւին հաւապք չունիք**» (Մր 5.40): Արդ, իւրաքանչիւր քրիստոնէային ամենօրեայ աղօթքը պէտք է ըլլայ ո՛վ Տէր, **«ստեղծուր մեր հաւապքը»** (Ղկ 17.5), որովհետեւ **«ինչ որ հաւապքո՛վ խնդրէք՝ պիտի ստանաք»** (Մտ 21.22):

բ) Ամուր պահել քրիստոնէական հաւապքը կը նշանակէ՝ **հաւապարիւմ մնալ մեր հաւապքին ուղղափառութեան**: Մեր կեանքին ճշմարտութիւնը, մեր կեանքին գերագոյն գանձը, մեր կեանքին «Ալֆան ու Օմեկան» Քրիստոսն է: Հեռու Քրիստոսով աշխարհին յայտնուած սկզբունքներէն ու արժէքներէն, հեռացում է ճշմարիտ հաւապքէն: Օտար ըմբռնումներէ ու մշակոյթներէ ներածուած արքայապարտիւններուն մէջ սկսած ենք մեր հաւապքը փնտռել: Սկսած ենք օտարամուտ երեւոյթներու ազդեցութեան տակ, հաւապքի ձեւին կառչիլ եւ մոռացութեան քօղին տակ ծածկել հաւապքին խորքը, էութիւնը: Քրիստոսի անունով մարդիկ այնպիսի «ճշմարտութիւններ» կը փորձեն փոխանցել մեր ժողովուրդի գաւակներուն, որոնք մոլորեցուցիչ են եւ մեր հաւապեցեալները ու երիտասարդները կ'առաջնորդեն սխալ ճամբաներ: Լսենք Քրիստոսի խօսքը՝ **«զգուշացէք սուտ մարգարէներէն, որոնք ոչխարի կերպարանքով կը մօտենան ձեզի, մինչ ներքնապէս յափշտակիչ գայլեր են»** (Մտ 7.15): Ամուր պահենք Քրիստոսի առաքեալներուն կողմէ մեզի

փոխանցուած եւ մեր հայրերուն արիւնով թրծուած ճշմարիտ հաւաքքը, ուղղափառ հաւաքքը:

գ) Ամուր պահել քրիստոնէական հաւաքքը կը նշանակէ՝ **եկեղեցւոյ կեանքին մասնակից դառնալ**: Քրիստոսակեդրոն հաւաքքով շաղախուած եւ իրարու հետ սիրոյ կապով սերտօրէն միացած հաւաքացեալներու խումբն է, հաւաքքի համայնքն է եկեղեցին՝ իր կեանքով ու առաքելութեամբ: Եկեղեցւոյ մէջ է որ քրիստոնէան իր հաւաքքը կ'ապրի, իր հաւաքքը կը զօրացնէ, հաւաքքով կը սնանի: Եկեղեցւոյ համայնական կեանքէն դուրս, ինչպէ՛ս կարելի է որպէս քրիստոնէայ ապրիլ՝ բառին ճշմարիտ հասկացողութեամբ: Այս օրերուն քրիստոնէական աշխարհին մէջ «հաւաքալու» ու «պարկանելու» միջեւ բաժանում յառաջացնելու միտող սխալ ըմբռնումներ սկսած են յառաջանալ. եւ դժբախտաբար, նմանօրինակ թիւր մօտեցումներ սկսած են նաեւ թափանցել մեր կեանքէն ներս: Նման մրաժողութիւն ապաքրիստոնէական է: Քրիստոնէայ ըլլալ կը նշանակէ Քրիստոսի հաւաքալ. ու Քրիստոսի հաւաքալ կը նշանակէ եկեղեցւոյ պարկանիլ, գործնապէս մաս կազմել Քրիստոսի խորհրդական մարմնոյն՝ եկեղեցւոյ կեանքին ու հետեիլ եկեղեցւոյ ուսուցումներուն եւ կանոններուն:

դ) Ամուր պահել քրիստոնէական հաւաքքը կը նշանակէ՝ **հաւաքքը գործնով արքայայայտել**: Հաւաքքի վրայ խարսխուած քրիստոնէական կեանքը պէտք է ինքզինք գործնով արքայայտէ: Յակոբոս Առաքեալը յարակօրէն կը յիշեցնէ մեզի թէ՛ «**հաւաքքը առանձինն՝ առանց գործերու՝ մեռած է**» (Յկ 2.17): Ան նաեւ կ'ըսէ թէ՛ «**պարուիրանները լսելով մի գոհանաք, այլ՝ կարարեցէք զանոնք, այլապէս դուք ձեզ խաբած կ'ըլլաք**» (Յկ 1.22): Քրիստոնէութիւնը ուսուցումներու ամբողջութիւն մը չէ. ան սոսկ Աստուածաշունչի ճանաչողութիւն չէ: Գիտնալէ ու ճանչնալէ անդին՝ քրիստոնէութիւնը կեանքը հաւաքքով ապրիլ է, գ-Քրիստոս ունենալով մեր կեանքին առանցքը ու նպարակը:

Քրիստոսի հրաշափառ Յարութեամբ օծուն այս օրերուն, որպէս քրիստոնէայ հայեր հրաւիրուած ենք անդրադառնալու մեր դաւանած հաւաքքի իսկութեան ու պահանջին, ինչպէս նաեւ վերանորոգելու Քրիստոսի Յարութեան վրայ կանգնած մեր հաւաքքը (Ա. Կր 15.14): Արդարեւ, հաւաքքն է մեզ դէպի փրկութիւն, դէպի Աստուած առաջնորդող միակ ճամբան. «**Աստուծոյ մօտեցողը պէտք է հաւաքայ**» (Եբր 11.6):

Արդ, պէտք է կառչած մնանք մեր քրիստոնէական հաւաքքին՝ այն հաւաքքին, որ մեր ժողովուրդի կեանքի ճամբան լուսաւորեց պարմութեան խաւար ու մռայլ պայմաններուն մէջ. այն հաւաքքին, որ մեր ժողովուրդին կեանք փրուաւ պարմութեան պարտադրած մահուան դիմաց. այն հաւաքքին, որ մեր ժողովուրդին կեանքը լեցուց հոգեւոր, բարոյական, մշակութային ու ազգային արժէքներով ու իրագործումներով. այն հաւաքքին, որ մեր ժողովուրդին ամբողջականութիւնը ու միութիւնը պահեց նոյնիսկ պարմութեան բաժանարար պայմաններուն մէջ:

Հաւարքը մեր ժողովուրդին համար եղաւ ու միշտ կը մնայ՝ գոյութենական իրականութիւն սերտօրէն առնչուած իր ամէնօրեայ կեանքին հետ. փիրական ներկայութիւն՝ իր կեանքի բոլոր մարգերէն ներս ինքնզինք արտայայտող: Հերեւաբար, հաւարքը միշտ պէտք է մնայ մեր ժողովուրդի կեանքին ճշմարիտ սնուցիչը, մեր հզօրութեան անսպառ աղբիւրը, մեր ցաւերուն ու վերքերուն բուժիչ դարմանը, մեր կեանքի լուսավոր փարոսը:

Պէտք է ամո՛ր պահենք մեր դաւանած հաւարքը, ինչպէս ամուր պահեցին զայն մեր նահապակաները նոյնիսկ իրենց արիւնո՛վ: Պէտք է ամո՛ր պահենք մեր դաւանած հաւարքը՝ հաւարարիմ մնալով Աստուածաշնչական սկզբունքներուն, ճշմարտութիւններուն ու արժէքներուն. հաւարարիմ մնալով Աւերաբանը իրենց կեանքին մէջ թարգմանած մեր հայրապետներուն ու սուրբերուն: Պէտք է ամո՛ր պահենք մեր դաւանած հաւարքը, որպէսզի քրիստոսաւանդ հաւարքով մեր կեանքը իմաստաւորենք ու պայծառակերպենք Աստուծոյ յաւիտենական փառքին համար:

\*

\*\*

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութեան փօնին առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն Հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Նորին Վսեմութիւն Ռոպերթ Քոչարեանը, իրեն մատուցելով քաջառողջութիւն եւ նորանոր իրագործումներով հարուստ գործունէութիւն՝ ի սպաս մեր հայրենիքին ու սիրելի ժողովուրդին:

Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք մեր եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներու Գահակալները՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ամենապարի Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Պարրիարք Երուսաղէմի Հայոց, եւ Ամենապարի Տ. Մեսրոպ Արք. Մուշաֆեան, Պարրիարք Թուրքիոյ Հայոց, իրենց մատուցելով եկեղեցանուէր ծառայութիւններով լեցուն երկար գահակալութիւն:

Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդները, հոգեւոր դասը, Ազգային Իշխանութիւնները, մեր ժողովուրդի կեանքին մէջ գործող բոլոր կազմակերպութիւններն ու միութիւնները եւ մեր եկեղեցւոյ հաւարացեալները: Կը հայցենք Բարձրեալն Աստուծմէ, որ Քրիստոսի Յարութեան յոյսով ու լոյսով պայծառակերպէ մեր ժողովուրդի զաւակներուն կեանքը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Ս. Չարիկ, 2006  
Անթիլիաս.*

**ՀԱՅՐԱԽՕՍԱԿԱՆ**

**ՅԱԿՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆԱԼԵԱՆ  
ՔԱՐՈԶԳԻՐՔ Ի ՎԵՐԱՅ  
ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ ՅՕՀԱՆՆՈՒ  
(Մապենադարան 2238)\***

*Յաղագս գարիուրելի վճռոցն յաւուրն դասաստրանին:*

Բարերարն Աստուած, որ խստագունեղ դատաւորն տայ մեղաւորաց յաւուրն դատաստանի կացցէ մեղաւորն տակաւին ըստ հաճութեան իւրոց ընդ այն յիմար նստողացն առաջի սրբոյն Յորայ, 22: Որք ասեն թէ Աստուած ոչ ինչ համարի զգործս մարդկային, զի կայ ՚ի փառս իւր, եւ ոչ մտածէ զիրս այսորիկ աշխարհի: Ի վերայ ծղիւնեաց երկնից շրջի եւ զմերս ոչ տեսանէ: Ոչ ինչ համարեսցի տակաւին զբարկութիւն Աստուծոյ, հաւատարով թէ յաւուր միում ոչ է տալոյ գնրբագունեղ համար իւր չար վարուցն, որպէս ասէ Դաւիթ, Ընդէ՞ր բարկացոյց մեղաւորն զԱստուած զի ասաց ՚ի սրտի իւրում, թէ ոչ քննի:

Ձանասցէ տակաւին գործել զչարութիւնս եւ զմեղս անհոգալոյ զԱստուծային վշտեցուցմանէն: Ունիցի տակաւին զժամանակ բարեբախտ, առցէ զբոսանս եւ զհեշտութիւնս, զի զայ օր մի յորժամ երեւեսցի սոսկալի դատաւորն Քրիստոս, առ ՚ի խնդրել զխստագունեղ համար որքան գործեալ է, եթէ բարի, եթէ չար: Ամենեցուն մեզ (ասէ առաք-

եալն Պօղոս) կայ յանդիման լինիլ առաջի ահեղ ատենին Քրիստոսի, զի տացէ զհամար իւրաքանչիւր ոք իւրով մարմնովն զոր ինչ գործեաց, եթէ բարի եթէ չար: 2 Կոր. 5:

Այս օրս եղիցի յորում բանիցի դուռն արքայութեան, եւ դուռն արդարութեան, եւ /// դուռն ողորմութեան, օր սահմանեալ առ մի յաւիտենական ողբումն մեղաւորաց: Օր ասեմ յորում տեսանի առաւել տրտմալի եւ ցաւալի հայեցարան, որ ոչ երբէք է՝ տեսանեցեալ, որովհետեւ խաւարին այն Բ լուսաբերքն աշխարհի, արեգակն խաւարեսցի, եւ լուսինն ոչ տացէ զլոյս իւր: Ընթեռնանի ՚ի Մատթէոսում թէ ստեղծք խնդրեն թագուցանել, միայն մեղաւորն ոչ գտանէ գտեղի ապաստանութեան խնդրել զխաւարս, բայց վասն նորա փայլին, խնդրէ (191ա) զանդունդս, բայց վասն նորա հարթ եւ խաւար լինի խնդրէ զմահ, բայց ոչ գտանէ զնա, եւ ոչ գտանելով զերծումն յիւրոց չարեաց, բռնադատի յերեւիլ առաջի Աստուածային յատենին ուր զկնի խստագունեղի քննութեանց զոր տէրն մեր Յիսուս Քրիստոս խստագունեղ դատաւորն առնէ զգործոց ըստ իւրաքանչիւրոց:

\* Շար. նախորդ թիւէն:



Գայ վերջապէս 'ի վճիռնսն զոր նախ- քան թէ հռչակիցէ վասն մեծագուննի ցա- ւոյ, եւ պատիժ մեղաւորաց ցուցանէ զիւր սրբագունեղ խոցուածսն 'ի նո- ցունց ընկալեալ առ 'ի յողթել եւ ամաչե- ցուցանել զնոսա: Այսպէս ասէ սուրբն Օգոստինոս, Թշնամեաց զվէրս իւր ցու- ցանելոց է, զի յողթելով զնոսա ասիցէ, Ահա մարդն զոր խաչեցիք: Տեսէք զվէրսն զոր խոցեցիք: Ճանաչէք զկողն զոր խոցեցիք եւ բացիք, յորժամ 'ի ձեռն ձեր եւ վասն ձեր բացաւ ոչ սակայն մտածել կամեցայց: Եւ սուրբն Յօհան Ոսկերբերան ասէ եւս ըստ յառաջադրու- թեան, յորժամ ցուցանէ զվէրսն, զխաչն եւս ցուցանէ, զի ցուցցէ այլ /// որ խաչե- ցաւ, եւ սուրբն Կիպրիանոս մեկնելով զայն բանն 'ի գործս առաքելոց այսպէս եկեսցէ Ձոր օրինակ տեսիք զնա երթալ երկինս, ասէ, այսպէս եկեսցէ դատա- ւորն նոյն վիրօքն եւ խոցովն 'ի կողն, 'ի ձեռնս, եւ 'ի յոտս ///:

Եւ սուրբն Թօմաս է 'ի կարծիս, թէ 'ի ձորն Յովսափաթու ուր լինի դատաս- տան, որ է 'ի մէջ Ձիթենեաց լեռան եւ Գողգոթայի դէպ առ քաղաքն Երուսա- դէմ, (որպէս հաստատէ սուրբն Հերօնի- մոս) յորում գործեացն բարձրագունեղ խորհուրդքն փրկութեան մերոյ, զի ճա- նաչիցի թէ որքան իրաւամբ դատապար- տէին մեղաւորքն, որք ոչ կամեցան օգ- տիլ այնքան մեծ բարերարութեամբ:

Ասէ ուրեմն դատաւորն Տէրն մեր Յիսուս Քրիստոս իւրաքանչիւր մեղա- ւորացն, որպէս ասէ Հրեշտակական վարդապետն, ահ ապերախտ մեղաւոր- բաց զաչս քո եւ տես, ճանաչեա դու զքաղաքն, ոչ է նա Երուսաղէմ, ուր ես այնքան չարչարեցայ վասն սիրոյ քո: Ոչ տեսանես զայն ճանապարհսն, եւ զայն հրապարակսն, զայն պալատսն, զայն յատեանսն, ուր միջոցաւ ԼԳ ամաց գայլ ոչ արարի, եթէ ոչ աշխատիլ, քրտնիլ եւ վաստակիլ, եւ կրել վասն սիրոյ քոյ (191բ) առանց ունելոյ երբէք զհանգս- տութիւն: Տես մեղաւոր հոգի զայն պա-

լատն քահանայապետին, ուր արարին զխորհուրդ մահուան իմոյ: Տես զայն պարտէզն ուր աղօթելով առ յաւիտենա- կան Հայրն, արեամբ քրտնեցայ 'ի նոյ- նում տեղուջ ըմբռնեցայ, եւ որպէս աւագակ ածայ առ Կայիափայ, վասն ասելով զճշմարիտն /// ապտակեցայ, 'ի միողէ խոտելի զինուոր: Հայեաց այն բարձրագունեղ պալատն Հերօղէի, ուր ապտակեցայ եւ խենթ համարեցայ:

Տեսանես դու 'ի սրահն Պիղատոսի զայն սիւնն ուր անդ կապեցայ եւ խստագունեղապէս ձաղկեցայ, ընկալն- լով զհագար եւ զհարիւր, զվաղսուն վեց ձաղանս, բաց յայսցանէ եղին 'ի գլուխ իմ զպսակ փշեղէն եւ զկնի ցուցայ ժո- դովրդեան բոլորովին հարուածեալ եւ չարչարեալ: Տես զճանապարհն Երուսա- դէմայ որպէս կան մինչեւ ցայսօր ներկ- եալ իմով արեամբ: Տես զայն քարն որոյ 'ի վերայ անկայ վասն տկարութեան 'ի ներքոյ խաչափայտին: Վերջապէս դար- ձո՛ գհայեցումն առ լեռն Գողգոթայ, ուր խաչեցայ 'ի մէջ երկուց աւագակաց եւ 'ի մեծագուննի ծարաւութեան իմոյ, զլեղին եւ զքացախն, եւ ոչ բաւականա- ցայ այսու 'ի մեռանելն իմ, խստագու- նեղ տեգաւ 'ի կողս իմ խոցեցայ: Ա՛հ ամ- բարիչտ մեղաւոր ընդդէմ այսքանեաց բարերարութեանց ոչ պարտէիր լինիր ապերախտ:

Արդ՝ որպիսի՞ մտածումն եղիցի քեզ յայնժամ, ո՛վ մեղաւոր, զի՞նչ պատաս- խանես, առ ո՞ դիմեսցես վասն քոյոյ օգ- նութեան. թերեւս ունիս գոյս զի սուրբ ոք, փաստաբան ոք բարեխօսեսցէ վասն քո առաջի Աստուծոյ, այնպէս որպէս Մովսէս այց արար հրէից, զոր կամէր ամենայն կերպիւ ջնջել զնոսա, եւ առանց այլոյ պատճառի առնէր: Է՛ ու- նայն այս քո յոյսդ, ո՛վ մեղաւոր, այս- պէս ասէ քեզ Աստուած բերանովն Երեմիայի, երդուելով, թէ առաւել սիրե- լի բարեկամքն եւ իւր ծառայքն, եթէ զնայցեն աղաչել զնա ոչ կարէին շիջու- ցանել զիւր արդար բարկութիւնն եթէ

կացցէ Մովսէս եւ Սամուէլ առաջ իմ ոչ հաճիմ առ այդ ժողովուրդ, ոչ կարեն ուրեմն օգնել քեզ սուրբքն եւ ընկալնուլ գլխողութիւն վասն քո առաջի Աստուծոյ, եւ այսպէս յունայն լինի յոյսն քո եւ յոյս ամբարշտաց կորիցէ ասէ ոգին սուրբ, բայց զի՞նչ ջանամ ես ասելով թողեց 'ի բաց, զի Աստուած ոչ առնէ գայս (192ա) փաստաբանքն քո այնպէս յօժարք եղեն առ 'ի հայցել զշնորհ վասն քո յայսմիկ կենի, ոչ ունելոյ են գցաւակցութիւն ինչ զքէն, զի համաձայնին վճռոյն դատաւորին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այս մտածումս է սուրբ Գրիգոր պապին, որ մտածելով զիսոսն գոր պատասխանեաց Աբրահամ մեծատանն որ խնդրէր զկաթիլ մի ջրոյ, թէ Առաքեայ զՂազարոս զի բացցէ գծագ մատին իւրոյ 'ի ջուր եւ զովացուցէ զյեզու իմ, զի պապակիմ 'ի տապոյ աստի: Եւ ասէ ցնա Աբրահամ, Որդեակ յիշեա, զի ընկալար, անդէն զբարիս քո 'ի կեանս քում, արդ՝ սա աստ մխիթարի, եւ դու այդր պապակիս: Եւ 'ի վերայ այսր ամենայնի վիճ մեծ է 'ի մէջ մեր եւ ձեր: Զի այսոքիկ որք կամիցին աստի առ ձեզ անցանել ոչ կարեն, լուծէ գայս դժուարութիւնս որք 'ի վիճակի երանութիւնն են անկեալք, որով պայմանաւ աստի անցանել առ նոսա, կամին որք զդժոխս տանջին:

Կարէ բարեպէս իմանալ, թէ դատապարտեալքն ցանկանայցեն գնալ առ արքայութիւնն, եւ գայսմանէ ոչ գոյ տարակուսութիւն, բայց որպէս կարէ գոյ զի հաստատեալքն 'ի շնորհս կամիցին անցանիլ առ դժոխքն, թէպէտ ոչ կարեն, զի այսոքիկ որք կամին անցանիլ առ ձեզ ոչ կարեն:

Պատասխանէ սուրբ քահանայապետն, Այս անցանիլս գոր առնեն արդարքն իմանի իդձն գլխածալիր ողորմութեան, գոր ընդ ինքեանս ունին բնածին, որով կամին ազատել գայն ողորմելիքն, բայց ներգործութեամբ ոչ կարեն, զի այնպէս միաւորեալք են ընդ աստ-

ուածային կամացն, որք ոչ եւս շարժին 'ի գուլթ: Անցանիլն արդարոց առ ողորմելիսն, նաեւ 'ի տանջանսն եղեալսն է՝ մտօք գնալ ողորմութեամբ, գնոսա եւս կամիլ ազատիլ, բայց որք կամին անցանիլ ոչ կարեն, զի հոգիքն արդարոց թէպէտ բնական իւրեանց բարութեամբն ունին ողորմութիւն, սակայն յայնժամ ընդ հեղանակին իւրեանց արդարութեանն միաւորեալք, այլք ուղղութեամբ չըջապատեալք սպառագինեն, մինչ զի ոչ ոք ցաւակցութեամբ շարժին 'ի գուլթ 'ի վերայ դատապարտելոց, ինքեանք այսինքն դատաւորին համաձայնութեան յորում յենուն 'ի նոսա գոր ազատել ոչ կարեն ողորմութեամբ խոնարհին:

(192բ) Եւ յայնժամ կատարի ասացեալն մարգարէին, համաձայնին միաւորութեամբ ընդ վիմին դատաւորք նոցա: Դատաւորքն մեղաւորաց որք են սուրբ առաքեալքն, գորոց ասաց Քրիստոս Նստջիք եւ դուք երկոտասան ամիս դատել զերկոտասան ազգս Իսրայէլի: Եւ համաձայնին եւ միաւորին ընդ վիմին որ է Քրիստոս, գորմէ զրեալ է, եւ վէմն էր ինքն Քրիստոս: Արդար եւ միաւորեալք են (ասէ ոմն 'ի գիտնոց) ըղձիւ արդարութեան եւ վիմի հաստատութեամբ, ընդ որում միաւորեալք են հետեւելովք, վասն այսորիկ առաքեալքն եւ այլ սուրբքն եւս այնպէս միաւորին ըղձիւ ընդ աստուածային արդարութեան, մինչ զի ոչ կարեն շարժիլ 'ի ցաւակցութիւն ողորմելեաց եւ թշուառական մեղաւորաց, ուստի հետեւին խստութեամբ սրտի իւրեանց ամրագունեղ վիմին սրտի Քրիստոսի խստագունեղ դատաւորին: Որպէս ուրեմն (հետեւի 'ի յասել սրբոյն Բեռնարտոս) կարիցեն շարժիլ 'ի յողորմութիւն դատաւորքն միաւորեալք ընդ միոյ վիմի այնքան ամրագունեղի:

Արդ՝ առ 'ի հաստատութեան այսորիկ ճշմարտութեան, լուարուք զերկու գեղեցկագոյն տեղիս սուրբ գրոց արտահանեալ 'ի սուրբ Գրիգորէ: Մինն է այն հարսանեացն յորժամ եմուտ այն որ ոչ

ունէր զգեստ հարսանեաց, ուստի իսկոյն 'ի բաց մերժեցաւ. մեծ արարք է այս ասէ սուրբն, 'ի ժամանակի հարսանեաց հասարակօրէն սովորութիւն է անել զչնորհս եւ զպատիւ ամենայնից: Եւ եթէ ոք առնիցէ երբեմն զգործ ինչ անպատեհ, ամենայն հրաւիրեալքն բռնադատեն առ բասրել եւ առնել, զի ներիցէ այն խղճին, եւ սակայն 'ի մէջ այնքանեաց հրաւիրելոց ոչ ոք գտաւ, զի ասիցէր զմի միայն խօսք 'ի կողմն այն աղքատին, այսպէս պատահի յաւուրն դատաստանի յորժամ լինիցի հարսանիքն արդարոց եւ ծառայիցն Աստուծոյ. ոչ լինի ողորմութիւն, ոչ գթութիւն, եւ ոչ բարեխօսութիւն սրբոց վասն մեղաւորաց, յորժամ գտանին մերկացեալ զգեստուց հարսանեաց մաքրութեան եւ բարութեան վարուց (ասէ սուրբն Գրիգոր) ետես ոչ զգեցեալ հանդերձ հարսանեաց, մերժեաց, եւ ոչ ոք վասն նորա բարեխօսեաց:

Եւ միւս արտահանեալն 'ի սուրբ Գրիգորէ այն հինգ իմաստուն կուսանացն, որք վառեալք ունէին զլապտերս իւրեանց, եւ զանօթս լի իւղով. եւ միւս հինգ յիմարքն զի ոչ նախատեսեալք էին զիւղ, եւ այսպէս տեսանելով, թէ իւրեանց լապտերքն (193ա) կէտ առ կէտ շիջանէին, զնացին առ իմաստունս կուսանս ասելով նոցա, Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքն մեր:

Առ նշանադրէ սուրբ աւետարանիչն, թէ իմաստուն կուսանքն ցուցին այնքան թթու դէմս, որք ոչ կամեցան ամենայնիւ կերպիւ տալ նոցա. բայց ինչ մեծ բան լինէր (ասէ սուրբն Գրիգոր) եթէ տայցէին զսակաւ ինչ յիւղոյն իւրեանց առ այն ողորմելի յիմարացն այնքան առաւել գոր ինքեանք ունէին, լի անօթով եւ վառեալք լապտերօք:

Պատասխանէ սուրբ քահանայապետն, թէ ոչ առանց խորհրդոյ այս պատահեաց, որովհետեւ լի անօթքն իւղոյն նշանակեն զարդիւնս սրբոց, կամելով ցուցանել թէ յաւուրն դատաստանի, ոչ

ոք սրբոց բարեխօսէ առաջի Աստուծոյ վասն մեղաւորաց, որքան ինքեանք լիք իցեն արդեամբք եւ շնորհօք երկմտելով եթէ ոչ բաւականան ինքեանց, մի գուցէ ոչ բաւականացի մեզ եւ ձեզ: Հայեաց Եկուսանսն (ասէ սուրբն) եւ հաւասարս վասն նոցա ոչ աղաչեալ կամ օգնեալ:

Ո՛հ երկնչելովք մեղաւորք յայնմիկ աւուր, սուրբն Յօհան Ոսկերբերան ասէ թէ, Մեղաւորք առ սուրբան ասելոց են, տուք մեզ ձերմէ յիւղոյդ, այսինքն դուք սուրբք որք ունիք զգործս արդարութեան բաւական ձեզ ոչ միայն առ 'ի փրկել 'ի պատժոյն, այլ եւս առ 'ի հասանիլ փառաց, օգնեցէք մեզ բարեօք գործովք ձերովք այսինքն բարեխօսեցէք վասն մեր մեղաւորացս առաջի Տեառն, զի արդարութիւն ձեր բաւական է զձեզ փառաւորել, եւ զմէնջ առ բասրել: Բայց ափսոս զի այնքան աղաչանաց մեղաւորաց լինի պատասխան, զի մի գուցէ բաւականացի մեզ եւ ձեզ, այլ զնացէք առ վաճառականսն եւ զնեցէք ձեզ:

Ձոր սոյն բանս մեկնելով սուրբն Յօհան Ոսկերբերան առակցէ եւ ցուցանէ այսոքիւք բանիւք, թէ այնպէս զարհուրելի է՝ ապագայ դատաստանն այն, զի ոչ ոք յանմեղութիւն ինքեան ապաւինի, զի այնքան երկիւղ յայնժամ լինի ամենայնից սրբոց եւս, մինչ զի ոչ ոք յուսայ զինքն արդար գտանելի, այլ մանաւանդ երկնչի զի մի գուցէ պարտաւոր արտականայցէ: Ձսոյնս հաստատէ ոմն 'ի գիտնոց 'ի վերայ այսորիկ տեղոյ ասելով, Այնքան երկիւղ լինի (193բ) յաւուրն դատաստանի, զի եւս այնք որ զիւղն ողորմութեան ինքեանք իմանան առատապէս պատրաստեալ, երկնչի զի մի գուցէ յամենայն մեղաց փրկելոյ ոչ կարիցէ բաւականալ:

Եւ թէպէտ այս թթու դէմս մտածեալ 'ի սուրբսն պատճառէ մեծ պատիժ մեղաւորաց, սակայն 'ի տեսանել յայնմիկ աւուր Սուրբ Կոյսն Մարիամ Մայր Ողորմութեան աղաչել զի բարեխօսիցէ վասն նոցա առաջի Որդոյ իւրոյ, եւ նա

զայրացեալ դիմօք փոխանակ աղաչելոյ վասն թողութեան նոցա, բարկութեամբ խնդրէ գվրէժս եւ գպատիժ լինի մեծագոյն տանջանքն:

Ոչ է՛ այս իմ մտածումս, լուարուք սրբոյն Օգոստինոսի, գգուչանայի է գի միայն առաջի գարհուրելի յատենին երեւեսցուք դատարկ կամ մերկ, գի սուրբքն յայնժամ ոչ օգնեն մեզ, վասն գի ոչ է ժամանակ ողորմելոյ եւ ողորմութիւն խնդրելոյ: Ոմն՛ի սրբոյ ասէ, Անդ ոչ գոյ տեղի աղաչելոյ, ոչ ոք լինի մեզ բարեխօս, ոչ ոք վասն մեր խօսի գբան ինչ, ոչ երանուհի Կոյսն, ոչ Հրեշտակք, ոչ Առաքեալք բարեխօսեն վասն կորուսելոց:

Եւ սուրբ Հրեշտակքն երեցեալք յամենայն ՚ի պահապան հոգոց մերոց, գի մինչ կամք յայմիկ կենի այնքան բարի ներշնչմամբ ջանան շրջեցուցանեն գմեզ ՚ի ճանապարհս Աստուծոյ, պահելով գմեզ ՚ի բազմաց եւ ՚ի ծանրագունից յորոգայթից լինին վկայք ընդդէմ մեր, առ ՚ի դատապարտել գմեզ ՚ի հուրն յաւիտենական, եթէ ոչ գարգանայցեմք մեք այժմ յիշմամբ նոցին:

Այսպէս ասէ սուրբն Յօհան Ոսկերեան, Յայնժամ Հրեշտակքն մերձ լինին հրամանաւ վկայելովք որքան ինքեանք առաքեալք Աստուծոյ սպասաւորեցին, եւ ոչ սակաւ ճոռոմբանուրութեամբ ասաց նախքան գնա մեծ հայր Որոգինէս, Իւրաքանչիւրն ՚ի հրեշտակաց ՚ի դատաստանի մերձ լինին յառաջ ածելով գայնոսիկ որոց եղեն վերակացուք, որք տայցեն գվկայութիւն, թէ ո՞րքան ամ շուրջ գնովաւ աշխատեցան յարողրելով առ բարին, բայց գխրատս նոցա արհամարհեցին:

Ո՛հ բազմանան պատիժքն մեղաւորաց, որովհետեւ յայնմիկ սոսկայի աւուրն, նախքան թէ արդար դատաւորն հռչակիցէ գվճիւռն ընդդէմ նոցա, ուրախ եւ հաճելի դիմօք կոչէ գարդարսն ՚ի յաջակողմն, հրաւիրելով գնոսա ՚ի ժառանգել յրնկերութեան իւրուձ,

գարքայութիւնն (194ա) երկնից պատրաստեալ յաւիտենականութենէ հօր իւրոյ եկեայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք գարքայութիւնն, որ ձեզ պատրաստեալ ՚ի սկզբանէ աշխարհի:

Այս այն է՛ որ անցանէ ՚ի յաղիս մեղաւորաց, այսպէս ասէ Բեռնարտոս, Նախ օրհնեալքն կոչին ՚ի յարքայութիւն, քան անիծեալքն արկին ՚ի հնոցն յաւիտենականի դժոխոց, եւ սուրբն Օգոստինոս ասէ, Մեծագոյն լինի տանջանք չարաց տեսանել գԱստուածային դէմն գայրացեալ եւ բարկացեալ քան կրել գտանջանս դժոխոց: Վերջապէս Տէրն մեր Յիսուս Քրիստոս հռչակէ գգարհուրելի վճիւռն յաւիտենականի մահուան ընդդէմ մեղաւորաց ասելով, Երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:

Ո՛վ յաւիտենականութիւն գբեզ միայն մտածելով դողալ պարտէին կարծրագունեղ քարինքն, ոչ թէ մարդիք: Յիշումն այսորիկ այնպէս գարհուրելի մինչ գի յինքեանք դեւքն, որք թէպէտ գիտեն հաւաստեաւ թէ պարտին ՚ի բոլոր յաւիտեանս տանջիլ ՚ի տարտարոսական բոցումն, սակայն ոչ կարեն տանիլ խօսելոյն գնմանէ:

Ո՛վ յաւիտենականութիւն ուրեմն (ասեմ ես գարհուրեալ ՚ի նմանէ յաւուր դատաստանէ) տաս գյաւիտենական աքսորումն մեղաւորաց ՚ի գեղեցիկ երիսացն Աստուծոյ, որում ցանկան հրեշտակք անաղօտ հայիլ:

Ո՛վ յաւիտենականութիւն, որ հեռի ես եւ գամենայն քաղցրութիւն այսորիկ կենի դառն թուեցուցանես:

Ո՛վ յաւիտենականութիւն հիմնիչ կրօնից, գտիչ յայրեաց բնակեալ ապաշխարօղաց, մայր ծոմապահութեանց, եւ պահեցողութեանց եւ արտասուաց:

Ո՛վ յաւիտենականութիւն, որ առնես քաղցր թուիլ, քարինքն Ստեփանոսի համեղ կասկարայն Լօրէնցիոսի, թեթեւ անիւն Կատարինայի, փափուկ անողին

մերկ երկիրն կառույց Պոռոմէի, պարզ ջուր ձիւթն եռացեալ կաթսայի այնքան մարտիրոսաց:

Ո՛վ յաւիտենականութիւն, որ գքեզ մտածելով սուրբն Հեռօնիմոս միով քարամբ բախէր գկուրծն:

Ո՛վ յաւիտենականութիւն, որ բարձեր ՚ի գլխոյն զականակու թագն հինգերորդ գառլոյ է, զայն կայսերէ ասեմ որ ենթարկեալ էր (194թ) հրամանի իւրոյ զայնքան թագաւորութիւն եւ զգաւառ, եւ զնա ածէր ունիլ գտնանկական կեանս ՚ի փոքրագունի իմիք խցի աղքատ կրօնի:

Ո՛վ յաւիտենականութիւն, որ գքեզ մտածելով, պարտէին մեզ թուիլ քաղցր դառնութիւնքն նեղութեանցն եւ անձկութեանցն այսորիկ ներկայ կենի:

Ո՛վ յաւիտենականութիւն գքեզ մտածելով մեծ հայրն սուրբն Օգոստինոս Դարձեալ առ Աստուած ասէր, Աստ կիզեա, աստ տանջեա, զի յաւիտեան խնայիցես:

Ո՛վ յաւիտենականութիւն վերջապէս որ առ ՚ի ոչ փորձաւել զնա դատապարտեալքն կամէին եթէ իցէր կարելի, որպէս ասեն հասարակօրէն սուրբ վարդապետքն եկեղեցւոյ, յայնմիկ սոսկալի աւուրն ընկալնուն յԱստուծոյ գայս մին շնորհս, զի փոքրագոյն մին մըջիւն զնայցէր ամենայն, ձՌ աւ մին անգամ ըմպել յովկիանոս ծովէ այնքան ջուր, որքան գիտեմք թէ կարէ ըմպել այնպիսի մին փոքրագոյն կենդանի, եթէ յայնժամ տայցէր վերջ իւրոյ խստագունեղ տանջանաց, յորժամ զկնի այնքանից ձից Ռաց, ժ անգամ ձից Ռաց ամաց այս մռջիւնս սպառիցէր ըմպելով, եւ չորացուցէր զլայնատարած ծովն ովկիանոսի. յայնժամ յուսային յաւուր միում վերջանալ: Բայց ո՛հ ցաւոյս, զի ընդդէմ այսոցիկ ողորմեցեաց եգրափակէ այն, զոր ասէ, Ելէք ՚ի յուսոյ դուք որք մտանէք անդ, զի յայտնի է վճիռն դատաւորին, Երթալք յինէն անիծեալք ՚ի հուրն:

Առակցեսցի ՚ի լրման ամենայնից

պատժոց դատապարտելոց այն մինն որ գերագանցէ քան զայլ մեծամեծ պատիժսն, եւ է՛ տեսանել զրկեալ յամենայն յաւիտեանս ՚ի կարօղութենէ տեսանելոյ զգեղեցիկ երեսն Աստուծոյ պատմելով սուրբ գիրն, զամենայն ցաւն, զամենայն պատիժս եւ զտանջանս զոր կրէր ժողովուրդն երրայեցւոց, ՚ի վերջն կամելով ցուցանել զմեծագոյնն ամենայնից, ասէ, Գ թագ. 24. զի բարկասցի Տէր ՚ի վերայ Երուսաղէմայ, ոչ այնքան թոյլ տալով զի կայցէին ՚ի գերութեան, որքան թագուցանելով ՚ի նոցանէ գերեսն իւր, մինչեւ ընկենուցու զնոսա յերեսաց իւրոց, զի այս է մեծագոյն չար, եւ առաւել խստագունեղ տանջանք զոր կարէ տալ զգալ նոցա:

Յորժամ Պօղոս առաքեալն չուեաց ՚ի կղզւոյն Մայթայու ՚ի հրա(195ա)ժարիլ զոր արար այն ազգն ելաց դառնապէս, այնպէս մինչ զի ոչ կարէին մխիթարիլ, Գործ. 20: Արդ կոծ մեծ եղեւ ամենայնից, եւ անկանելով ՚ի վերայ պարանոցի Պօղոսի համբուրէին զնա: Բայց այն որ թափանցէր ՚ի սիրտս եւ անցանէր յաղիս, էր լսելն ՚ի բերանոյն Պօղոսի, թէ ոչ կարէին այլ եւս տեսանել գերեսս նորա:

Արդ՝ եթէ զրկիլն ՚ի տեսութենէ միոյ սրբոյ զոր ՚ի վերջն պարտէին ՚ի միւսում կենի, այնքան էանց ՚ի սիրտն մայթացոց որպիսի ցաւ, եւ որպիսի պատիժ, ոչ չարչարէ զողորմելի դատապարտեալսն տեսանելով զրկեալ ՚ի բոլոր յաւիտեանս ոչ արդէն տեսանելոյ գերեսն միոյ երկրաւոր մարդոյ, այլ ինքեան Աստուծոյ կենդանոյ ճշմարտին:

Եւ այն որ առաւել անցանէ ՚ի սիրտն է՛ մտածեալ թէ այնքանուոյ բարւոյ տեսանին զրկեալք վասն միոյ րօպէականի հեշտութեան: Յիշեմ ըստ յառաջադրութեան ընթերցեալ ՚ի պատմութենէ Լիսիմաքոս թագաւորին, որ գոյով պաշարեցեալ ՚ի զօրութեանս, ՚ի վերջն կամեցաւ տալ զքաղաքն ՚ի ձեռս թշնամեաց վասն մեծի ծարաւոյն զոր կրէր ոչ գտանելով զգեղ այնպիսի մեծի բորբոքման,

անկաւ վերջապէս 'ի ձեռս թշնամեաց, եւ ետուն նմա ըմպել զջուր սառորակեայ ամանաւ, գոր իսկոյն ըմպեալ աղաղակելով ասաց Ջաստուածք բարիք որք վասն սղագունի հեշտութեան կորուսի զթագաւորութիւնս եւ 'ի թագաւորութենէ եղէ ծառայ: Վա՛յ ինձ որ վասն միոյ սակաւ ջրոյ 'ի յագատէ եղէ ծառայ, եւ 'ի թագաւորութենէ եղէ գերի, եւ կորուսի զթագաւորութիւնս, եւ զթագս, եւ զագատութիւնս, եւ սակայն կարէր մխիթարիլ, զի բռնադատեցաւ տրիլ 'ի յաւար 'ի ձեռս թշնամեաց ||| գերծուցանելով զբորբոքեալ ծարաւն կարէր կորուսանել:

Բայց որպիսի մխիթարութիւն յիւրոց չարեաց գտանել կարիցէ մեղաւորն, յորժամ վասն պակասի քան զմի անօթ ջրոյ, վասն միոյ փոքրագունի զգայականի հեշտութեան, վասն միոյ միայնոյ հայեցման աչաց, վասն միոյ գործոց յառաջադրութեան կամաց կորուսանէ զարեգակն զծայրագոյն բարի, որ է նոյն ինքն Աստուած: Ուստի կարէ ասել ըստ Լիսիմաքոսի, Աստուած բարի որքան վասն կարծագունի հեշտութեան (195ր) զթագաւորութիւնս կորուսի, եւ 'ի թագաւորութենէ եղէ ծառայ, ուրեմն վասն միոյ րօպէականի հաշտութեան, վասն միոյ փոքրագունի փափկութեան, յորդոյ յԱստուծոյ, եղէ գերի սատանայի, յաւիտենական երջանկութենէ, յորում սահմանեալ է, անկայ յաւիտենական թշուառութիւն: Ո՛վ եղկղի փափկութիւնք, ո՛վ դառն հեշտութիւնք, առ ինչ ողորմելի կացութիւն գիս ածեցէք:

Ո՛վ թէ ո՞րպիսի սրտացաւութիւն, ո՛հ թէ ո՞րպիսի սրտադողութիւն եւ աղեաց կտկտանք լինելոց են այսոքիկ սիրելի եղբարք իմ, մտածեցէք սակաւուկ մի, ուղղեցէք զվարս, եւ արարէք զարժանի ապաշխարութիւն զգեցեալ յանձանց ձերոց, եթէ գերծանիլ կամիք յայն աւուրն 'ի սոսկայի վճռոյն յաւիտենականի դատապարտութեան: Այսպէս զձեզ յորդորէ սուրբ Գրիգոր, ուրեմն զայն օրն սիրելի եղբարք իմ բոլոր դիտաւորութեամբ մտածեցէք, զկեանս ձեր ուղղեցէք. զվարս փոխեցէք, զչար փորձութիւնն ընդդէմ կալով յաղթեցէք, եւ զգործեցեալս լալով ապաշխարեցէք: Որ եթէ այսոքիկ բանքս իմ 'ի սիրտս ձեր ոչ տպաւորիցին, ասեմ ձեզ ըստ սրբոյն Բասիլոսի, թէ ոչ է ճահ քարոզել, եւ ոչ եւս խօսիլ զպատժոյ, այլ միւս կենի, այլ համարիլ զհեզ դատապարտեալ, որովհետեւ ունիք զքարեղէն սիրտս, որով բանիւք բժշկեցից (այսպէս խօսի սուրբն զիւրաքանչիւրոյ զմէնջ) որպէս խօսեցայց զարքայութենէն Աստուծոյ, ոչ հոգաս 'ի գեհենոյն ոչ երկնչիս, որպիսի յարմար դեղ գտից հոգոյ քո: Զի եթէ 'ի զարհուրեցեաց ոչ երկնչիս, զպայծառս եւ զգեղեցիկս արհամարհիցես վիճիմք ընդ քարեղէն սրտի:

Արդե՞ք իցէ կարելի ո՛վ քրիստոնեայ, որք ոչ կակղացուցանիցեն զսիրտքո, այն քաղցրագոյն բանքն, զոր ասելոց է Քրիստոս առ սուրբսն, եւ առ ծառայսն իւր, Եկայք օրհնեալ Հօր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւն: Եւ ոչ զարհուրեցուցանիցեն զձեզ այն բանքն զոր ասէ դատապարտելոց թէ Երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական, զոր պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:

Զայս անզգայութեան մարդկայնոյ սրտի զարմանայր սուրբն Ամբրոսիոս վասն այսորիկ աւետարանեմ ձեզ զինդութիւն երկնից, (196ա) եւ սիրտք ձեր շարժմամբ իւրք ուրախութեամբ ոչ ցնծան: Քարոզեմք զտրամալի դատաստանն եւ զգայութիւնք ձեր առ ապաշխարութեան արտասուօք ոչ արձակին: Սեռ անհաստատութեան է՛ յԱստուածային իրս ոչ խնդալ յաջողութեամբ եւ ոչ լալ ներհակութեամբ: Վասն այսորիկ սուրբն Յօհան Ոսկերբերան պատմէ զհեթանոսաց, թէ սովորք էին ասել զքրիստոնէից զոլ ստարանք կամ խենթք, զի կամ հաւատն զայն զոր ասեն կամ ոչ հաւատան, եթէ ոչ հաւատն են ստա-

բանք, զի վկայեն հաւատալ զնա, եւ եթէ ոչ հաւատան զնա ճշմարտապէս են խենթք կապելոյ շղթայիւք մինչ կենցաղավարին այնպէս յիմարութեամբ իբրեւ անբան կենդանիք, որպէս թէ ոչ իցեն տալոց յաւուր միում գհամար չար վարուց իւրեանց:

Եւ յետոյ եզրակացուցանէ սուրբն թէ ոչ է՝ զարմանք եթէ հեթանոսքն ոչ շարժին լսելով խօսելով զդատաստանէն: Բայց զարմանք եւ հիացումն է՝ տեսանել թէ մեք քրիստոնեայք որք հաւատամք հաստատապէս, թէ յաւուր միում Աստուած գալոց է դատել զաշխարհս ամենայն, սակայն կենցաղավարիմք այնպէս անսանձօրէն առանց երկիւղին Աստուծոյ: Անհաւատքն այսոքիւք ոչ շարժել ոչ զարմանան, բայց մեք որ հաւատամք մանաւանդապէս զարմանայի է այսպէս

կենցաղավարիմք:

Վերջացուցանեմ այն բանիւն Հիփօլիթոս մարտիրոսին, լսեցէք թէ ո՞րքան զարհուրելի իցէ դատաստանն, զիտեմ զի ինձ ասիցէք. այո՞ հայր սուրբ, ուրեմն ձեզ ասեմ զնմանէ հոգածութեամբ խորհեսցուք հանապազ, ՚ի տուէ եւ ՚ի գիշերի մտածեսցուք ՚ի տան հրապարակի ՚ի յեկեղեցիս խոկասցուք, զի մի՛ ՚ի զարհուրելի այնմիկ դատաստանին յորում ոչ է՝ աչառութիւն, ամօթով եւ պատկառանօք: Այսպէս ասէ սուրբն Գրիգոր, Բարձրագունեղ դատաւորն նախքան զդատաստանն հաշիւ կարէ եւ ՚ի դատաստանի ոչ կարէ:

ԹՄԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

(Շար. 34)



**ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ\***

Գ. ՄԱՍ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Գլուխ 11

**Ընդդիմութիւն եւ Ազէտ Արեւելքի մէջ**

Յոռատինիանոսի վերամիացուցած Հռոմէական Կայսրութիւնը իրմով ալ աւարտեցաւ: 568-էն ետք, բիւզանդական տիրապետութիւնը Իտալիոյ մէջ սկսաւ տկարանալ լոմպարտներու ներխուժումէն իսկ առաջ, կայսեր ներկայացուցիչին քաղաքը՝ Ռավենան Հռոմէ եւ հարաւային տարածքներէ մեկուսացման դատապարտելով: Միւս կողմէն, Կոստանդնուպոլսոյ հիւսիսն ու արեւմուտքը, Պալքաններն ու Յունաստանը աւարներու եւ սլաւներու շարունակական յարձակումներուն ենթարկուեցան: Տակաւին, Յոռատինոս Բ.-ի օրերէն իսկ (565-578) կայսերական բանակները պարտաւորուեցան դիմադարձել արեւելքէն եկող Պարսկական Կայսրութեան ներխուժումներուն:

Հերակլ կայսեր (610-641) իշխանութեան երկրորդ տարին, երբ Կայսրութիւնը արդէն իսկ անոր նախորդներուն օրերէն փլուզումի մէջ էր, պարսիկներ յարձակեցան Սուրիոյ վրայ եւ գրաւեցին Անտիոքն ու Դամասկոսը, իսկ 618 թուին՝ Պաղեստինն ու Եգիպտոսը: Սուրիոյ, Պաղեստինի եւ Եգիպտոսի մէջ միաբնակներ թէեւ հաշտ աչքով չնայե-

ցան պարսիկներուն եւ անոնցմէ սարսափելով սկսան ատել զանոնք, սակայն միաժամանակ կայսերական բանակներուն կողքին չդիմադարձեցին անոնց: Միւս կողմէն, սլաւներ մինչեւ Կոստանդնուպոլսոյ դռները հասան եւ արեւմտագոթեր Սպանիայէն դուրս վտարեցին հռոմէական բանակները: Հերակլ այս բոլորին հակադարձեց նոր բանակ մը կազմելով, զոր մասամբ մը Փինանսաւորեց եկեղեցիներուն զանձերը օգտագործելով եւ 622-628 թուականներուն երեք յաջող յարձակումներու ձեռնարկեց պարսկական տարածքներէ ներս: 630 թուին կնքուած դաշինքով Սուրիան, Պաղեստինը եւ Եգիպտոսը վերադարձուեցան Հռոմէական Կայսրութեան:

Իր յաղթանակի գենիթին, եկեղեցական նոր պայմաններու ձեռնտու նկատելով, Հերակլ նախաձեռնեց կայսրութեան տկարացման պատճառ հանդիսացած կրօնական բաժանման բարձման: 622 թուին, Կոստանդնուպոլսոյ Սերգիոս պատրիարքը (610-638) լուծում մը առաջարկեց, ըսելով թէ միաբնակներուն բանաձեւը կարելի է Քրիստոսի գործունէութեան վերագրել: Լաւողիկեցի Ապողինար Քրիստոսի «մէկ գործունէութիւն»ը համապատասխան նկատեց

\* Շար. նախորդ թիւէն:



Քրիստոսի մէկ բնութեան. իսկ Սեւերիոս Անտիոքացի այս տեսակէտը պաշտպանեց ընդդէմ Լեոն պապի Տոմարին, ուր կ'ըսուէր թէ իւրաքանչիւր բնութիւն իր գործունէութիւնը ունի: Սերգիոս Հերակլը համոզեց ըսելով թէ «մէկ գործունէութիւն» բանաձեւը կարելի է ներդաշնակել քաղկեդոնական վարդապետութեան երկու բնութիւններուն հետ՝ մինչեւ այն ատեն որ գործունէութիւն եզրը կը համապատասխանէ գոյառումին եւ ոչ թէ բնութեան. որովհետեւ, ըստ Քաղկեդոնի ժողովին, Քրիստոս մէկ գոյառում ըլլալով մէկ գործունէութիւն ունի: Պարսկական յաղթանակներով խանդավառ Հերակլ փորձեց այս բանաձեւին շուրջ համախմբել միաբնակութեան առաջնորդները եւ սկզբնական յաղթանակ մըն ալ արձանագրեց:

Դժբախտաբար, սակայն, այս փորձն ալ ձախողեցաւ: Նախ, Պաղեստինի քաղկեդոնական վանականները ընդդիմացան, որոնց այեհներ առաջնորդը՝ Սոփրոնիոս Երուսաղէմի պատրիարք ընտրուած էր 634 թուին: Այս ընդդիմութիւնը պարտաւորեց Հերակլը եւ Սերգիոսը Հռոմի օժանդակութեան դիմելու: Հռոմիոս պապ (625-638) առարկեց թէ վարդապետական նոր ուսուցումներու ներմուծումը տիեզերական ժողովներուն իրաւասութեան մէջ կ'իյնայ, առաւել՝ հաստատեց թէ գործունէութիւն եզրը աստուածաշնչական չէ եւ «երկու բնութիւններ»ը «երկու գործունէութիւններ» կ'ենթադրեն: Աւելի ուշ, ան ըսաւ թէ կը գիջի Քրիստոսի մէջ «մէկ կամք»ի գոյութեան:

Հռոմի այս դիւանագիտական մօտեցումը Հերակլի ամբողջ նախաձեռնութիւնը անիմաստ դարձուց: Մուհամէտի մահէն ետք, 632 թուին, արաբական թերակղզիէն իսլամական արշաւանքներու հոսանքը ծայր առաւ: 635 թուին Դամասկոսը ինկաւ իսլամներու տիրապետութեան տակ, իսկ 638 թուին՝ Անտիոքն ու Երուսաղէմը: Հակառակ

քաղաքական աննպաստ պայմաններուն, 638 թուին Հերակլ հրապարակեց իր Ekthesis հրովարտակը՝ Հռոմիոսի հետեւողութեամբ արգիլելով «մէկ գործունէութիւն» կամ «երկու գործունէութիւններ» քննարկումը եւ բանաձեւեց «միակամութիւն»ի նոր վարդապետութիւնը, ըսելով թէ Քրիստոսի մէջ միայն մէկ կամք գոյութիւն ունի: Մինչ այդ Սուրիան արդէն իսլամական իշխանութեան ենթարկուած ըլլալով, կայսերական այս հրամանագիրը միայն Եգիպտոսի քաղկեդոնականներուն եւ միաբնակներուն միջեւ գրգռութիւն յառաջացուց եւ դժբախտաբար օժանդակեց Եգիպտոսի իսլամներու կողմէ գրաւման՝ 641 թուին: Հերակլի մահէն ետք, 642 թուին, պարսիկներէն վերագրաւուած տարածաշրջանները այս անգամ վերջնականօրէն ինկան արաբներուն ձեռքը: Հերակլ չկրցաւ միաբնակութեան հարցը լուծել. սակայն, իր Ekthesis հրովարտակը դարձաւ կայսերական ուղղափառութեան չափանիշը եւ միակամութեան հարցը շարունակուեցաւ նոր գարգացումներ արձանագրել: Մաքսիմոս Խոստովանող (չ.580-662), քաղկեդոնական ուղղափառութեան ամենէն ականաւոր աստուածաբաններէն մին, այս վէճին մասնակցեցաւ կապադովկան տեսակէտը պաշտպանելով, թէ կամքն ու գործունէութիւնը կը վերաբերին Քրիստոսի բնութեան եւ ոչ թէ գոյառումին: Ըստ այս տրամաբանութեան, եթէ Քրիստոս երկու բնութիւններ ունի, Քաղկեդոնի ուսուցման համաձայն, հետեւաբար իր աստուածային բնութեան եւ մարդկային բնութեան համապատասխանող երկու կամքեր ալ ունի: Մաքսիմոսի տեսակէտին համաձայն գտնուեցաւ Մարթին Ա. պապը (649-655), որ 649 թուին, Հռոմի մէջ, սինոտ մը հրաւիրեց եւ յայտարարեց թէ Քրիստոսի մէջ երկու կամքեր, մին մարդկային եւ միւսը աստուածային, գոյութիւն ունին. առաւել, ան դատապարտեց Հերակլի Ekthesis հրովարտակը եւ Կոստանս Բ. կայսեր (642-

668) հրապարակած Typos հրովարտակը, որով ան կը խափանէր Քրիստոսի կամքին կամ կամքերուն շուրջ ծաւալած վէճը: Կայսեր դէմ այս ըմբոստութիւնը պատճառ դարձաւ Մարթին Ա. պապի Կոստանդնուպոլսոյ մէջ բանտարկութեան եւ Ղրիմ աքսորին՝ ուր եւ մահանացուն կնքեց:

Կոստանսի յաջորդը, Կոստանդին Դ. (668-685), փորձեց Հռոմի հետ հաշտութեան եզր մը գտնել: Ան Ագաթոս պապին (678-681) հետ բանակցելով, 680 եւ 681 թուականներուն, Կոստանդնուպոլսոյ մէջ, հրաւիրեց այսպէս ասաց 6-րդ Տիեզերական ժողովը: Այս ժողովը յայտարարեց թէ Քրիստոս ունի «երկու բնական կամքեր կամ կամեցողութիւններ ... որոնք իրարու չեն հակասեր ... սակայն անոր մարդկային կամքը անդիմադարձելիօրէն ենթակայ է աստուածային ամենակարող կամքին» (J. C. Ayer, ed., *A Source Book for Ancient Church History* (New York, 1913), p. 669): Ժողովը նաեւ դատապարտեց Սերգիոս պատրիարքը, Հերակլի Աղեքսանդրիոյ Աթոռին նշանակած Կիւրոս պատրիարքը եւ Հոնորիոս պապը: Այս որոշումով, քրիստոսաբանական գլխաւոր հակամարտութիւնները աւարտեցան եւ Յուստինիանոսի միաբնակութեան հակած նոր-քաղկեդոնական ուղղափառութիւնը եւ Հերակլի միազործունէութեան ու միակամութեան վարդապետութիւնները չարձարծուեցան: Ժողովը հաստատեց թէ Քրիստոսի մարդկային բնութիւնը հիմնուած է մարդկային կամեցողութեան եւ գործունէութեան վրայ, որոնք բնական են սակայն մեղանշական չեն եւ ներդաշնակ են աստուածային կամքին հետ, որ կը ղեկավարէ երկու կամքերը:

Քաղկեդոնի ժողովին նման, այս 6-րդ Տիեզերական ժողովն ալ Արեւմուտքին կողմէ տարուած յաղթանակ մըն էր Արեւելքի վրայ: Ասոր յաջորդեց ուրիշ սինոտ մը որ Հռոմի եւ Կոստանդնուպոլսոյ յարաբերութիւնները աւելի

սրեց: Նկատի ունենալով որ «Երեք Գլուխներ»-ու ժողովը եւ 681 թուի ժողովը կարգապահական կանոններ չէին սանձմանած, Յուստինիանոս Բ. (685-695, 704-711) 692 թուին, Կոստանդնուպոլսոյ մէջ, ժողով մը հրաւիրեց որպէսզի նախորդ երկու ժողովներուն աշխատանքը աւարտէ: Այս ժողովը կոչուեցաւ Տրուլլիան (Trullan), այսինքն՝ Գմբէթաւոր ժողով, որովհետեւ գմբէթաւոր սրահի մը մէջ գումարուեցաւ, եւ կամ՝ 5-րդ-6րդ (Quinisext) ժողով, որովհետեւ 5-րդ եւ 6-րդ Տիեզերական ժողովներու աշխատանքը աւարտեց. ժողովին միայն Արեւելքէն ժողովականներ մասնակցեցան: Ժողովը թէեւ կարգ մը հին կանոններ վերահաստատեց, սակայն անոնցմէ շատերուն արեւմտեան գործածութեան դէմ որոշումներ առաւ: Քաղկեդոնի ժողովին համամտութեամբ, որոշեց՝ «Կոստանդնուպոլսոյ Աթոռը Հին Հռոմի Աթոռին համահաւասար իրաւասութիւն պէտք է ունենայ»: Արտօնեց սարկաւազներու եւ քահանաներու ամուսնութիւնը եւ դատապարտեց գայն արգիւրդ հռոմէական կանոնը: Մերժեց Մեծ Պահքի ընթացքին շաբաթ օրերու պահեցողութեան հռոմէական սովորութիւնը: Արգիւրջ արեւմտեան այն խորհրդանշանը որ գՔրիստոս որպէս Գառն Աստուծոյ կը պատկերացնէ եւ անոր փոխարէն հրահանգեց գործածել Քրիստոսի մարդկային կերպարը՝ որպէս ցուցանիչ մարդեղացման խորհուրդին: Արեւմուտքը բնաւ չճանչցաւ այս ժողովը, որ Արեւելքի եւ Արեւմուտքի առաւել լարուածութեան պատճառ հանդիսացաւ եւ որուն ժխտական անդրադարձը պիտի տեսնենք 8-րդ դարու պատկերամարտութեան ընթացքին:

"A History of The Christian Church"  
 N. Y. (1985) - Williston Walker  
 Թրգմ.՝ ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՆՄԷՋԵԱՆ  
 (Շար. 37)

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

(Արամ Ա. Վեհափառ Հայրապետին համաձայն)

Գիրերու Գիւտի սկզբնական մտադրութիւնը, եւ հաւանաբար միակը՝ Աստուածաշունչի տարածման համար է: Ուստի, այս առիթը յարմար կը տեսնեմ Աստուածաշունչ եւ մշակոյթ յարաբերութիւններուն մասին այս յօդուածը տալու: Եւ քանի որ՝ մանաւանդ զարմացած եմ եւ կը զարմանամ մշակոյթի այն հասկացողութեան վրայ, որ կը շրջի մեր եկեղեցիներու բեմերուն եւ որ պարզապէս չի գիտակցիր այն օտարումին, որուն մէջ կը գտնուի:

Յօդուածս պիտի զարգացնեմ երկու կէտով.

Նախ, մշակոյթի բառարանային հասկացողութիւնը պիտի տամ, ապա պիտի ներկայացնեմ Արամ Վեհափառի մշակոյթի աստուածաբանութիւնը:

\* \* \*

Հայերէնէ հայերէն երկու գլխաւոր բառարան նկատի ունիմ. մէկը «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»ն է, իսկ միւսը՝ Մայիսեանի «Հայերէն բացատրական բառարան»ը:

Նախ ըսեմ, որ առաջինը կազմուած է մինչեւ 1830-ական թուականները հայ մատենագրութեան առ այդ ծանօթ ձեռագիր եւ տպագիր գործերու բառերով: Անիկա կ'ընդգրկէ «գրաբարեան բառագանձը գրեթէ լիովին» (Խմբագրական յանձնախումբ, Երկու խօսք):

Այս բառարանին մէջ չենք հանդիպիր «մշակոյթ» բառին, որովհետեւ անիկա նոր բառ մըն է. շուրջ հարիւր

տարիներու (Նորայր Բիւզանդացիի 1884-ին Կ. Պոլիս լոյս տեսած հռչակաւոր «Բառագիրք Ի Գաղղիերէն Լեզուէ Ի Հայերէն»ին մէջ, օրինակ, դեռ չի տեսնուիր «մշակոյթ» բառը: Այնտեղ Փրանսերէն «culture»ին դիմաց գրուած է՝ մշակութիւն – բառացի եւ փոխաբերական իմաստներով, անդ՛ մշակեալ, արտորայ, հարաւում, դարման, խնամք, դեգերում /յուսումնս, յարուեստս/, վարժ, հրահանգք, կրթութիւն, դաստարակութիւն: Նաեւ չի տեսնուիր Եղիա Տէմիրճիպաշեանի «Փրանսերէնէ հայերէն բառարան»ին մէջ, դարձեալ լոյս տեսած Կ. Պոլիս, 1896-ին. այնտեղ Փրանսերէն բառին դիմաց կը կարդանք՝ մշակութիւն, արտորայ, պարապում, մշակում եւ կրթութիւն):

«Նոր բառգիրք»ը «մշակութիւն» բառին դիմաց գրած է հետեւեալ հոմանիշները. երկրագործութիւն, արդիւնարարութիւն, ծառայութիւն, վաստակ, պաշտօն)մարմնաւոր կամ հոգեւոր):

«Բացատրական բառարան»ը, որուն առաջին հրատարակութիւնը 1944-45-ին էր, Երեւան, արդէն «մշակոյթ» բառը ունի: Սակայն անոր բացատրութիւնը տեսնելու համար կը յղէ «կուլտուրա» բառին: Ուստի՝ «կուլտուրա»ն. մարդկային բոլոր նուաճումները բնութեան ոյժերը հնազանդեցնելու, տեխնիկայի, կրթութեան, հասարակարգի բնագաւառներում. հասարակական, տնտեսական, մտաւոր կեանքի այս կամ այն վիճակը որեւէ դարաշրջանում, որեւէ ժողովրդի, դասակարգի մօտ. բուժում,

մշակում. կատարելագործութիւն, բարձր զարգացում եւ այլն:

Ինչպէս կը տեսնուի, բառարանային սահմանին մէջ, «մշակոյթ» բառը կը նշէ նիւթական եւ հոգեւոր ու իմացական գործունէութիւնը, զարգացումը՝ յիշեալ երեք տարածքներուն մէջ, նաեւ՝ անոնց արդիւնքները: Անշուշտ պարզ է, որ անոր սկզբնական իմաստը նիւթական է եւ կապուած է հող մշակելուն. արդ, փոխաբերաբար է, որ անիկա առած է հոգեւոր ու իմացական նշանակութիւններ:

Պէտք է ըսել, որ չկայ մշակոյթի ընդհանուր, սպառիչ եւ միանշանակ սահմանում: Արդէն բառին փոխաբերականօրէն ընկալուելու կարելիութիւնը՝ անկարելի կը դարձնէ որեւէ սահմանում, որ կը յաւակնի ընդհանրական, սպառիչ եւ միանշանակ ըլլալ:

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Արդի դարերուն՝ արեւմուտքի մէջ սկսած մշակոյթի ապակրօնացումը եւ անոր հետեւանք մշակոյթի տագնապի հարցը հայ իմացական կեանքին մէջ պատահականօրէն նիւթ եղած է: Այսօր արեւմուտքը արեւելք հասած է, անկախ անկէ նաեւ, որ հայեր գանգուածայնօրէն կ'ապրին արեւմուտքի գանգան ոստաններուն կամ քաղաքներուն եւ անոնց արուարձաններուն մէջ: Այսօր, աւելի ճիշդ երկար ժամանակէ ասդին հայութեան գանգուածներ կը գտնուին ապակրօնացած եւ ապակրօնացող ու տագնապահար մշակոյթներու մէջ: Արեւմուտքի հարցերը լուռ ու մունջ սողոսկած են մեր ընտանեկան եւ ընկերային գանգան յարկերէն ու եկեղեցիներէն ներս եւ մենք անոնց մարտահրաւէրները դեռ լուրջի չենք առած: Մտածումի եւ մեկնաբանութեան գուտ իմացական քանի մը փորձերու քովն ի վեր՝ սպասելի էր տեսնել, որ Հայ եկեղեցին ալ իր կարգին կը մտածէ անոնց մասին,

սակայն այնպէս չէ. այն հարցերուն առնչութեամբ աստուածաբանական մտածումը լուռ է կամ պարզապէս գոյութիւն չունի: Ներկայ կացութիւնը ստանձնելու անկարողութիւն մը տեսանելի է Հայ եկեղեցւոյ կեանքին մէջ: Եւ իր ներկան ստանձնել չկրցողը՝ չեմ գիտեր թէ ի՞նչ կրնայ ստանձնել:

Հայ եկեղեցւոյ բեմին վրայ գուցէ միակ անձը, որ մշակոյթի աստուածաբանութեան տեսութիւն մը բանաձեւած է, Արամ Վեհափառն է: Եւ սակայն Վեհափառը այն մասին արտայայտուած է իբր ատենապետ Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի կեդրոնական կոմիտէին: Հետեւաբար, աստուածաբանական մտածումի առաջին քայլը մեզի կու գայ միջ-եկեղեցական շրջագիծէն: Ասիկա՞ ալ արդեօք հաստատում մըն է, որ հայ միտքը խօսելու համար այլ մշակոյթներուն պէտք է երթայ:

Վեհափառը իր տեսութիւնը պարգած է «Gospel and Culture» վերնագրին տակ, որ ներառուած է «In Search of Ecumenical Vision» հատորին մէջ (Կ'օգտագործեմ երրորդ հրատարակութիւնը, որ կատարուած է 2002-ին, Անթիլիաս)

Ուրեմն, Աւետարանը եւ մշակոյթը: Նախ, ինչո՞ւ համար Վեհափառ Հայրապետը իր յողուածը չէ վերնագրած Աստուածաշունչը եւ մշակոյթը: Որովհետեւ՝ «մինչ Աստուծոյ ինքնայայտնութիւնը տեղի ունեցաւ յուղայական մշակոյթին մէջ, Հոգեգայլուտը էր Աստուծոյ անաչառ ներգործութիւնը բոլոր մշակոյթներուն մէջ»: Յիսուսի խոստումին կատարումն է Հոգեգայլուտը, եւ որովհետեւ անով է, որ եկեղեցւոյ առաքելութիւնը կը սկսի եւ Աստուածաշունչի միւս գիրքերն ալ այլ մշակոյթներու մէջ մարմնաւելի կը դառնան: Նաեւ՝ որովհետեւ Աւետարանը Յիսուս Քրիստոս ինքն է, այսինքն՝ լրումը աստուածային յայտնութեան եւ «կենդանի հանդիպումը Աստուծոյ եւ մարդկութեան»:

Ի՞նչ է Վեհափառ Հայրապետին մշակոյթի աստուածաբանութիւնը:

Բայց ի՞նչ է մշակոյթը, ըստ իրեն:

Մշակոյթը կեանքի արտայայտութիւն մըն է, ինքզինք ըլլալու ձեւ մը, կերպ մը ինքզինք ուրիշներու եւ բնութեան առնչելու: Անիկա կ'ընդգրկէ ամբողջութիւնը լեզուներու, աւանդութիւններու, հաւատալիքներու, հաստատութիւններու եւ սովորութիւններու, որոնք մարդիկը մէկ կ'ընեն, գանոնք իբր համայնք մը կը կազմեն: Մշակոյթը բարդ իրականութիւն մըն է, որ ժողովուրդի մը հոգեւոր, նիւթական, իմացական եւ զգացական երեսները կ'ընդգրկէ: Ժողովուրդի մը ինքնիսկութիւնը (self-identity) կ'արտայայտուի մշակոյթով: Մշակոյթը ուժական իրականութիւն մըն է, եւ իբրեւ աշխարհին՝ ենթակայ է փոփոխութեան: Անփոփոխ մշակոյթ չկայ:

Մշակոյթը եւ կրօնքը սերտօրէն իրարու կապուած են, եւ բազմաթիւ ընկերութիւններու մէջ անոնք իրենք զիրենք կ'արտայայտեն իրարու ընդմէջէն, զիրար պայմանաւորելով. այսինքն՝ մշակոյթը ինքզինք կ'արտայայտէ կրօնքով, իսկ կրօնքն ալ ինքզինք կ'արտայայտէ մշակոյթով: Մին չկայ առանց միւսին: Եւ մինչ յուզայականութեան, իսլամութեան եւ հնդկականութեան նման կրօնքներու համար, հիմնարար մշակոյթը սրբազան մոտերն է բացարձակ իրականութեան հետ հանդիպման, քրիստոնէութեան համար մշակոյթը ունի գործիական (instrumental) եւ ժամանակաւոր արժէք, գրած է Վեհափառը: Այլ խօսքով, ըստ քրիստոնէական հասկացողութեան, մշակոյթը «սրբազան մոտեր» չէ, այլ միայն միջոց է: Միջոցը փոփոխական իրականութիւն մըն է, իսկ «սրբազան մոտեր»ը անփոփոխ իրականութիւն մըն է: Բացարձակ իրականութիւնը կամ աստուածայինը չի գար մշակոյթին մէջ, այլ մշակոյթի ճամբով կու գայ: Քրիստոնէական հասկացողու-

թեան մէջ աստուածայինի յայտնութիւնը կու գայ ընթացքի մը մէջ կամ ընթացք կ'արարէ: Անիկա չի գար արժէքներու անշարժ համակարգի մը մէջ: Առաւել, աստուածայինը մշակոյթով կու գայ այն պարագային, երբ մշակոյթը իր ուղղութիւնը կ'առնէ «յայտնեալ ճշմարտութիւն»էն:

Աւետարան-մշակոյթ յարաբերութիւններու ծիրին մէջ, Վեհափառը կը հրաւիրէ՝ երեք երեւոյթներու ուշադրութիւն դարձնել:

Առաջին.

արդի ընկերութիւնը բազմազանական է (pluralist): Այսինքն՝ այսօր մարդկութիւնը կ'ապրի տարբեր կրօնքներու մերձակորութեան մէջ. տարբեր կրօնքներ քով քովի եւ շատ մօտիկ կեցած են ու իրենց դերը կը կատարեն: Բազմազանութիւնը դարձած է գոյութեանական եւ տիեզերական իրականութիւն մը: Անիկա թափանցած է կեանքի բոլոր ծիրերուն մէջ, եւ յառաջացուցած է նոր վախեր, նոր յոյսեր եւ նոր մարտահրաւէրներ:

Երկրորդ.

մշակոյթի-կրօնքի-ցեղային ինքնութեան անմիջական կոյր փոխազդումներուն պատճառով, մշակոյթները դարձած են աղբիւրներ՝ ընկերային, քաղաքական, տնտեսական, կրօնական եւ ցեղային բաժանումներու եւ լարուածութիւններու:

Յրրորդ.

արեւմտեան ընկերութիւնը ինքնութեան ուշագրաւ փոփոխութիւն մը կրած է. անիկա դարձած է ճարտարագիտական ընկերութիւն, որ աշխարհային ոգի կ'արտադրէ եւ իր մշակոյթը կը պարտադրէ մնացեալ աշխարհին վրայ:

Արդ, բազմազանական ընկերութեան մէջ, Աւետարանին եւ մշակոյթներուն հանդիպումը մեծ մարտահրաւէր մը կը կարդայ եկեղեցիներուն եւ կոչ կ'ընէ անոնց մտածելու՝ թէ ինչպէ՞ս կրնան ազատագրել, կերպարանափոխել

եւ վերստին ուղղել մշակոյթները. փոխանակ հին ձեւով մտածելու, թէ ինչպէ՞ս կրնան Աւետարանը եւ մշակոյթները իրարու առնչել: Աւետարանը եւ մշակոյթները իրարու առնչելը՝ չճանչնալ է Աւետարանին ազատագրիչ, կերպարանափոխիչ եւ ուղղութիւն տուող ոգին: Եւ ընդունիլ է մշակոյթները՝ իբր հաւասարագոր Աւետարանին: Այսպիսի ընկալում մը Աւետարանը կը պարպէ իր խնդիրներէն, այսինքն՝ աստուածային խորքէն ու գայն կը դարձնէ մշակութային արտայայտութիւն մը՝ ի շարս այլ մշակութային արտայայտութիւններու: Մշակոյթները Վեհափառի հասկացողութեան մէջ կան իբր մարդկային աւանդներ, իսկ Աւետարանը կայ իբր երկեզ իրականութիւն. անիկա Աստուծոյ եւ մարդ էակի հանդիպման գիրքն է եւ հանդիպման կեդրոնական անձը՝ Յիսուս Քրիստոսն է:

Սակայն ի՞նչ է Աւետարանին եւ մշակոյթներուն հանդիպման մեծ մարտահրաւէրը:

Ժամանակակից մշակոյթները խոր տազնապի մէջ են: Անոնք դարձած են ասպարէզ՝ չարիքի, կործանումի եւ մահուան նոր ուժերու: Որո՞նք են հետզհետէ մեծցող մշակութային տազնապին ախտանիշները:

Աշխարհը կը շարժի դէպի մէկ տիրապետող մշակոյթ: Այս նոր համաշխարհային մենամշակոյթին պարտադրութիւնը՝ յրջորէն կը սպառնայ մարդկութեան եւ ամբողջ ստեղծագործութեան: Արդի մշակոյթը կը հիմնուի շահի, քանակական աճի եւ շահագործումի վրայ: Անիկա կը մերժէ մասնակցութիւնը, բաժնեկցութիւնը եւ հաւասար իրաւունքները: Եւ կ'անմարդկայնացնէ ու կը քայքայէ տեղական մշակոյթները, այլեւ ժողովուրդները կ'այլասերէ իրենց մշակութային արմատներէն:

Արեւմտեան մշակոյթը տիրապետուած է տնտեսական նիւթապաշտութեամբ, որ արժէքի դատումը նուազե-

ցուցած է ծախսեր եւ շահեր հաշուելու արարքի: Անիկա բռնուած է արտադրապաշտ ձգտումով մը, որ կ'անտեսէ մարդկային անձին արժանապատուութիւնը եւ ստեղծագործութեան ամբողջութիւնը: Անիկա կ'առաջնորդուի աշխարհայնացման ոգիով, որ մարդկայինը կ'ուզէ շեշտել ի հեճուկս աստուածայինին:

Աշխարհայնացման եւ սպառողականութեան ընդարձակումը լուսանցքային դարձուցած են քրիստոնէական արժէքները: Մշակոյթները տիրապետուած են բարոյական այնպիսի արժէքներով, որոնք աշխարհայնացման եւ սպառողականութեան հետ ձեռք ձեռքի տուած կը քայլեն: Այս բարոյական արժէքները հակառակ են Աւետարանին: Աշխարհի տիրապետող մշակոյթները աշխարհայնացման կուռքերը կը պաշտեն, հետեւաբար բարոյական եւ հոգեւոր անկումի մէջ են:

Արեւմտեան մշակոյթները այսօր կը յատկանշուին բարոյական յարաբերականութեամբ, այսինքն թէ՛ բարոյական արժէքները յարաբերական դարձած են ներկայ մշակոյթներուն մէջ: Ինչ որ ասոր համար բարոյական արժէք է՝ անոր համար չէ. կամ ինչ որ անոր համար բարոյական արժէք է՝ ասոր համար չէ: Ոմանք կը խորհին, թէ բարոյական այս յարաբերականութիւնը՝ մարդոց միջեւ հանդուրժողութիւն եւ փոխադարձ յարգանք կ'ապահովէ. ուրիշներ ալ կը հաւատան, որ անիկա կը կործանէ ժողովուրդներու բարոյական հիմքերը եւ գանոնք կ'առաջնորդէ քայքայումի:

Մարդկութիւնը եւ ամբողջ ստեղծագործութիւնը աստուածակեդրոն աշխարհայնացքէ՝ մարդակեդրոն աշխարհայնացքի անցնելու վրայ են: Մարդկութիւնը ստեղծած է ուժի նոր «կեդրոններ», այսպէս՝ տնտեսութիւն, արագ հաղորդակցութեան միջոցներ եւ ճարտարագիտութիւն: Իր հպարտութեան մէջ, մարդկութիւնը մոռցած է իր

սահմանաւոր բնութիւնը: Ինքնաբաւ ըլլալու զգացումը՝ մարդկութիւնը գրկած է բարձրագոյն իրականութեան մը իր կախումնաւորութեան եւ հաշուետուութեան զգացումէն: Մշակոյթներուն սրբազան եւ միասփք տարածքները աշխարհայնացուած են: Այս մարդակեդրոն ընթացքը մշակոյթները նուազ մարդկային դարձուցած է: Արդի մշակոյթները, յատկապէս արեւմտեանները, կեանքը չեն առած իբր Աստուծոյ նպատակին կատարում: Ունենալը դարձած է մշակոյթներուն նպատակը: Այսօրուան մշակոյթները ոչ թէ միայն կը կործանեն իմաստը եւ կոչումը մարդկային կեանքին, այլեւ ի վիճակի են կործանելու կեանքն իսկ: Փոխանակ ըլլալու միջոցներ մարդկային ինքնիրագործումի, անոնք դարձած են միջոցներ ինքնակործանումի:

Սակայն ինչպէ՞ս կարելի է մշակոյթներու անկումային այս հանգրուանէն դուրս գալ: Վեհափառը կ'ըսէ՝ ճանչնալով Աւետարանը: Ժամանակակից մշակոյթներուն մէջ Աւետարանի ճանաչումը ինչպէ՞ս կրնայ օգնել ելքի ճիգին: Վեհափառը քանի մը կարեւոր պայմաններ ցոյց տուած է.

1.- Աւետարանը կը խօսի եւ համոզիչ կ'ըլլայ այն պարագային, երբ մարդոց կը փոխանցուի իրենց սեփական մշակոյթին ճամբով: Բանն Աստուած մարմնացաւ տուեալ մշակոյթի մը մէջ: Անիկա պէտք է վերամարմնանայ մշակոյթի մէջ եւ պատշաճ պատասխան գտնէ անոր ճամբով: Հետեւաբար, Աւետարանը կը ստացուի, կը փորձառնուի, կը խոստովանուի եւ կը հռչակուի մշակոյթի մը ճամբով: Մշակոյթը կը խաղայ որոշադրիչ դեր Աստուած-մարդ երկխօսութեան մէջ:

Ուրեմն,

Աւետարանը կը փորձառնուի եւ կ'արտայայտուի տարբեր կերպերով եւ տարբեր ժամանակներու մէջ: Եկեղեցւոյ պատմութիւնը ցոյց կու տայ, որ

Աւետարանին տրուած հարագատ պատասխանը միշտ ալ եղած է շրջագծային (contextual): Արդարեւ, Աւետարանը իր բնոյթով իսկ շրջագծային է:

Բայց ինչպէ՞ս Աւետարանին մասին տարբեր մշակութային արտայայտութիւններ իրարու հետ երկխօսութեան մէջ կրնան մտնել: Եկեղեցին շատ տառապած է չկարենալով շինիչ երկխօսութիւն գարգացնել Աւետարանի տարբեր արտայայտութիւններուն

(եկեղեցակական գրութիւններ, ծէսեր, եւայլն) եւ մեկնաբանութիւններուն միջեւ: Արտայայտութեան եւ մեկնաբանութեան զանազանութիւնները եկեղեցին տարած են ներքին լարումի, բեւեռացումի եւ բաժանումի:

2.- Աւետարանը պէտք չէ որ պարզապէս մէկ մշակոյթէ ուրիշ մշակոյթ փոխանցուի, այլ պէտք է վերամարմնանայ: Իբր մարդկային էակներու կեանքին մէջ Աստուծոյ փրկարար արարք՝ Աւետարանը պէտք է կատարեալապէս իւրացուի ժողովուրդներու կողմէ, անոնց մշակութային կերպերուն, հասկացողութիւններուն, օրինաչափութիւններուն եւ արժէքներուն մէջ ու ճամբով արտայայտութիւն գտնէ: Աւետարանը կը վերաբերի Աստուած-մարդկութիւն յարաբերութիւններուն: Հետեւաբար, անիկա պէտք չէ առանձնացուի իրական աշխարհէն: Անիկա պէտք է վերամարմնանայ մարդոց եւ համայնքներու կեանքին մէջ:

3.- Աւետարանը պէտք է անցնի բոլոր մարդկային սահմանները եւ տարուի բոլոր ժողովուրդներուն, մշակոյթներուն եւ ամենուր: Աւետարանը միայն ներքին սահմանի մէջ պահուելիք իրականութիւն մը չէ, այսինքն՝ տեղական կիրարկումի մը համար չէ միայն, այլեւ անիկա իրականութիւն մըն է, որ պէտք է դուրս տանիլ, տարածել: Բայց սահմաններէն անդին անցնելու արարքը ուրիշներու մշակութային արժէքներուն, օրինաչափութիւններուն եւ աւանդու-

թիւններուն նկատմամբ յարգանք եւ նրբանկատութիւն պէտք է ունենայ: Առաքելութիւնը Աւետարանը պէտք է հռչակէ ստացող մշակոյթին ճամբով-աւետարանչութիւն կատարողները պէտք է որ իրենց մշակոյթը պարտադրեն: Երբ Աւետարանը մշակոյթ մը կը պարտադրէ՝ կը քանդէ գոյութիւն ունեցողը:

4.- Աւետարանը անդր-մշակութային է, կ'անդրանցնի բոլոր մշակոյթները: Զայն կարելի է նոյնացնել մշակոյթի մը հետ, այլապէս ժխտուած կ'ըլլայ իր բնոյթն իսկ: Քրիստոս մեզի կը հանդիպի մեր սեփական մշակութային շրջագծին մէջ: Ան կը խոստովանուի մշակութային իւրայատուկ հասկացողութիւններով եւ կերպերով: Աւետարանը կը հաստատուի մշակոյթներու ճամբով, ոչ թէ մշակոյթներու մէջ: Մշակոյթը միայն գործիք մըն է, հիմնականոյց եւ շրջագիծ՝ Աւետարանին մարմին տալու եւ յողանորելու համար գայն: Շատ մը եկեղեցիներ Աւետարանը կը նոյնացնեն մշակոյթին, ու կը վտանգեն Աւետարանին տիեզերականութիւնը: Աւետարանին մարմին տալ մշակոյթի մը մէջ տարբեր բան է, իսկ մշակոյթի մը աղբիւրը եւ քննանիշը ընելը յայտնեալ ճշմարտութեան՝ տարբեր բան: Աւետարանը մեզի կ'օգնէ հարազատ մեր բնավայրին մէջ ըլլալու, սակայն միաժամանակ քննդատականօրէն բաց է այլ մշակոյթներու:

Բազմազանական այս ներկան առիթ է վախի՛ թէ յոյսի:

Աշխարհի հետզհետէ աւելի բազմազանական դառնալուն հետ՝ Աւետարանը բազմամշակութային շրջագծի մէջ ինչպէս հռչակելու հարցը կը ստանայ լուրջ կարեւորութիւն եւ առաջնահերթութիւն:

Մշակոյթները այլեւս ինքնաբաւ չեն. անոնք տեւաբար կը հաղորդակցին եւ կը փոխազդեն: Ժողովրդային գանգ-

ուածներու տեղափոխութիւնները՝ աշխարհի բոլոր մասերը դարձուցած են բազմամշակութային: Այլ չկայ քրիստոնեայ կամ ոչ-քրիստոնեայ աշխարհ: Աշխարհը մէկ տեղ եղած է, մէկ համայնք, ուր մշակոյթները չեն կրնար իրենք զիրենք իրարմէ անջատ պահել: Անոնք ներառնչուած են եւ փոխներթափանցուած: Մշակոյթներուն ներառնչուածութիւնը եւ փոխներթափանցուածութիւնը հարազատ են Աւետարանի բնոյթին: Աւետարանին էթոսը մշակութային բազմազանութիւնը կը քաջալերէ: Մշակոյթները փոխադարձաբար զիրար կը ներչնչեն, կը սրբազրեն, ասպարէզ կը կարդան իրարու եւ իրարմով կը հարստանան՝ շինիչ երկխօսական յարաբերութիւններով:

Աւետարանը ամբողջ աշխարհին համար է: Ասիկա եկեղեցւոյ աւետարանելու կոչումն է: Երկխօսութիւնը առաքելութեան այլընտրանք մը չէ. երկխօսութիւնը պէտք է մեր հաւատքը զիջումի տանի: Երկխօսութիւնը հաւատքի զիջումի համար չէ, այլ՝ սորվելու եւ մտահոգութիւններ ու համոզումներ բաժնեկցելու ուրիշ մշակոյթներու եւ կրօնքներու հետ: Աւետարանի հռչակման մէջ ինքնավստահ պէտք է ըլլայ, եւ միաժամանակ համեստ: Այլ կրօնքներու հետ պատասխանատու երկխօսութիւն մը եւ ամուր կապուածութիւն մը Աւետարանի եզակիութեան՝ իրարու չեն հակասեր:

Բայց ի՞նչ կը նշանակէ բազմաթիւ կրօնքներով աշխարհի մը մէջ աւետարանելու կոչում ունենալը: Ի՞նչ են աւետարանչութեան մարտահրաւէրները այլ կրօնքներով լեցուն այս շրջագծին մէջ: Համադաշնումի (syncretism) վախը մեր հետ պիտի ըլլայ ամէն անգամ՝ երբ փորձը կ'ըլլայ Աւետարանը այլ հաւատքի մշակոյթներու առնչել: Սակայն ասիկա պէտք է պատճառ ըլլայ, որ եկեղեցին իր արտաքնահաս առաքելութեան մէջ շարժի Աւետարանի եզակիութեան եւ տիեզերականութեան նորոգեալ գիտակցու-



թեամբ եւ տեսիլքով՝ եւ համբերութեամբ աւանդելու անոր կոչին վաւերականութիւնը եւ կարեւորութիւնը, որ պէսզի կարենայ բոլոր ժողովուրդները աշակերտ դարձնելու Քրիստոսեան պատգամին: Վեհափառին մտածումը յարձակողական աւետարանչութեան մը չի վերաբերիր, ինչպէս ինքն իսկ նշած է, այլ՝ Աւետարանին պատգամը աւելի յըջութեամբ եւ պատասխանատուութեամբ ուրիշ մշակոյթներու տանելու:

Վեհափառը մշակոյթներ դատելու հետեւեալ քննանիշերը առաջադրած է:

Աւետարանչաբանական (missiologic) հիմնական համոզում մըն է, որ Աւետարանը մշակոյթներուն մէջ ունի մարգարէական դեր մը: Քրիստոս յատուկ մշակոյթի մը մէջ ապրեցաւ, զոր հաստատեց եւ նոյն ատեն դատեց: Յիսուս Քրիստոսի մահն ու յարութիւնը վերջ մը կը դնեն բոլոր մշակութային յաւակնութիւններուն: Աւետարանը բոլոր մշակոյթներուն դիմաց կայ իբր քննադատական, ստեղծագործ եւ փրկկազործ իրականութիւն:

Ինչպէ՞ս պէտք է դատել մշակոյթ մը:

1.- Աւետարանը Աստուծոյ ինքնա-յայտնութիւնն է: Մշակոյթները իմաստէ գուրկ են առանց Աստուծոյ յայտնիչ ներկայութեան, որ կ'անդրանցնի բոլոր մշակութային հասկացողութիւնները, օրինաչափութիւնները եւ արժէքները: Միայն Աւետարանը կրնայ իրաւ արժէք տալ մշակոյթներուն՝ անոնց մէջ անդրանցական, հոգեւոր եւ վախճանաբանական տարածքներ ներբերելով:

2.- Աւետարանը կը մերժէ մշակութային գերակայութիւնը, նաեւ մշակոյթներու որեւէ նուիրապետութիւն: Բոլոր մշակոյթները հաւասար են եւ լեցուն են երկդիմութիւններով: Եւ անոնց երկդիմութիւնները վտանգաւոր են ու առիթ տարբեր եւ հակասական ընկալումներու, այսինքն՝ վայր են թէ՛ սխալ եւ թէ՛ ճշմարիտ ընկալումներու: Ճար-

տարագիտական յառաջդիմութիւնը, տնտեսական աճը եւ քաղաքական ուժերը մշակոյթները կը դարձնեն չարիքի եւ մահուան միջոց- իսկ չարիքի եւ մահուան մշակոյթները կը կազմալուծեն եւ կը բեւեռացնեն ժողովուրդները: Արդ, Աւետարանը ունի մշակոյթները վերուղղող իսկութիւն: Անիկա չարիքի եւ մահուան ներքին ուժերը յաղթահարելու զօրութիւնը կը տայ մշակոյթներուն:

3.- Ճարտարագիտական յառաջդիմութիւնը ձգած է այն տպաւորութիւնը, թէ մշակոյթներուն զօրութիւնը անխորտակելի է: Աւետարանը պէտք է ասպարէզ կարդայ այս կարծիքին: Աւետարանը յիշեցում է մշակութային սահմանափակուածութեան եւ մարդկային սահմանաւորութեան: Մշակոյթներուն մէջ չարիքի ու մահուան ուժեր կը բանին, որոնք կ'անմարդկայնացնեն եւ գերի կը դարձնեն մարդիկը: Աւետարանը այն ուժերը հանելու եւ վանելու համար է:

4.- Մշակոյթները մարդկային համայնքը պառակտած են: Անոնք անարդարութիւն եւ ճնշում բերած են: Բազմաթիւ մշակոյթներ տակաւին նախնական, խտրական եւ այլամերժական են: Այս բոլորը պատճառ են բազմաթիւ վէճերու եւ չարիքներու: Վեհափառը այս կէտին վրայ ակնարկած է, որ Աւետարանին մարգարէական դատաստանը պէտք է սկսի Եկեղեցւոյ իսկ մէջէն: Այլ կրօնքներու անցնելէ առաջ Եկեղեցին ինքն իր մէջ պէտք է լսէ Աւետարանին մարգարէական դատաստանը եւ ինքզինք նորոգէ:

5.- Աւետարանը իր կարգին մարտահրաւէրին առջեւն է մշակոյթներու, որոնցմով շրջապատուած է: Աւետարան-մշակոյթ երկխօսական փոխներգործութեան մէջ զգոյշ պէտք է ըլլալ եւ Աւետարանին օրինաչափութիւնները եւ ըմբռնումները պէտք է պարտադրել: Ոչ այ պէտք է մշակութային քննանիշերով դատել Աւետարանը: Մշակութային քննանիշերը անբաւարար են Աւե-

տարանը դատելու:

Աւետարան-մշակոյթ յարաբերութիւններուն մէջ, Աւետարանը ոչ միայն մարտահրաւէր կը կարողայ եւ կը դատէ մշակոյթները, այլեւ կը ձեւաւորէ, կը մաքրամաքէ եւ կը կերպարանափոխէ գանոնք, անոնց տալով նոր ինքնութիւն: Կերպարանափոխումի այս գործընթացը կ'ենթադրէ ազատագրութիւն եւ վերանորոգում:

1.- Աւետարանը նոր կեանք մը կը ծնի: Այսօր, աւելի քան երբեք, մարդկութիւնը կը գտնուի բազմաթիւ եւ այլատեսակ կործանարար ուժերու դէմ յանդիման, որոնք արտայայտութեան կողմէն մշակոյթներու ճամբով: Զինապաշտութիւնը, սպառողականութիւնը եւ ընկերա-տնտեսական անարդարութիւնը արտագրած են բրտութեան տեսակ մը, որ կը սպառնայ մարդկային կեանքին եւ ամբողջ ստեղծագործութեան: Ինչպէ՞ս կարելի է մահաստեղծ այս մշակոյթին մէջ ստեղծել կենսաստեղծ մշակոյթ: Աւետարանի կենսատու պատգամին ճամբով, եկեղեցիները կոչուած են ասպարէզ կարդալու բրտութեան եւ մահաստեղծ մշակոյթներուն, եւ հռչակելու եւ տօնելու կենսատու Աւետարանը:

2.- Աւետարանը կը կերպարանափոխէ մշակոյթները: Մշակոյթները խորապէս կ'ազդուին մարդկային մեղքէն. շահագործումը, տիրապետութիւնը եւ անմարդկայնութիւնը՝ բրտութիւն, աղքատութիւն եւ անգործութիւն կը ծնին: Աւետարանն է, որ կրնայ գանոնք վերացնել մարդկային կեանքէն, կերպարանափոխելով մշակոյթները, գանոնք ազատագրելով իրենց ներքին շար ուժերէն եւ անոնց հայթայթելով գորութիւնը պայքարելու ընդդէմ ընկերային անարդարութեան, բարոյական այլասերումի եւ տնտեսական շահագործումի:

3.- Աւետարանը մշակոյթները կ'ազատագրէ: Աւետարանը պէտք է մարմնանայ տուեալ մշակոյթի մը մէջ՝ որպէսզի ազատագրէ: Աւետարանը ազա-

տագրիչ դէպք է. անիկա կ'ազատագրէ մշակոյթները իրենց ինքնաբանտարկումէն: Որեւէ մշակոյթ որ օտարում կը ծնի եւ այլամերժութիւն՝ կը ժխտէ Աւետարանը:

4.- Աւետարանը կը վերանորոգէ մշակոյթները: Անիկա նոր կեանք կը խոստանայ, ըստ Յլտ 21.5-ի: Քրիստոս նոր մշակոյթ մը չբերաւ: Ան չկործանեց հրէական մշակոյթը: Ան նորոգեց եւ կերպարանափոխեց գայն: Իր աւետարանական գործունէութեան մէջ, Պօղոս Առաքեալ եւս չփնտռեց մշակոյթները փոխարինել քրիստոնէական մշակոյթով մը: Այլ ան կոչ ուղղեց ազատագրելու ինչ որ հարազատօրէն մարդկային է մշակոյթին մէջ:

5.- Աւետարանը կը վերահաստատէ ամբողջութիւնը եւ հարազատութիւնը մշակոյթներուն: Աստուծոյ փրկարար արարքը Քրիստոսի մէջ վերահաստատել է իր ստեղծագործութեան ամբողջութիւնը եւ հարազատութիւնը: Փրկութիւնը կը ներառէ մարդկութիւն-Աստուած-ստեղծագործութիւն յարաբերութիւնները: Եւ այն յարաբերութիւններուն մէջ՝ Աւետարանին եւ մշակոյթներուն փրկութիւնը: Աւետարանի ճամբով մշակոյթները կը բուժուին եւ իրենց հարազատութիւնը կը վերագտնեն եւ կը վերամբանան:

Աւետարանը միացնող ազդակ մըն է ի միջի մշակութային գանազանութիւններու: Անիկա կրնայ նաեւ բաժանարար ազդակ մը ըլլալ:

1.- Մշակոյթներու իւրայատկութիւնները փոխուած են բաժանարար պատերու: Նաեւ եղած են պաշտպանութեան, ինքնապահպանումի եւ գոյատեւման ուժեր: Աւետարանին մէջ տեղակայուելու եւ համաշխարհայինը կը փոխներգործեն: Աւետարանը կ'օգնէ ժողովուրդներուն՝ որ անոնք հաստատեն իրենց մշակութային ինքնութիւնը, եւ միաժամանակ գանոնք ի վիճակի կը դարձնէ անդրանցներու իրենց մշակութային արգելք-

ները, եւ դառնալու մաս՝ համաշխարհային համայնքին:

2.- Աւետարանին մէջ կայ ստեղծագործ միջկախումնաւորութիւն ընդմէջ մէկուն եւ բազմաց: Աւետարանը եւ մշակոյթները գիրար կ'ամբողջացնեն: Աւետարանը իրական յայտնակերպութիւնն է միջ-եկեղեցական եզրաբանութեամբ՝ «միութեան մէջ զանազանութեան» եւ «զանազանութեան մէջ միութեան»: Միեւնոյն Աւետարանը կը ստացուի, կը փորձառնուի եւ կը հռչակուի մշակոյթներու բազմազանութեան ճամբով: Երբ աւետարանչութիւններ ժողովուրդները օտարացուցած են իրենց մշակոյթներէն, ապա Աւետարանը եղած է բաժանարար ազդակ մը: Նման աւետարանչական մեթոտարանութիւն եւ կիրարկում այժմ անցեալին կը պատկանին, յուսացած է Վեհափառը:

3.- Աւետարանը բուժարար իրականութիւն մըն է: Աւետարանը ժողովուրդներու չէ տարուած միայն ուսուցումով եւ քարոզչութեամբ, այլ սփոփումով: Սփոփումը հաշտեցում է: Անիկա քով քովի կը բերէ անոնք՝ որոնք

իրարմէ բաժնուած էին: Աւետարանը Աստուծոյ սփոփարար ներկայութիւնն է: Աւետարանը կոչ է առ Աստուած դարձի, եւ Աստուծոյ ու ստեղծագործութեան հետ նորոգեալ յարաբերութեան:

ՀՈՒՍԿ ԲԱՆ

Ահաւասիկ մշակոյթի աստուծաբանութեան վերաբերող Վեհափառին մտածումները: Անոնք, ինչպէս ըսի, մեր մէջ կը յայտնուին անուղղակիօրէն, այսինքն՝ բեմէ մը որ միջ-եկեղեցականն է: Եւ մեզի կը հայթայթեն արդի անդրադարձ մը «յայտնեալ ճշմարտութիւն» եւ մշակոյթ յարաբերութիւններու մասին: Հայ Եկեղեցին հրաւիրուած է ուրուագծային այս մերձեցումէն անդին անցնելու եւ մշակութային իր կացութիւնը Քրիստոսեան լոյսով վերանորոգելու: Նաեւ՝ վերստանձնելու համամարդկային այն առաքելութիւնը, որուն լծուած էին Ոսկեդարեան մեր Հայրերը:

ԳԱՌՆԻԿ ԳԶՆՅ. ԳՈՅՈՒՆԵԱՆ



## ԹՈՒՐԹ ԱԶԳԻ ԵՒ ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒՆՔԸ

Արդի թուրք ընկերաբան ու պատմաբան Նիսպի Պերքեսը Երիտթուրքերի իշխանութեան օրերին տիրող քաղաքական-գաղափարական միջոցառումը բնորոշում է հետեւեալ կերպ. «1908-ի սահմանադրական յեղափոխութիւնից յետոյ, Կոքալիը (Երիտթուրքերի ու Մուսթաֆա Քեմալի գաղափարական կեցուածքի վրայ էական ազդեցութիւն ունեցող թուրք ընկերաբան-Գ. Խ.) Սալոնիքում է, կապուած Միտլիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան հետ: Այդ կուսակցութեան շուրջ հաւաքուել էին մի խումբ երիտասարդ մտաւորականներ, որոնք ձգտում էին նոր մի կեանքի՝ առանց իմանալու թէ ինչ են ցանկանում եւ թէ ցանկալին ինչպէս պէտք է իրականացուի: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Թուրքիան մեծ ջանք պիտի գործադրեր ոչ միայն փտախտից, բռնատիրութիւնից եւ տնտեսական սնանկութիւնից, այլ նաեւ բարոյական ու իմացական խճճուածութիւնից, շփոթից ազատուելու համար: Մտաւորականների մեծամասնութեան կողմից Թուրքիայի ամբողջական վերակառուցումը նկատուում էր խիստ հրատապ: Կործանուող կայսրութեան մէջ ապրող ոչ մահմետական եւ ոչ-թուրք ժողովուրդների ազգայնական շարժումների հակազդեցութիւնից բխած զօրաւոր թուրքական հայրենասիրութիւնը ստեղծում էր (վերակառուցման կամ վերակառուցող մտաւորականութեան գաղափարախօսութեան) զգացմունքային ենթահո-

ղը»:<sup>1</sup> Այսպիսի ապակողմնորոշող, լուսագուրկ, անկումային ու մահուան գաղափարական միջոցառում մշակուեց ու գործադրուեց հայերի ցեղասպանութեան ծրագիր:

Տուեալ վիճակի բաղադրամասերը կարելի է համարել Օսմանեան Կայսրութեան քայքայումը, թուրք վերնախաւի ռազմամոլութիւնը, թուրքիզմի եւ թուրքական ազգայնականութեան ձեւաւորումը, մրցակցութիւնն ու պայքարը ձեւաւորուող թուրքական ազգայնականութեան եւ Սուլթանի դէմ ազգային ազատագրական պայքար մղող ժողովուրդների միջեւ, մահմետականութեան, արեւմտացման (արդիականացման) եւ թուրքիզմի ճիշդ յարաբերակցականութեան որոնումը, համամահմետականութիւնից համաթուրքականութիւն (թուրանականութիւն) անցումը, օսմանականութիւնից դէպի թուրքականութիւն անցումը: Թուրքական ազգայնականութիւնը կարողացաւ այնքանով դրական ու առաջադիմական լինել, ինչքանով վերջին հանգամանքները թոյլ էին տալիս:

Ազգայնականութիւնը անհատական ու ընկերային կեանքը կերտող հիմնական զգացումներից մէկն է, արդի պատմութեան ընթացքը կանխորոշող գոր-

<sup>1</sup> Nyazi Berkes, Translator's Introduction, Turkish Nationalism And Western Civilization of Ziya Gokalp, Colombia University Press, NY, 1959, P.21-22, Middle East Journal, V. VIII, No. 4, Autumn, 1954

ծօններից մէկը: Թուրքական ազգայնականութիւնը մասնակցեց ինչպէս հայերի ցեղաստանութեան ծրագրաւորմանն ու գործադրմանը, այնպէս էլ Թուրքիայի Հանրապետութեան ստեղծմանը: Այն բազմաբնոյթ ու բազմակողմ էր:

Քառսային անցման ու վերակառուցման այդ շրջանում անհրաժեշտ դարձաւ, որ անցեալի աւանդութիւնները, անցեալում թոյլ տրուած սխալները վերանայուեն ու սրբագրուեն ըստ գաղափարական որոշ չափանիշների:

Կայսրութիւնը փլուզումից փրկելու, ուժեղացնելու եւ վերակառուցելու համար Սուլթանը նախ դիմեց երկու միջոցների՝ բանակի վերակառուցման եւ համախալամական վարդապետութեան ու գաղափարախօսութեան որդեգրման: Առաջինը արդիւնաւոր նկատուեց, քանի որ կայսրութիւնը խարսխուած էր ուժի, բանակի վրայ: Երկրորդով Սուլթանը ցանկացաւ շահարկել Խալիֆների «հօր» իշխանութեան անցեալ յուշերը, իսլամական աշխարհի միլիոնաւոր մուսուլման մահմետականների կրօնամոլութիւնն ու հակաքրիստոնէական զգացումները: Այն ցանկալի արդիւնքը չտուեց, քանի որ առաջինը կայսրութիւնից բաժանուեցին Իրանը, հիւսիսային Ափրիկէի իսլամները: Հակասութեանական շարժման մէջ գործօն դեր ունեցան արաբները, ալպանացիները եւ այլ իսլամ ցեղեր: Հակառակ դրան Անգլիան, Գերմանիան ու բոլշեւիկեան Ռուսաստանը իրենց արեւելեան քաղաքականութեան մէջ հաշուի նստեցին համախալամական գործօնի հետ: Համախալամական քաղաքականութիւնը աւելի վնասեց կայսրութեան, քանի որ աւելի սրեց նրա մէջ ապրող տարբեր կրօններ դաւանող համայնքների, Միլիթների յարաբերութիւնները եւ լրացուցիչ բարդութիւններ առաջացրեց քրիստոնէայ երկրների հետ ունեցած դիւանագիտական գործարքներում:

Երկրում ազատական եւ աշխարհիկ

մտայնութեան տարածման, ազգային գիտակցութեան տարրերի ուժեղացման եւ թուրքական-թուրանական աշխարհում նկատուող աշխուժացման հողի վրայ թուլացաւ կայսրութիւնը կրօնական հողի վրայ միացնելու ու զօրացնելու գաղափարը եւ դուռ բացեց համաթուրանական քաղաքականութեան ու գաղափարախօսութեան առաջացման: Սուլթանն ու նոր գաղափարաբանութեան կողմնակիցները ցանկալի արդիւնքի չկարողացան հասնել որովհետեւ կամ անտեսուում էր թուրքական եւ թուրանական համայնքների ազգային-մշակութային առանձնայատկութիւնները, կայսրութիւնը ստեղծաց ու կառավարող թուրքի պատմութիւնը, նրա դարաւոր աւանդոյթները, նրա հոգեւոր կառոյցի առանձնայատկութիւնները, կամ էլ նոյնացուում էին զարգացման տարբեր մակարդակներում գտնուող ու քաղաքական միտումներ ունեցող ցեղերը, եւ կամ էլ անտեսուում էր կայսրութեան ազգային-ցեղային բազմաբնոյթ կառոյցը:

Օսմանեան կայսրութեան մէջ քաղաքական բարենորոգումների ձեւաւորման մէջ որոշակի դեր խաղաց օսմանեան ազգ ստեղծելու ծրագիրը, որի սկզբնաւորումը կարելի է տեսնել Մահմուտ Բ. ի (1784-1839) ժամանակներից: Այդ գաղափարի ջերմ պաշտպաններն էին Ֆուատ Փաշան (1815-1869), Ալի Փաշան (1741-1822) եւ Միթհաթ Փաշան (1822-1883): Նրանք հաւատում էին, որ իրենց օրերում հնարաւոր է բազմազգ եւ բազմակրօն Օսմանեան կայսրութեան հիման վրայ ստեղծել «ազգային միասնութիւն», արհեստական մի ազգ: Իրականում նրանք չէին պատկերացնում հարցի բարդութիւնն ու դժուարութիւնները: Այդպէս էլ այն մնաց ութութիւն:

Հակասութեանական պայքարի ծաւալման, հպատակեցուած ժողովուրդներ

րի ազգային ազատագրական պայքարի ուժեղացման պայմաններում նրանք յայտարարում էին, որ այլևս գոյութիւն չունեն հայեր, արաբներ, ալպաններ, պուլկարներ, յոյներ, սլաւոններ, ռուսինացիներ. ժողովուրդներ, որոնք դարերով ապրել են իրենց հայրենիքում եւ կերտել իրենց հարուստ ազգային քաղաքակրթութիւնը: Այդ թուրք բարենորոգիչները ձգտում էին այդ ժողովուրդների ազգային ազատագրական պայքարին հակադրել Օսմանեան Կայսրութեան մէջ համընդհանուր ազգի, համընդհանուր հայրենիքի գաղափարը: Նրանք «համասումանեան հայրենասիրութիւնը» միտում էին հակադրել օսմանեան լուծի դէմ ուղղուած ազատագրական գաղափարախօսութեան:

1880-ի Օգոստոսին կառավարական հրամանով արգիլուեց օգտագործել Հայաստան, էրմենիստան, Արմենիա տեղանունները: 1886-ին Օսմանեան Կայսրութեան տարածքում գտնուող Հայաստանը (Արեւմտեան Հայաստանը) Օսմանեան կառավարութիւնը վարչական վերաբաժանման ենթարկեց ու կազմեց հետեւեալ վիլայէթները՝ էրզրում, Կարին, Խարբերդ, Տիգրանակերտ, Տերսիմ, Պիթլիս, Վան, Սեբաստիա, Հէյքար: Դա արուեց պատմութիւնը նենգափոխելու եւ վերացնելու հայերի համախմբուածութիւնը իրենց պատմական հայրենիքում: 1888-ին կախակայուեցին հայկական թերթերը: Շար գաւառներում արգիլուեց հայոց լեզու օգտագործումն ու դասաւանդումը: 1893-ին նոյն բախտին արժանացաւ նաեւ Ազգային Սահմանադրութիւնը: Այս բոլորը նպաստեցին 1895-ի Սասունի, Տրապիզոնի, Բաբերդի, Դերջանի, Բաղէշի եւ այլ հայկական բնակավայրերի ահաւոր ջարդերին:

Երիտասարդ Օսմաններ գաղտնի կազմակերպութիւնը հիմնադրուեց Պոլսում 1865-ին եւ որդեգրեց օսմանական ազգի գաղափարախօսութիւնը եւ այդ ոգով կազմեց երկրի անդրանիկ սահմա-

նադրութիւնը, որին Միթհաթ Փաշայի հետ 1876-ին իր մասնակցութիւնը բերեց նաեւ Գրիգոր Օտեանը (1834-1887): Երիտթուրքերը վերականգնեցին Սուլթան Ապտիլ Համիտի կողմից արգիլուած այդ սահմանադրութիւնը, երբ 1908-ին գրաւեցին իշխանութիւնը: Այդ յեղափոխութիւնը, որ բարձրացաւ ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն եւ ապահովութիւն կարգախօսների դրօշներով իր գաղափարախօսութեամբ թաղուեց Ատանայում եւ այլ վայրերում կազմակերպուած զանգուածային կոտորածների ու ջարդերի արհաւիրքում, ցեղասպանութեան ոճիրներում:

19-րդ դարի սկզբում թուրքերի դժգոհութեան, անբաւարարուածութեան զգացումը, վերակառուցման անհրաժեշտութեան գիտակցութեան խորացումը հրամայական դարձրեց Օսմանեան Կայսրութեան եւրոպականացումը, արեւմտականացումը: Առաջացաւ այն տեսակէտը, որ Օսմանեան Կայսրութեան իտեալականացում կրօնական, բարոյական եւ իրաւական հաստատութիւնների, կայսրութեան իտեալականացում քաղաքական աւանդութիւնների եւ Եւրոպայի առաջնութեան սատարող քաղաքակրթութեան միջեւ չկայ հակասութիւն: Տարածուեց այն վարկածը, որ մահմետական կրօնը պիտի տայ նոր ընկերութեան բարոյական-իրաւական հիմքերը, օսմանեան աւանդութիւնները պիտի ստեղծեն նրա քաղաքական կառոյցը, իսկ արեւմտեան քաղաքակրթութիւնը պիտի վերակառուցի նրա գործնական, նիւթական ու գիտական բաղադրամասերը: Այս հիմքի վրայ նկատելի դարձան հետեւեալ երեք միտումները. ա) համամահմետական (Pan-Islamist), որը գլխաւորում էր Սուլթանը. բ) աշխարհիկ մտաւորականների հոսանքը, որտեղ եւրոպականը առաւելաբար արտաքին էր, կապկում (imitation), գ. թուրքականութեան (Turkist) հոսան-

քը (թուրքական ազգայնական), որը սկզբում թոյլ էր ու փոքր: Օսմանեան Կայսրութեան կործանումից յետոյ, քեմալական շարժման գուգահեղ, սոյն հոսանքը երկրի մահմետական ու օսմանական եւ իսլամական անցեալը շեշտելու փոխարէն կարեւորեց թուրքերի ցեղային, ազգային անցեալը, թուրքական լեզուն, թուրքական ազգային ականդոյթները, բանահիւստութիւնը, ժողովրդականը:

Վերջին հոսանքի որպէս հիմք ծառայեցին ռուսական տարածքներում գտնուող թուրքերի ազգային զարթօնքը, «Դէպի ժողովուրդը վերադարձ» եւ Օսմանեան Կայսրութիւնում ոչ-իսլամ եւ ոչ-թուրք ազգութիւնների ազգային ազատագրական, համագերմանական եւ համասլաւոնական, (սլաւոֆիլական) շարժումները: Բոլոր դէպքերում երեք հոսանքներն էլ իրենց գործադրութեան ընթացքում չկարողացան ազատուել օսմանականութեան քաղաքական ուղղուածութիւնից՝ առաջին երկուսը մշտատեւ ու ամբողջութեամբ իսկ երրորդը կարեւոր մի շարք ասպարէզներում, մասնաւորապէս ազգային, կրօնական եւ անցեալի գիտական գնահատման հարցերում: Նկատելի է, որ թուրքական ազգայնականութիւնը հիմնականում խորսխուած է օտար ազդեցութիւնների վրայ: Նոր շրջանի ականաւոր գաղափարախօս Ջիա Կոքրափը գրում է. «Օսմանեան Կայսրութեան մէջ ազգայնականութեան գաղափարը երեւաց նախ ոչ-իսլամների շրջանում, ապա ալպանացիների ու արաբների եւ վերջապէս թուրքերի»: Սոյն պարագան կանխորոշում է նաեւ թուրքական ազգայնականութեան խորքն ու թերութիւնները:

19-րդ դարում Ռուսաստանը ակելի խորացրեց Միջին Ասիան եւ Կովկասը գաւթելու եւ Ռուսական Կայսրութեան կցելու քաղաքականութիւնը: Միջին Ասիայում դրա դէմ բարձրացաւ տեղի բնակչութեան, մասնաւոր թուրքալե-

զու ու թուրքական-թուրանական ծագում ունեցող ցեղերի ընդդիմութիւնը, ազատագրական շարժումը, որը նաեւ ծնեց համաթուրանական ու համաթուրքական միտումները: Հունգարացի արեւելագէտ Արմինիուս Վամպերին (1832-1913) «Կէտրոնական Ասիայի Ուրուագիծ» գրքում առաջ քաշեց այն գաղափարը, որ քանի Միջին Ասիայի բնակչութեան մեծամասնութիւնը խօսում է թուրքերէն, թուրքալեզու է կիսում է ընդհանուր պատմական փորձառութիւն եւ ծագում, ապա նրանք միանալով կարող են կազմել մի հսկայածաւալ քաղաքական ամբողջութիւն, որը տարածուելու է Ալթայի երկրամասից մինչեւ Պոլիս: Այսպիսով ծնուեց նաեւ թուրքիզմի, թուրքականութեան գաղափարը, որը, իր հերթին, ճանապարհ բացեց թուրքական ազգայնականութեան գիտակցութեան: Եւրոպան հունգարացու ծրագիրը մկրտեց որպէս Ջինկիցխանական արշաւանքի վերականգնման փորձ: Միջին Ասիական ժողովուրդի զարթօնքի ճառագայթում նկատուեց նաեւ Լեոն Գահուենի (1841-1900) թուրքերի եւ մոնղոլների պատմութեան նուիրուած գրքում (1894): Այդ կանչը իւրովի հնչեց նաեւ Ճեմալ Ատ Տին ալ Աղվանի (1839-1897) վարդապետութիւնում:

Օսմանեան Կայսրութիւնը իր նեխումի շրջանը ապրել է 1683-1827-ին, իր անկումը՝ 1828-1908-ին, եւ լուծարումը՝ 1908-1922 թուականներին: Այդ երեքում էլ իրենց զգալ են տուել տարբեր հպատակ ժողովուրդների ազատագրական ու ինքնապաշտպանողական պատերազմները: Ալպանացիները, լիբանանցիները, հայերը, հունգարացիները, յոյները, սերպերը եւ այլ ժողովուրդներ շարունակելով իրենց ազգային ականդոյթները մշակեցին մի այնպիսի ազգային գիտակցութիւն, ազգային պատկանելութեան զգացում, որ նրանց բարձրացրեց կազմակերպող հայրենասիրութեան

մակարդակին: Հարաւային սլաւները գտնուում էին Աւստրիայի ու Օսմանեան կայսրութիւնների իշխանութեան տակ, որոնց դէմ նրանք պայքարում էին յանուն ազատութեան: Այդ պայքարում նրանք մշակեցին համասլաւոնական գաղափարախօսութիւնը, որը նրանց ազատագրական պայքարի ուսմունքի բաղադրիչ մասը դարձաւ: Հայ իրակա- նութեան մէջ, դեռ 18-րդ դարի 70-ական թուականներէից

Մատրասի Խմբակի ղեկավարները (Մովսէս Բաղրամեան, Շահամիր Շահա- միրեան, Յակոբ Շահամիրեան եւ այլն) շարադրել են ապագայ հայաստանի հանրապետութեան սահմանադրութեան նախագիծը ու հայ ազգայնականու- թեան հիմնական սկզբունքները:

Բոլոր նշուած ժողովուրդներն ու ազգերը ոչ միայն ունէին իրենց երկա- րամեայ ազգային ազատագրական պայ- քարի փորձը, այլ նաեւ սնուել էին եւրո- պական ազգայնականութեան սկզբ- բունքներից, որոնց դեռ չէին հասել թուրքերը: Ուշագրաւ է այն փաստը, որ Օսմանեան կայսրութեան մէջ ըստ էութեան իրենց մշակոյթով, հոգեբանու- թեամբ, պատմական անցեալով ու քա- դաքական պատկերացումներով Եւրո- պական քաղաքակրթութեան ու մշակոյ- թին աւելի մօտ էին հայերն ու յոյները: Բայց կայսրութեան ղեկավարութիւնը նրանց այդ հանգամանքը ոչ միայն չօգ- տագործեց իր արդիականացման ու եւ- րոպականացման ջանքերում, այլ այդ երկու ազգերին էլ կոտորեց ու հալածեց: Բայց, թուրք հակասութանականները (թանգիմաթականները, Երիտասարդ Օսմանցիները, Երիտասարդ թուրքերի գանազան խմբաւորումներ) տարբեր ժամանակներում օգտագործել են նրանց փորձը Սուլթանի դէմ մղած իրենց պայքարում: Թուրք վերնախաւն ու գանգուածը նկատել էր ազգայնակա- նութեան կազմակերպիչ դերը ընկերա- յին կեանքում: Սակայն այդ չի նշա-

նակում, որ այդ կուսակցութիւններն ու հոսանքները բարձրացրել էին ազգայ- նականութեան դրօշը, կամ մշակել էին այդ գաղափարախօսութիւնը: Նոյնիսկ Միութիւն ու Առաջադիմութիւն խմբա- կը իր կազմաւորման սկզբնաւորման շրջանում ազգայնական չէր իր բուն իմաստով, քանի որ նրա նպատակն էր ողջ օսմանեան ազգին բերել Փրանսա- կան յեղափոխութեան երազը (ազատու- թիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն ու արդարութիւն): Հաւանական է նաեւ այն վարկածը, որ այդպիսով Իթիհա- տականները ձգտեցին այդ ճանապար- հով նպաստել օսման ազգի կերտմանը, ինչպէս Փրանսացիները այդպիսով նը- պաստեցին Փրանսական ազգայնակա- նութեան կերտման: Մի մեծ տարբերու- թիւն կար սակայն: Ֆրանսական յեղա- փոխութեամբ Փրանսացին կերտեց քա- դաքացիական հասարակութիւն, որը դարձաւ ազգայնականութեան հիմքը: Իսկ նշուած կարգախօսը չկարողացաւ Օսմանեան կայսրութիւնում ստեղծել այդպիսի հասարակութիւն:

Օսմանցին հասկացաւ, որ ինքը ազգ դառնալու համար պէտք է լինի թուրք: Պատերազմի շեմին Օսմանցի վերնա- խաւի մի մտաւորականն իրեն հարց տուեց «Ո՞վ է Օսմանը, որի անունով մենք կոչուում ենք: Նա մի այլթայցի թուրք է, որը այս հողերը գրաւեց թուր- քական բանակով: Հետեւաբար աւելի պատուաբեր է կրել մեր ծագման անու- նը, քան նրա անունը: Մինչեւ այժմ մենք խաբուել ենք մեր նախորդների տգի- տութեամբ: Նրանք մեզ մոռանալ տուին մեր իսկական ազգութիւնը: Վստահ ենք, որ մեզ համար աւելի լաւ է թրքու- թիւնը, թրքական ազգութիւնը, քան իս- լամը: Ազգային հպարտութիւնը մեծա- գոյն ընկերային առաքինութիւններից



մէկն է»:<sup>2</sup>

Գերմանախօս եւ գերմանական ծագում ունեցող փոքր անջատ քաղաքական իշխանութիւնների միաւորումը կենտրոնական Եւրոպայում ամբողջական Գերմանիա ստեղծելու գաղափարը առաջացաւ հականափոխողական ազատագրական պայքարի տարիներին (1813-1815): Այն իր փաստացի իրականացումը ստացաւ 1871-ին, երբ Պրիզմարքի ջանքերի շնորհիւ Վիլհելմ Ա.-ի գահակալութեամբ ստեղծուեց գերմանական միապետութիւնը: 1893-ին «Գերմանական Լիգայի» հաստատումը համագերմանականութեան գաղափարը ստացաւ ազգայնամոլական ու տարածապաշտական գոնաւորում եւ քննարկման առարկայ դարձաւ բոլոր գերմանախօսների (աւստրիացիների, չեխների, լեհների, գուլիցերացիների, վոլգայի, պայթիկ եւ Տրանսիլվանիայի գերմանացիների տարածքների) միաւորման հարցը, որը ժամանակակերպապէս ու մասամբ իրականացուեց Փաշական Գերմանիայի կողմից: Համագերմանական միացման սոյն գաղափարը որոշակիօրէն ազդեց թուրք ազգ, համաթուրքական պետութիւն, թուրք ազգայնականութիւն ստեղծելու ծրագրի ձեւաւորման ընթացքի վրայ:

19-րդ դարի 80-ական թուականներին Ալեքսեյ Նանիակովը առաջ քաշեց սլաւոնֆիլական ուսմունքը, որը մի կողմից պնդում էր, որ ռուսական կեանքն ունի իր զարգացման ինքնուրոյն եւ ինքնատիպ ուղին, բոլորովին տատրեր եւրոպականից: Սա դրա հակաեւրոպական երեսն էր եւ խօսում էր այն թուրքերին, որոնց հարազատ էր հակաեւրոպական միտումը: Միւս կողմից, այդ ուսմունքը առաջադրում էր բոլոր սլաւոնական ժողովուրդների միացման անհրաժեշտութիւնը՝ ցարի գլխաւորու-

թեամբ: Այն Պալքաններում նպաստեց ռուսական ծաւալապաշտական քաղաքականութեան: Մի շարք թուրք մտածողներ ցեղակիցների ու ազգակիցների միացման կարեւորութեան սլաւոնֆիլական թէզը համահնչիւն գտան թուրքերի պահանջների հետ:

Այս միջնորոտում աւելի ու աւելի մեծացաւ քննադատական կեցուածքը անդրանիկ թուրքական բարենորոգչական շարժման՝ Թանգիմաթի նկատմամբ: Տարածուեց այն կարծիքը, որ Թանգիմաթի ներկայացուցիչները անտեղի այնպիսի տնտեսական ու քաղաքական պարտաւորութիւններ են ստանձնել, որ թուրքացի են Օսմանեան Կայսրութեան անկախութիւնը, գերիշխանութիւնը, ամբողջականութիւնն ու ինքնուրոյնութիւնը:

Թուրքականի, բուն ազգայնական հարցերի վրայ ուշադրութիւն սեւեռեցին, դէպի ժողովրդականը դառնալու կոչ արեցին նաեւ Եւրոպայում կրթութիւն ստացած 19-դարի որոշ օսմանցի հեղինակներ: Նրանց շարքում նախակարապետի պատիւը կարելի է շնորհել արդի օսմանական գրականութեան հիմնադիր Իպրահիմ Սինասի էֆենտին (1826-1871): Նա Կայսրութեան առաջին գրողներից էր, որ Եւրոպայի լուսաւորիչներին հետեւելով գիտակցեց գրականութիւնը կապելու ժողովրդի հետ: Իր երկերում նա ձգտեց թուրք գրականութիւնը մաքրել արաբերէն ու պարսկերէն բառերից (որը, ըստ մասնագէտների կազմել է շուրջ 90%) ու օգտագործել լոկ թուրքական ծագում ունեցող բառապաշար եւ այդպիսով նպաստել ձեւաւորող թուրքական ազգայնականութեան, ազգային գիտակցութեան: Նըշենք, որ օսմաներէն լեզուն<sup>3</sup>, որն օգտագործում էր վերնախաւը, փաստօրէն արդիւնաւէտ հաղորդակմանը միջոց չէր

<sup>2</sup> Gokalp, Ziya, Turkish Nationalism and Western Civilization, NY Columbia Univ. Press, P.71-72

<sup>3</sup> Sbu Arnold Toynbee, Turkey: A Past and a Future, Hedder & Stoughton, 1917, p. 5-6.

վերնախաւի ու թուրք զիւղացիութեան միջեւ: Սինասին փորձեց նաեւ թուրքերէն տաղաչափութիւնը վերափոխել ըստ ֆրանսական նմանակի:

Սինասիի հետքերով զնայով Երիտասարդ Օսման շարժման ներկայացուցիչ Նամիք Քեմալը (1840-1888) մեծապէս ազդեց թուրք ազգայնական գաղափարաբանութեան ձեւաւորման ու թուրք գրականութեան «արեւմտացման» վերայ: Նա թուրքերէնի թարգմանեց այնպիսի ֆրանսացի հեղինակների գործեր, ինչպիսիք են Վիկտոր Հիւկոն, Ժան Ժագ Ռուսոն, Չարլզ Լուիզ Մոնթեսքիոն եւ այլն: Քեմալ ժա մանակի քաղաքական մտածողութեան մէջ արմատաւորեց «հայրենիք» (vatan) եւ «ազատութիւն» (hurriet) գաղափարները, որոնք արգիլուած էին սուլթանական գրաքննութեան կողմից, քանի որ լայնօրէն կիրառուում էին հակասուլթանական ազգային ազատագրական պայքար մղող հպատակ ժողովուրդների կողմից: Վերջիններս «այդ» արտայայտութեան տակ հասկանում էին իրենց ժողովուրդներին, որոնք ձեւաւորուել էին Կայսրութեան ստեղծումից առաջ եւ որոնք արդէն մշակած ունէին իրենց ազգային գիտակցութիւնն ու ինքնութիւնը: Պաշտօնական գաղափարախօսութիւնը այդ եզրով նկատի ունէր օսմանական շինծու ազգը, որը խոտոր էր կայսրութեան բնակչութեան մեծամասնութեան գիտակցութեան: Արդարացի է անգլիացի ակնաւոր պատմաբան Առնոլտ Թօյնբի, որ 1917-ին հեղինակած «Թուրքիա, Մի Անցեալ եւ մի Ապագայ» գրքում գրում է. «Թուրքիան, Օսմանական պետութիւնը, մի միասնութիւն չէ՝ ոչ կլիմայական, ոչ աշխարհագրական, ոչ ցեղային եւ ոչ էլ տնտեսական առումով: Նա մի շինծու բան է պարտադրուած բռնութեամբ եւ արիւնահեղութեամբ այնտեղ եւ այն ժամանակ, երբ Օսման-

եան Կառավարութիւնը իշխանութիւն է ունեցել»<sup>4</sup>:

Ազատագրութեան համար պայքարողները հայրենիքը այն պատմական հողերն էին (Յունաստանը, Պուլկարիան, Հայաստանը, Արպանիան, Ռումանիան եւ այլն) որտեղ իրենք դարեր շարունակ ապրել են ու կերտել իրենց մշակոյթն ու պետականութիւնը մինչեւ օսմանական գրաւումը: Պաշտօնական գաղափարախօսութեան համար հայրենիքը Սուլթանով միաւորուած ու բռնութեամբ պահպանուող տարածքներն էին: Թուրք ազգայնականութեան գիտակցութեան զարգացումը զնայով «մօտենում »էր ազատութեան համար պայքարող ժողովուրդների պատկերացումներին ու այն հիմնական սկսեց համարուել «թուրքիզմով» ու Կայսրութեան տապալումով: Այդ անցումը թուրքերը կատարեցին մեծագոյն երկունքով ու մարդկային զոհերով:

Զարգանալու, արդիականանալու համար, որը 19-րդ դարում միաձուլուած էր նաեւ ազգային գիտակցութիւն, ազգային պատկանելութիւն, ազգայնականութիւն մշակելու հետ, բարենորոգիչները կանխատեսեցին երեք ճանապարհ երկրի կառուցի ներքին վերափոխութիւն, Օսմանեան Կայսրութեան միասնութեան ամրապնդում եւ եւրոպականացում/արեւմտականացում:

Ներքին ընկերային, քաղաքական, տնտեսական եւ վարչական կեանքում թուրք բարենորոգչութիւնը փոփոխութիւններ ներմուծեց բանակում, բնակչութեան տեղաբաշխման ու երկրի վարչական բաժանման մէջ, ֆինանսներում եւ նման ասպարէզներում: Սոցիալ-քաղաքական կեանքում ամէնազգայի տեղաշարժը գրանցուեց միապետական կարգը ժամանակաւոր սահմանադրական միապետութեան փոխելու մէջ: Այս

<sup>4</sup> A. Toynbee, Turkey, A Past and a Future, p. 4.

միջոցառումները հեռու էին հիւանդ թուրքիան բուժելու ու նրան առաջադիմութեան գծի վրայ տեղափոխելու համար:

Կայսրութեան միասնութիւնը ամրապնդելու ու այդպիսով նրան կործանումից փրկելու համար գործադրուեց կրօնական գործօնը՝ երկրի համախալամացումը: Իսլամացումը թուրք ընկերութիւնը աւելի կապեց միջնադարեան հետամնացութեան հետ, արգելակեց գիտական ու ընկերային առաջընթացը, սրեց կրօնական լարուածութիւնը երկրում եւ խեղդեց նորածին ազգայնականութեան շունչը: Այդ բարդ խնդիրը լուծելու համար կամ իսլամին վերագրեցին դրական արդիական գծեր, կամ փորձեցին մշակել ազգային իսլամիզմի տարբերակներ եւ կամ էլ հրաժարուեցին կրօնամոլութիւնից: Միասնութեան ստեղծման համար գործադրուեց նաեւ համաթուրքիզմն ու համաթուրանականութիւնը, որը անպտուղ մնաց: Վերջապէս առաջարկուեց արհեստական նոր ազգի՝ օսմանական ազգի ստեղծումը: Շուտով այն մերժուեց կեանքի ու մասնագէտների կողմից:

Ժամանակի հրամայականն էր Սուլթանի կամ սուլթանական իշխանութեան (որն իր մէջ պարտադիր կերպով ընդգրկում էր իսլամականութիւնն ու օսմանականութիւնը) նկատմամբ հաւատարմութեան ու նուիրումի գաղափարախօսութիւնը փոխարինել դէպի ազգպետութեան նկատմամբ եղած պատկանելութիւնով, «մաքուր թուրքականութիւնից», «նախախլամական ու նախօսմանեան թուրքականութիւնից յառնող ու վերակենդանացող» ազգայնական նուիրումով ու հաւատարմութեամբ: Խիստ ուշադրաւ է թուրք տեսաբանի հետեւեալ գաղափարների փունջը: «Այսօր ինչպէս Արեւմուտքը, այնպէս էլ Արեւելքը անվարան ցոյց են տալիս, որ մեր դարը Ազգերի դար է: Մարդու մտքին ու հոգուն տիրող ամէ-

նից հօր ուժը ազգայնականութեան խտեալն է: Այն պետութիւնները, որոնք կաղավարելու են ըստ ազգային գիտակցութեան, դատապարտուած են ցախողութեան, եթէ անտեսեն գոյութիւնը տուեալ կարեւոր ընկերային գործօնի: Եթէ մեր պետական այրերն ու կուսակցական ղեկավարները չկառչեն այս խտիւղին, նրանք չեն կարող Օսմանեան պետութիւնը կազմող համայնքների ու ժողովուրդների վրայ Հաստատել հոգեւոր ղեկավարութիւն: Վերջին չորս տարիների (1909-1913 Գ. Խ.) փորձառութիւնը ցոյց է տալիս, որ այն թուրքերը, որոնք օսմանեան իշխանութեան տակ եղող ազգութիւնների միջեւ փոխմընում պիտի հաստատէին, մերժեցին թուրքիզմը եւ օսմանականութիւն հռչակեցին՝ վերջապէս պատկերացրին, թէ ինչպիսի հաշտութիւն ազգութիւնները կարող են ընդունել: Ազգայնական զգացումով շարժուող ժողովուրդները կարող են դեկավարուել այնպիսի մարդկանց կողմից, որոնք իրենց մէջ ունեն ազգայնականութեան գաղափարը: Թուրքերի կողմից ազգայնականութեան գաղափարից խուսափելը ոչ միայն վնասակար էր պետութեան եւ զրգուիչ տարբեր ազգութիւնների համար, այլեւ այն աղետալի էր իրենց թուրքերի համար: Երբ թուրքերը ինքնորոշուեցին որպէս ազգ ու պետութիւն ըստ գոյութիւն ունեցող ազգի ու պետութեան (օսմանեան Գ.Խ.), նրանք չկարողացան նկատել, որ իրենց ընկերային եւ տնտեսական գոյութիւնը վատթարանում է: Երբ տնտեսական ու ընկերային իշխանութիւնը անցաւ ոչ-իսլամ համայնքներին, թուրքերը չպատկերացրին, որ նրանք կորցնում են ամէն ինչ: Նրանք կարծում էին, որ իրենք օսմանեան ազգը կազմող դասակարգն են եւ ուշադրութիւն չէին դարձնում այն փաստին, որ իրենք դուրս են մղում որոշակի դասակարգերից՝ մանաւանդ այն դասակարգերից, որոնք դարու ամենակարեւոր շերտն են կազմում:

Նրանք մտահոգուած չէին տեսնելով, որ իրենք մաս չեն կազմում տնտեսական ու աշխատանքային դասակարգերի, որ իրենք ղրանցից դուրս են թողնուած: Որպէս հետեւանք նրանք դադարեցին նոյնիսկ Անատոլիայի գանգուածային մասը լինելուց»:

Քանի անհնար էր կարճ ժամանակաշրջանում թուրք գանգուածի գիտակցութեան մէջ առողջ ազգայնականութիւն արմատաւորել իշխող թուրք վերնախաւը փոխարէնը յաջողացրեց նրա գիտակցութեան մէջ սերմանել ազգային ատելութիւն եւ դրաք գործածել որպէս ցեղասպանութեան եւ բռնագաղթի միջոց:

Կեանքի թելադրանքը ընթանում էր ոչ թէ Օսմանեան Կայսրութեան բազմագանութեան վերացման, արհեստական միացման, միաձուլման, այլ թուրք ազգայնականութեան առաջացման, եւրոպականացման ուղղութեամբ: Դարի սկզբում Եւրոպայում ձեւաւորուող ազգայնականութիւնը դարի վերջերին հասել էր արեւելք: Սկսել էր արեւելեան ազգայնականութեան, ըստ որում թուրք ազգայնականութեան, գործընթացը: Ասիական երկրներ հասնելով ազգայնականութիւնը սկսել էր սպառել իր առաջադիմական գծերի զգալի մասը ու ձեռք բերել ազգայնամոլական, ռազմատենչ ու գաւթողական միտումներ: Այդ ակնյայտ էր ինչպէս Գերմանիա-

յում, եւ Ռուսաստանում, այնպէս էլ թուրքիայում (Օսմանեան Կայսրութիւնում)<sup>5</sup>:

Թուրքական ազգայնականութեան հաստատման նպաստեց նաեւ Կայսրութեան տարբեր հպատակ ժողովուրդների տարանջատումը ու նրանց անկախ պետականութեան հաստատումը, Կայսրութեան կործանումը: Այդ փուլում իրագործուեց Հայերի Ցեղասպանութիւնն ու բռնագաղթը՝ ապագայ ազգայնական թուրք պետականութեան տարածքներ ապահովելու մտահոգութեամբ: Պատմական Հայաստանը ցանկացան դարձնել թուրքիզմի, թուրք ազգայնականութեան տիրոջի:

ԴՈՒՍ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

(Շար. 1)



<sup>5</sup> Gokalp, Turkish Nationalism. . . P. 72.

**ԱՐԽԻՒԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ**

**«ԿԻԼԻԿԻԱՆ»**

Կոստան Ջարեան 1951-1954 ապրեցաւ Պէյրութ, ուր «Հայ Արուեստի Պատմութիւն» դասաւանդեց Ամերիկեան Համալսարանին եւ Նշան Փալանճեան Ճեմարանին մէջ: Այդ տարիներուն, ան առիթը ունեցաւ նաեւ այցելելու մէկ անգամ Երուսաղէմ եւ երկու անգամ Կիպրոս:

Իր «Լէօնարտօ տա Վինչին եւ Հայաստանը» արուեստաբանական խոհազարութեան մէջ, Կոստան Ջարեան Կիպրոսի կապակցութեամբ կը յայտնէ. «...իմ երկու այցելութիւններիս ընթացքին, ես տեսել եմ, որ Կիլիկեան փիերը պարզ երեւում են...»:

Արդ, իր երկրորդ այցելութեան ընթացքին, 1954-ին, ստեղծագործա-

կան ոգեւորութեան մէջ, գրած է նաեւ այս բանաստեղծութիւնը, որ ցարդ մնացած է անտիպ:

Գրողներու Համահայկական Գ. Համաժողովը, որ գումարուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանիս Հովանաւորութեան տակ, յարմարագոյն պատեհութիւնը կ'ընծայէր, որ Ջարեանի անտիպներու շարքէն այս բանաստեղծութիւնը լոյսին բերուէր, ինչ որ կատարեց Հայ գրականութեան վաստակաւոր Պրն. Մանուէլ Քէօսէեան:

Խմբագրութիւնս մեծ ուրախութեամբ գոյն կը ներկայացնէ մեր ընթերցողներուն:

ԽՄԲ.

**ԿԻԼԻԿԻԱՆ**

Կիպրոսի փիից տխուր նայում եմ մեր Կիլիկիային:  
Վերջալոյս մի մեծ իր հրդեհների շտապն է նետել  
Տաւրոսի վրայ եւ մի աննման տեսիլք կարկառել  
Վեհաշուք փոռած լեռնաշղթայի ոսկէ լանջերին:

Կարծես երազ է: Այնտեղ դարերով պատմութիւնը մեր  
Դարբնել էր հսկայ կամփերի ուժով մի հեքիաթ շփեղ:  
Մրրիկի նման, տաք ձիեր հեծած, վիթխարի հայեր  
Արշաւել էին եւ կերտել մի կեանք հոգեփառ, գօրեղ:

Մեր մարտիկները իրենց սուրբերի պսաղուն ծայրին  
 Վեր էին ցցել անյագ սրտերի աստղը ոսկեվառ  
 Եւ խոր հաւատփի շինարար ձեռքով կառուցել էին  
 Քաղաքներ մեծղի, տանարներ լուսէ, դղեակներ անառ:

Միջերկրականի ափերում լազուր բարձրացրել էին  
 Հորիզոնների կատարը նուաճող սուր աշտարակներ  
 Եւ մեր նաւերը գանձերով լեցուած, շտապել էին  
 Դէպի հեռաւոր երազի ափին ընկած ոստաններ:

Իսկ ո՞ւր են հիմա քաղաքները մեր բազմամարդ, եռուն,  
 Ուր Մարկո Պօլոն քայլում էր, շրջում լի հիացմունքով,  
 Ուր ջենովացի՞ Քազաւորական, հարուստ մեր Սիսում  
 Ման էին գալիս, յափշտակում, յուզում մեր արուեստներով:

Ո՞ւր են հոյակապ, ցոլի պալատները, բարձրաբերձ ցցուած  
 Ամրոցները խիստ եւ այն վանքերը, ուր մի մեծ Ռոսլին  
 Հանճարը խառնած հայոց հաւատփին՝ նախշում էր դիւթուած  
 Եւ իր նակատի լուսաւոր տենդը յանձնում երկնքին:

Հիմա նայում եմ, սիրտս այրում է մորմո՞ք մի հսկայ:  
 Անհետացել է, փոշու վերածուել ամբողջ մի աշխարհ:  
 Հայու կուռ ձեռքից ընկել է սուրբ: Կիլիկիան չկայ –  
 Անհետացել է, դարձել է լոկ յուշ, անապատ օտար:

Լեւոն Քազաւոր, իշխաններ փառփի, գունդստարլներ  
 Եւ դու՞ք քաջարի, խաչակիր ու վեհ մարտիկներ մեծղի,  
 Ասէ՛ք մեզ ո՞ւր էք, ո՞ւր են Քաճնուել վաշտերը անտէր,  
 Ո՞ւր պիտի ծաղկի ձեր վերադարձի պսակը փառփի:

Մինչ լուռ նայում եմ լեռների ետեւ մարուող արեւին՝  
 Ներսս Քաճնուած մի ձայն է հնչում ուժգին, հալածող.  
 Թափուած արիւնը յարութեան ջահ է կարկառուած բախտին –  
 Ուր մենք եղել ենք՝ պիտի գանք նորից քայլերով յաղթող:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

**Ս. ԾՆՈՒՆԴԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԵՇՏԱԿԱՅ ԵՐԳԸ**

**ՂԿ 2.14 = Ես 11**

*Փառք ի բարձունս Աստուծոյ  
Յերկիր խաղաղութիւն  
Ի մարդիկ հանութիւն*

*Քրիստոսի ծնունդը մարդկութեան մէջ յառաջ բերած է երեք տեսակ շարժում:*

- Ա. Դաւանաբանական – Վարդապետական
- Բ. Ծիսական – Պաշտամունքային
- Գ. Գործնական – Կենցաղավարական

*Ա) Դաւանաբանական մասին խորհողութեան հասկացողութեան, համոզումի բազմատեսակ տարբեր եւ հակադիր երեւոյթներ տեսնուած են դարերէ ի վեր եւ ցարդ:*

*- Մարդիկ ունին վերացական ճշմարտութիւններ - փիլիսոփայական դրուժիւններ - բարոյական սկզբունքները ընդունելու կարողութիւնը:*

*- Մարդիկ ունին նաեւ գիտական փորձարկութիւններով բներեւոյթները վերլուծելու եւ կրկնելու կարողութիւնը. որով վերացականօրէն կը ծանօթանան երկնային մարմիններու տարբերուն. անոնց բնաշրջական վիճակներուն եւ մեքենական դրուժեան ու նոյն կարողութիւնով կը ստեղծագործեն արուեստի, եւ արուեստի աշխարհները մարմին տալով միտքի անշօշափելի յղացումներուն:*

*Մարդիկ ունին նաեւ գերզգայարանական կարողութիւն, որով կը խորհին անգիտելի իրականութիւններու վրայ եւ կը հետազօտեն գիտնալ, ինչ են ժամանակը, միջոցը, նիւթը, կեանքը, միտքը, բնագորը, բացարձակը:*

*Այս երեք կարողութիւնները ունին իրենց անջատ կիրառութիւնը եւ իրարու սահմանակից ու իրարու շղթայուած: Սխալ եւ աղէտաբէր է զանոնք շփոթել:*

*Յիշեալ անգիտելիները գիտականօրէն չափի, կշիռի եւ փորձարկութեան չէ՛ կարելի ենթարկել: Անոնք պիտի մնան միշտ առարկայ մեր գերզգայարանական կարողութիւններու. խորհողութեան, հիացումի եւ հաւատքի:*

*Քրիստոսի ծննդեան մասին տեղի ունեցած շփոթութիւններն ու մոլորութիւնները պարզ հետեւանք են այն սխալին որ՝ մարդիկ գերզգայարանական իրողութիւնները կ'ենթարկեն զգայարանական խուզարկութեան եւ անգիտելիներ՝ գիտականին:*

*Հայ Եկեղեցին պատկառ վերաբերումով նայելով մարդեղութեան՝ ո՛չ կը խօսի, ո՛չ կը յանդգնի բացատրելու, այլ՝ կ'երգէ հոգեթով «Սորհուրդ մեծ եւ սքանչելի... յայտնեցաւ»:*

*Անձնապէս համոզուած եմ որ Յիսուս Քրիստոսի ծնունդը՝ աստուածային սքանչելի յայտնութիւնն է՝ համապատասխան Անոր սիրոյն, մեր կարօտութեան եւ գործած ազդեցութեան:*

*Եթէ մերկացնենք Յիսուս Քրիստոսը՝ իր աստուածային հանգամանքէն՝ պէտք է անպայման վառել Հին եւ Նոր Կտակարանը նաեւ Գուրանը: Ինչ որ կը*

նշանակէ ջնջել հրէական, քրիստոնէական եւ իսլամական կրօնքները, որոնց երեքին ալ բո՛ւն կորիզը կը կազմէ Աստուծոյ Յայտնութիւնը, եւ Քրիստոս Յիսուսի այդ յայտնութիւնը գուտ աստուածային սիրոյն, բանին ու զօրութեան մարմնացումը:

Այս կրօնքները ջնջելը կը նշանակէ

1. Խորտակել մարդուն անմահութեան յոյսը...:

2. Կործանել մարդուն բարոյականը...:

3. Անհետացնել գեղարուեստը վեհաշունչ երգերուն-երաժշտութիւնը. հոգեխօսիկ գրականութեան եւ հոյակապ ճարտարապետութեան հմայիչ նկարչութեան: Աշխարհը մատնել ամայութեան:

3. Բ) Ծիսական-պաշտամունքային տեսակէտով թէ՛ եւ տօնին օրը եւ արարողութիւնք նոյնը չեն, բայց, ամէ՛ն ազգայն տօնին առթիւ արտաբերած է իւր զգացումներուն եւ ճաշակին բարձրագոյն գեղեցկութիւնը ու վերջապէս Ս. Ծննդեան տօնը քրիստոնէայ աշխարհի տօներուն ամենապսեմն է, որովհետեւ

1) Քրիստոսի ծննդեան տօնը միակ համախմբումն, հանդիսադրութիւնն է որուն մէջ փոքրեր կ'ունենան իրենց ցնծութեան լայն բաժինը ու ընտանեկան միջնորոտը կը վերածուի երկնային միջավայրի մը եւ հեռաւոր ու մերձաւոր բարեկամները փոխադարձ շօշափելի շնորհաւորութիւնով հոգեկան հպում մը կ'ունենան իրարու հետ եւ ընդհանուր սիրոյ ներշնչութիւն մը կը սաւառնի երկրիս վրայ:

2) Քրիստոսի ծննդեան տօնը փառաբանութիւնն է ձշմարիտին եւ ճըշմարտութեան, Բարիին ու բարութեան եւ Գեղեցիկին ու գեղեցկութեան: Որք Աստուծոյ մարմնաւորութեան հետ կը մարմնաւորեն յանձին քրիստոնէից:

3) Քրիստոսի ծննդեան տօնը պահ մը կը վերցնէ անջրպետը անտեսանելիին ու տեսանելիին: Կը մերձեցնէ երկինքը

երկրին: Կը լուսաւորէ խորհրդաւորութիւնը տիեզերական գաղտնիքին: Կը միացնէ Աստուածութիւնը մարդկութեան եւ Աստուածը՝ մարդուն: Քանզի անով ո՛չ միայն կը տօնենք խոնարհութիւնն Աստուծոյ՝ այլեւ բարձրութիւնը մարդուն: Անիկա պատկերացումն, նաւակատիքն է Աստուծոյ մարդացումին եւ մա՛նաւանդ մարդուն աստուածացումին:

Յամենայն դէպս, մարդիկ եթէ տարակարծիք ըլլան Քրիստոսով աստուածային մարդեղութեան. անառարկելի է յանձին Քրիստոսի մարդուն աստուածութեան:

Եթէ կան մարդիկ որ չեն կրնար հաւատալ թէ՛ աստուածութիւնը մարդկային մարմին գգեցաւ՝ անոնք անշուշտ կ'ընդունին թէ Քրիստոս աստուածային տիտղոս ստացաւ եթէ ան իբր մարդ ծնաւ, իբր աստուածամարդ ապրեցաւ, ո՛ւ իբրեւ որդի Աստուծոյ վկայուեցաւ յերկնից եւ իբր այն պաշտուեցաւ ու պիտի պաշտուի: Ու այս իսկ բաւական է ապացուցանելու թէ ինչպէս անոր կեանքը յայտնապէս աստուածային էր, ծագումն ու ծնունդն ալ սքանչելապէս աստուածային է:

Ուստի, Ս. Ծննդեան տօնը ա՛յս բոլոր պարագաներով գերահրաշ է եւ վերացուցիչ իր խորհուրդով ու պաշտամունքով:

4. Գ) Գործնական-կենցաղավարական տեսակէտով Քրիստոսի ծնունդը յառաջ բերած է անբաղդատելի եւ գերագոյն փոփոխութիւն-բարեշրջութիւն. յառաջդիմութիւն գոր հրեշտակները գիտցան եւ փառաբանեցին:

Հրեշտակաց այս երկնային երգը կը կազմէ եռանկիւն մը, պրիսմակ մը, որ կը ցոլացնէ Քրիստոսի մարդեղութեան երբեակ շնորհաց ճառագայթները միացած:

5. Ա) «Ի մարդիկ հաճութիւն»:

Քրիստոսի առաջին ներգործու-



թիւնը մարդոց վրայ եղաւ եւ պէտք է որ ըլլայ փոխադարձ հանութիւն-հաւանութիւն: Այս կը նշանակէ զօրաւորներուն մերձեցումը տկարներուն. հարուստներուն մօտաւորութիւնը աղքատներուն. մեծերուն հպումը փոքրերուն եւ վերջապէս կարողներուն բարեկամութիւնը լքեալներուն: Այս կը նշանակէ թէ մարդիկ պիտի հաւնին իրարու համոզումներուն, զազափարներուն, իտէալներուն, շահերուն եւ պիտի ընդունին ուրիշներուն խորհելու ազատութիւնը եւ գոյութեան իրաւունքը:

Այս բարձր առաքինութիւնն է որ կ'արգիլէ մրցակցական հակամարտութիւններ եւ մարդիկ փոխադարձ օժանդակութեան կը մղէ:

Ինքնայայտ է թէ՛ ընկերային կեանքը բնութիւնն է բարձրագոյն կենսաւորներու: Մարդիկ երկու ներհակ յատկութիւններով ստեղծուած են – եսամտալական եւ ընկերական: Եսամտականը՝ յատկութիւնն է մեր բնագոյնական էութեան. ընկերականը՝ բնոյթն է մեր իմացական գոյացութեան:

Ասոր ապացոյցն այս է որ՝ երբ մարդը ուղեղային տկարութեան, յիմարութեան, ապուշութեան, խելագարութեան կ'ենթարկուի, ու կը գրկուի իմացականութեան-դատողութեան կարողութիւններէն՝ այն ատեն կ'ըլլայ մենամոլ, այլամերժ, այլահարած եւ վնասակար:

Ընդհակառակն որքան որ մտքով աւուղջ եւ զարգացած է մարդ մը՝ այդ աստիճանաւ ալ կ'ըլլայ այլասէր, բարեհաճ, անձնուէր եւ ընկերական:

Մարդկութիւնը ընկերական կեանքի ներքին մղմամբ կ'ըլլան իրարու բնակակից, կը կազմեն գիւղեր, աւաններ, քաղաքներ, ցեղեր ու ազգեր եւ հայրենիքներ:

Նոյն մարդկութիւնը անհատական կամ ցեղային եսամտութեամբ է որ՝ կը հալածեն ու կը ջարդեն գիրար քանդելով իրարու տուները եւ քաղաքները, այն

միակ պատճառաւ, որ չեն կրնար հաւնիլ իրարու ֆիզիքական կազմին, հոգեբանական յատկութիւններուն... եւ տնտեսական շահերուն:

Ինքնայայտ է թէ անհնար է գոյացնել ֆիզիքական, հոգեբանական եւ տնտեսական նոյնութիւնները: Որով եւ դրացնութեան ու համամարդկային ընկերաբանութեանը միակ պայմանը կը մնայ հաւանիլ իրարու հակադրութիւններուն եւ տարբերութեանց ֆիզիքական, հոգեբանական եւ տնտեսական մարգերուն մէջ ու ան ալ միայն Քրիստոսով:

Այսպէս է տիեզերական օրէնքը: Բոլոր երկնային մարմինները կեդրոնախոյս եւ կեդրոնաձիգ ներհակ ոյժերով, շատ տարբեր վիճակով ու մեծութեամբ համադրուած իրերահաճ անդամներն են անջրպետի հրաշակերտ կազմակերպութեան միշտ հաշտ ու համերաշխ:

Բուսական աշխարհը գոյներու, ձեւերու, կազմութեանց, յատկութիւններու բիւրացան հակադրութեանց ներդաշնակութիւնն է:

Երաժշտութիւնը գործիքներու, ձայներու կատարեալ աննմանութիւններու դաշնաւորեալ յօրինուածութիւնն է:

Բոլոր մեքենաներ ձեւով ու մեծութեամբ նիւթով ու շարժումներով իրարմէ տարբեր մասերու շղկապութիւնն է:

Մարդկային գործարանները, զգայարանքներն ու անդամները նպատակով ու կազմով իրարմէ տարբեր ատաղձներու միաւորումներն են:

Ասոնց բոլորին մէջ տիրապետող մէկ օրէնք կայ՝ ներհակներու եւ զանազաններու իրերահաճ ներդաշնակութիւնը՝ հաստատուած տիեզերաց բացարձակ ճարտարապետին անյեղի կամքը:

Մարդկային մեծ ընկերութիւնն ալ իմացականի վայել կազմակերպութեան մը վերածելու միայն մէկ օրէնք կայ -

Քրիստոսով փոխադարձ հաճութիւն ընդմէջ անհատներու եւ ցեղերու:

6. Բ) Յերկիր խաղաղութիւն

Այս մէկ բառին մէջ կը բովանդակեն այն բոլոր բարիք եւ օրհնութիւններ որք կ'արժեցնեն կեանքը եւ կը պարգեւեն մարդավայել երջանկութիւն:

Խաղաղութիւնը այն բնականոն կեանքն է որ՝ ենթակայ չէ ուրիշի մը կամքին ու քմահաճոյքին: Եւ անհատը որպէս մէկ բնական անդամը մարդկային ընտանիքին՝ անկաշկանդ կը կատարէ իր ծառայութեան դերը եւ անարգել կը վայելէ իր բաժինը մարդկութեան բարիքներէն ու ազատօրէն կը մատուցանէ իր պաշտամունքը իւր հիացման գերագոյն առարկային՝ Աստուծոյ:

Բայց, ցորչափ կայ ոյժի գերակը՝ ունեցիւն, բայց ցորչափ կայ կրօնական իշխանապետութիւն, բայց ցորչափ կայ բարեգործելու գաղափարը, գոյութիւն պիտի ունենան դասակարգութիւնք իշխողի եւ հպատակի, հրամայողի եւ հնազանդողի, շնորհաբաշխի եւ շնորհնակալի: Որով եւ ընկերային կեանքը պիտի ըլլայ անհարթ, անհաւասարակչիտ, խռովեալ ու փոթորկոտ եւ կը յանգի գազանային վայրագութիւններու:

Դարերէ ի վեր մարդկութեան ծոցէն ծնած են անարդարութեան դէմ բողոքող եւ մարդավայել իրաւակարգեր ծրագրող գաղափարական մարդիկ, բայց, շնորհիւ կոպիտ ու նիւթական ոյժերուն, շնորհիւ կրօնական մոլեռանդութեան եւ շնորհիւ բարերարողի ամբարտաւան խնամատարութեան՝ տրկարն հեծած է այս կարգի բռնակալութիւններու ներքեւ: Տեղի ունեցած են ազատագրական ընդվզումներ եւ սաստկացած են զսպողական քանդիչ ճնշումներ:

Վերջին աշխարհաւեր պատերազմը եղաւ գլուխ գործոցը ոյժին բռնակալութեան եւ ան ալ յանուն ճնշուածներու ազատագրութեան: Ինչ եղաւ հետեւանքը սա տիեզերական սպանդին՝

- ազգեր կորսնցուցին 12.990.000 սպանեալ մարդ, ունեցան 20.290.000 վիրաւոր, 44% առողջացման ինֆիւլէնցան միացուց 10.000.000 եւ սովը 4 միլիոն մարդ: Այս հաշուէն դուրս են երկու միլիոն կոտորուած հայեր:

Եւրոպա մատնուեցաւ սնանկութեան բարոյապէս, անձնատուր ըլլալով ամենատկար պարտուածին՝ թուրքին, կրելու իր արժանաւոր պատիժը: Եւրոպա փճացաւ նիւթապէս, եւ ահա՝ Ամերիկայի պարտի 24.800.000.000 տոլար, Ամերիկա ալ խոնարհած է ոճրագործ թուրքին ամօթալի բարոյական պարտութեամբ:

Ահա՝ կործանարար արդիւնքը, հակոտնեայ հետեւանքը ազգերու մեծ խռովութեան՝ զոր խաղաղեցնելու համար ոչ արիւնոտ կարմիր դաշտեր զօրեցին եւ ոչ հաշտութեան համաժողովներու կանանչ սեղանները:

Արեւելեան պատերազմէն յետոյ Սան Ստեֆանօյի եւ Պերլինի դաշնագրերը փոխանակ խաղաղութիւն հաստատելու յղութիւն տուին 36 տարի յետոյ ծագելիք մեծ պատերազմին, պայթումով արեւելեան հարցին:

Համաշխարհային վերջին պատերազմէն յետոյ իրարու յաջորդող Վերսալի, Սէվրի... Լօզանի եւ ապա Լօբարնօյի դաշնագրերը չկրցան վերակոչել խաղաղութիւնը եւ այսօր առաւել քան երբեք ամբողջ երկրագունդը կը միայ վերահաս համատարած հրդեհի սպառնալիքով:

Յաղթական ազգերը վասն խաղաղութեան իրենց գաւակները զոհելէ, երկիրները քանդելէ յետոյ զոհեցին իրենց յաղթութեան պտուղները: Դրժեցին իրենց հանդիսաւոր խոստումները: Ուրացան իրենց արիւնի պարտքերը խռովութենէ խուսափելու համար:

Նոյն ատեն շահաստաններ յափըտակելով աւազակային վաճառականութիւն կը պարտադրեն ուրիշներու ի վնաս անոնց գոյութեան: Եւրոպա գի-

նական 40 նաւահանգիստ գրաւած է ու ան դուռներէն ոգելից ըմպելի եւ ափսոն կը լեցնէ այդ երկիրը:

*Ռուսիա, Ֆրանսա, Անգլիա եւ Ամերիկա, Մուսուլի Նաւթահորերու սիրոյն աշխարհի ոճրագործը սրբացուցին ու անոր հետ եղբայրացան:*

*Ինքնայայտ է, ուրեմն թէ՛ բովանդակ մարդկութիւնը հրեղէն փոթորիկի եւ արեան հեղեղներու նախօրեակին առջեւ կը գտնուի սարսափահար, ու դարուս մարգարէները կ'աղաղակեն, կը բողոքեն: Խաղաղութիւն կ'ոգեկոչեն մարդկութիւնը միանգամընդմիշտ փրկելու համար:*

*Ո՛հ, սակայն, խաղաղութիւն պիտի չգայ՝ մինչեւ որ հրեշտակաց երգին պատգամը չընդունուի: Ի մարդիկ հաճութիւն:*

*Նախագահ Ուիլսըն շեշտեց թէ՛ «հաւասարներու միջեւ միայն կարելի է տեսական խաղաղութիւն»:*

*Ֆրանսացի նշանաւոր տնտեսագէտը Լուի-Լուչէօն նոր գիւտ մը գործածի պէս կը պատգամախօսէ «բոլոր աշխարհի հարստութեանց աղբիւրները բոլոր ազգերով համերաշխաբար տնտեսելով միայն կարելի է ապահովցնել ընդհանուր խաղաղութիւնը»:*

*Աշխարհի դիւանագէտները գմայլանքով կը յայտարարեն թէ՛ այս պատգամը նոր դարագլուխ մը պիտի բանայ աշխարհի: Այո՛ որովհետեւ Ուիլսընի մատնանշած հաւասարութիւնը եւ Լուչէօնի գիւտով հարստութեանց հաւասար տնտեսութիւնը տկարագոյն արձագանգն են հրեշտակաց երգին՝ որ դեռ կը ծածանի եթերին մէջ. «Ի մարդիկ հաճութիւն»:* Ան է միայն միայնակ պայմանը երկրի խաղաղութեան, որուն իշխանն է հրեշտակներէն փառաբանուած Բեթղեհէմի մսուրին մէջ նորածին Մեսիան:

*Անոր մականին ներքեւն է որ «Գայլը գտնին հետ պիտի բնակի եւ ինձը ուլին հետ պիտի պառկի ու որթը եւ*

ատոյգ առիւծը եւ պարարտ գուարակը մէկտեղ պիտի արածին ու զանոնք մէկ պգտիկ տղայ մը պիտի փշէ, ու կովը արջին հետ պիտի ծարակի, անոնց ձագերը մէկտեղ պիտի պառկին, եւ առիւծը արջառի պէս յարդ պիտի ուտէ: Ու կաթնկեր տղան իժին ծակին վրայ պիտի խաղայ եւ կաթէն կտրուածը ձեռքը քարին բոյնին վրայ պիտի դնէ» (Ես 11):

*Այսպէ՛ս գուշակեցին մարգարէները Քրիստոսի համար: Այսպէս քարոզեցին առաքեալք գՔրիստոս եւ Անոր թագաւորութիւնը:*

*Որովհետեւ եթէ տիեզերական ներդաշնակութեան համար օրէնք մը, զօրութիւն մը պէտք է, համամարդկային իրեքահանութեան եւ խաղաղութեան համար ալ անհրաժեշտ է համամարդկային սիրոյ անսպառ աղբիւր մը, ընկերական յօդաւորեալ միութեան համար ամենագոր ճարտարագէտ մը եւ ան է՝ Յիսուս Քրիստոս:*

*Իսկ երկրի խռովութիւնները հանդարտեցնելու համար պէտք է գերերկրային անյեղի գօրութիւն մը՝ որուն հպատակին բոլոր խռովարար գօրութիւնները բնութեան եւ մարդկային կազմին:*

*Ո՛չ ապաքէն շարժող ոյժը ենթակայն պէտք է գերագօր ըլլայ: Որեւէ անշարժ առարկայ շարժման մէջ դնելու համար անհրաժեշտ է անոր ծանրութիւնը գերազանցող գօրութիւն մը: Նոյնպէս շարժեալ առարկայի մը ընթացքը կասեցնելու կամ անոր ուղղութիւնը փոխելու համար առարկային ստացած թափէն աւելի ուժգին գօրութիւն մը հարկաւոր է խռովեալ ծովու մը ալիքները հակազդելու համար հակառակ կողմէն պէտք է փշէ աւելի գորաւոր հոլ մը: Բնութեան մէջ ա՛ս է տիեզերական օրէնքը: «Զխաղաղութիւն թողում ձեզ, խաղաղութիւն զիմ տամ ձեզ, ո՛չ որպէս աշխարհ տայ եւ տամ ձեզ: Մի՛ խռովեսցին սիրտք ձեր եւ մի երկնչեցիք» ԹՀ 14. 27:*

Ահա՛ այս խօսքերով Քրիստոս կը շեշտէ անբաղդատելի տարբերութիւնը իրեն եւ աշխարհի խաղաղութիւններուն: Կը սորվեցնէ թէ՛ աշխարհի խաղաղութիւնը բաւարար գորութիւն մը չէ՝ հակազդելու երկրի խռովութիւններուն եւ կասեցնելու կամ փոխելու խռովեալ շարժումներու անդիմադրելի ահաւոր թափը:

Քրիստոսի խաղաղութեան գերագոր բաւականութիւնը ըմբռնելու համար պէտք է գիտնանք խռովութիւնները եւ անոնց գորութիւնը, ընդարձակութիւնը երկրիս վրայ:

Խռովութիւններու, անհանգստութիւններու ենթակայ են եւ կ'ալեկոծեն

- 1) անհատներ գգացումով ու կեանքով:
- 2) իմբակները գանազան հակադրութիւններով:
- 3) ազգերը բնական եւ քաղաքական հակամարտութիւնով:

Ա.- Անհատներու սիրտերը յաւէտ փոթորկեալ են պղտոր ու խռովեալ, անհանգիստ.

1.- բարկ գայլոյթով յանկարծական ազդեցութեամբ մը - խօսքի կամ արարքի իրական կամ կարծեցեալ վիրաւորանքով մը, Ֆիզիքական հարուածով մը: Այսպիսի պարագաներու ներքեւ կը կորսուի մարդուն բնականոն կացութիւնը եւ կայծակի արագութեամբ կը փոխուին ջիղերու եւ արեան վիճակը: Կը կորսուին խորհուրդն ու դատողութիւնը: Զսպող բան մը չկայ աշխարհի մէջ: Դատարանի, պատիժի, մահուան երկիւղները կ'անհետանան եւ լեզուն նախատինքի եւ ձեռքերը գարներու կ'երանգեն ու կը շարժին եւ չեն դադրիր մինչեւ շարգիւղին գերագոյն ոյժէ մը:

Մարդը այս միեւնոյն ինքնակորոյս գրութեան կը մատնուի բնագոյական կիրքով հրարբորք, որ դարձեալ վայրկենական կիրքով մըն է, հրեղէն ալիքներու կոհակումը, հոգեկան փոթորկա-

յոյց խռովութիւն մահաբեր:

2.- Անհատներու սիրտերը յաճախ խռովեալ են նախանձու մրրիկներով: Գրաւուած դիրք մը, պատիւ մը, շահ մը, ընդունուած բարիք մը կը խոչորնան եւ մերձաւորին աչաց կը դառնան ատելի: Այս ներհակ գգացումներով կը բորբոքի նախանձորդին սիրտը: Դիրքին ցանկութիւնը կը փոխուի վայրագ տարփանքի: Նայուածքը կը փայլի երեւուն սառնութեամբ, ժպիտը խոյս կու տայ: Ներքին փոթորիկներու մռայլով կոհակներուն վիճերը կը գծուին դէմքին վրայ: Հաւաքներու պոռթկումներուն հետ կը ժայթքին թագուն վրդովումներու մոլթ ծուխերու սեւ գուլաներ:

Նախանձու առարկայ անձը կը դառնայ նշաւակ անհաշտ ատելութեան: Աշխարհը նեղ կու գայ երկուքին համար: Եղեռնային խորհուրդներ կը տանջեն նախանձորդին սիրտը եւ կը վերածուի սեւ ածուխի մը՝ որ կը խփայ ատելավառ անյատակ ծովուն սեւափրփուր կոհակներուն վրայ:

3.- Անհատներու սիրտերը շատ անգամ վրդովեալ են հիմցած ռիսկալուծեանց տիղմերու անյատակ գանգըւածին ահաբեկիչ կլանող տատանումով:

Մարդուն բոլոր խօսքերէն կը բուրէ քէնի եւ թշնամութեան ժահահոտութիւնը: Պատահական բոլոր խօսակցութեանց առարկան անձ մըն է կամ անձինք՝ դատափետուած յիրաւի կամ յանիրաւի: Կորսուած կամ յափշտակուած դիրքերու, շահերու անմոռաց յիշատակները կը կրծեն մարդուն սիրտը: Անոր երեւակայութեան մէջ կը հրէշանայ իրական կամ կարծեցեալ թշնամիին պատկերը, որ նշաւակն է ահաւոր վրէժի, որուն եթէ չյաջողի՝ ատելութիւնը, քէնը կատղած կ'անդրադառնայ սրտին՝ ուսկից դուրս խուժեց ոճրաբաղձ գինովութեան մը մոլուցքով եւ փոթորիկը կը հանդարտի անձնասպանութեան սեւ անդունդին փլատակներուն ներքեւը:

Թաղուած յաւիտենապէս: Այս չէ՞ եղած  
ահռեղի վախճանը ռիսակայներուն:

Անհատներու ներքին խռովութեանց  
յար եւ նման է խմբական հակադրու-  
թեանց եւ ազգային հակամարտու-  
թեանց այբեկոծութիւններ, որք միշտ կը  
յանգին գարհուրելի ոճիրներու եւ քան-  
դումներու:

Երկրիս վրայ տակաւին ո՛չ մէկ ոյժ,  
ո՛չ մէկ ջանք յաջողած է հակազդել այս  
խռովութիւնները եւ խաղաղութիւն  
հաստատել: Ազգային հակամարտու-  
թիւնները երբեմն կը հանդարտին  
պատերազմներու կազմալուծիչ, յոգնե-  
ցուցիչ թմրութիւնով եւ պարտասեալ  
ազգերը իրերախարհ հաշտութիւնով ժա-  
մանակ մը կը խաղաղին կազդուրուելու  
կատաղագոյն եղեռնագործութեանց  
համար:

Խմբական հակադրութիւններ յա-  
ճախ կը վախճանին փոխադարձ հաս-  
կացողութիւնով կամ շահերու միա-  
ցումով: Եւ սակայն հանդարտած խռո-  
վութիւններու քովիկը ծնունդ կ'առնուն  
ուրիշ հակամարտ խմբաւորումներ, ըն-  
կերութիւններ, կուսակցութիւններ, նո-  
րելուկ գաղափարներով կամ նորագիւտ  
շահերով հակադրուած: Ըստ որում եւ  
ցարդ չէ եղած գերագոյն գորութիւն մը,  
պետական օրէնք մը, փրիստփայական  
կերտուածք մը՝ համադրելու համար  
մարդոց խոհայները եւ հաշտեցնելու  
շահուց բաղխումները տեւական խաղա-  
ղութեամբ:

Իսկ անհատներու ներքին խռո-  
վութիւնները աւելի խորունկ եւ անողոք  
են, քանի որ անհատներու ո՛չ միայն  
սիրտը յաւէտ եւ անընդհատ նշաւակ է  
կիրքերու ներքին փոթորիկներուն,  
այլեւ կեանքի պայքարը, ընկերական  
բազմադիմի չարիքներ կը մրրկեն ան-  
հատներու կեանքը, այնպէս որ մարդիկ  
երկրիս ոյժերէն, օրէնքներէն, դաշնա-  
գրութիւններէն մնալով աննպաստ, գէթ  
պուտ մը խաղաղութիւն գտնելու հա-  
մար կը դիմեն գգայագիրկ միջոցներու

ու գանազան թմրեցուցիչ թոյներու:

Ո՛րքան ցանկալի է խաղաղ ու  
հանդարտ վիճակը սրտին, որ սակայն  
դատապարտուած է անվախճան  
այեծուփ խռովութիւններու:

Ահա՛ այս տխուր իրականութեանց  
առջեւն է որ Քրիստոս յրջօրէն կը խոս-  
տանայ իր խաղաղութիւնը, ճիշդ ա՛յն  
գերագանցութեամբ որ անոր խաղա-  
ղութիւնը կապակցեալ չէ դիւրաբեկ եւ  
անցաւոր պայմանագրութիւններու,  
օրէնքներու, եւ կոպիտ ոյժերով պար-  
տադրուած հրամաններու: Այլ որ անոր  
խաղաղութիւնը կենդանի նոր եւ ամե-  
նագօր հոգի մըն է անհատին մէջ: Ու  
այս գորութիւնը եւ հոգւոյն ներկա-  
յութիւնը կը գգայ, կը գիտնայ միայն  
ան՝ որ գայն կ'ընդունի:

Այս խաղաղութեան տիրացած ան-  
հատը

1) կը գերծանի կիրքերու բռնակա-  
լութենէն, վիրաւորանքներու եւ հար-  
ուածներու խոցերը կը կրէ համբերու-  
թեամբ եւ կ'աղօթէ իր թշնամիներուն  
համար:

Բարձրութեան հասնելու համար  
չմաշիր նախանձով, այլ կ'ապաւինի Աս-  
տուծոյ շնորհաց ուրիշի դիակները չկո-  
խեր յաջողելու համար:

2) կը համակերպի անխուսափելի  
դժբախտութիւններու: Եթէ բնութեան  
ճախորդութիւններ եւ ընկերային չա-  
րիքներ խլեն անոր բերքն ու բարիքը ան  
կը հանդուրժէ անտրտունջ:

Գերերկրային խաղաղութեամբ էր  
որ Ներոնի խնձոյքներու մէջ իբր ջահ  
լուսավառուող մարտիրոսները երկաթի  
սիւներու վրայ օրհներգներով կը վերա-  
նային իրենց մարմնոյն բոցերուն հետ:

Այն նոյն արիութեամբ էր որ՝ հայ  
կոյսերը ժայռերէն ու ծովափներէն գա-  
հավէժ ինկան ներքին խաղաղութեամբ  
փրկելու իրենց բարոյականն ի պատիւ  
ցեղին:

Հոգերուժական առողջաբանու-  
թեան մէջ պաղարիւնութիւնը - սրտի

հանդարտութիւնը առաջնակարգ յանձնարարութիւնն է իբրեւ նախապահեստ ապահովութիւն եւ իբրեւ էական դարման շատ մը ջղային եւ արիւնային հիւանդութիւններու: Անիկա փորձուած ու հաստատուած ճշմարտութիւն է:

Առհասարակ արիւնային կաթնուածները, եւ ջղային թեթեւ ու ծանր տկարութիւններ պիտի չհանդիպէին ու պիտի դարմանուէին եթէ ենթական լեցուն ըլլար Քրիստոսով եղած խաղաղութեամբը եւ ունենար հանդարտ սիրտ հանդէպ ամէն պատահականութեան:

Ի հանդէս այս անյեղի ճշմարտութիւններու՝ Քրիստոս կը ստանայ ամենաբարձր դիրք մը ինքզինքը հռչակելով իբրեւ աղբիւր անհատական ներքին խաղաղութեան, որմէ կախեալ է եւ հանրային ու համամարդկային խաղաղութիւն:

Պօղոս առաքեալը Քրիստոսի խաղաղութիւնը կ'անուանէ «ի վեր քան գամենայն միտս եւ գրանս» Փլ 4-7: Ու յաճախ կը յանձնարարէ ու կը բարեմաղթէ այն խաղաղութիւնը:

Քրիստոսի խաղաղութիւնը քրիստոնէութեան մէջ չէ, այլ իր անձնականութեան մէջ: Ըստ որում եւ այդ խաղաղութեան փորձառութիւնն ունին միայն անոնք որք Քրիստոսը իրենց մէջ ունին:

Գ. «Փա՛ոբ ի բարձունս Աստուծոյ փառքն» է ներքին գոհունակութիւն մը, ինքնահաճ բերկրանք մը՝ որ է անդրադարձում մը ուրիշի վրայ գործուած ախորժելի տպաւորութիւն մը:

Քաղցր երգ մը, հոգեբուխ բանախօսութիւն մը, անուշ նուազ մը, սրբտազեղ բարիք մը, սիրայորդ ժպիտ մը հաճելի ազդեցութիւն մը կը ստեղծեն ունկնդիրին, ենթակային սրտին մէջ: Հո՛ն կը գոյանայ ախորժելի զգացում մը եւ կը ցոյանայ գուարթ արտայայտութիւն մը: Այս արտայայտութիւնն է որ իր կարգին որ կը ստեղծէ անվերջ հրճուանք մը, փառաւորում մը երգիչին,

բանախօսին, նուազողին ու բարերարին հոգւոյն մէջ, որ կ'ըլլայ աղբիւրը անոր ներքին գոհունակութեան:

Կան մարդիկ որ այս ներքին սեփական հրապոյրներէն գուրկ ըլլալով, փառքի անհարազատ զգացումը կը ջանան ունենալ արտաքին, օտար շպարներով եւ արդուզարդի պճրանքներով:

Ամէն գեղեցկութիւն՝ բնական թէ արուեստական, ամէն բացառիկ շնորհքներ եւ արարքներն ունին ներգործութիւն եւ անդրադարձում մը:

Շատ պարզ է որ իմացականութեան մէջ կայ հաճոյանալու, մեծարուելու, գնահատուելու ու փառաւորուելու, սիրուելու ցանկութիւն մը:

Մարդուն մէջ այս բնական անմեղ զգացումը մէկ կարեւոր ազդակն է մարդկային յառաջդիմութեան: Կենդանիներէն ոմանց, մանաւանդ ձիերուն, կատուներուն եւ շուններուն ու գանազան ընտելավարժ անասուններուն մէջ հաճոյանալու... բնագրն է գաղտնիքը անոնց հնազանդութեան եւ համակերպումներուն մարդուն կամքին:

Ուշադրութեան արժանի է սակայն, հետեւեալ իրողութիւնները.

1) Մերթ շատ մը անձինք կ'արտահոսեն փառքի արժանաւոր գանազան շնորհքներ: Բայց փոխանակ գնահատութեան՝ կը հանդիպին վայրագ նախանձի, մոլեռանդ տգիտութեան ու չարամիտ թշնամանքներու եւ կը փոխարինուին սրտաբեկ քննադատութիւններով եւ «ի իսչ հան գղա...» խուժանային աղաղակներով:

2) Յաճախ գեղեցկութիւն մը կը փայլի, վեհութիւն մը կը բարձրանայ, երգ մը, նուազ մը, գեփիւռ մը կը ծածանին ամայութեան մէջ ուր չկայ հմայուող աչք մը եւ կախարհողական մը ոչ ալ զգայուն իմացականութիւն մը: Ո՛չ գնահատանք մը եւ ոչ անդրադարձութիւն: Շնորհքներ կը բղխին ուղիսօրէն, ուր չկայ ընկալուչ աւագան մը, սիրտ մը որ անոնցմով

ուսումնասիրող գեղագիտիկ եւ փառաւորութիւն մի անոյշ բուրուսներ սփռէ վեհին ու գեղեցիկին:

Այս միակողմանի գոյուցումներ բնութեան մեծ սխալը պիտի ըլլար: Ինչո՞ւ գեղեցիկութիւններ առանց զանոնք ճաշակող քիմքերու, ինչո՞ւ վեհութիւններ, երգ ու նուագներ առատաբաշխ բնութեան մէջ առանց անոնցմով զմայլող էակներու:

Ո՛չ, սակայն, նկարիչին աչքերը հէրիք են հրճուելու իւր ստեղծագործութիւնով եւ երգիչին ականջները բաւական են զմայլելու իւր հոգիին շեշտերով: Այսպէս եւ Արարչին ուրախութիւնը մեծ է իւր իսկ արտադրած փառաւորութիւնով:

3) Բնութիւնը լի է փառայեղ վստմութիւններով որք, սակայն, կը մնան անգիտակ իրենց կախարդիչ տպաւորութիւններուն: Ո՛րքան ակնպիչ կը նայինք գունազեղ ծաղիկներուն, պատկառելի երկնակամարին ու պլպլացող աստղաբոյրներուն: Կ'ուզենք որ անոնք զգացում ունենան ըմբռնելու մեր հիացումին անհունութիւնը: Սակայն մեր հոգիներուն հրաբուխ անուանումները մեր սիրտերու անձկութիւնը չեն կրնար հոգի ստեղծել անոնց մէջ որ փառաւորութիւն մեր հրճուանքներով, որ պատմեն մեզի թէ ուստի է անոնց շողն ու գեղն:

Բայց, մեր հոգիները չեն հանգչիր, մինչեւ որ մենք գտնենք իմացականութիւն մը որ ըմբռնէ մեր հիացումն ու հասկնայ մեր գովեստը տիեզերքին, որ արձագանգէ մեր փառաբանութիւնը իւր փառաւորութեամբ. ու վերջապէս մեր հոգիները որ տարփաւոր թռիչներով կը հանդիպին մեծ հոգիին բնութեան հեղինակին որուն են բոլոր փառքերը:

Այո՛ Անորն են բոլոր փառքերը անշունչ ու շնչաւոր, անզգայ ու զգայուն արարածներէն: Բայց, նաեւ Անո՛րն է բոլոր սուգն ու ցաւը, քանի որ իմացական էակներ կ'ատեն գիրար, քանի որ

աշխարհը խռովութեանց արիւնի ալեկոծ ծով մըն է: Եւ հետեւաբար Անոր սիրտը թիրախն է երկրէս բարձրացած տրտունջի եւ նգովքի անհամար նետերուն:

Ահա՛ ասո՛ր համար ինքն իսկ մարմնով յայտնուեցաւ: Քանի որ մեր իմացականութիւնը չպատկառեցաւ ինքնիրմէ եւ անզգայ մնաց տիեզերքի պերճախօսութենէն: Քանի որ մարդ էակը չկրցաւ գնահատել ու փառաւորել ինքզինքը. կուրացաւ փառաւորելու վեհաշուք բնութիւնը եւ անով զգաստանալու: Ապա ուրեմն, այս բոլորի հեղինակն ինք երեւցաւ, որ իցիւ թէ մարդիկ տեսնեն բնագանցական, գեր-զգայաբանական իրականութիւնները եւ անդրադառնան գեր-Փիղիքական ճշմարտութիւններ սորվելու որպէսզի մարդիկ յանձին հասարակ մարդու մը տեսնեն սիրոյ եւ շնորհաց անսպառ աղբիւրը ու իրենց մէջ գտնեն ակն ու վտակը այն նոյն մեծութիւններուն եւ գիտակցին անոր, ու ապրին ըստ այնմ: Ու մանաւանդ որպէսզի մարդիկ յանձին այդ մարդուն տեսնեն Արարիչ մը խոնարհած մարդկային մարմնաուրութեան, մատնանշելու համար մարդուն անոր աստուածային կարելիութիւնները - սրբազան ապրումի հրաշալի մեծագործութիւններու եւ յաւիտենական կեանքի:

Այս պիտի ըլլար իրական բարիքը Բեթղեհէմի մսուրին մէջ ծնած մանուկի մը, անոր համար հրեշտակներ հռչակեցին Անոր ծնունդը:

Այդ մանկիկն էր որ իւր թագաւորութիւնով պիտի ջնջէր իշխանութիւնը մեդիին, ցիւսիս ու բոնուսիս եւ սրբէր արցունքը մարդկութեան գրկեայններուն ու հաստատէր հաւասարութիւն, խաղաղութիւն եւ երջանկութիւն:

Այդ մանկիկն էր որ պիտի սրբէր արցունքը մեր երկնաւոր սգակիր Հօր, որ իրապէս պիտի ուրախանար տեսնելով ի մարդիկ հաճութիւն եւ յերկիր խաղաղութիւն որոնցմով փառաբանու-

թիւններ, օրհնութիւններ պիտի բարձրանային վեր երկինքը, հոգեւոր աշխարհի մէջ յառաջ բերելու համար երկրապարզեւ, մարդատուր բերկրութիւն:

Շա՛տ մեծ մարդիկ ծնած են, խորճիթներու կամ պալատներու մէջ: Բայց միայն Բեթղեհէմի անշուք մսուրին մէջ խանձարրապատ մանկիկին վրայ իջան երկնից հրեշտակներ, զնա ողջունելու,

աւետելու եւ գովաբանելու համար, որովհետեւ միայն Անով էր որ պիտի կատարուէր տիեզերական մեծ յեղաշրջումը: Անով էր որ պիտի ըլլար փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ համութիւն:

Օրհնեա՛լ եղիցի մանուկն Բեթղեղէմի:

ԽԱԶԻԿ ՔՀՆՅ. ԳՌՈՒԶԵԱՆ





**ՄԱՀԷՆ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ\***  
**ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԼՈՐՏ ՄԷՅՐՍՖՕՆ ՈՐԲԱՆՈՅԻ**  
**(1920-1924)**

ՎԵՐՋԻՆ ԱԿՆԱՐԿ

Հոս այս գլխուն մէջ յետադարձ ակնարկ մը ընենք, քանի մը վերլուծումներով, նախքան վերջնականապէս Պոլիսը թողելնիս, թէ՛ ինչպէս մեր դժխեմ եւ դժբախտ բախտը մեր ճակատին դրոշմեց «որը» ածականը մեզ պարտադրելով այս վերլուծումները, քանի որ անոնք մաս կը կազմեն մեր կեանքին գոր ապրեցանք առանց կարենալ մոռնալ, մտքէ եւ մտածմունքէ զանոնք հեռացնել, ատոնք ըլլան պատահած Լ.Մ.Ֆ.ի եւ կամ Ն.Ի.Ր.ի<sup>1</sup> որբանոցներուն մէջ: Այժմ այր եղանք հայր եղան եւ տակաւին կը յիշենք...

Պոլսոյ մեր բնակութեան շէնքերը կը հանգչէին վայրի, թեւատարած, ստուերոտ շագանակի ծառերուն տակը: Ընդարձակ ճաշարանի մոտքի դրան վրայ գրուած էր մեծ տառերով.- «Մանիր Զքեզ» ներսը պատերուն վրայ նմանապէս: «Լաւ ծամէ» «Ստամոքսը ակուաներ չունի» «Լուռ ճաշէ - Լուռ թիւնը ոսկի է» եւն:

Պարտէզներուն մէջ ծառեր ու ծաղկաստան, բացուած վարդերը կամար կը կապէին մոտքի եւ ելքի դռներուն վրայ: Պարտէզներուն եւ այգիներուն մէջ, թռչունները մեզի կ'ընկերանային

\* Շար. նախորդ թիւէն:

<sup>1</sup> Ն.Ի.Ր. NER ամերիկեան որբանոցը յետոյ փոխադրուեցանք Լ.Մ.Ֆ. եւ Լ.Մ.Ֆ.ի անգլիական որբանոցէն 15 հոգի արու, երբ գայն պիտի գոցէին վերջնականապէս 1923-1924 թուականին, գացինք Կորնթոս:

երբ որ երգէինք: Ամէն օր գարուն էր մեզի համար երգ ու ծիծաղ:

«Ահա գարուն է տղաք  
 Ինչ սիրուն եղանակ  
 Կարենք ժամն է ահա  
 Միշտ խնդանք հա՛ հա՛ հա՛»:

Այսպէս կը սորվեցնէին մեզի երգեր: Պահ մը մեր խնդուքը ընդհատուեցաւ: Զբօսանքի պահուն գունդի տեղ կլոր քար մը կը նետէին տղաք որպէս վարժութիւն, այդ նետուած քարը, սիրուած, շատ բարի տղու մը գլխուն ինկաւ եւ քանի մը օրեր հիւանդանոցը մնալէ յետոյ մեռաւ:

Վերջին օրը Ս. Գիրք մը ուզած էր որ բարձին տակը դրուէ:

ՄՈՒՈՐԱՆՔՍ

Պոլիս նոր ժամանած էինք: Լսած էի որ դեղագործ ազգական մը ունէի որ Գում Գաբու կը բնակի: Փափաք մը արթնցաւ ներսիդիս, որ երթամ եւ տեսնուեմ, բայց ինչպէ՞ս: Ես տարրական դաղափարն իսկ չունէի թէ շոգեկառք կամ նաւ նստելու համար տոմսակ պէտք է կտրել: Հրաման խնդրեցի տնօրէնէն որ չմերժեց քանի որ ազգականիս հետ թէ ծանօթ էր եւ թէ հասցէն ալ գիտէր: Ուստի Կիրակի առաւօտ մը տնօրէնը հրաւիրած էին նոյն թաղի ժողովարանը քարոզելու: Իրեն ընկերացող ուսուցիչ մը երթ ու դարձի տոմսակ մը կտրեց եւ ինձի տալով էրէնքէօյի նաւամատոյցէն նաւ առի տնօրէն եւ ուսուցիչ Ա. կարգ, իսկ ես Գ. կարգ՝ նաւուն ետե-

ւը գացի ու նստայ Մարմարայի մեծ ու փոքր կղզիները, ծովեզրի պարտէզներուն մէջ թաղուած պէյերու փաշաներու պալատները, Ֆէնէրպահճա, փարոսը նկարչագեղ այս տեսարանները անկուշտ դիտելով: Մառախուղի մէջ, սակայն քանի կը մօտենանք այնքան կը պայծառանայ Այա Սոֆիան իր հսկայանիստ գմբէթով եւ վերջէն տնկուած մինարէներու սիլուէթով: Երբ Ղալաթիոյ կամուրջը հասանք ես պրն. Տնօրէնին ընկերացայ որուն երթալիք ժողովարանը հեռու չէր ազգականիս ոչ տունէն եւ ոչ ալ դեղարանէն:

Գացի եւ առանց դժուարութեան, ինծի բացատրուածին պէս գտայ, բայց ի մեծ յուսախարութիւն, Կիրակի ըլլալուն, տունէն բացակայ էին... որբին բախտը ե՞րբ է ժպտեր: Դարձայ ժողովարան, քարոզը աւարտած դռներն ալ գոցուած էին ուստի եռացող ջուրին տակի կրակը մարեցաւ: Ո՛ր երթալ, եւ որո՞ւ դիմել. ոչ փողոցներուն եւ ոչ ալ քաղաքին ծանօթ էի: Միայն ապահովութիւնս եւ լաստս ՅՃԾ ս.մեթր խաւաքարտ ետդարձի տոմսակս էր:

Հարց ու փորձով եկած ճամբովս կամուրջ գացի որ նաւարկեմ ան յոյսով թէ որեւէ նաւ գիս նոյն կայանը կը տանի բայց ես սխալած էի: Հարցուցած եւ ինծի ցոյց տրուած նաւը կ'երթայ մինչեւ Գատրգիւղ եւ հոն կը հանգչի եղեր: Է՛յ յետոյ, յետոյ դուն քու գլխուդ ճարը նայէ... բայց ես չէի գիտեր թէ «հայտար փաշա» նախքան Գատրքէօյ իջնելով շոգեկառք առնել ալ կայ որ նոյն տեղը կը տանի...:

Գատրգիւղ նաւը կանգ առաւ, արեւն ալ հորիզոնին ետեւը, ես մնացի նաւուն մէջ, վերնամասը առանձինս ան մտածմունքովս թէ առաւօտեան նոյն շրջանը պիտի ընէ գիս ալ իմ գիտցած կայանս վար բերելով...:

Քննիչ մը վեր բարձրացաւ եւ գիս տեսաւ որ անհոգ նստած տեղէս շարժած չունիմ, եւ կարծելով թէ նաւը առանց

տոմսակի եւ փախստական մտած եմ, Լ.Ո՛.Ք. գրուած ժապաւէնին վրայ, խսիրէ իմ գլխարկս գլխէս խեց եւ մէկ թեւէս կաշկանդելով անխօս գիս վարը առաջնորդեց իր մեծաւորին:

Դրութիւնս բացատրեցի եւ տոմսակս տալով գլխարկս ետ արի՛ բայց այսպէսով չէր լուծուեր կրած երկիւղիս պատճառած մտավախութիւններս որբանոցէն ալ ներս եւ այժմու անորոշ վիճակս: Ոչ մէկ ելք:

Ելքը այն էր որ հոս տեղէն անցնող ուրիշ նաւ չըլլալուն պէտք է վազել ետ դարձեալ Հայտարփաշա շոգեկառքի կայարանը եւ շոգեկառք առնել: Ո՛ր է սակայն տոմսակի...:

Կրկին ետ դարձայ, Գատրգիւղի փողոցները ինկայ կը վազեմ գիշեր չեղած տեղ հասնելու արտորանքով: Հարցուցած մարդոցս թէ՛ անգլիական որբանոց երթալու էրէնքէօյի ճամբան ո՞ր մէկն է, «պիլմէմ» (չեմ գիտեր) կամ թէ՛ «այս ուղղութեամբ գնայ» ըսողին վստահելով քրտնաթոռ եւ յոգնած անծայր անել փողոցները քրտնաթաթախ երես չորցնելով կրկին վերադարձայ հոն ուր ժամեր առաջ գիս նաւէն դուրս հանած էին: Նաւամատոցը նաւ մը կայանած է լոյսերու մէջ ողողուն հայ սկառուներ կ'երգեն ոգեւորուած, գանոնք ուրախ ո՞ր քարափը պիտի հանէ: Ես ալ սկառու եւ սկառուտական տարագով եմ եւ սիրտս մոլթ ու ես տխուր: Միտքս կու գայ սկառուտական տասնաբանեան ուր սապէս կ'ըսէ.-

«Սկառուտը բարեկամ է եւ եղբայր առանց խտրութեան բոլոր սկառուներուն...»: Նաեւ «միշտ օգնել ուրիշին...» բայց այդ օգնութիւնը հայցելու եւ ունենալու համար երկաթապատ նաւամատոցը մտնելու համար կրկին փող է հարկաւոր:

Վիզս ծուռ յուսալքուած որոշեցի ծովեզրէն քալելով որբանոց երթալ որ հոտ իջած էինք մեր Պոլիս գալու նախօրէին: Բարձրացայ «Ֆէնէրպահճէի»

փարոսին մօտերը: Իրիկուան զո՛վ գե-  
փիւռ մը կը շոյ՛ր կէսօրուան տապէն  
խոնջածները, որոնք հոտ բացը թէ ծա-  
ռերուն տակ կամ կանանչ մարգերուն  
վրայ երկնցած այդ հանգստացուցիչ  
պահը կը վայելէին ընտանեկան կամ բա-  
րեկամական շրջանակ կամ թէ խուժերը  
կազմած:

Հայերէն խօսակցութիւն լսեցի  
նստողներէն, իրենց մօտեցայ, բարեւե-  
ցի, դրոյթս լացի: Մարդ մը տարօրինակ  
հայերէնով ճիգ ըրաւ որբանոցին ճամ-  
բան բացատրելու որ գուցէ ինք ալ չէր  
գիտեր, իր հայերէն խօսուածքին պէս:  
Քովը նստող իր տիկինը խօսքը կիսատ  
թողուց իր ամուսինը յանդիմանելով, որ  
աւելի սահուն եւ հասկնալի կը խօսէր:  
Ան յարեց -

- «Տօ՛ մարդ, խենթեցար, որ այս  
տղան այդ կողմերը կը ճամբես բոլորը  
թուրք են, հապա մէջտեղէն վերցնեն,  
ո՞ր որբանոցէ է ո՞վ գիտէ, ինչպիսի՞  
ծնողքի գաւակ է:

- Հէպէ ի՞նչ էնէնք - մարդն է խօսո-  
ղը:

- Մեր տունը տանինք հոն կը պառ-  
կի, վաղը ես գործիս չեմ երթար, գինք կը  
տանիմ եւ կը յանձնեմ որբանոցը իր տե-  
ղը:

- Պիրէ կնիկ, դուն գիտես, ի՞նչ դա-  
տար ճէմբաք կայ քալելու, փարա ունէ՞  
որ առապածի՛ տէսս:

Այս ընտանիքը այդ օր իրիկունը  
հրաւիրուած էին, իրենց մօտիկ ազգա-  
կանին տունը, նոյն արուարձանը: Մօ-  
տերնին քիչ մը նստայ յատակը: Տիկինը  
ինձ դարձաւ գորովալի եւ հարցուց,  
հանգչեցար, ես թէեւ այո ըսի բայց, այդ  
մէկը ոտքերս գիտէին... Ոտքի ելանք:  
Տիկինը միշտ խանդակաթ մօր մը պէս  
ձեռքէս բռնած, հարցումներուն, որ  
կ'ընէր հետաքրքիր կը պատասխանէի,  
հաստատ յոյսով վէմի մը կառչած:

Փռաւոր սեղան մը նախապէս  
պատրաստուած ամէն տեսակ արեւել-  
եան ճաշակով թէեւ երկու ընտանիք-

ներն ալ գաղթականութենէ հոն Պոլիս  
էին ապաստանած, եւ բնակարանին  
փայտաշէն գապին մըն էր հագիւ պար-  
փակելու ներկաները որպէս հրաւիրեալ:

Իմ բաժինս կարծես ինչպէս որ էր  
պնակին մէջ սեղանին վրայ ալ մնաց քա-  
նի որ ես աչքերուս կոպերը կարող չէի  
բաց պահել: Սա որոշ յայտնի է թէ՛ այդ  
իրիկուն անոնց քէֆը աւրեցի, եւ հոգա-  
ծու շուքը ազնիւ իրապէս մայր տիկինին  
արտորանքին պատճառ եղաւ որ գիս  
տանի եւ քնացնէ իր անպաճոյճ «չայէ-  
ին» բայց դրախտագարդ սրտին մէջ:

Նրանց տուն կոչածը «գապին» մըն  
էր անտաշ տախտակներով իրարու  
ագուցուած: Մահճակալ մը հագիւ տե-  
ղաւորած յատակը առաստաղին տակ ալ  
վերնամաս մը որպէս պահեստի ատակ,  
ոչ մէկ կարասի. պարզ սեղան մը, երկու  
խիրէ աթոռ, գորս տեսայ առաւօտուն  
երբ արթնցայ լոյս աչքով:

Իրենց հագուստի եւ ձերմակեղէնի  
կապոցը վերնամասի տախտակին վրայ  
յարդարեց, ծրար մըն ալ որպէս բարձ-  
ալպէս քնացեր եմ անշարժ մինչեւ  
առաւօտ: Երբ արթնցայ տիկինը ինձ կը  
սպասէր որ ճամբայ ելնէ:

Հոգածու ձեռքով հաց մը փաթթեց,  
որ ճամբան ուտեմ: Ինք եւ ես նեղ ու  
դարձ-դարձիկ փողոցներէն դուրս  
եկանք շարունակ քալելով ու խօսելով:  
Մեր քալած ուղիին երկու կողմը այգի  
պարտէզ, մէջը վիլլաներ, ով գիտէ ո՞ր  
մէկ փաշային կը պատկանէին: Քանի կը  
քալէինք ու կը խօսէինք այնքան մօր ու  
գաւկի մէջ եղող մտերմութիւն մը մեզ  
կը կապէր իրար, ինձմէ խօսք ուզեց որ  
երթամ յաճախ գինք տեսնելու...:

Իմ բացակայութիւնս մտահոգած  
էր տնօրէնը: Բոլոր տղաքը հաւաքած է  
որպէսզի Աստուծոյ աղօթեն միասնա-  
բար որ կորսուածը վերադառնայ իր  
փարախը ողջ առողջ...:

Առաւօտ աղօթքի պահն է տնօրէնը  
դեռ իր վախը չէ փարատած: Մաղթանքի  
աղօթքը կը կրկնուի, եւ Յակոբին գարը

հրաշքի կը վերագրուի...

Այդ միջոցին, երկաթ դուրսի դռնէն տիկինը եւ ես ձեռք ձեռքի ծառուղիէն քալած միջոցին, աղօթքի կայնած տղոց ուշադրութիւնը կը գրաւենք,- Ահա եկաւ, Ահա եկաւ փսփսուք եւ կանչ: Պրն. Կարապետ որ ճերմակ սանդուխին մարմար պատուանդանին վրայ սովոր էր կենալ միշտ քարոզի, կամ առաւօտեան աղօթքի պահուն, կիսաւարտ վար եկաւ ավր ծոծրակիս դրաւ եւ ըսաւ:

Երբ այս ծոծրակդ տեսնես, Պոլիսն

ալ տեսնելու կ'երթաս այլ առիթով: Եւ դարձաւ զիս բերող տիկինին եղելութիւնը անկէ քաղեց ազնուութեան գովասանքին հետ գումար մը դժուարաւ ընդունել տուաւ իր գարմանքը յայտնելով թէ այս երկար ճամբան ինչպէ՞ս քալելով է կած: Կառք մը կանչել տուաւ եւ տիկինը զիս համբուրելով, կառքը նստաւ:

ՅԱԿՈԲ ԱՐՄԷՆԵԱՆ

(Շար. 15)



**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ**

**ԴԱՏԱՐԿ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

Անմահութեան գաղափարը մարդկային միտքը չարչարկած է անցնող բոլոր դարերում: Յատկապէս մարդկային ցեղի պատմութեան անքաղաքակիրթ դարաշրջաններուն, անասունի մը սատակը տեսնող մարդը, կամ իր ձեռքերով իր սրտահատորները հողին տակ դնող մարդը դժուարութիւն ունեցած է հաշտուիլ մահուան տարօրինակ երեւոյթին հետ: Մահուան հետ անհաշտ մնալու արտայայտութիւններէն մէկն է, մեռնող անձին հետ, կեանքի ընթացքին անոր օգտագործած գոյքերը ու առօրեայ սպասները թաղելու պարագան: Անոր օգտագործած զէնքերը, ամանները եւ այլ պիտոյքներ կը թաղէին մեռնողին հետ, համոզուած ըլլալով որ անպայման պէտք պիտի ունենայ անոնց:

Ծնելէ ետք ապրելու տենչը ամէնէն բնական ու բնագոյային երեւոյթներէն մէկն է: Ինչո՞ւ մեռնիլ, երբ կայ այս արեւը մեր գլխուն վերեւ, երբ կայ կեանքը՝ պարզեւուած Արարիչին կողմէ, երբ շրջապատուած ենք սիրելիներով, երբ ունինք մեր ստացուածքները, երբ յաջողած ենք կազմել շրջապատ մը, երբ բախտաւորուած ենք զաւակներով ու թոռներով: Վերջապէս ինչո՞ւ բաժնուիլ այս գեղեցիկ աշխարհէն...:

Յոռետես մարդիկ բնականօրէն համաձայն պիտի չըլլան այս արտայայտութիւններուն, ընդհակառակը պիտի ջանան սեւ ու մութ գոյներով ներկայացնել այն ինչ որ կայ այս աշխարհի մէջ, ըլլան անոնք մարդիկ, բնութեան տարրեր թէ կենդանական ու բուսական

աշխարհ: Հոգեկան հիւանդագին վիճակ մըն է այդ, որովհետեւ մենք կ'ապրինք կարելի աշխարհներուն լաւագոյնին մէջ: Աստուած յարմար դատած է որ մենք լաւագոյն կեանքը ունենանք, լիացած իր պարզեւած բոլոր բարիքներով:

Ծայրայեղ կրօնամոլ շարժումներու աւանդած ապատեղեկատուութիւնները աշխարհի վատ ու չարիքով լեցուն վայր մը ըլլալուն մասին, աւելի ան-տանելի ու անշնչելի կը դարձնէ այս մոլորակը, մարդկութեան բարիք մը ընելու փոխարէն չարիք հասցընելով անոր հոգեկան աշխարհին: Հոգին պէտք է գուարթացնել ու երջանկացնել՝ զայն նախապատրաստելու համար երկնային երանութեան եւ ոչ թէ տխրեցնել զայն՝ կորուստի դատապարտելով կանխաւ: Այս պէտք է ըլլայ բոլոր կրօններուն եւ կրօնական շարժումներուն նպատակը, եթէ Աստուածային նախախնամութեամբ կը շարժին անոնք:

Ի՞նչ բան տխուր է այս կեանքի մէջ: Բոլոր չարիքները որոնք կը պատահին եւ տխրութեամբ կը պատեն մեր շուրջը, մարդոց ձեռքով կը կատարուին: Մարդիկ են հեղինակները սպանութիւններուն, ոճիրներուն, անբարոյութեանց, վայրագութեանց ու տակաւին այլ խժոճութիւններուն, որոնք կը վրդովեն անդորրը Աստուածապարզեւ կեանքին: Աշխարհ մեղք չունի այդ բոլորին մէջ: Կարելի է աշխարհը կոչել «լուռ հանդիսատես» մարդկային արարքներու, որոնք ճիշդ է իր «աչքերուն առջեւ» կը կատարուին, սակայն անոնց միջա-

մտելու ոչ մէկ իրաւասութիւն չունի ան:

Մահը նախաքրիստոնէական շրջանին աշխարհի չարիքներէն մին նկատուած է, զանազան պատճառներով: Այսպէս, կանխահաս մահը, որ մինչեւ այսօր անհանդուրժելի է մարդուն համար, տեղի կ'ունենայ երբեմն սպանութիւններու, արկածներու կամ հիւանդութիւններու բերումով: Երեւոյթ մը, որ անակնկալ ու անսպասելի ժամկէտով կը հասնի մարդուն վրայ, ու ակամայ կը հեռացնէ ենթական իր ընկերային շրջապատէն: Անքաղաքակիրթ մարդը, որ հիւանդութեանց ներգործօն ոյժին մասին գաղափար չունէր, անոր հետեւանքով պատահող մահերը անմիջապէս նկատեց չար ոյժի մը ազդեցութիւնը, եւ հետեւաբար չարիք մը: Բնախօսական ներքին դրուածքներուն, հիւանդութեանց յառաջացման պատճառներուն իր անծանօթութիւնը պատճառ դարձաւ, որ հիւանդութեան պատճառով պատահող մահերը դառնան չար ոյժի մը աշխատանքին արդիւնքը:

Ներկայ ժամանակներուն, քաղաքակրթութեան զարգացման համեմատաբար դիտելով կացութիւնները, ոմանք նման մօտեցում կը ցուցաբերեն արկածահար ենթականերուն մահուան պարագային: Պատահականութիւնը, գուգադիպութիւնը, արկածին ուժգնութիւնը, երբեմն ենթակային անուշադրութիւնը կամ այլ պարագայ մը արդարացնելու վերջին ճիգ մըն է այս մարդուն կողմէ, գԱստուած գտնելու իբր պատճառ տուեալ կանխահաս մահուան:

Մահուան չարիք մը ըլլալու անհիմն տեղեկատուութիւնը, կատարուած կրօններու թէ աղանդաւորական շարժումներու կողմէ, նպատակ ունի մարդը պահել անոր տիրապետութեան տակ: Քրիստոնէութիւնը Քրիստոսի Հրաշափառ Յարութեամբ յայտարարած է մահուան պարտութիւնը: Իր մահով Քրիստոս պարտութեան մատնեց մահը, եւ իր Յարութեամբ՝ յարութիւն պարգեւեց մեզի: Այսպէս կը գրէ Հայ Եկե-

ղեցոյ ժամագիրքի հեղինակ վարդապետներէն մին:

Մահուան պարտութիւնը յայտարարած քրիստոնէութիւնը կը կանգնի Յիսուսի դատարկ գերեզմանին վրայ: Այն տեղը ուր, ըստ Աւետարանին, սպիտակագգեստ երկու երիտասարդներ կանգնած բարի լուրը աւետեցին իւզաբեր կիներուն, քրիստոնէական եկեղեցւոյ բարձր պատուանդանն է: Աշխարհի ամբողջ տարածքին ապրող քրիստոնեաներ եւ ոչ քրիստոնեաներ կը տեսնեն այդ բարձունքը, որովհետեւ աշխարհի բոլոր կրօններու հիմնադրներուն աճիւնները միախառնուած են հողին, իսկ Քրիստոսի դատարկ գերեզմանը, գերագոյն ոյժն է ու զօրութիւնը իր կատարած քարոզութեան:

Յարութիւնը եւ անմահութիւնը այն երկու իրականութիւններն են, որոնք կրնան զսպանակել վայրագ մարդը այս աշխարհի վրայ: Եթէ կայ յարութիւն, ուրեմն կայ նաեւ անմահութիւն: Եթէ կայ անմահութիւն, ուրեմն կայ նաեւ վարձատրութիւն եւ պատիժ մեր կատարած բարի թէ յուր բոլոր արարքներուն համար:

Անմահութեան ձգտումը մահէն մեր ունեցած վախով կը բացատրուի: Չկայ մարդ որ չի՛ վախնար մահէն: Հեքիաթներու ասպետներ չենք մենք, այլ սովորական, մահկանացու մարդիկ, որուն մարմինն ու առողջութիւնը փխրուն է: Իսկ մահէն ու յատկապէս յաւիտենական մահէն փրկուելու միակ միջոցը՝ Քրիստոսի յարութեան վրայ հաւատք ունենալն է: Այդ հաւատքով կրնաս զգենուլ անմահութիւնը, որովհետեւ ունեցած այդ հաւատքիդ համաձայն, Քրիստոսի հետ յարութիւն պիտի առնես:

Դատարկ գերեզմանին խորհուրդը այս կը սորվեցնէ այսօր: Անոր մէջ մահուան բերած փտածութիւնը չկայ, ոչ ալ աճիւն ու մնացորդաց. այլ կայ յարութիւն եւ անմահութիւն...:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹՃԵԱՆ

### ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅԸ\*

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԻՄԱԳԻԾԸ  
ՑՈՅՑ ՏՈՒՈՂ ԽՃԱՆԿԱՐԸ

Խճանկար մը կը պարուենակէ հագարաւոր խճաքարեր բազմազան գոյններով:

Երբ մօտէն դիտենք զայն, կը զմայլինք իւրաքանչիւր խճաքարի գեղեցկութեան վրայ: Բայց երբ քայլ մը ետեւ երթանք, կը տեսնենք, թէ այդ բոլոր խճաքարերը որքան գեղեցիկ եւ ներդաշնակ պատկեր մը կը պարզեն մեզի, յօրինելով հեքեաթ մը, զոր ոչ մէկը առանձինը պիտի կարենար պատմել: Ընկերութեան մէջ մեր կեանքն ալ ճիշդ այսպէս է: Իւրաքանչիւրս խճաքար մըն ենք, բայց միասնաբար Աստուծոյ դէմքն է որ կը յուշենք մարդոց: Ո՛չ մէկը կրնայ ըսել. «Ես գԱստուած տեսանելի կը դարձնեմ»: սակայն մեզ միասին տեսնողները կրնան ըսել. «Ասոնք գԱստուած տեսանելի կը դարձնեն»: Ընկերութիւնն հոն է, ուր խոնարհութիւնն ու փառքը կը հանդիպին իրարու եւ կը միանան:

ԴԷՊԻ ԱՍՏՈՒԱԾ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ  
ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՑՈՒՑԱՏԱԽՏԱԿՆԵՐԸ

Ի՞նչպէս գիտնալ Աստուծոյ սիրոյ, առատաձեռնութեան, ազնուութեան եւ ներողամտութեան մասին: Մեր ծնողներուն, ուսուցիչներուն, հոգեւոր հովիւներուն, մեր ամուսիններուն եւ զաւակներուն միջոցով է, որ Աստուած կը յայտնուի մեզի: Բայց, երբ աւելի մօտեն ճանչնալու ըլլանք զանոնք, կ'անդրադառնանք, որ անոնցմէ իւրաքանչիւրը Աստուծմէ մասնիկ մը միայն կրնայ յայտնել մեզի: Աստուծոյ սէրը, բարու-

թիւնն ու գեղեցկութիւնը շատ աւելի մեծ է ու սքանչելի, քան անոնց ունեցածը:

Սկիզբը կրնանք յուսախար ըլլալ այս մարդոցմէ: Սակայն, հետզհետէ կը գիտակցինք, որ անոնք, բոլորն ալ դէպի Աստուած առաջնորդող ճամբուն վրայ դրուած ցուցատախտակներ են:

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌԱՋԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ

Աստուած առատութեան Աստուած է եւ ո՛չ թէ սակաւապէտութեան: Յիսուս Քրիստոս կը յայտնէ մեզի Աստուծոյ առատաձեռնութիւնը, երբ ժողովուրդին այնքան հաց կը բաշխէ, որ 12 սակառ ալ կ'աւելնայ (տես Ղկ 5.1-7): Աստուած մեզի մեր խնդրածէն աւելի կու տայ:

Աստուած առատաձեռն է, բայց Անոր տուածը կրնանք տեսնել ու վաշել, երբ բոլորուն սրտիւ սիրենք Ձինք: Այնքան ատեն որ կ'ըսենք. «Ես պիտի սիրեմ քեզ, Աստուած, բայց նախ ցոյց տուր ինձի քու առատաձեռնութիւնդ», պիտի հեռու մնանք Աստուծմէ եւ անգոր ճանչնալու այն, զոր Աստուած ճշմարտապէս կ'ուզէ տալ մեզի՝ յորդառատ կեանքը:

ԴԻՋԵՆՈՒ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Որպէս երկչոտ մարդիկ, մենք հակումն ունինք խորացնելու մեր մէջ այն համոզումը, որ մեզի ըսել կու տայ. «Բոլորիս համար բաւարար ճաշ չկայ, ուստի լաւ կ'ըլլայ, որ ես ինձի պէտք եղածին չամ ապահովեմ»: Կամ՝ «Բոլոր-

րիս համար բաւարար գիտութիւն չկայ, ուստի աւելի լաւ կ'ըլլայ իմ գիտցածս ինծի պահեմ, որպէսզի մէկը չօգտուի անկէ»։ Կամ «Բոլորին բաշխելու չափսէր չկայ, ուստի բարեկամներս ինծի պահեմ եւ չձգեմ, որ ինծմէ խլեն գանոնք»։ Այս ամէնը նեղ մտայնութիւն է, որ կ'ենթադրէ դիզուածը պահպանելու յետին միտքն ու վախը ապագայն հանդէպ։

Մարսափելին այն է սակայն, որ մեր ձեռք ձգածը եւ ուժգնորէն կառչածը կը կորսնցնենք։

ԱԿԱՆԱՏԵՍ ԸԼԼԱԼ  
ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ՀՐԱՇՔԻՆ

Նեղմտութեան հակառիչն է առատութեան մտայնութիւնը։ Որով կ'ըսենք. «բոլորին համար պէտք եղած չափով ու աւելիով կայ ամէն ինչ՝ սնունդ, գիտութիւն, սէր ... »։ Այսպէս մտածելով, կը բաժնենք մեր ունեցուածքը բոլորին անխտիր. երբ կը հանդիպինք անօթի, սոգէտի եւ սիրոյ պակասէն տառապողի, կը բաշխենք անոնց սընունդ, գիտութիւն, գուրգուրանք եւ սէր։ Կը հիւրընկալենք գանոնք եւ կը ծանօթացնենք մեր բարեկամներուն եւ նոյնիսկ ընտանեկան պարագաներուն հետ։

Երբ այս մտայնութեամբ ապրինք, պիտի կենդանի վկաները դառնանք սնունդի, գիտութեան ու սիրոյ բազմապատկան հրաշքին։

ԽԻԶԱԽՈՐԷՆ ԿԻՍԵԼ  
ՄԵՐ ՈՒՆԵՑԱԾ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Յաճախ կը մտածենք, թէ ուրիշներու համար բաւարար գիտութիւն չունինք։ Նոյնիսկ կը վարանինք մեր գիտցածը խոստովանիլ, վախնալով աւելին տալու անկարողութենէն։ Այսպէս մտածելը մեզ կը դարձնէ մտահոհոգ, գաղտնապահ, անինքնավստահ։ Բայց

երբ քաջութիւնն ունինք խիզախորէն կիսելու մեր գիտութիւնը ուրիշներուն հետ, շուտով պիտի տեսնենք, որ մեր կարծածէն աւելի գիտենք։ Երբ մեր գիտութեան ամբարը լայնորէն բանանք ուրիշներու առջեւ, այն ատեն միայն կ'իմանանք, թէ որքան խորունկ ու լեցուն է ան։

ԿԵՆՏԵՒ ԲԱԺԱԿԸ

Երբ Յակոբոսի եւ Յովհաննէսի մայրը Յիսուսէն կը խնդրէ, որ իր թագաւորութեան մէջ յատուկ տեղ տայ իր զաւակներուն, Յիսուս կը պատասխանէ անոր. «Կրնա՞ք խմել տառապանքի այն բաժակէն, որմէ ես պիտի խմեմ» (Մտ 20.22)։ Ասիկա ամենավճռական հարցումն է, զոր որ կրնանք ուղղել մենք մեզի։ Բաժակը կեանքի բաժակն է, տխրութիւններով եւ ուրախութիւններով լեցուն։ Կրնա՞նք բռնել մեր բաժակները եւ ըսել, թէ անոնք մերն են։ Կրնա՞նք բարձրացնել մեր բաժակները այլոց օրհնութեան ի խնդիր, կրնա՞նք ըմպել ցմրում իբրեւ փրկութիւն բերող բաժակներ։

Սոյն հարցումը մեր մէջ կենդանի պահելը հոգեւոր մեծագոյն կիրարումի հրամայականներէն մէկն է, զոր կրնանք ի գործ դնել։

ԲՈՆԵԼ ՄԵՐ ԲԱԺԱԿՆԵՐԸ

Բոլորս պէտք է բռնենք մեր կեանքի բաժակները։ Երբ տարիք կ'առնենք կը գիտակցինք կեանքի բազում դժուարութիւններն ու անձնական ձախորդութիւնները, ընտանեկան անհամաձայնութիւններն ու յուսահատութիւնները, ցաւերն ու դառնութիւնները, մեր մէջ եւ մեր շուրջը գտնուող ամէն բան մեզ կը մղէ անտեսելու կամ պարզապէս ուրանալու սոյն դժուարութիւնները։ «Նայէ՛ կեանքի լուսափայլ երեսին եւ



լաւագոյնս արժեւորէ զայն», կ'ըսենք մենք մեզի եւ նոյնը յաճախ կը լսենք ուրիշներէ: Սակայն, երբ կ'ուզենք խմել կեանքի մեր բաժակը, առաջին հերթին կարիքը ունինք լիովին գիտակցելու մեր ապրած կեանքը, ուստի հարագատօրէն ընկալելով մեր ցաւերը, պիտի գտնենք ճշմարիտ ուրախութիւնը, զոր կը փափաքէինք զգալ մեր ցաւերուն ու նեղութիւններուն մէջ:

**ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՄԵՐ ԲԱԺԱԿՆԵՐԸ**

Երբ ամուր բռնենք կեանքի մեր բաժակը, խորապէս գիտակցելով անոր ցաւերն ու հրճուանքները, մարդկային համերաշխութեան մէջ այ կը յաջողինք բարձրացնել զայն: Բարձրացնել մեր բաժակը, կը նշանակէ չամչնալ մեր ապրած կեանքէն, եւ այս վարուելակերպը կը քաջալերէ ուրիշներն ալ, որ ճանչնան իրենց ճշմարտութիւնն այնպէս, ինչպէս մենք կը փորձենք ճանչնալ մերը: Երբ կը բարձրացնենք մեր բաժակները եւ իրարու կ'ըսենք. «կենացդ», միաձայն յայտարարած կ'ըլլանք, անաչարօրէն նայիլ մեր կեանքին: Այս ձեւով կը դառնանք մարդկային ընկերութիւն մը, որ յանձն կ'առնէ դատարկել այն բաժակը, որ տրուած է մեզի:

**ԸՄՊԵԼ ՄԵՐ ԲԱԺԱԿԸ**

Մեր կեանքի բաժակն ամուր բռնելէ եւ զայն ուրիշներու հետ բարձրացնելէ ետք, պէտք է անպայման ըմպենք զայն: Ըմպել մեր բաժակը կը նշանակէ իւրացնել այն, ինչ ճանչցած ու ապրած ենք մեր կեանքէն՝ տխրութիւն, ցաւ ու բերկրանք: Ի՞նչպէս խմելու ենք մեր բաժակները: Ըստ մեր կեանքի ճշմարտութեան, լուսութեան մէջ պէտք է ըմպենք զանոնք, երբ անկեղծօրէն զրուցենք մեր ընկերներուն հետ այն միջոցներուն մասին, որոնցմով կ'ուզենք աճիլ ու զարգանալ: Ըմպել մեր բաժակները կը նշանակէ ազատօրէն եւ քաջութեամբ ընդառաջել Աստուծոյ հրաւերին եւ հաւատարմօրէն շարունակել ամբողջ ճամբորդութիւնը: Այս ձեւով մեր կեանքը կը վերածուի փրկութեան բաժակի: Եթէ կարենանք մինչեւ յատակը պարպել մեր բաժակը, Աստուած յաւիտենական կեանքի համար «ջուրով» կը լեցնէ զայն:

"Bread for the Journey"

Henri J.M. Nouwen

Թրգմ.՝ ՄԱԿԱՐ ԱԲՂ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 15)

**ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

**ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ Գ. ՀԱՄԱԺՈՂՈՎԸ  
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

*Հինգշաբթի 6 Ապրիլ 2006-ի յետ միջօրէին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն ներս տեղի ունեցաւ պաշտօնական բացման հանդիսութիւնը Գրողներու Համահայկական Գ. Համաժողովին:*

*Սոյն Համաժողովը գումարուեցաւ բարձր հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, նախաձեռնութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան եւ գործակցութեամբ Լիբանանահայ Գրողներու Համախմբումին:*

*Նշեալ օրը, յետմիջօրէի ժամը 3-ին,*

*Անթիլիասի Վեհարանի դահլիճին մէջ համախմբուած էին աւելի քան 300 հայ գրողներ, Հայաստանէն, Արցախէն, Լիբանանէն, Միջին Արեւելեան եւ Եւրոպական զանազան երկիրներէ, Հարաւային եւ Հիւսիսային Ամերիկաներէն եւ Գանատայէն, ինչպէս նաեւ Աւստրալիայէն:*

*Ներկայացուցչական լայն ծիր ունեցող սոյն Համաժողովը աննախընթաց էր իր տեսակին մէջ, եւ բարձրօրէն գնահատելի՝ կարճ ժամանակի մէջ իրականացուած ըլլալուն համար: Կազմա-*



ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԵՆԷՆ



ՎԵՅԱՓԱՌ ԳԱՅՐԱՊԵՏԸ ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔԻ ՊԱՅՈՒՆ

կերպիչ յատուկ յանձնախումբ մը՝ բաղկացած Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեկմէցեանէ եւ լիբանանահայ մտաւորականներ՝ Սարգիս Կիրակոսեանէ, ժիրայր Դանիէլեանէ, Պէպօ Սիմոնեանէ եւ Արամ Սէփէթճեանէ, գործակցաբար Հայաստանի Գրողներու Նախագահութեան, գործնական բոլոր աշխատանք-

ները կատարած էր, նախապատրաստելով Համաժողովը:

Բացման շքեղ Հանդիսութիւնը սկսաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրեպանքի սաներուն «Որք զարդարեցին», Թարգմանչաց Վարդապետաց նուիրուած շարականի երգեցողութեամբ, որու ընթացքին թափօրով մուտք գործեց Արամ



ԱԻՆԻ ԲԱՆ 300 ԳԱՆԴԻՍԱԿԱՆՆԵՐ՝ ԳԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆ ՕՐԸ

**Ա. Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբբույժեան օրհնութեամբ կատարուեցաւ նաեւ «Հայր Մեր»ի երգեցողութիւնը, աղօթասացութեամբ բանարով պատմական ըլլալու սահմանուած Համաժողովը:**

*Կազմակերպիչ յանձնախումբի անունով խօսք առաւ Պէպօ Սիմոնեան, սոյն պահը եւ Համաժողովի ամբողջ տեւողութիւնը ներկայացնելով իբրեւ անկորնչելի արժէք մեր գրականութեան ու առհասարակ մշակոյթի պատմութեան համար:*

**Ստորեւ Պ. Սիմոնեանի խօսքը ամբողջութեամբ.-**

«Վեհափառ Տէր,  
 Հայրենի պետութեան յարգելի ներկայացուցիչներ,  
 Յարգամեծար Դեսպան Հայաստանի Հանրապետութեան, Հոգեւոր Հայրեր,  
 Յարգարժան նախագահ Հայաստանի Գրողներու Միութեան, եւ նախագահութեան անդամներ,  
 Թանկագին գրողներ,  
 Սիրելի հանդիսականներ,

Գրողներու համահայկական Գ. համաժողովի կազմակերպիչ յանձնախումբին անունով, հոգեկան բերկրանքով առիթ, բացուած կը յայտարարեմք մեր համաժողովին պաշտօնական այս հանդիսութիւնը եւ առաջին հերթին բարի գալուստ կը մաղթեմք համաժողովին մասնակցող գրչի եւ դպրութեան նուիրեալ մշակներուն, որոնք եկած են, Հայաստանէն, Արցախէն թէ Հայկական Սփիւռքի տարբեր կեդրոններէն, Որեւէ բնորոշումէ աւելի, արտայայտի՛չն ու պերնախօ՛սը, անոր պատմական իմաստին եւ տարողութեան ընդգծումն է, Հայաստանի Գրողներու Միութեան նախաձեռնութեամբ, գործակցութեամբ Լիբանանահայ Գրողներու Համախմբումին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շնորհագարդ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.

Տ.Տ. Արամ Ա. հովանաւորութեամբ, գործնական աջակցութեամբ եւ լիասիրտ հիւրընկալութեամբ կայացող այս համաժողովը տեղի կ'ունենայ Հայկական Կիլիկիոյ տարագիր Աթոռին պատմական ենթահողին վրայ, ուր կը շնչէ արեւմտահայութեան նահատակներուն, նահատակ գրագէտներուն եւ մտաւորականութեան ռզին: Մեր բոլորիս ցեղատրոփ պարտքն է անոնց կտակին եւ ժառանգին տէր կանգնելու գրողական յանձնառութիւնը:

Այս հոգեւոր եւ մշակութային կեդրոն վայրին մէջ, այս համաժողովի առիթով իրարու կը կամրջուին, կը միախառնուին ցեղասպանութեան գոհ ժողովուրդի մը վերապրող գաւակներուն բեկորները հանդիսացող տարագիր գրողներն ու ցեղասպանութեան աւերումներէն եւ կործանումներէն փրկուած վերածնած Արեւելեան Հայաստանի գրող գաւակները, որոնք Մայր Հողին թէ ազերիներու տիրապետութենէն ազատագրուած տարածքներու վրայ, Արցախի մէջ, լծուած են Հայ անկախ պետականութեան հիմնադրերը ամրապնդելու սուրբ եւ նուիրական աշխատանքին:

Եկած ենք մենք բոլորս, գրչակիցներս, համաժողովի չորս օրերու ընթացքին, Հայ գրականութեան ներկան լուսարձակի տակ առնելով, վաղուան ազգային գրականութեան զարգացման համար նոր ուղիներ որոնելու օգտուէտ առաջադրանքներով հայ գրականութեան դարերու հոլովոյթին հաշտ ձգտումով եւ ժամանակակից կշռոյթով համաշխարհայնացումի մարտահրաւերներուն դիմաց»:

**Բացման խօսքէն ետք, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ ԼԵՆԻ Անանեան հանդէս եկաւ ողջոյնի ջերմ խօսքով, իր կարգին գոհունակութիւն յայտնելով Համաժողովի կայացման համար: Անանեան երախտագիտական խօսքով դիմեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, որ հայրական սիրով հրաւիրած էր Հայաստանի թէ աշխարհացրիւ հայագաղութներու գրողները,**

*իրենց Համաժողովը ունենալու Սփիւռ-  
քահայութեան սիրտը հանդիսացող Լի-  
բանանի Մայր Գաղութին, ու Մեծի  
Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան  
Մայրավանքին մէջ:*

*Ստորեւ Լ. Անանեանի խօսքը ամ-  
բողջութեամբ:-*

«Վեհափառ Տէր  
Գերաշնորհ հայրեր  
Յարգելի բարեկամներ եւ գրչեղբայրներ

Դեռեւս 1946թ. Հայաստանի գրող-  
ների 2-րդ համագումարի իր բացման  
խօսքում Աւետիք Խահակեանը յատուկ  
կարեւորեց «Մեր համագումարի ամենա-  
արժեքաւոր արդիւնքն այն կը լինի, որ  
աւելի սերտանան եւ մտերմանան մեր  
փոխադարձ յարաբերութիւնները մայր  
հայրենիքի եւ սփիւռքի գրականութիւն-  
ների միջեւ»: Անցել է ուղիղ 60 տարի, եւ  
այսօր կարող ենք վկայել, որ Վարպետի  
բաղանձքը, արդէն նորանկախ Հայաս-  
տանի իրողութեան պայմաններում, աս-  
տիճանաբար կեանքի է կոչուում: Ահա  
ընդամենը մի քանի փաստ Հայրենիք-  
Սփիւռք գրական կապերի խորացման՝  
ինչպէս ասում են, առանց մեկնաբանու-  
թեան: ՀԳՄ նախաձեռնութեամբ 2002 եւ  
2004թթ. Երեւանում տեղի ունեցան  
գրողների համահայկական երկու համա-  
ժողովները, որին նախորդել էր երիտա-  
սարդ գրողների խորհրդակցութիւնը Ծաղ-  
կաձորում: Թերեւս աւելորդ է նշել, որ  
բնոյթով համահայկական բոլոր այս ձեռ-  
նարկները թէ՛ ճանաչողական առումով եւ  
թէ՛ մեր գրականութեան տարբաժան եր-  
կու հատուածների միասնականացման  
ձգտումով կարեւոր դեր խաղացին՝ փյու-  
զելով պատմականօրէն ձեւաւորուած  
խորթացման պատնէշները:

Եւ ահա այսօր հերթական անգամ  
մենք հաւաքուել ենք Պէյրութում՝ իր ընդ-  
գրկումով աննախադէպ ներկայացուց-  
չական երրորդ համաժողովին՝ համա-  
խումբ քննարկելու մեր ժամանակի թե-

րեւս ամենահրատապ թեմաներից մէկը՝  
հայ գրականութիւնը արդի մարտահրա-  
ւերներին դէմ յանդիման:

Ինչո՞ւ յատկապէս Պէյրութը:

Այս հարցը վերջին օրերին տարբեր  
ամպիոններից յաճախ է հնչում՝ երբեմն  
նգնելով անհարկի քաղաքականացուել  
գուտ գրական հաւաքը, երբեմն էր փոր-  
փրբելով կուսակցական անցեալի հին  
դարմանը, ոմանք հասնում են բացայայտ  
*ապսիւրսի*. համաժողովի գաղափարը մի-  
տումնաւոր կերպով դիտուում է որպէս ան-  
ջատողականութեան գիտակցուած քայլ:  
Սակայն սա թողնենք ջլատման քարո-  
զիչների խղճին:

Ուրեմն՝ ինչո՞ւ Պէյրութը:

Պէյրութը, որովհետեւ բարեկամ Լի-  
բանանի մայրաքաղաքը տասնամեակներ  
ի վեր մնում է հայ գրականութեան երկ-  
րորդ ոստանը՝ գրական եւ ազգային վե-  
րելիքն ի նպաստ իր փառայեղ աւան-  
դոյթներով: Պէյրութը, որովհետեւ, երջա-  
նիկ բացառութեամբ, Հալէպի հետ միա-  
սին, այստեղ դիմակալում է հայապահ-  
պան մի ովասիս, որը կուլ չի գնացել  
ուժացման համաճարակին, աւելին՝ իր  
մէջ ոյժ է գտնում վերարտադրելու երի-  
տասարդ գրողների օժտուած հերթափոխ  
սփիւռքահայ գրականութեան արժանա-  
ւոր ժառանգորդին:

Պէյրութը, որովհետեւ այն տարբեր  
գաղթօջախներում տարագրուած մեր  
բազմաթիւ գրագէտների ծննդավայրն ու  
երկրորդ հայրենիքն է, ուր ամէն վե-  
րադարձ կարօտի եւ հայ ոգու հետ հան-  
դիպման նոր խոստում է: Եւ վերջապէս,  
կամ գուցէ առաջին հերթին Պէյրութը,  
քանի որ այստեղ է Անթիլիասը, Մեծի  
Տանն Կիլիկիոյ Աթոռանիստը՝ իր սրբա-  
շունչ մթնոլորտով եւ ազգապահպան  
նուիրական ջանքով: Ուրեմն, մեր երախ-  
տիքի խօսքը ամէնից առաջ ուղղուում է  
Զեպ, Վեհափառ Տէր:

Ի մի բերելով վերջին տարիների Զեր  
ժաւալած հոգեւոր, մշակութային, կրթա-  
կան, մտաւորական եւ ազգաշահ այլ ձեռ-

նարկները, որոնց շունչ ու հոգի էֆ հաղորդում Ձեր ներկայութեամբ, անհնար է չտեսնել, որ ազգային գրի ու մշակոյթի հանդէպ Ձերդ Սուրբ Օծութեան հոգածութիւնն ու պաշտամունքը սահմաններ չեն ցանցում:

Մենք եկել-ժողովուել ենք այստեղ լսելու նաեւ Ձեր լայնախոհ պատգամները, հաղորդուելու Մեծի Տանն Կիլիկիոյ պատմութեան արժէքների համակարգին, իսկ յայտնի է, առանց պատմութեան դասերը իւրացնելու, մենք պարտադրուած ենք կրկնելու անցեալի սխալները:

Հայ գրողները խորապէս գիտակցում են այն մարտահրաւերները, որոնք այսօր ծառայած են 15-ամեայ դեռեւս փիտուն հանրապետութեան եւ աշխարհասփիւռ հայութեան առջեւ:

Այսօր հայ գրողի առաքելութիւնը հայ կեցութեան խորհրդի ճշմարտութիւնը գիտակցելն է: Մենք կանգնած ենք համաշխարհայնացման պղտոր յորձանքի դիմաց եւ ճշդում ենք մեր միասնական ըմբռնումները: Որքանով է այն նպատում ներգրաւելու համաշխարհային գրական ընթացքներին, որչափով ենք պատրաստ դիմակայելու ֆաղափարներէն համայնակուլ ախորժակին չգոհաբերելու մեր ինքնութիւնը, մեր ազգային նկարագիրը:

Համաժողովը տեղի է ունենում մի ժամանակ, երբ մեր ժողովրդի երկու հատուածները թեւակոխել են նոր շրջափուլ: Եթէ անկախութեան առաջին ծանրաբեռն տարիներին Սփիւռքն իր կարելին առեց հայրենիքի համար, վաղուց արդէն ժամանակն է մշակել նոր ուղիներու շարքին՝ Հայրենիքը եւ Սփիւռքը դիտարկելով նոյն հարթութեան վրայ՝ բեկուած համահայկական գերխնդիրների պրիսմակի մէջ:

Իսկ այդ գերխնդիրները յստակօրէն եւ սպառիչ արտայայտուած են Վեհափառ Հայրապետի մի պատգամի մէջ. աւելի հզօրացնել Հայաստանը եւ աւելի հայացնել Սփիւռքը: Անցեալ տարի ՀՀ նոր

սահմանադրութեան մեջ ամրագրուեց երկֆաղափարութեան դրոյթը, սակայն շատ հակասութիւններ տակաւին յարթահարուած չեն, մի շարք բախտորոշ հարցերում մենք շարունակում ենք բաղխուել հոգեբանական արգելքների, դեռ եւս կառչած մնալով հին ու հնացած բանաձեւերի *իմերցիային*: Հարկաւոր է վերջ տալ ազգային գերակայ հարցերում առկայ երկփեղկուածութեանը եւ խոստովանել, որ այս մարգում որ երկկենդրոն տեսութիւնը անհեռանկար է եւ անընդունելի: Իւրաքանչիւր հայ գրագէտի, մտաւորականի պարտքն է որդեգրել միասնական սկզբունք, քանզի ինչպէս դիպուկ կերպով ձեւակերպել է Արամ Ա-ոստիանը. «Ո՛չ Հայաստանը, ո՛չ Սփիւռքը իրաւունք ունին ինքնակեդրոն եւ ինքնանպատակ մօտենալու իրենց աշխատանքներին, ծրագրերին, խնդիրներին: Համահայկական պէտք է դառնայ մեր կեանքի ու գործի չափանիշը, որակը եւ ուղղութիւնը»: Բարեբախտաբար համախմբուածութեան կոչեր են հնչում նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հրապարակային ելոյթներում: Եւ, յաւելեմք մեր կողմից, եթէ ազգային որեւէ ճակատում հանդուրժելի է առաջնայնութեան մրցակցութիւնը, ապա եզրագծում անպայման հայրենիքի գօրացումն է: Համագրային շահը պարտադրաբար պահանջում է՝ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների հարցը դիտել աշխարհաֆաղափական արդի խնդրուած եւ յարափոփոխ իրադարձութիւնների տեսադաշտում, քանզի այսօր աւելի քան ճակատագրական է ազգային գոյութեան եւ պետական անկախութեան խնդրի լուծումը, որին պիտի լծուենք միասնաբար: Փոխում է ոչ միայն հայրենիքը, փոխում է նաեւ Սփիւռքը, թէ *սոցիալապէս*, թէ մարդագրական կազմով, եւ իբրեւ վերջին տասնամեակների արտագաղթի արդիւնք գոյացել է արեւելահայ սփիւռք՝ իր ներքին նոր օրինաչափումներով:

Եւ յատկապէս սուր է ծառանում նոր սերնդի հայեցի դաստիարակութեան հարցը: Ազգային *օրկանիզմ*ը տարեց տարի ծիւրում է՝ մասնատուելով խլեակների՝ ամերիկահայ գրող Թորգոմ Փոստանեանի բնութագրութեամբ՝ «Անհանգրուան տարագիրներին»: Նրանց համար ազգային փրկութեան լաստը եղել եւ մնում են հայկական դպրոցն եւ հայոց առաքելական եկեղեցին: Այսօր նոյնաբժէփ խոչուխութիւն ենք յաղթահարում նաեւ Հայաստանում, ուր ազատութիւնը յաճախ վեր է ածում ամենաթողութեան, օրէնքը մթագնում է ընտրողականութեան սկզբունքով, եւ բացակայում է ամենակարեւորը՝ բարոյական պատասխանատուութիւնը. գլխիվայր շրջուած արժէքների համատեքստում տակաւին երեքուն օրէնքի իշխանութիւնը չի յենում բարոյականութեան ազգային աւանդոյթի:

Մենք այստեղ ենք, որ միասնաբար խորհրդածենք ազգային դպրոցի եւ նրանում գրականութեան բացառիկ դերակատարութեան շուրջ, քանի որ հենց գրականութեան մէջ են խտանում մեր բարոյականութիւնը, մեր նկարագիրը, գրականութիւնն է մեր ինքնութեան գրաւականը՝ մայր լեզուի հետ միասին:

Մայրենի լեզուն համաշխարհայնացման ծիրում խղճի ընդդիմութիւնն է, ազգային գարկերակ, հայեցի մտածողութեան շարունակականութեան երաշխիք:

Վստահ եմ, որ որոշ ելոյթներում ածանցեալ չեն լինի լեզուի շուրջ մեր մեջ խմորուող հակասութիւնները, որը սպառնում է վերածուել առեւակատման:

Ցաւօք, իմ տպաւորութեամբ, այսօր լեզուի եւ ուղղագրութեան հարցը առաջ է բերած յաւակնութիւնների պայքար, իսկ սա այն թննուկն է, որը պէտք է հանգուցալուծուի պատմութեան եւ ժամանակի *օպնէֆիւ* անհրաժեշտութեամբ, ոչ թէ անհարկի թէժացնելով կրքերը եւ յաւելեալ պատնէշներ բարձրացնելով, այլ երկուստեք ընդունելի տարբերակ մշակելով: Մենք արդէն դառը փորձ ունենք

արհեստականօրէն միջամուխ լինելով լեզուական փաղափականութեանը՝ աչքի տեղ յօնքն էլ աւերելու:

Սիրելի գրչակից եղբայրներ, մենք եկել ենք միասին ֆնութեան ենթարկելու հայ գրականութեան արդիական խնդիրները՝ համաշխարհայնացման փառատրոփ արշաւի դէմ: Եւ մենք յարաբերում ենք ոչ միայն իրրեւ երկու գրական հատուածներ, որոնք իրենց թիկունքում ունեն պատմութիւն, ժառանգութիւն, մշակոյթ: Մենք ապրում ենք պատմական հանգամանքներով ձեւուած առանձնութեամբ, սակայն նոյն նակատագրով: Մենք կենսափորձով գիտենք մեր տարբաժանող գայթակղիչ սահմանները, սակայն եթէ այստեղ ենք, ուրեմն՝ այստեղ ենք միասնութեան պատգամով «Մէկ ազգ, մէկ գրականութիւն» կարգախօսով:

Այժմ բարեբախտաբար տեղի է ունենում երկու գրականութիւնների ընդհանրացման *փրոցէս*, դրսեւորում է ազգային գրականութեան միահուն գարգացման միտում: Իմ խորին համոզմամբ, այսօր մեր գրական-գեղարուեստական զարգացման մի նոր թռիչք է նախապատրաստում իրրեւ տրամաբանական արդիւնք հայոց գրական դաշտում յետ անկախութեան շրջանի վերելքների եւ տեղատուութիւնների: Իրարահաջորդ այդպիսի թռիչքներն են, որ կամրջում միասնացնում են մեր ժողովրդի անցեալն ու ապագան, ապահով եւ տեսանելի դարձնում հայ գրականութեան վաղուայ օրը, որին հաւատում ենք բոլորս»:

**Համաժողովի գումարումն ու աշխատանքային հանդիպումները ողջունելու յատուկ գիր ուղարկած էր Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ն.Վ. Ռոպերթ Քոչարեան, գոր ընթերցեց Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Վահան Տէր Ղեւոնդեան: Հանրապետութեան նախագահը կ'ողջունէր Համաժողովին Լիբանանի մէջ կայացումը.**

**Ստորեւ Պրն. Նախագահին խօսքը՝ ամբողջութեամբ.-**

«Ողջունում եմ Գրողների համահայկական երրորդ համաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին եւ հիւրերին:

Հայրենաբնակ եւ սփիւոֆահայ գրողների արդէն աւանդական դարձած այս հաւաքները, համոզուած եմ, նոր ու հզօր լիցքեր են հաղորդում հայ գրական կեանքին:

Ուրախալի է, որ առաջին անգամ նման հաւաքը հրաւիրուում է Պէյրութում՝ իր գրական հարուստ աւանդոյթներ ունեցող մեր գաղթօջախներից մէկում: Հայրենիքի եւ Սփիւոֆի գրողների, գրական հասարակայնութեան սերտ շփումները, ինչպէս նաեւ փոխադարձ աւելի խոր մանաչոյրութիւնն ունեն նաեւ հայապահպան կարեւոր դերակատարութիւն:

Կրկին ողջունելով՝ հաւաքի մասնակիցներին մաղթում եմ արգասաբեր գործունէութիւն»:

*Հայաստանի Խորհրդարանի նախագահ Արթիւր Պաղտասարեանի խօսքը ընթերցուեցաւ, զոր ստորեւ կը ներկայացնենք ամբողջութեամբ.-*

«Ողջունում եմ գրողների համահայկական արդէն երրորդ համաժողովի մասնակիցներին: Կարծում եմ՝ այն փաստը, որ աշխարհի հայ գրողները հաւաքուում են Պէյրութում, ինքնին խօսուն է եւ վկայում է հայ գրականութեան իբրեւ հայապահպանութեան կարեւոր գործօնի դերն ու նշանակութիւնը ժամանակակից դժուար աշխարհում:

Գրականութիւնը հայերիս համար հարիւրամեակներով եղել է ազգապահպանման ու ինքնութեան հաստատման-յաւերժացման միջոց: Հայ գրողը արուեստագէտ լինելուց առաջ ու յետոյ եղել է ազգային գործիչ, եւ այդպիսին էլ եղել է նրա ստեղծած գրականութիւնը:

Յատկապէս Սփիւոֆում հայ գրողների, մշակոյթի հայ գործիչների պատասխանատուութիւնը բազմապատկուում է, որովհետեւ նրանք նախ ներկայացնում են հայ ժողովրդին, յետոյ հայ ժողովրդի արուեստը ու մշտապէս կոչուած են լեզուի, մշակոյթի ու ինքնութեան պահպանութեան դիրքերում լինել:

Վերստին ողջունում եմ համաժողովը եւ մաղթում եմ արդիւնաւէտ ու ստեղծագործական աշխատանք, վստահ, որ քննարկումների ու բանավեճերի արդիւնքում անտարակոյս կը ծնունեն նոր մտայղացումներ՝ իրենց հերթին սկզբնաւորելով նոր ու կարեւոր գրքեր, որոնց սպասում է ընթերցողը»:

*Հայաստանի Վարչապետ Անդրանիկ Մարգարեանի խօսքը ընթերցեց Արամ Կարապետեան: Հայաստանի Վարչապետին խօսքը կու տանք ամբողջութեամբ.-*

«Վեհափա՛ն Տէր,

Գրական համաժողովի յարգելի պատուիրակներ եւ հիւրեր

Հայաստան-Սփիւոֆ բազմաբնոյթ կապերի ու բազմակողմանի համագործակցութեան սերտացումը եւ ամրապնդումը մեր պետութեան գլխաւոր առաջնահերթութիւններից են: Կարեւորելով տնտեսական կապերի դերը, այդուհանդերձ, մենք խորապէս գիտակցում ենք, որ այն չի կարող հաստատուն լինել, եթէ չի խարսխուում հոգեւոր արժէքների վրայ: Այս տեսակետից դժուար է գերազնահատել գրողների դերը, որոնց ջանքերի շնորհիւ է նաեւ, որ միասնական է մնացել հայ ոգին:



Հայ ժողովուրդն իր ինֆնութեան արժեքային համակարգում առանձնակի դերակատարում է վերապահել գրականութեանն ու մշակոյթին՝ այնտեղ փնտոյով նաեւ իր նուիրական ձգտումների ու հայրենասիրական զգացումների արտացոլումը եւ գտել է այն, պատմութեան դժուարին քառուղիներում դիմակալել՝ ապրելու կամքն ամրացնելով հոգեւոր շնչով: Գրականութիւնը մշտապէս գորավիզ է եղել մեզ, եւ այդ առաքելութիւնը լաւագոյնս իրականացուել է յատկապէս Հայոց պետականութեան բացակայութեան պայմաններում: Այսօր, երբ Հայոց պետականութիւնն այլեւս իրողութիւն է, հայ գրականութեան առջեւ դրուել են նոր խնդիրներ, նոր ակնկալիքներ կան գրականութեան մշակից: Մեր գրական, մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու հանրահոչակելու, մեզ աւանդուած ժառանգութիւնը սերունդներին փոխանցելու հետ միասին անչափ կարեւոր է մեր հոգեւոր դաշտը օտարածին ու ապագային ներխուժումներից զերծ պահելը եւ համաշխարհային գրական հարստութիւնը նոր արժեքներով համալրելը՝ դիմակայելով համաշխարհային հանրութեան կողմից մեզ պարտադրուած մարտահրաւերներին:

Կոչուած լինելով պետականութեան գաղափարի ամրապնդմանը՝ դրանք պետք է արտացոլեն «մերօրեայ» յաղթանակները, վերաիմաստաւորեն անցեալում չզնահատուած արժեքները, նաեւ անհանդուրժողականութիւն ձեւաւորեն այսօր մեր կեանքում տեղ գտնող արգահատելի եւ մեր հոգեկերտուածքին անյարիր դրսեւորումների նկատմամբ:

Յուսով եմ, արդէն երրորդ անգամ անցկացուող եւ մեր համահայկական մի շարք միջոցառումների հետ աւանդական դարձած այս համաժողովը եւս կը ծանոյի բուն նպատակին, խթան կը հանդիսանայ բոլորք պահելու հայապահպանութեան ոգին, կը նպաստի Հայրենիք-Սփիւռք կապերի ամրապնդմանը՝ կամուրջ դառնալով հետագայ նմանօրինակ միջոցառումների համար: Թերեւս, պատահական չէ, որ համաժողովը տեղի է ունենում Արեւելի հայ մշակութային կեդրոններից մէկում՝ Պէյրութում, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի բարձր հովանաւորութեամբ, նկատի առնելով նաեւ այն, որ այստեղ է առաւելապէս պահպանուել հայոց մշակութային հարստութիւնը եւ զարգացել են հայ գրականութեան լաւագոյն աւանդոյթները:

Վեհափառ Տէր,

Հաւաքի պատուարժան մասնակիցներ, մաղթում եմ յաջողութիւն ձեր ազգանուէր աշխատանքին՝ ի փառս մեր միասնական հայրենիքի զարգացման եւ բարգաւաճման»:

*Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոս այս առիթով իր Օրհնութեան Գիրը յղած էր ներկաներուն, զոր ընթերցեց Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Հերկեթեան: Նորին Սրբութիւնը իր եղբայրական ողջոյնը ուղղելով Արամ Ա. Վե-*

*հափառ Հայրապետին, իր ուրախութիւնը կը յայտնէ Համաժողովին Անթիլիասի մէջ գումարման համար: Գարեգին Բ. Կաթողիկոս վեր կ'առնէ մեր գրականութեան ներուժը. Ստորեւ կու տանք Ամենայն Հայոց Կաթողիկոսին խօսքը ամբողջութեամբ.*

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ի Քրիստոս սիրոյ Մեր ողջոյնն ենք բերում Մեր հոգեւոր եղբորը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Անթիլիասում հրաւիրուած Հայ գրողների երրորդ համագումարի առիթով եւ Մեր օրհնութիւնը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտապահ միաբանութեանը եւ համագումարի բոլոր մասնակիցներին:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ համագումարը ոգեշնչող նոր հանդիպում դառնայ հայրենաբնակ եւ սփիւռքաշխարհի մեր գրողների ու գրական կեանքի մշակների համար՝ ներուժ ու լիցք հաղորդելով իրենց կոչման ճանապարհին:

Գրականութիւնը մշակութային գորեղ ոյժ է՝ իր ունեցած անդրադարձով հասարակական կեանքում: Հայ գրականութիւնը կրում է եւս մէկ մեծ առաքելութիւն, որն է ծառայութիւնը աշխարհասփիւռ մեր ժողովրդի հոգեւոր կեանքի միասնականութեանը: Մեր ժամանակների արագահոս ու բազմազան ընթացքների մէջ գրականութեան կարեւոր խնդիրն է լինել մեր ժողովրդի ազգային ոգու ու նկարագրի դաստիարակիչը, ինքնութեան արտայայտիչը: Մենք փոքր ազգ ենք, բայց մեծ ու հարուստ գրական ժառանգութիւն ունենք, որը ուղղորդել է մեր ժողովրդին պատմութեան փորձութիւններում ու այսօր էլ ուղեւիշ պիտի լինի մեր ժամանակի մարտահրաւերներում: Ճշմարիտ արուեստի նպատակը աստուածայինի բացայայտումն է, կեանքի հաստատումը: Այսօր կարեւոր է նորոգել խօսքի արժէքը՝ հոգի ոռոգող ու հայրենական աւանդներով սնուցող, աշխարհայեացք կերտող ու կեանքը բարեփոխող խօսքի: Միայն այսպէս մեր գրականութիւնը պիտի շարունակուի լինել իր նպատակին հարազատ եւ շարունակի ծառայել մեր ինքնութեան եւ պատմութեան ճանչողութեանը, մեր լեզուի անաղարտութեան ու գեղեցկութեանը, մեր յոյսերի արտայայտութեանը: պիտի շարունակի լինել պատկերը մեր քրիստոնէական հոգու: մենք հաւատում ենք, որ մեր գրական հարուստ ակունքներից ու աւանդներից սնունդ առնելով՝ նոր ոսկէ հասկեր պիտի բարձրանան մեր գրական կեանքում՝ սերմանելու մեր ժողովրդի պայծառ գալիքի տեսիլքը:

Բարի ընթացք ու արգասաւոր աշխատանք ենք մաղթում համագումարին, հայցում Բարձրեալից, որ ստեղծագործական նոր յաջողութիւններ պարգեւի մեր գրականութեան նուիրեալներին՝ իրենց ազնիւ ջանքերը, տաղանդը եւ պատուական աւանդը բերելու մեր հայրենիքին, ազգային-եկեղեցական կեանքին եւ մեր մշակոյթին:

Թող Աստուած Իր շնորհի եւ օրհնութեան ներքոյ պահպանի հայրենի մեր երկիրը եւ համայն մեր ժողովրդին՝ խաղաղ աշխարհի մէջ, բարի ընթացքներում»:

*Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Քաժանմունքի տնօրէն Դոկտ. Զաւէն Եկաւեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մշակութային ու կրթական հարցերու խորհրդատուն ըլլալով, մեծ ներդրում ունեցաւ սոյն Համաժողովի*

*իրականացման աշխատանքներուն մէջ: Ան եւս իր ողջոյնի նամակը յղած էր Համաժողովի մասնակիցներուն, զոր կարդաց Վարդի Քէշիշեան: Դոկտ. Եկաւեանի խօսքը կու տանք ամբողջութեամբ:-*

«Վեհափառ Տէր  
Համագումարի յարգելի մասնակիցներ  
Յարգելի հիւրեր՝

Մեծ ուրախութիւն պիտի ըլլար այս պահուն գտնուիլ Ձեր մէջ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան օրհնաբեր կամարներուն տակ եւ ողջունել միասնական ներկայութիւնը հայրենիքի եւ սփիւռքի ընտրելագոյն զաւակներուն՝ պատնէշի վրայ յամեցող հայ գրողներուն:

Մեր բազմագրադ վիճակը եւ այս օրերուն Հաստատութեան հիմնադրութեան 50-ամեայ յոբելեական հանդիսութիւններուն հետ կապուած մեր պարտաւորութիւնները արգելք հանդիսացան անձնապէս ներկայ գտնուելու եւ ողջունելու Համագումարիդ մասնակիցները:

Ուրախութիւն է մեզ տեսնել հայ գրողները համախմբուած այս Սուրբ յարկին տակ, ի մի բերելու կատարուածը, բայց մանաւանդ՝ ուղեկցելու մեր ճանապարհը՝ մարտահրաւէրներով լի ներկայ դարաշրջանին մէջ:

Իւրաքանչիւր համագումար պատասխանատուութեան հրաւեր մըն է, կոչ մըն է՝ այդ պատասխանատուութիւնը կրելու ո՛չ միայն համագումարի շրջագիծէն ներս, այլեւ յար եւ ընդմիջտ կրելու զայն, մանաւանդ երբ գրիչը ձեռք կ'առնէք, գրելու եւ խօսելու մեր ժողովուրդին հետ, խօսելու նաեւ աշխարհին, որովհետեւ մենք մեծ մշակոյթի տէր ազգ ենք, եւ այնքան որքան աշխարհը պարտաւոր է ընդունիլ մեզ, նոյնքան եւ աւելի մե՛նք պարտաւոր ենք ծանօթացնել մենք զմեզ աշխարհին, դուրս գալով ազգային ու համայնային նեղ շրջանակներէ: Ահա այստեղ կը սկսի հայ գրողին առաքելութիւնը, առաքելութիւն մը, որուն զինուորները դո՛ւք էք եւ պէտք է ըլլաք ո՛չ միայն արթուն պահապանները, այլ եւ յանձնառու, մարտնչող զօրապետերը հայ մշակոյթին:

Մեծարգոյ հայ գրողներ.

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը դարերէ ի վեր յատուկ ուշադրութիւն եւ հոգածութիւն ցուցաբերած է հայ մշակոյթի ծաղկման ու տարածման սուրբ գործին:

Ս. Աթոռի Անթիլիասական շրջանը յատկապէս, կը յատկանշուի հայ մշակոյթի, հայ դպրոցի ու հայ դպրութեան պահպանման ու բարգաւաճման իր առաքելութեամբ, մնալով պետականութենէ գուրկ Հայ Ափիւռքի գոյատեւման անփոխարինելի գրաւականը:

Վերջին տասնամեակին, Արամ Առաջին Վեհափառ Հայրապետին հետ մեր

սերտ համագործակցութիւնը եղած է ու կը մնայ արգասաբեր դաշտ մը ի սպաս հայ մշակոյթի:

Դուք հաւաքուած էք այս սրբազան յարկին տակ, եւ մեր ժողովուրդին աչքերը ուղղուած են Ձեզի:

Հաւատացէ՛ք Ձեր առաքելութեան, հաւատացէ՛ք որ Ձեր համախմբումը նոյն-  
ֆան եւ աւելի՛ կարեւոր է, որքան ամենաբարձր մակարդակի այլ հանդիպում: Դուք  
նոյնքան իրաւատէր էք՝ որքան եւ պարտաւոր մեր ժողովուրդի ապագային հան-  
դէպ:

Վստահ եղէ՛ք, որ մարդակերտումն ու հայակերտումն են մեր նպատակակէտը,  
որուն համար պատենէջի վրայ պիտի մնայ մանաւանդ մտաւորական դասը հայ  
ագգիին: Մէկ է հայ մտաւորականութիւնը: Ձկա՛յ Հայաստանեան կամ Սփիւռքեան  
մտաւորականութիւն: Կայ ՀԱՅ մտաւորականութիւն միայն: Կայ ՀԱՅ գրող  
միայն:

Ընդունեցէ՛ք Գալուստ Կիւպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժնի եւ  
անձամբ իմ սրտագին ողջոյններս ու բարեմաղթութիւններս:

Յաջողութի՛ւն բոլորիդ»:

*Ապա Կաթողիկոսարանի դիւանա-  
պետ Խաչիկ Տէտէեան ընթերցեց Հայաս-  
տանի մօտ Լիբանանի Դեսպան Կապրիէլ  
Ճաարայի ողջոյնի խօսքը: Դեսպան  
Ճաարայի խօսքը կու տանք ամբողջու-  
թեամբ.-*

«Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս  
Մեծի Տանն Կիլիկիոյ

Գրողներու համահայկական Գ. հա-  
մաժողովի յարգարժան նախագահ,

Յարգարժան գրողներ,

Պատիւ ունիմ ողջունելու գրողներու  
համահայկական Գ. համաժողովը, որ կը  
գումարուի մայրիկներու երկիր՝ Լիբա-  
նանի մէջ եւ հանելի կեցութիւն մաղթելու  
բոլորիդ:

Յաջողութիւն կը մաղթեմ համաժո-  
ղովի աշխատանքներուն, որուն կը մաս-  
նակցին աշխարհի տարբեր երկիրներու  
մէջ ստեղծագործող հայ գրողներ եւ որ,  
վստահ եմ, պիտի ծառայէ մարդկութեան  
գրական եւ մտաւոր հիմնախնդիրներուն  
ընդհանրապէս եւ Հայաստանի ու արտ-  
երկրի հայ գրականութեան հիմնախնդիր-  
ներուն մասնաւորապէս:

Այս առթիւ իմ ջերմ ողջոյններս կը  
յղեմ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ.

Արամ Ա.ին, սոյն համաժողովը հիւրըն-  
կալելուն եւ հովանաւորելուն համար:  
Նորին Սրբութեան կը մաղթեմ քաջառող-  
ջութիւն, յաջողութիւն՝ վեհ նպատակ-  
ներու իրագործման փանապարհին»:

*Խօսք տրուեցաւ նաեւ սոյն Համա-  
ժողովին ներկայ երիցագոյն անդամին,  
որ էր Սփիւռքահայ հանրաժանօթ բա-  
նաստեղծ ժագ Ս. Յակոբեան: Աւելի  
քան 80-ամեայ բանաստեղծը, որ Լոս  
Անճելըսէն ժամանած էր, սրտի ջերմ  
խօսքերով, բանաստեղծաշունչ ոգիով  
խանդավառեց բոլոր ներկաները, Հա-  
յաստան-Սփիւռք գրողներու միջեւ սի-  
րոյ ու եղբայրութեան բացայայտիչը  
դառնալով:*

*Ստորեւ վաստակաշատ բանաստեղ-  
ծին խօսքը ամբողջութեամբ.-*

«Վեհափա՛ռ Տէր եւ Յարգելի՛ հան-  
դիսականներ,

Պայթուցիկ ուրախութեամբ եւ բա-  
ցառիկ բերկրանքով՝ ողջո՛յն ... ողջո՛յն  
... ողջո՛յն ...

Որովհետեւ՝ իսկապէս ողջունելի է  
այս երեսոյթը, որուն երջանիկ հանդիսա-  
տեան ենք այս պահուն, եւ պիտի ըլլա՛նք  
տակաւին քանի մը օրեր:

Գրողներս համահայկական Գ. համա-  
ժողովին այս երեւոյթը յստակօրէն ցոյց  
կու տայ, թէ կայացած նախորդ երկու  
խորհրդաժողովները պատահական ձեռ-  
նարկներ չէին, եւ անցաւոր պատրանք մը  
չէր՝ որ կը հետապնդէին անոնք:

Այս մէկը, երրորդը, կը հաստատէ,  
թէ Սփիւոֆ-Հայրենիք կապին մէջ ար-  
մատակարար քան մը կայ փոխուած, եղ-  
բայրական ջերմ ու անկեղծ ոգիի զարթոնք  
մը եղած է, որ պիտի ծառայէ՝ աւելի՛  
ամրապնդելու սոյն կապը, եւ աւելի՛ եւս  
կ'արմատացնէ այդ առողջ ոգին՝ սիրտե-  
րուն մէջ:

Տեղին է թերեւս վկայակոչելու Մկր-  
տիչ Պէշիկթաշլեանի մէկ հոչակաւոր  
քերթուածը, անշուշտ գայն բոլորովին  
անջատելով ու մեկուսացնելով անոր ժա-  
մանակէն ու պարագաներէն: Երկրորդ  
համարն է

*«Տու՛ր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք  
մենք,*

*Որ մըրկաւ էինք գառուած՝*

*Բախտին ամէն ոխ չարանենք*

*Եւ մի համբոյր ցրուին ի բաց:*

*Ընդ աստեղօ՛ք ի՞նչ կայ սիրուն՝*

*Քան զանձկալի եղբայր (գրչեղբայր,  
քրչաճոյր) անուն»*

Երկու կարմիր մըրիկներով իրարմէ  
բռնի բաժնուած երկու գրիչներու վերա-  
հանդիպումն ու գիրկընդխառնումը կը  
խորհրդանշէ այս հաւաքը:

Այս համաժողովը ողջունելի՛ է նաեւ  
ա՛յն իրողութեամբ որ ան հայ գրողին  
խթան մը, գրգի՛ն մը կրնայ դառնալ՝ իր  
նուիրական ու նակատագրական առաքե-  
լութեան գիտակցութիւնն ու հանրային  
դերը զօրացնելու, հայ ստեղծագործ  
միտքը բոցավառելու, որպէսզի հայ գիրի  
մշակը նո՛ր տեսիլքով, վերանորոգ հա-  
ւատով, խանդավառ նուիրումով ծառայէ  
իր ժողովուրդին:

Գեղարուեստական գրականութիւնը  
ազգակերտիչ, հայակերտիչ առաքելու-  
թիւն մը ունի, որո՛ւն է կանչուած գրա-  
գէտը, սա՛ լոգունքով՝

Հայ գիր, հայ գիրք, հայ գրականու-  
թիւն – երբեակ եւ մի անբաժանելի միու-  
թիւն:

Գրականութիւնը ազգային ինքնու-  
թիւն է, եւ պահպանութիւնն իսկ է այդ  
ինքնութեան:

Ու դե՛ն. ողջունելի՛ է այս համագու-  
մարը, ու նա՛եւ գնահատելի է, եւ՛ շնոր-  
հաւորելի, քանի որ ան,– Հայաստանի  
Գրողներու Միութեան նախաձեռնութեան  
կողմէն,– կը հանդիսանայ մէկ շա՛տ  
պատասխանատու ձեռնարկը Մեծի Տանն  
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, առանց  
քաղաքական, կուսակցական, կրօնական  
խտրութեան եւ շարժառիթի որպէս գո՛ւտ  
համահայկական եւ գո՛ւտ գրական հան-  
գամանք ունեցող գործունէութիւն մը, ի  
շահ եւ յօգուտ Հայաստան եւ Սփիւոֆ  
հոգեկան եւ մշակութային կապերու սեր-  
տացման եւ ամրապնդման՝ ընդդէմ հա-  
յակուլ համաշխարհայնացումին:

Ողջոյնի խօսքս կը վերջացնեմ անձ-  
նական նշմարով մը: Սրտագինս շնոր-  
հակալութիւն կը յայտնեմ Մեծի Տանն  
Կիլիկիոյ Գահակալին՝ Արամ Ա. Կաթո-  
ղիկոս ու Վեհափառ Հօր, իր ազնիւ  
հրաւերին համար, որով զի՛ս եւս մաս-  
նակից կը դարձնէ այս պատմական հա-  
մաժողովին:

Ան, անշուշտ առանց գիտակցելու,  
Հայրենիք-Սփիւոֆ այս հրաշալի հանդի-  
պումով, ինձ անձնապէս երջանիկ առիթ  
մը ընծայած կ'ըլլայ, որ՝ եթէ «մար-  
գարէ»ին բազում տարիներ չյաջողուեցաւ  
երթալ «լեռ»ին՝ Արարատի՛ն այսօր անա՛  
«լեռ»ը՝ Արարատն է, որ կու գայ «մար-  
գարէ»ին, յանձին Գիրի մշակ հայրե-  
նաբոյր եղբայրներուս եւ քոյրերուս,  
որոնց՝ ժագա՛լի սիրով, դարաւոր կարօ-  
տով ու ուրսունիւնն տարեկան երիտա-  
սարդ ձայնով կը գոչեմ՝

– Բարե՛ւ, բարեւ, բարե՛ւ ... բարի՛  
եկաք ... հետեւաբար՝

– Կեցցե՛ Հայաստան եւ կեցցե՛ Սփիւո-  
ֆահայութիւն, Սփիւոնաստան ...»:

Հայրապետական պատգամով, կուռ լեզուով ու ապագայատեսիլ մտածումներով Արամ Ա. Կաթողիկոս ողջունեց Համաժողովի գումարումը, հայ դպրութեան սպասարկուները, ներկայ

թէ բացակայ: Ապա, Վեհափառ Հայրապետը հպանցիկ ակնարկով խօսեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան եւ բազմատարած առաքելութեան:

«Հայրապետական այս Սուրբ Աթոռը դարձաւ –պատմութիւնը վկայ, յասկապէս Յեղասպանութեան յետոյ, Սիիւռքի օտար ու օտարացնող մամբաներուն վրայ մեր ժողովուրդին զաւակները համախմբող, անոնց հոգեմտաւոր սնունդ հայթայթող, զանոնք բարոյական արժեքներով ու ազգային երազներով սնուցող, եւ կեանքի ընկլուզող ալիքներէն ու ամենի փոթորիկներէն պաշտպանող հաւաստի տունը մեր ազգին: Այս գիտակից յանձնառութեամբ Հայկական Կիլիկիոյ այս Հոգեւոր Տունը մեր ժողովուրդը առաջնորդեց մահէն դէպի կեանք, խաչէն դէպի յարութիւն»:

Նորին Սրբութիւն մատնանշեց կարգ մը երեւոյթներ, սոյն Համաժողովի, իր-

բեւ առաջնորդող մտածումները կայանալիք յառաջիկայ հանդիպումներուն:

«Տեսական, վերացական կամ ակադեմական բնոյթի խնդիրներ քննարկելու հրաւեր մը չէ այս Համաժողովի թեման. այլ՝ մեր ամենօրեայ կեանքին հետ սերտ աղերս ունեցող հիմնահարցեր դիմագրաւելու մարտահրաւեր մը: Ես այս հայեցակէտով կը դիտեմ համաժողովին աշխատանքը եւ նպատակը: Արդարեւ, որեւէ գրականութիւն ներքին լնացումի կը դասապարտուի՝ երբ անոր պակասի հոգեմտաւոր ստեղծագործական կիրքը եւ միգր. երբ ան ընկերութեան կեանքը փոթորկող սազմապնեւումն ու բեւեռացումներուն դիմաց կեցուածք մեղելու եւ առաջնորդողի դերը ստանձնելու քայլերէն չուներնայ. երբ ան կարող չէ ժամանակի նշանները կարգաւորել եւ նոր հորիզոններուն բացուելու»:

Ան իր խօսքը յատկապէս կեդրոնացնելով հայ գրողին առաքելութեան,

հեռանկարային իմացումով մատնանշումներ կատարեց եւ ըսաւ.

«Դուք, սիրելի գրողներ, սովորական մարդեր չեք՝ սովորական գործի լծուած: Սովորական մարդիկ իրաւունք չունին գրող անունին արժանանալու. եւ գրողները իրենք իրաւունք չունին սովորական մարդ մնալու: Ան որ ինքզինք ընծայած է իր անձին վեր ու անդին նուիրական ու ընդհանրական նպատակի մը, ան առաքեալ է՝ բառին վաւերական իմաստով: Առաքեալ՝ է, հետեւաբար, գրողը. առաքեալ՝ իր հոլորակն ու կոչումով: Ու ինձի համար գրողը ամէն բանէ առաջ ու ամէն բանէ վեր շեմարտութեան առաքեալն է, մեմարտութեան վկան, մեմարտութեան քարոզիչը: Ի՞նչ սրբազան բայց դժուարին առաքելութեան է կոչուած հայ գրողը: Այս օրերուն մեմարտութիւնը ուրիշ տեղեր կը փրկենք մեք դժբախտաբար: Կեղծիքը, լաւը, ժամանակաւորը, անձը մեմարտութեան ենք վերածած: Յամախ անը ու անակաւոր կը օրհնենք խորքին ու որակին հետ: Շեմարտութիւնը այլափոխող մօտեցումներուն ու արժեչափերու գերին ենք դարձած: Շեմարտութեան փնտրութիւն մէջ յամախ երկդիմի չափեր ու չափանիւթեր կը գործածենք: Իսկ մեմարտութեան պաշտպանութեան մէջ կը նահանջենք՝ լաւագոյնի մտահոգութիւններէ մեկնած: Իրաւ գրականութիւնը մեմարտութեան արձագանգն է, մեմարտութեան հայելին է»:

Նորին Սրբութիւնը համապարփակ կերպով ներկայացուց Հայ Մշակութային արժէքներուն պահպանման, ծաղկման ու նոր սերունդին փոխանցման դիմաց ծառայող ղեկավարութիւնները եւ այլ մարտահրաւէրներ: (Վեհափառ Հայ-

րապետին պատգամը ամբողջութեամբ կու տանք սոյն նկարագրականին յաջորդող էջերով:- ԽՄԸ.)

Արամ Ա. Կաթողիկոս այս առիթով բարձրօրէն գնահատեց վաստակաշատ բանաստեղծ Ժագ Ս. Յակոբեանը լսելով՝

«Դուն միտս պիտի մնաս ցնազայթող ներկայութիւն մեր արդի գրականութեան մէջ, ոչ թէ հրատարակած գիրքերուդ ծաւալով, այլ՝ որակով, ոչ թէ էերունաձմերուդ քանակով, այլ՝ անոնցմէ ժայթփող խոր սագնայներով, ջինջ զգացումներով ու վառ երագներով: Նման բանաստեղծ մը արեւմար չի՛ կրնար ունենալ»:

Նշենք, որ նոյն օրերուն, Վեհափառ Հայրապետը Անթիլիասին կողմէ հրատարակել տուած էր Ժագ Ս. Յակոբեանի վերջին հատորը «Անմեղ Մեղապարտը՝ Պատարագ»: Յայտնենք նաեւ, որ չորս տարիներ առաջ, Վեհափառ Հայրապետը «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանով պարգեւատրած էր Ժագ Ս. Յակոբեանը:

Վեհափառ Հայրապետի պատգամի աւարտին, Դպրեվանքի երգչախումբը հնչեցուց «Ի վեհ բարձանց» հայրապետական օրհներգը եւ «Կիլիկիա» մաղթերգը: Պաշտօնական բացման հանդիսութեան յաջորդեց հայրենի հրատարակութեանց ցուցահանդէս մը «Կիլիկիա» թանգարանի «Կիւլպէնկեան» սրահին մէջ: Այս առիթով խօսք առաւ



ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ ԵՒ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՆԵՐ ՀԱՅ ԳԻՐՔԻՆ ԴԵՏ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ

**Հ.Գ.Մ. Նախագահ Լեւոն Անանեան, իսկ եզրափակումը կատարեց Վեհափառ Հայրապետը, հայ գիրքի նկատմամբ մեր ժողովուրդի պաշտամունքային սիրոյն թարգմանը հանդիսանալով: Դպրեվանքի երգչախումբը այս առիթով եւս հայ լեզուին նուիրուած երգեր մատուցեց ներկայ բազմութեան:**

**ԵՐԿՐՈՐԴ ՕՐՈՒՒՆ ՆԻՍՏԵՐ**

Մայրավանքի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ տեղի ունեցած Հայրենի հրատարակութիւններու ցուցահանդէսէն անմիջապէս ետք, Վեհարանի դահլիճին մէջ գումարուեցաւ Բ. Նիստը, որ տեւեց մինչեւ երեկոյեան ժամը 8:

«Համաշխարհայնացումը եւ արդի հայ գրականութիւնը» թեմային շուրջ երկու գրողներ գեկուցեցին, նախապատրաստելով ներկաներուն մտքերը, կարծիքներու փոխանակման համար: Առաջին գեկուցարեան էր Գառնիկ Անանեան, Հայաստանէն: Անանեան վերլուծական խորքով համադրուած իր գեկուցումին մէջ ըսաւ. «Համաշխարհայնացումը մուտք է գործել մեր կեանքի բոլոր ոլորտները, առաջադրելով արմատական վերափոխումներ հոգեւոր բոլոր ոլորտներում: Հայ գրական-գեղարուեստական մտածողութիւնը համարձակօրէն ընդառաջ է գնում այդ մարտահրաւերներին, ակնյայտ ձեռքբերումների կողքին ի յայտ բերելով նաեւ վտանգաւոր միտումներ: Զեկուցումը հենց վերջիններին է վերաբերում: Ազգութիւնները, ինքնուրոյնութիւնները համահարթելու բոլոր ինքնագիտելի, ստեղծագործական ազատութիւնը ամենաթողութեան հետ շփոթելը դոնորը բացել են ազգային ինքնութեան մերժումի, ազգերի թերաթէֆութեան, աշխարհաբախտագիտութեան բանաստեղծականացման, գրական մնայուն արժէքները մերժելու, երբեմն նոյնիսկ՝ աղբաբերութեան առջեւ, միտումներ, որոնք վաղը կարող են լուրջ սպառնա-

լիքներ դառնալ» ըսաւ ան: Նոյն թեմային երկրորդ գեկուցարեանը՝ լիբանանահայ բանաստեղծ-մտաւորական Սարգիս Կիրակոսեան, փոքրածիւր ժողովուրդներու ազգային դիմագիծը, ինքնուրոյն էութիւնը, առանձնապատուկ մշակոյթը ջնջելով՝ ամերիկեան բնորդը պարտադրել փորձող համաշխարհայնացման շարժումին գործած աւերներուն վրայ ընդհանուր ակնարկ մը նետելէ ետք, անդրադարձաւ հայ մշակոյթի եւ յատկապէս գրականութեան վրայ անոր ունեցած ժխտական անդրադարձներուն եւ առ այդ նշեց, որ վերջին տասնամեակին հայ գրականութեան մէջ սկսաւ կազմուիլ նոր հայու կերպար մը: Նիւթապաշտութեան, անհատի գուտ կենսաբանական էութեան եւ բնագոյնի գնայուն ապրումներուն ան հակադրեց գաղափարապաշտ, յանձնառու եւ հայ գրականութեան ազգային դարաւոր արժէքներուն, աւանդներուն եւ էութեան կենդանի ենթահողին վրայ արմատացած տեսլապաշտ գրականութիւնը, «որ գիտէ կուրծք ցցել համշխարհայնացման ապագային փոթորիկներուն դէմ՝ իբրեւ անցեալէն եկող եւ ապագային գացող հաւատքի ծառայութիւն» ըսաւ Կիրակոսեան: Ապա տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակում, որուն ատենապետեցին Հենրիկ Էդոյեան (Հայաստան) եւ Հրանդ Սարգսրեան (Միացեալ Նահանգներ):

Համաժողովի երրորդ նիստը բացուեցաւ Ուրբաթ 7 Ապրիլ 2006-ի առաւօտուն: Սոյն նիստը յատկացուած էր երկու հիմնական թեմաներու՝ «Նոր կենսափորձ եւ նոր գրականութիւն», եւ «Ինքնութեան տաղնապը սփիւռքահայ գրականութեան մէջ»: Առաջին նիւթին գեկուցարեան էր Ժենիա Քալանթարեան (Հայաստան): Ան բազմաթիւ արեւելահայ գրողներու օրինակներով արձակ թէ բանաստեղծական սեռերու նոր կենսափորձը ներկայացուց, յիշելով յատկապէս գրական երկու սեռերու փոխ-



*ներթափանցումները*. «Գրական սեռերի փոխ-ներթափանցումների հետեւանումը, այժմ գրողներից իւրաքանչիւրը ստեղծագործում է գրեթէ բոլոր սեռերով՝ բանաստեղծութիւնից մինչեւ տրամ: Բայց ահա նկատուում է նաեւ հակառակ երեւոյթը. արձակագիրներն անցնում են պոեզիայի: Այ. Պետրոսեանը եւ Մերուժան Տէր-Գուլանեանը հրատարակել են բանաստեղծութիւնների ժողովածուներ, իսկ Հր. Մաթեոսեանը՝ ֆառեակների: Այս համապատկերում հետաքրքրական երեւոյթներ նկատուեցին Ռ. Դաւոյեանի ստեղծագործութեան մէջ: Վերջին շրջանում պակասեցնելով պոեզիայի չափաբաժինը, նա անցաւ նախ գեղագիտական, ապա արձակ գործերի: Վերջերս լոյս տեսած նրա «Եթէ Աստուած կամենայ» ծաւալուն, դեռեւս անաւարտ վէպը ազգային գարթօնի եւ նրան յաջորդած իրադարձութիւններին, բայց տալիս են հայ իրականութեան հետ զուգահեռի լայն հնարաւորութիւններ» *ըսաւ ան:*

*Սփիւռքահայ գրականութեան մէջ ինքնութեան տագնապին մասին գեկուցում ներկայացուց Վեհանոյ թէքեան (Միացեալ Նահանգներ), սփիւռքահայու գոյապայքարի տագնապներուն առնչակից ցուցնելով աշխարհի տարբեր գաղթօճախներուն մէջ ծաղկած հայ գրականութիւնը: Առ այդ՝ «Սփիւռքի գոտիներուն վրայ լոյս սփռող գրականութիւնը արժանի եւ ոչ թէ պարագայական, յետամնաց կամ յետ մահու ընդունելութեան այլ լուրջ՝ յարատեւ ուշադրութեան: Որովհետեւ հետգիտել կը նուազի ցատումը, էնկաթ, անհրաժեշտ պայքարը, ծառայողական անարդարութեան ու վատութեան դէմ: Աշխարհի ֆառասուն անկիւններէն լսող մենախօսութիւններու տրամ մըն է Սփիւռքինը, տարամէտ ու հակադիր, բազմահուն ու գեղակնիք: Սկսած Աբրահամ Ալիքեանի գեղանուրբ բառերու ծննդայէն գոր բունած է հրկիզուած ձեռքերով մինչեւ ժագ Ս. Յակոբեանի պաղպաջուն հոգին իր հողածին ու երկ-*

*րամէտ շեփորով եւ տաւիղով» ըսաւ ան: Տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակում, ատենապետութեամբ Յովհաննէս Գրիգորեանի (Հայաստան) եւ Յակոբ Միքայէլեանի (Սուրիա):*

*Չորրորդ նիստը յատկացուած էր Սփիւռքահայ գրականութեան, որուն շուրջ երկու տարբեր նիւթերով հանդէս եկան Սուրէն Դանիէլեան (Հայաստան) եւ Հիլտա Գալֆայեան-Փանոսեան: «Սփիւռքահայ գրականութիւնը՝ արդի Հայաստանի գրականագիտութեան գնահատմամբ» նիւթով, գեկուցարբեր Սփիւռքահայ գրականութիւնը դիտեց համաշխարհայնացման լոյսին տակ: Ան առերեւոյթ դիտեց համաշխարհայնացման եւ ազգային ինքնութեան հակադրութիւնը, որ կը շարունակուի: Մինչդեռ անոնք պէտք է տեսնել Արեւմուտքի եւ Արեւելքի աւանդական համադրութեան մէջ (Թումանեան, Վարուժան, Շահնուր, Համաստեղ, Խրախունի, Ժագ Յակոբեան եւ այսպէս շարունակ): Նիւթը չէ կարեւորը, այլ հայեացքը: Յ. Օշական կը գրէ Ֆ. Տոստոյեւսկիի ստեղծագործական շերտերուն խորքով, թէեւ ուղղակի դաշտի գիւղացին է իր հերոսը, Արամ Հայկազը ամերիկեան կեանքը կը ներկայացնէ, բայց կարօտի շրջագծի մէջ կը մնայ:*

*Դանիէլեան մանրամասն քննարկումի ենթարկեց Գեղամ Սեւանի, Վագդէն Գարրիէլեանի, Ալեքս Թօփճեանի եւ հայրենի այլ գրագէտներու հիմնական ելակէտները, խօսեցաւ Խորհրդահայ քննադատներու ընկալումներուն եւ Սփիւռքահայ գրականութեան՝ Հայաստանի մէջ իւրացման հարցերուն մասին: «Յարաբերական եւ յաւերժական եզրերը Սփիւռքի ու հայրենիքի գրաշխարհներուն համար ցարդ եղած են գաղափարագրութեան ծիրէն ներս, որոնցմէ պէտք է ազատագրուիլ», շեշտեց ան:*

*Երկրորդ գեկուցարբերը «Արդի մտածողութիւնը Սփիւռքահայ գրականութեան մէջ» նիւթով ներկայացուց*

**Հիլտա Գալֆայեան-Փանոսեան:** Ան ըսաւ. «Նդեռնէն ետք, տարբեր գաղութներու մէջ, իմացական տարբեր մթնոլորտներու ազդեցութեան տակ, տարաբնոյթ գրականութիւններ զարգացան: Ամէնէն առաջ ուշագրաւ եղաւ Փարիզը: Այնտեղ կազմաւորուող երիտասարդ գրողները հակադրուեցան հին սերունդի գգացականութեան ու Շահնուրի, Ուրուհիի, Սարաճեանի եւ ընկերներուն գրչով՝ նոր ուղի մը բացին: Երկրորդ ուշագրաւ երեւոյթը տեսնուեցաւ Պոլսոյ մէջ: Բ. Աշխարհամարտէն անմիջապէս ետք՝ թէ՛ բանաստեղծութեան եւ թէ՛ արձակի մարզին մէջ՝ նոր անուններ նոր մերձեցումներով մօտեցան գրականութեան (Զահրատ, Խրախունի, Պիպեռեան, Եւայլն): Նոյն նորութիւնները երեւցան Թեհրանի մէջ՝ Նոր էջ աշագրի երդիքին տակ, Պէյրութի մէջ՝ Ահեկան պարբերականի էջերէն, Հալէպի մէջ՝ շատ անլի ուշ (վերջին տարիներուն): Ներկայիս, սփիւռփախայ ֆերթողութեան առջեւ ցցուած դժուարութեանց գլխաւորն է դժուար հասկնալիութիւնը: Անհրաժեշտ է, որ հայ հայ գրականութիւնը հեռու մնայ ծայրայեղ արդիապաշտութեան ձեւազեղումներէն» *եզրակացուց ան:*

**Կարծիքներու փոխանակման նիստը ատենապետեցին Վազգէն Գարրիէլեան (Հայաստան) եւ Արամ Սեփէթճեան (Լիբանան):**

**Ճաշի դաղարէն ետք տեղի ունեցաւ Ե. Նիստը, որու ընթացքին «Հայկական Յեղասպանութիւնը եւ արդի Հայ գրականութիւնը» նիւթով հանդէս եկաւ Ազատ Եղիազարեան (Հայաստան): Եղիազարեան անդրադառնալով հայ գրականութեան մէջ անխուսաբեղիորէն օգտագործուած այս թեմային ըսաւ. «Երիտասարդ վաթսունականները՝ թէ՛ արձակագիրները եւ թէ՛ բանաստեղծները, գրական մի նոր յեղափոխութեան, գրականութեան արմատական վերակառուցման յայտ ներկայացրին, եւ այդ վերակառուցումը հասունացել էր: Նրանք**

խուսափում էին այն բոլոր կարծրատիպերից, որոնք ձեւաւորուել էին նախորդ տասնամեակներում: Դրանց մէջ էր եւ ազգային թեմատիկան: Բայց իրենց բոլոր ոլորտների մէջ նրանք նորից ու նորից դառնում էին 20-րդ դարի պատմութեանը, հայկական ակադեմիայի վերականգնմանը: Վաթսունականների ազատութիւնից յետոյ հայ գրականութիւնը չդարձաւ ազգային երգ այն նեղ իմաստով, որը երբեմն նկատի է առնուում: Վաթսունականների գրականութիւնը, բարեբախտաբար, շատ բազմազան էր՝ եւ արձակը եւ բանաստեղծութիւնը: Հայ գրականութիւնը դիմում էր մարդկային հոգեբանութեան, կեցութեան ամենաբարդ եւ դժուարին խնդիրներին. բայց ազգային ակադեմիայի դրանց մէջ մնում էր կեդրոնական թեմաներից մէկը, այնպէս ինչպէս 20-րդ դարասկզբի «արուեստագետ սերունդ» անուանուած գրողների ստեղծագործութեան մէջ ազգային թեմատիկան երկրորդական կամ ծայրամասային չդարձաւ: Ոչ մի հիմք չունենէք պընդելու, որ հայ գրականութիւնը իր պատմութեան ընթացքում մնացել է ազգային թեմատիկայի անձուկ սահմաններում: Դա կը լինէր արմատապէս անստոյգ եւ անարդար մեր գրականութեան հանդէպ: Բայց ազգային ակադեմիայից եղել է նրա գլխաւոր մտահոգութիւններից մէկը, եւ ինքը՝ գրականութիւնը, խորապէս ազդել է ազգային ակադեմիայի ու հոգեբանութեան վրայ: Այսինքն, ինչպիսին ժողովրդի պատմութիւնն ու ակադեմիան է, այնպէս էլ նրա գրականութիւնն է: Եւ նաեւ, ինչպիսին ժողովրդի գրականութիւնն է, այնպիսին էլ նրա հոգեբանութիւնն ու պատմութիւնն է: Ահա հայ գրականութեան կարեւորագոյն առանձնայատկութիւններից մէկը» *եզրակացուց ան:*

**Ապա, Ռուբէն Յովսէփեան (Հայաստան) եւ Արշակ Գազանճեան (Միացեալ Նահանգներ), ատենապետեցին կարծիքներու փոխանակման նիստին:**

Օրուան վերջին՝ Ջ. Նիստը յատկացուած էր «Հայ գրականութեան միջազգայնացումը» թեմային, որուն շուրջ գեկուցեցին երկու մտաւորականներ՝ Ալեքսանդր Թօփճեան (Հայաստան) եւ Յարութիւն Քիւրքճեան (Յունաստան): Թօփճեան համապարփակ մօտեցումով ներկայացուց այն գործընթացը որով հայ գրականութիւնը պէտք է բերուի միջազգային բեմ: Այն ըսաւ. «Հայ գրականութեան միջազգայնացումը պէտք է նախ եւ առաջ դառնայ պետական քաղաքականութեան անբաժան մասը: Դա նշանակում է, որ պէտք է մշակուի յստակ եւ համապարփակ ծրագիր մեր գրականութիւնը աշխարհին ներկայացնելու: Դժուարին մի առաջնութիւն է սա, որի իրագործման համար անհրաժեշտ է միաւորել ոչ միայն Հայաստանի ստեղծագործական միութիւնները, այլեւ Ափիւլֆի մտաւորական ներուժը»:

Քիւրքճեան շեշտը դնելով որակային արժէքը գերադաս համարելու մօտեցման վրայ, յատկապէս ըսաւ. «Հայ գրականութեան միջազգայնացման խնդիրին մօտենալ հարկ է, առարկայականի կողքին՝ որակային տեսանկիւնէն: Յատկապէս Ափիւլֆի գրականութեան վրայ կեդրոնացած, Ն. Սարաֆեանի, Վահէ Օշականի եւ այլ մտածողներու հետքերով, հարկ է շեշտել բարձրորակ եւ ոչ անպայման հանրամատչելի գրականութեան մը եւ գրողներու կարեւորութիւնը: Գրականութիւն եւ գրագէտներ, որոնք հետեւին համաշխարհային գրական առաջընթացին՝ հայերէն լեզուն նորոգելով, յեղափոխական հաւատարմութեամբ մը» եզրակացուց Քիւրքճեան:

Նախորդ օրուան վերջին նիստի աւարտին տեղի ունեցած կարծիքներու փոխանակումը ղեկավարեցին Պերճ Զէյթունցեան (Հայաստան) եւ Յարութիւն Պէրպէրեան (Գանատա):

ԵՐՐՈՒՊ ՕՐՈՒԱՆ ՆԻՍՏԵՐ

Շարաթ 8 Ապրիլ 2006-ի երեկոյեան

համաժողովը փակեց իր աշխատանքային նիստերը:

Շարաթ օրուան նիստը յատկացուցաւ «Արդի մանկապատանեկան գրականութիւնը եւ ազգային դպրոցը» նիւթին: Այս նիւթով մասնագիտական երկու գեկուցումներ ներկայացուցին էդուարդ Միլիտոնեան (Հայաստան) եւ Գրիգոր Շահինեան (Լիբանան):

Բանաստեղծ, բանախօս էդուարդ Միլիտոնեանի գեկուցը Հայաստանի ժամանակակից մանկապատանեկան գրականութեան եւ Հայաստանի մէջ հրատարակուած դպրոցական փոքր տարիքի համար պատրաստուած դասագրքերու մասին էր: «Դասագիրքերը կ'ընդգրկեն ժամանակակից գրողներու ստեղծագործութիւններ: Զարմանալի է ոչ որակաւոր ոտանաւորներու առկայութիւնը դասագրքերուն մէջ» ըսաւ ան: Ապա բանախօսը առաջարկեց դասագրքեր պատրաստողներու խումբին մէջ ներառել գրողները: Ան խօսեցաւ Հայաստանի մէջ այս գործին պետական աջակցութեան անհրաժեշտութեան մասին, որպէսզի ժամանակակից մանկագիրներուն սատար հանդիսանան՝ հրատարակելու իրենց պատրաստած գործերը: Ան յայտնեց, որ վերջերս իր աւարտին հասած է մանկապատանեկան գրականութեան մրցոյթ մը, որուն մասնակցած են նաեւ Սփիւռքահայ գրողներ, եւ աւելցուց, որ նման համահայկական բնոյթի աշխատանքները յաճախակի պէտք է ըլլան մեր իրականութեան մէջ:

Երկրորդ գեկուցարբը՝ Գրիգոր Շահինեան, առհասարակ Սփիւռքի գանազան գաղութներուն մէջ անհատական նախաձեռնութեամբ թէ յատուկ հրատարակչատուններու կողմէ լոյս ընծայուած մանկապատանեկան գրականութեան անդրադարձաւ: Շահինեան իւրաքանչիւրին առաւելութիւններն ու թերութիւնները մատնանշեց, անհատականներու պարագային մինչեւ իսկ «գործարար հեղինակ» ըլլալու երեւոյ-

թին անդրադառնալով: Շահինեան իր-  
 բեւ նոր երեւոյթ յիշեց նաեւ համա-  
 կարգչային տարբերակները, Արեւե-  
 լահայերէնէն Արեւմտահայերէն փոխադ-  
 րումները, մանկապատանեկան լեզուի  
 պատշաճեցումները եւայլն: Նոր հեռա-  
 նկարներ գծելով ներկաներու մտա-  
 պաստառին դիմաց, Շահինեան ըսաւ.  
 «Ափիւնքի հայկեղորոն քաղաքներուն մէջ  
 կրնանք առաջացնել գրական խմբակներ,  
 որոնց անդամները իրենց հերթական  
 հանդիպումներուն ընթացքին կը ծանօ-  
 քանան մանկական ու պատանեկան գրա-  
 կանութիւններու համաշխարհային գր-  
 լուիս-գործոցներուն, կը կարդան ու կը  
 քննարկեն իրենց սեփական գործերը:  
 Կրնանք նաեւ հաստատել մանկագրու-  
 թեան կրթաթոշակ մը, որ տրուի լաւ  
 հայերէն գիտցող եւ ստեղծագործական  
 շնորհ ունեցող անհատներու: Թող երթան  
 ու կրթութիւն ստանան եւ յետոյ ժա-  
 մանակ մը ապրին Հայաստան: Երթան  
 հեռաւոր շրջաններ, շփուին Երեւանի  
 մշակութային կեանքին, յարաբերին հողի  
 մարդոց հետ եւ գիրի մշակներու, ծանօ-  
 քանան դարերէն եկող սովորութիւն-  
 ներու, բռնեն յաւերժական հայութեան եւ  
 արդի հայ մարդու բազկերակը, հարստա-  
 նան ապրումներով, փորձառութեամբ,  
 յետոյ վերադառնան մեզի»:

Նիստի ատենապետութիւնը վարե-  
 ցին Արեւշատ Աւագեան (Հայաստան),  
 եւ Թորգոմ Փոսթաճեան (Մ. Նահանգ-  
 ներ), որու ընթացքին եղաւ կարծիքնե-  
 րու փոխանակում:

Յաջորդ օրակարգը յատկացուեցաւ  
 յառաջիկայ Գրողներու Դ. Համագու-  
 մարի առնչութեամբ առաջարկներու:  
 Սոյն նիստը վարեցին Նորայր Աղայեան  
 (Հայաստան) եւ Մարգար Շարապխան-  
 եան (Գանատա): Ներկայ գրողները գա-  
 նազան առաջարկներով մասնակից  
 դարձան, յատկապէս շեշտելով փոխա-  
 դարձ կապը աշխարհի գանազան ան-  
 կիւնները գտնուող հայ գրողներուն  
 միջեւ: Համացանցային կայքէջի մը

հրապարակումը այլընտրանքներէն մին  
 էր, քով-քովի բերելու հայ գրողները՝  
 Սփիւռքի թէ՛ Հայաստանի տարածքին:  
 Գիրքի ու տպագիր մամուլի տարա-  
 ծումը եւս կանոնաւորելու առաջարկ-  
 ներ ներկայացան ժողովին:

Յաջորդ՝ Թ. Նիստը ամբողջու-  
 թեամբ յատկացուեցաւ Հայ Գրողը մտա-  
 հոգող այլեւայլ հարցերու: Ատենապե-  
 տութիւնը վարեցին Սէյրան Գրիգորեան  
 (Հայաստան) եւ Ժիրայր Դանիէյեան (Լի-  
 բանան): Հոս եւս շարունակելով նախորդ  
 օրակարգը, եղան գանազան առաջարկ-  
 ներ համակարգելու յատկապէս Հայրե-  
 նիք-Սփիւռք մտաւորական աշխատանք-  
 ները ու փոխադարձ ճանաչողութիւնը:

Վերջին՝ Ժ. նիստի ընթացքին ըն-  
 թերցուեցաւ Համաժողովի պաշտօնա-  
 կան հաղորդագրութիւնը, բանաձեւի  
 յանձնախումբին կողմէ: Նիստի ատենա-  
 պետներն էին Հենրիկ Բախչինեան (Հա-  
 յաստան) եւ Յակոբ Պալեան (Ֆրանսա):

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՓԱԿՈՒՄ**

Կիրակի 9 Ապրիլ 2006-ի երեկոյեան,  
 Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսու-  
 թեան Անթիլիասի Վեհարանին մէջ տեղի  
 ունեցաւ պաշտօնական փակման հան-  
 դիսութիւնը Համաժողովին, նախագա-  
 հութեամբ Վեհափառ Հայրապետին:

Յանուն Համաժողովի մասնակից-  
 ներուն եւ բացակայ հայ գրողներուն,  
 Հայաստանի Գրողներու Միութեան Նա-  
 խագահ Լեւոն Անանեան երախտա-  
 գիտական ջերմ խօսքերով հանդէս  
 եկաւ, շնորհակալութիւն յայտնեց Վե-  
 հափառ Հայրապետին: Անանեան շեշ-  
 տեց, թէ իր խօսքը ո՛չ թէ միայն սոյն  
 համաժողովը Անթիլիասի մէջ կայացնե-  
 լու համար է, այլ մանաւանդ այն սի-  
 րոյն, քաջալերանքին, գուրգուրանքին  
 ու նախանձախնդրութեան, որ Արամ Ա.  
 Կաթողիկոս կը տածէ հանդէպ հայ գրո-  
 ղին ու ընդհանրապէս հայ մշակոյթին:

Համաժողովի բացման նիստին ներ-

կայ ամէնէն տարեց հայ գրողին՝ անուանի բանաստեղծ ժագ Ս. Յակոբեանին խօսք տրուած ըլլալով, փակման պաշտօնական հանդիսութեան խօսք տրուեցաւ համաժողովին ներկայ ամէնէն երիտասարդ հայ գրողին՝ բանաստեղծուի Նանօր Ինճէճիկեանին: Երիտասարդ գրողը իր խօսքին մէջ հայ գրականութիւնը նկատեց ամէնէն աւելի երիտասարդն ու երիտասարդացնողը:

Փակման հանդիսութեան եզրափակիչ խօսքով, Արամ Ա. Կաթողիկոս իր մտածումները, տպաւորութիւնները եւ յառաջատեսիլ գաղափարները փոխանցեց մասնակիցներուն: Զանազան ազգային թէ միջազգային համաժողովներու մասնակցած ըլլալու փորձառութեամբ, Վեհափառ Հայրապետը կարգ մը մատնանշումներ կատարեց յառաջիկայ Համաժողովին նկատաւման յանձնելով գանոնք: Նորին Սրբութիւնը ընդգծեց կարեւորութեամբ, թէ յառաջիկային քննարկումներու աւելի լայն առիթ ընծայուի, որոնք լեցուն ըլլան հարցադրումներով, քան թէ՛ հաստատումներով: Վեհափառ Հայրապետը թելադրեց ներկայացուող նիւթերու խորքը թափանցել, եւ հարցերը յստակ լուսարձակներու տակ բերել: Ան նաեւ շեշտը դրաւ երիտասարդութեան մասնակցութեան վրայ, անոր մէջ տեսնելով մեր մշակոյթին, գրականութեան ու մեր բոլոր կառույցներուն յարատեւութիւնը ու յաւերժութիւնը:

Արամ Ա. Կաթողիկոս մասնաւոր կերպով շեշտեց Հայաստան-Սփիւռք համագործակցութեան նոր ուղիներ որոնելու անհրաժեշտութիւնը, որուն կրնայ նպաստել հայ գրականութիւնը: Այս ծիրէն ներս իրար ճանաչողութիւնը կարեւոր ազդակ մը համարեց ան, շեշտելով որ մեր դասագիրքերուն մէջ փոխադարձաբար ներկայ պէտք է ըլլան հայրենի եւ

սփիւռքահայ գրողներ:

Դժուար ընդունելի նիւթերէ խուսափումը ճիշդ չգտաւ Նորին Սրբութիւնը, այլ գանոնք քաջաբար դիմակայելու մարտահրաւէր կարգաց բոլորին: Այս ծիրէն ներս յիշեց ուղղագրութեան հարցը, եւ ըսաւ թէ փոխադարձ հասկացողութեամբ, հանգրուանային կերպով, եւ որպէս մեր ժողովուրդի միութեան գօրեղ ազդակներէն մէկը, պէտք է քննարկումի ենթարկուի այս հարցը:

Ի վերջոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետ ախտանշում կատարելով, որակի անկման երեւոյթը բոլորին ուշադրութեան յանձնեց: Ամէն տեղ ու ամէն մակարդակի վրայ, նաեւ հայ գրականութեան մէջ տեսնուող որակի անկումը աղէտաբեր նկատեց ան, բոլոր մարզերուն համար ալ: Ուստի կոչ ուղղեց նոր որակ կերտելու, հաւաքական ճիգով ու յանձնառութեամբ:

**ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆԻ**

Արամ Ա. Կաթողիկոս Հայրապետական օրհնութեամբ ու հայրական սիրով իր գնահատանքը յայտնեց յատկապէս Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեանին: Հանդիսութեան ընթացքին, Գերպ. Տ. Նորայր Մ. Վրդ. Աշրղեան ընթերցեց Վեհափառ Հայրապետին Կոնդակը, եւ ներկայ հան-



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ»Ի ՇՔԱՆՇԱՆԸ ԿԸ ԶԵՏԵՂԵ Լ. ԱՆԱՆԵԱՆԻ ԼԱՍՔԱԿԻՆ

գիտականներ յոտրնկայս ունկնդրեցին Հայրապետական բարձրագոյն աստիճանի գնահատանքը ուղղուած Լ. Անանեանին: Նորին Սրբութիւնը իր Կոնդակին մէջ կը գրէ, թէ իր Անանեանի անձին ճամբով կը գնահատուին նաեւ հայրենի բոլոր գրողները ու մտաւորականները:

Ներկաներու որոտնդոտտ ծափահարութիւններուն ներքեւ, Վեհափառ Հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանը գետեղեց Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահ եւ հայ գիրի ու դպրութեան վաստակաւոր սպասարկու Լեւոն Անանեանի լամբակին:

**ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ**

Երկուշաբթի, 10 Ապրիլ 2006, առաւօտեան ժամը 9:00ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ համաժողովին կազմակերպիչ յանձնախումբին հրաւէրով Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութիւնը տուաւ եզրափակիչ մամլոյ ասուլիս մը՝ ներկայութեամբ հայկական տարբեր թերթերու ներկայացուցիչներուն:

Մամլոյ ասուլիսի բացման խօսքը արտասանեց Նարեկ Եպս. Ալեկմէզեան, որ Գրողներու Համահայկական Գ. համաժողովի պահերը «պատմական օրեր» նկատեց՝ հաստատելով, թէ այս հանդիպումը լեցուն էին մեծ իրագործումներով: Ան աւելցուց. «Այս օրերը մեզ բոլորս առաւել եւս կը նախապատրաստեն առաւել պատասխանատուութեամբ մեր նուիրումը արտայայտելու հայ գրականութեան, հայ մշակույթին ու հայ գրողին նկատմամբ»:

Նարեկ Սրբազան շեշտեց, որ այս մամլոյ ասուլիսը պէտք է սրտբաց երկխօսութեան եւ հարցում-պատասխանի առիթ մը հանդիսանայ Հայաստանի գրողներու միութեան նախագահութեան եւ հայ մամուլի ներկայացուցիչներուն միջեւ:

Նարեկ Եպս. Ալեկմէզեանի խօսքէն ետք խօսք առաւ Լեւոն Անանեան, որ նախ գնահատեց լիբանանահայ մամուլին ունեցած դերը եւ լրջախոհ վերաբերմունքը համաժողովին նկատմամբ, ինչպէս նաեւ ողջունեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի հովանաւորութիւնը այս համաժողովին:



ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԵՒ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ, ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԻ ԸՆԹԱՅՔԻՆ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՐԻԿՈՍ, ՇՐՋԱՄԱՏՈՒՄԸ ԳՐՈՐԵՏՈՒ ԴԱՍԻՋԱՅԱԿԱՆ Գ. ԴԱՄԹՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՆԵՐՈՎ,  
 ԿԵԴՊՐԱԿԱՆ ՇՔԱՄՈՒՏՔԻՆ

«Շատ կարեւոր է ոչ միայն համագումարին ընթացքը, այլ նաեւ արդիւնքը», ըսաւ Անանեան: Ան դիտել տուաւ, թէ հայ ժողովուրդը այսօր Հայաստանի թէ Սփիւռքի մէջ ունի գրողներ, որոնց գիրքերը կը հրատարակուին, բայց այդ գիրքերը չեն սպառիր եւ ընթերցողին չեն հասնիր, եւ ասոր պատճառը ընթերցասիրութեան եւ գրասիրութեան խոր ճգնաժամի մէջ գտնուելն է: Այս առնչութեամբ Անանեան նշեց, թէ կարելիութեան սահմաններուն մէջ աշխատանք պիտի տարուի «գրողին ու ընթերցողին միջեւ կամուրջը վերականգնելու համար»:

Լեւոն Անանեան նաեւ Սփիւռք-Հայաստան գրականութեան մարզին մէջ միասնական կապերու ամրապնդումը շեշտելով ըսաւ, որ այս ծիրին մէջ արդէն իսկ բաւական իրագործումներ արձանագրուած են:

«Ուղղագրութեան հարցը Ցեղասպանութեան հարցէն ետք մեզի համար ամէնէն կարեւոր հարցն է», հաստատեց Անանեան եւ դիտել տուաւ, որ այս հարցին լուծումը շատ բարդ է, յստակ պատնէշներ կան եւ քննարկումները տակաւին որեւէ եզրակացութիւններու կամ համապատասխան լուծումներու չեն հասած:

Անդրադառնալով Հայաստանի Գրողներու Միութեան կայքին կարեւորութեան Անանեան հաստատեց կարիքը այնպիսի յանձնախումբի մը, որ գրողներու արժանի գործերը կարելիութիւնը ունենայ ներկայացնելու այդ կայքին մէջ:

Պատասխանելով «Ազդակ»ի թղթակիցին «գործնական ըլլալու հասկացողութենէն մեկնած Գրողներու Համահայկական Բ. Համաժողովէն մինչեւ Գ. Համաժողով ի՞նչ իրագործումներ արձանագրուած են եւ ո՞ր ծրագիրները իրականացած են» հարցումին Անանեան ըսաւ. «Նախ ստեղծեցինք Հայաստանի Գրողներու Միութեան կայքը, ուր կը

նպատակադրենք համախմբել ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ Սփիւռքի գրողներուն գործերը: Իրականացուցինք Օտարագիր Հայ Գրողներու համաժողովը, որ իր բնոյթով առաջինն էր, ինչ որ բաւարար արդիւնք արձանագրեց»: Նաեւ այս առիթով ակնարկութիւն եղաւ Ծաղկաձորի մէջ Երիտասարդ Գրողներու Ա. Համագումարին:

Մամլոյ ասուլիսին ընթացքին Հայաստանի գրողներու միութեան նախագահութեան անդամները նաեւ տարբեր հարցերու վերաբերեալ հարցումներու ընդմէջէն ու լուսաբանութիւններ փոխանցելով արտայայտեցին իրենց տեսակէտներն ու առաջարկները, ինչպէս՝ երիտասարդութիւնը ներառելու գծով համացանցի գործածութեան կարեւորութիւնը, սփիւռքահայ գրողները միութեան յարժէք անդամ դարձնելու առաջարկը, ինչ որ նաեւ կը նպաստէ Հայ Գրողներու Համախմբումին, Հայաստանի Գրողներու Միութեան դիմագրաւած դժուարութիւնները, գրականութեան դասագիրքերու հարցը, Հայաստան-Սփիւռք հրատարակութիւններու փոխանակման մէջ ուղղագրութեան ստեղծած արգելքները, օտար հանրութեան հայ մշակոյթն ու գրականութիւնը ծանօթացնելու գրաւականը եւ հայ գրողներու միջեւ համագործակցութեան ոլորտը ընդարձակելու մարտահրաւէրին կարեւորութիւնը:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ  
ԱՅՆՃԱՐԻ ՄԷՁ

Երեքշաբթի, 11 Ապրիլ 2006, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Այնճար հասաւ Գրողներու Համահայկական Գ. Համաժողովին մասնակցող հայրենի եւ սփիւռքահայ գրողներու խումբը: Ս. Պօղոս եկեղեցոյ կեդրոնական հրապարակին վրայ խմբուած էին այնճարցիները՝ ողջունելու համար հայ



գրողները: Ներկայ էին գիւղի քաղաքապետ Սեպուհ Սգալեան, գիւղի երեք համայնքներու հոգեւոր պետերը, տեղական մարմինները, գիւղի երեք վարժարաններու աշակերտութիւնը, ուսուցիչները, միութեանց եւ հաստատութեանց ներկայացուցիչներ, որոնց միացաւ նաեւ Լիրանանի թեմի բարեջան Առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան:

Հայ գրողները արժանացան ժողովրդային ընդունելութեան: Աւանդական տնոլ գուռնայի ընկերակցութեամբ գրողները բարձրացան Մուսա Լեւան հերոսներուն նուիրուած յուշարձան-համալիր, ուր ծաղկեպսակներ գետեղեցին Մուսա Լեւան հերոսամարտի ղեկավարներէն Վեր. Տիգրան Անդրէասեանի եւ Մովսէս Տէր Գալուստեանի կիսանդրիներուն, ինչպէս նաեւ՝ հերոսներու նուիրուած յուշարձան-կոթողին առջեւ:

Ծաղկեպսակի գետեղման արարո-

ղութենէն ետք (որուն կ'ընկերանար Հ.Մ.Ը.Մ. Այնճարի փողերախումբէն պարմանուհիի մը յատուկ նուագը), գրողները բազմեցան բեմահարթին վրայ՝ իրենց առջեւ ունենալով գիւղի աշակերտութիւնն ու բոլոր ներկաները:

Յանուն Այնճարի հայութեան, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Ազգային «Յառաջ-Գ. Կիւլպէնկեան» երկրորդական վարժարանի տնօրէն Արմէն Թաշճեան: Ան ողջունեց հայ գրողներու Այնճար այցելութիւնը՝ գայն նկատելով Հաստան-Սփիւռք կամրջումի կարեւոր երեւոյթներէն մէկը: Տնօրէնը յայտնեց, որ Այնճար հարագատ ժառանգորդն է Մուսա Լեւան հերոսական անցեալին եւ հոս է, որ սնունդ առին մուսալեռցի գրողներ Եղուարդ Պոյաճեանն ու Պօղոս Մնայեանը, Սարգիս Զէյթիեանն ու Պետիկ Հերկեյեանը եւ ուրիշներ: Ան մաղթեց, որ սփիւռքահայոց սրտերուն մէջ ապրող Արարատը տեսանելի ըլլայ



ՊԱՇՏՏԱԿԱՆ ԴԻՍԱՌՈՐԻԹԻՒՆ ԱՅՆՃԱՐԻ ՍՈՒՏՔԻՆ

հայրենի իշխանութեանց կողմէ եւ որեւէ արուեստական պատուար չկարենայ իրարմէ բաժնել հայութեան տարբեր հատուածները:

Ողջոյնի խօսքէն ետք, յանուն Այնճար այցելող գրողներուն, խօսք առաւ բանաստեղծ Յովհաննէս Գրիգորեան, որ յայտնեց, որ իրենք զգացուած են ի տես հայ աշակերտութեան եւ հայադրոշմ այս գիւղին:

Ապա բանաստեղծ էտուարդ Մելիտոնեան, սրտի իր խօսքէն ետք, առանձին-առանձին ծանօթացուց ներկայ գրողները, որոնք դիմաւորուեցան բուն ծափահարութիւններով:

Գրողները ապա հետիտան ուղղուեցան դէպի «Ս. Զէյթեան» կեդրոն, ուր Եսայի Հաւաթեան ամփոփ գեկուցում մը ներկայացուց Այնճարի հիմնադրութեան մինչեւ այսօր: Կարճ դադարէ մը ետք, որուն ընթացքին գրողները իրենց տպաւորութիւնները արձանագրեցին յատուկ տոմարի մը մէջ եւ նուէր ստացան մուսա լեռցի - այնճարցի գրողներու գործերէն օրինակներ, ապա գրողներու խումբը ուղղուեցաւ ճաշարան, ուր, Այնճարի քաղաքապետութեան կողմէ սարքուած էր ճաշկերոյթ մը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ  
ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԷՅՏ

Չորեքշաբթի 12 Ապրիլ 2006-ի կէսօրին, գլխաւորութեամբ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Վահան Տէր Ղեւոնդեանի, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան այցելեց Լիբանանի Մշակոյթի նախարար Թարէք Մըթրիի: Հ.Գ.Մ. նախագահին կ'ընկերանար յատուկ պատուիրակութիւն մը, բաղկացած Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի ներկայացուցիչ Արամ Կարապետեանէ, Հ.Գ.Մ. քարտուղար բանաստեղծ Յովհաննէս Գրիգորեանէ, նախագահութեան անդամ գրականագէտ Ազատ

Եղիազարեանէ եւ Գրողներու Համահայկական Գ. Համաժողովի կազմակերպիչ յանձնախումբի անդամներ՝ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեէմէզեանէ եւ Սարգիս Կիրակոսեանէ:

Գրողներու Համահայկական Գ. Համաժողովի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքի շրջափակէն ներս գումարումը եղաւ պատեհ առիթ մը, որ Հ.Գ.Մ.ի նախագահը Թարէք Մըթրիի ներկայացմէ Լիբանան-Հայաստան մշակութային կապերու սերտացման նպատակով տարուած աշխատանքները եւ ապագայի ծրագիրները, որոնք արժանացան նախարար Մըթրիի գնահատանքին:

Առաջին հերթին, Լեւոն Անանիան փոխանցեց նախարարին, որ անցեալ աշնան, Երեւանի կեդրոնական փողոցներէն մէկուն մէջ տեղադրուեցաւ պրոնզեայ արձանը լիբանանցի նշանաւոր գրող Ժպրան Խալիլ Ժպրանի՝ իբրեւ պերճախօս արտայայտութիւն հայ եւ լիբանանեան գրաւոր սերտ կապերուն: Ապա յայտնեց, որ արդէն պատրաստութեան մէջ է Լիբանանի ժամանակակից արդի բանաստեղծութեան անթոլոգիան, որուն լոյս ընծայումը կը նախատեսուի յառաջիկայ աշնան: Շարունակելով ներկայացումը վերոյիշեալ ծրագիրներուն, Անանեան աւելցուց, որ Հայաստանի մօտ Լիբանանի դեսպան Կարրիէլ Ժըրարայի հետ արդէն քննարկած են 2007-ի աշնան, Երեւանի մէջ, հայ եւ լիբանանեան բարեկամութեան օրեր կազմակերպելու ծրագիրը, որ պիտի ընդգրկէ լիբանանեան ժամանակակից բանաստեղծութեան փառատօնը՝ մասնակցութեամբ լիբանանցի նշանաւոր բանաստեղծներու, կերպարուեստի հաւաքական ցուցահանդէսի եւ այլ ձեռնարկներու:

Առ այդ, առաջարկեց Պէյրութի հրապարակներէն մէկուն վրայ գետեղել Արեւելքի մշակոյթին հետ սերտօրէն առնչուած տաղանդաւոր բանաստեղծ



ՆԱԽԱՐԱՐ ՍԸԹՐԻԻ ԴԵՏ, ԳԱՆԴԻՊՈՒՄԵՆ ԵՏՔ

Աւետիք Իսահակեանի կիսանդրին, արաբերէնով հրատարակել հայ արդի բանաստեղծութիւնը ներկայացնող ժողովածու մը, ինչպէս նաեւ Պէյրութի մէջ կազմակերպել հայ բանաստեղծութեան նոյնանման օրեր եւ հայ ժամանակակից գեղանկարչութեան հաւաքական ցուցահանդէս մը:

Ջերմօրէն արձագանգելով Անանեանի մօտիկ ապագայի ծրագիրներուն եւ առաջարկներուն, նախարար Մըթրի խոստացաւ ոչ մէկ ճիգ խնայել, որպէսզի օգտակար եւ շահեկան այս հանդիպումները յաջողութեամբ պսակուին եւ առաւել եւս ամրապնդել Լիբանան-Հայաստան մշակութային սերտ կապերը: Առ այդ, ան խոստացաւ նամակ մը յղել Պէյրութի քաղաքապետութեան՝ ճշգրիտ համար այն վայրը, ուր պէտք է տեղադրուի հայ մեծ բանաստեղծ Իսահակեանի արձանը:

Աւելի քան կէս ժամ տեւած մտերմիկ այս հանդիպումը գեղեցիկ առիթ մը եղաւ, որպէսզի նախարար Մըթրի եւ այցելուները ծանօթանան երկու երկիրներու մշակութային գործունէութեան բնագաւառներուն, այս ուղղութեամբ

սերտ գործակցութիւն մշակելու նպատակով:

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ՍԵՂԱՆԱԿԻՑ՝  
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հինգշաբթի 13 Ապրիլ 2006-ի կէսօրին, Վեհափառ Հայրապետը իր մօտ ճաշի հրաւիրեց Հայաստանէն Լիբանան ժամանած 56 գրողները ու մտաւորականները, որոնք անցնող օրերու ընթացքին մասնակցած էին գրողներու համահայկական Գ. համաժողովին Անթիլիասի Մայրավանքին մէջ:

Հայաստան վերադառնալէ առաջ տեղի ունեցած այս ճաշկերոյթի ընթացքին Վեհափառ Հայրապետը մտերմիկ գրոյց մը ունեցաւ Հայաստանի մտաւորականներուն հետ: Նորին Սրբութիւնը կարեւորութեամբ շեշտեց Հայաստան-Սփիւռք գործակցութեան հրամայական անհրաժեշտութիւնը:

«Հակառակ գոյութիւն ունեցող երբեմն միակողմանի մօտեցումներուն, սխալ դատումներուն, համահայկական մտածողութիւնը պէտք է դառնայ տի-

րապետող: Նման հայեցակետով ու հեռանկարով տեղի ունեցող աշխատանք մը, նախանձնուրուխտի մը, իրագործում մը մեծապես պիտի նպաստէ Հայաստան-

Ափիւոմ գործակցութեան ծաւալման ու առաւել ծաղկման»: *Խօսելով այս ծիրէն ներս մտաւորականներու դերին, Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ.*

«Մտաւորականը ինծի համար միայն գիրք գրողը չէ, գիրք սպողը եւ կարդացողը չէ՛, այլ՝ այս բոլորէն անդին, ան կարեւոր դերակատար մըն է մեր հասարակական կեանքէն ներս, ըսելիք ու ըմբելիք ունեցող դերակատար մը, շիտակ տեսողութիւն ու դատողութիւն ունեցող դերակատար մը, մեր ազգային ներքին միասնականութիւնը ամրապնդելու ուղղութեամբ աշխատող անձ մը: Այլեւս մեր կեանքէն պէտք է հեռացնենք այնպիսի մտածումներ, մտեցումներ, տեսակէտներ, որոնք բաժանարար են, խանգարիչ են եւ երբեք չեն նպաստեր մեր ժողովուրդի միասնականութեան ու յառաջդիմութեան»:

*Անդրադառնալով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մշակութա-*

*յին դերակատարութեան, Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ .*

«Սովորական հասկացողութեամբ, այլ խօսքով՝ սոսկ գիրք սպելու կամ մշակութային ձեռնարկներ կազմակերպելու ընթացիկ ըմբռնումով պէտք չէ մտնել այս Ս. Աթոռին մշակութային առաքելութեան: Մշակոյթը մեր եկեղեցւոյ կուրծքէն հետ միախառնուած է, անոր առաքելութեան ամենէն կենսական տարածքներէն մէկն է: Այս ինքնամանաշողութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մեր մշակութային, հոգեմտաւոր արժեքներուն առաւել հարստացման ու տարածման լծուած է եւ մենք այս նախանձախնդրութենէն մեկնելով աւելի ծրագրուած կերպով պիտի գործակցինք Հայաստանի մեր մտաւորականներուն ու գրողներուն հետ»:

**ԱՅՑՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԴՊՐԵՎԱՆՔ**

Երկուշաբթի, 10 Ապրիլ 2006ի կէսօրին այցելեցին Դպրեվանք: Շուրջ 50 գրողներ՝ գլխավորութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեանի, այցելեցին Պիքֆայա: Անոնց կ'ընկերանային կազմակերպիչ յանձնախումբի անդամներ՝ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեքմէզեան եւ Ժիրայր Դանիէլեան:

Դպրեվանքի սեղանատան մէջ սարքուած կէսօրուան ճաշի ընթացքին Դպրեվանքի երգչախումբը շարք մը կրօ-

նական ու ազգասիրական երգեր մատուցեց Հայրենի Հիւրերուն: Բարի գալուտեան խօսքով Բարշ. Ռազմիկ Սրկ. Եմիչեան ողջունեց ներկաները՝ յատկապէս խօսելով անոնց դպրեվանքի անցեալի եւ ներկայի պատմութեան, ինչպէս նաեւ Հայ ժողովուրդի կեանքին մէջ անոր անգուղական դերակատարութեան մասին: Ապա Հիւրերը շրջագայեցան Դպրեվանքի գանազան մասերը:

Այցելութեան աւարտին Հայրենի գրողները այցելեցին Նահատակաց յուշարձան եւ Ս. Աստուածածին մատուռ:

## ՀԱՅ ԳՐՈՂԸ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՋԱՀԱԿԻՐ

Սույն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի պատգամին, ուղղուած Գրողներու Համահայկական Գ. Համագումարին, որ տեղի ունեցաւ Անթիլիասի Մայրավանքին մէջ, 6-էն 9 Ապրիլ 2006-ին:

Գրողներու Համահայկական Երրորդ Համագումարի բացման սա հանդիսաւոր պահուն, Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունեմ Հայաստանի Հանրապետութեան Վսեմաշուք Նախագահ Տիար Ռոպէր Քոչարեանը: Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունեմ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական սիրով կ'ողջունեմ ձեզ՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հաւատաւոր աշակերտներ:

Արդարեւ, որքա՛ն գօտեպնդիչ է սա երեւոյթը մեր ազգային կեանքէն ներս, երբ համահայկականը, հաւաքականը, ընդհանրականը կը դառնայ մեր մտածումներուն, մեր մտահոգութիւններուն, մեր ծրագրումներուն, մեր կեանքի՛ն առանցքը, մղիչ ոյժը եւ առաջնահերթութիւնը: Որքան մենք շեշտը դնենք համահայկականին վրայ, այնքան կը զօրանան մեր ազգն ու հայրենիքը:

Եկած էք դուք, հայ գիրի ու գրականութեան յանձնառու առաքեալներ, մայր հայրենիքէն ու հերոսական Ղարաբաղէն. եկած էք իր հայութիւնը հաւատարմօրէն ապրող լայնատարած Սփիւռքի բոլոր՝ անկիւններէն: Եկած էք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքը, հայ գրերու գիւտին 1600-ամեակի շունչով ու ոգիով, խորհուրդով ու պատգամով օծուն այս օրերուն՝ հայ գրողի կոչումի խոր գիտակցութեամբ ու սրբազան նախանձախնդրութեամբ հաւաքական ֆննութեան ու արժեւորումի ենթարկելու արդի հայ գրականութիւնը եւ նոր աշխարհայեացքներով ու մարտահրաւերներով աւելի՛ հարստացնելու գայն:

\*

\* \*

ԱՆԹԻԼԻԱՍԸ՝ ՀԱԻԱՏՔԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՈՒ ԱԶԳԱՇԷՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Հոգեւոր այս կեդրոնը, սիրելի՛ գրողներ, ձեր բոլորին, մեր ժողովուրդի բոլոր՝ գաւակներուն տունն է, ուր, բանաստեղծ ուսուցչիս, Մ. Իշխանին բառերով՝

*«... կը մտնէ ամէն հայ իբրեւ տանտէր հարագատ,  
կը ստանայ սէր ու սնունդ, սրտի հպարտ ցնծութիւն,  
եւ բորեանէն ու բուժէն հոն կը մնայ միշտ ազատ...»:*

Հայրապետական այս Սուրբ Աթոռը դարձաւ – պատմութիւնը վկայ – յատկապէս ցեղասպանութենէն յետոյ, Սփիւռքի օտար ու օտարացնող քամքանքներուն վրայ մեր ժողովուրդին զաւակները համախմբող, անոնց հոգեմտաւոր սնունդ հայթայթող, զանոնք բարոյական արժեքներով ու ազգային երազներով սնուցող, եւ կեանքի ընկուզող ալիքներէն ու ամեհի փոթորիկներէն պաշտպանող հաւատքի տունը մեր ազգին: Այս գիտակից յանձնառութեամբ Հայկական Կիլիկիոյ այս Հոգեւոր Տունը մեր ժողովուրդը առաջնորդեց մահէն դէպի կեանք, իսպէն դէպի յարութիւն, իր հաւատքի առաքելութեամբ վկայելով անմահանուն Թէֆեանի բաներով՝

*«Յարութեան շունչն է ահա, ջարդակոտոր ա՛զգոյ իմ,  
Հորիզոնէն ծայր տուած՝ որ կը փչէ մարմնոյդ վրայ...»*

«Յարութեան շունչ»-ին կենդանի աղբիւրը եւ յանձնառու կենսագործիչը դարձաւ իր ժողովուրդին հետ Տէր Զօրէն անցած եւ վերանորոգ կեանքով ու յոյսով հզօրացած այս Սուրբ Աթոռը:

Անթիլիասի առաքելութեան առանցքը եղաւ Քրիստոսի Սուրբ Աւետարանը՝ իր աստուածային նշարտութիւններով, հոգեւոր արժեքներով ու բարոյական սկզբունքներով:

Այդ առաքելութեան մէջ հայ մշակոյթը միշտ մնաց քառապայթող ներկայութիւն՝ իր բոլոր տարածքներով ու արտայայտութիւններով:

Այդ առաքելութեան մէջ հայ դպրոցը իր կեդրոնական տեղը ունեցաւ՝ իր մարդակերտումի ու հայակերտումի եզակի դերով:

Տակաւին, այդ առաքելութեան կենսական բնագաւառներէն մէկը դարձաւ մեր ժողովուրդի բոնաբարուած իրաւունքներու վերատիրացման պայքարը:

Այլ խօսքով, Կաթողիկոսական այս Աթոռին առաքելութեան դաշտը էապէս ու գերազանցօրէն հանդիսացաւ մեր ժողովուրդը՝ իր տագնապներով ու կարիքներով, իր մարտնչումներով ու երազներով, իր համայնակա՛ն կեանքով:

Նո՛յնն է այսօր սրբազան առաքելութիւնը Հայրապետական դարաւոր այս Աթոռին: Ուրիշ բան չի՛ կրնար ըլլալ: Եկեղեցին քար ու կառոյց չէ. եկեղեցին ժողովուրդն է: Եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան մէջ անհրաժեշտ է որ ժողովուրդը արտացոլայ իր կեանքի բոլոր երեսներով ու բնագաւառներով, իր ո՛ղջ լինելութեամբ: Մեր եկեղեցին ազգային չէ միայն իր նկարագրով ու ժողովրդազար կառոյցով: Ազգային է մեր եկեղեցին՝ մանաւանդ իր հէնքով ու ոգիով, իր ազգակերտումի առաքելութեամբ եւ ազգանուէր ծառայութեամբ: Եկեղեցւոյ ինքնութիւնը իր հաւատքի առաքելութեան մէջ է. իսկ եկեղեցւոյ հզօրութիւնը՝ իր ծառայութեան մէջ: Այս ինքնահանաչումէն մղուած, եւ ազգին ու հայրենիքին ծառայելու նպատակաւսաց տեսիլքով առաջնորդուած, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը վերանորոգ հաւատքով կը շարունակէ իր բազմատարած առաքելութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս:

\*  
\* \*

### ՀԱՅ ԳՐՈՂ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄԻ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՑ

Գրողներու Համահայկական այս Երրորդ Համագումարին ընդհանուր թեման է՝ «Հայ գրականութիւնը համաշխարհայնացումի մարտահրաւերներուն դիմաց»:

Տեսական, վերացական կամ ակադեմական բնոյթի խնդիրներ քննարկելու հրաւեր մը չէ այս թեման. այլ՝ մեր ամէնօրեայ կեանքին հետ սերտ աղերս ունեցող հիմնահարցեր դիմագրաւելու մարտահրաւեր մը: Ես ա՛յս հայեցակէտով կը դիտեմ համագումարին աշխատանքը ու նպատակը:

Արդարեւ, ոե՛ւէ գրականութիւն ներքին լնացումի կը դատապարտուի՝ երբ անոր պակսի հոգեմտաւոր ստեղծագործական կիրքը ու ցիւրը. երբ ան ընկերութեան կեանքը փոթորկող տագնապներուն ու բեւեռացումներուն դիմաց կեցուածք մշտելու եւ առաջնորդողի դերը ստանձնելու քաջութիւնը չ'ունենայ. երբ ան կարող չէ «Ժամանակին նշանները» (Մտ 16.3) կարդալու ու նոր հորիզոններուն բացուելու: Հետեւաբար, իմ սպասումս է որ գոյութեանական հայեացքով, իրապաշտ մօտեցումով ու քննական ոգիով դիտէ արդի հայ գրականութիւնը համաշխարհայնացումի մարտահրաւերներուն դիմաց:

Մարդկային ներկայ կեանքը իր բոլոր երեսներով ու արտայայտութիւններով իր մէջ պարփակող անսովոր երեւոյթ մըն է համաշխարհայնացումը: Ումնք գայն կը նկատեն համամարդկային նոր գաղափարախօսութիւն. ուրիշներ՝ տնտեսա-ֆաղափական դրութիւն. տակաւին ուրիշներ գայն կը բնորոշեն որպէս ընկերամշակութային արժէքներու նոր համակարգ կամ տեղեկատուական ֆարտարագիտութեան աննախընթաց զարգացման մէկ շօշափելի արտայայտութիւնը: Իմ տեսակէտով այս բոլորն է համաշխարհայնացումը միաժամանակ. եւ յիշեալ որակումներէն անդին, ան իւրայատուկ մտածելակերպ, գործելակերպ ու կենցաղակերպ է՝ իր ինքնուրոյն ոգով ու գաղափարաբանութեամբ, լեզուով ու մշակոյթով:

Եթէ տակաւին երէկ, Շահնուրի բառերով, կը նահանջէին արժէք ու ինքնութիւն աշխարհաֆաղաֆացի դարձած հայու կեանքէն ներս, այսօր անոնք ֆանդումի անմիջական վտանգին են ենթակայ համաշխարհայնացումի սարսափազդու ալիքներուն դիմաց թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ: Մեր "փոքր ածու"ն ո՛չ կրնայ հակադրուիլ եւ ո՛չ ալ համակերպիլ արժէք ու արժեշափ շրջանցող, ինքնութիւն ու յարաբերութիւն այլափոխող, ընտանիք ու համայնք ֆանդող համաշխարհայնացումին: Մեր առջեւ բացուած ամէնէն ապահով ֆամբան *երկիսունութիւնն* է համաշխարհայնացումին հետ՝ անկէ առնելու համար ինչ որ դրական է, ինչպէս նաեւ հեռու պահելու, որքան որ հնարաւոր է, ինչ որ վնասաբեր է մեր հոգեմտաւոր արժէքներուն, մեր ըմբռնումներուն, մեր ինքնութեան:

Այս երկիսունութեան մէջ վնասական դեր ունի մեր ժողովուրդի հոգեկան փոթորկումներուն, սրտի զարկերուն, մտքի յղացքներուն, կեանքի երգին ու վերքին հարագատ թարգմանը եղող ընդհանրապէս մշակոյթը եւ մասնաւորաբար գ-

րականութիւնը: Այս որոշակի դերը հայ գրականութեան եւ կը պատկերացնեմ հետեւեալ կերպով:--

Սոաշին, մեր գրականութիւնը անցեալին նայելէ աւելի պէտք է տեսիլք ունենայ ապագայի՛ն նայելու ու նոր մարտահրաւերները դիմագրաւելու:

Երկրորդ, մեր գրականութիւնը ինքնակեդրոն իր մօտեցումէն պէտք է ձերբազատուի ու ֆաշութիւնը ունենայ իր շրջապատին հետ շինիչ փոխ-յարաբերութիւն ստեղծելու:

Երրորդ, առանց հայկականէն հեռանալու, համամարդկայինին աւելի՛ մօտենալու ինքնավստահութեամբ պէտք է կենսաւորուի հայ գրականութիւնը:

Սրդարեւ, դէպի ուրիշը, դէպի շրջապատը ու համամարդկայինը բացուելու ֆիզը մնայուն ձգտում է եղած մեր գրականութեան մէջ, մատենագրութենէն սկսեալ մինչեւ միջին դարեր, վերածնունդէն սկսեալ մինչեւ արդի շրջանը: Համաշխարհայնացած ներկայ աշխարհին մէջ սակայն, անհրաժեշտ է որ հայ գրականութիւնը աւելի՛ մօտէն ու հետեւողական կերպով ֆայլ պահէ աշխարհի յարափոփոխ պայմաններուն ու հետզհետէ բազմազան մարտահրաւերներուն հետ: Նման ոգիով ու մօտեցումով մշակուած գրականութիւն մը վստահաբար փոխադարձաբար հարստացուցիչ երկխօսութիւն մը պիտի յառաջացնէ հայուն եւ իր անմիջական դրացին դարձած օտարին միջեւ: Ես փորձառաբար կը հաւատամ, որ ա՛յս գիտակցութեամբ ու հեռանկարով տեղի ունեցող երկխօսութիւն մը հայը օտարին օտարացնող մամբան պիտի չառաջնորդէ. այլ, ընդհակառակը, հայուն մէջ հայը աւելի՛ պիտի բիրեղացնէ՝ միաժամանակ հայը մղելով մանչնալու եւ յարգելու օտարը, ինչպէս նաեւ իր տեղը ու դերը յստակօրէն տեսնելու ու արժեւորելու ազգերու համանուագին մէջ:

Վստահ եմ որ այս հարցերը լայնօրէն պիտի քննարկուին համագումարի ընթացքին:

\*

\* \*

### ՀԱՅ ԳՐՈՂԸ՝ ՎԿԱՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆԸ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Դուք, սիրելի՛ գրողներ, Համայնայնական Երրորդ Համագումարը կը կայացնէք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհարանին մէջ: Սովորական վայր մը չէ այս սրահը. կրօնական ու ազգային բարձրագոյն ժողովներ կը գումարուին հոս: Զեր ներկայութիւնը այս նուիրական յարկին տակ, պերճախօս վկայութիւն մըն է ձեր անձերուն ու առաքելութեան նկատմամբ մեր եկեղեցւոյ եւ անձնապէս իմ ունեցած բարձր գնահատանքին ու մեծ ակնկալութեան:

Դուք սովորական մարդեր չէք՝ սովորական գործի լծուած: Սովորական մարդիկ իրաւունք չունի՛ն "գրող" անունին արժանանալու. եւ գրողները իրենք իրաւունք չունին սովորական մարդ մնալու: Ան որ ինքզինք ընծայած է իր անձէն վեր ու անդին նուիրական ու ընդհանրական նպատակի մը, ան առաքեալ է՝ բառին



վաւերական իմաստով: Առաջնա՛լ է, հետեւաբար, գրողը՝ առաջնա՛լ՝ իր էութեամբ ու կոչումով: Ու ինձի համար գրողը ամէ՛ն բանէ առաջ ու ամէն բանէ վեր *նշմարտութեա՛ն* առաջնալն է, նշմարտութեան վկան, նշմարտութեան ֆարոգիչը: Ի՛նչ սրբազան բայց դժուարին առաջելութեան է կոչուած գրողը...:

Եթէ այսօր Պիղատոսի նման հարց տրուի թէ՛ «ի՞նչ է ճշմարտութիւնը» (Յովհ. 18: 38), ես պիտի ըսեմ՝

– Ճշմարտութիւնը հայ գրողին համար *իրա՛ւն* է՝ կեղծին դիմաց, որ սկսած է ահեղօրէն կրծել մեր կեանքը:

– Ճշմարտութիւնը *վաւերակա՛նն* է՝ մակերեսայինին դիմաց, որ իր տիրապետութիւնը սկսած է հաստատել մեր կեանքին մէջ, քիչ մը ամէ՛ն տեղ:

– Ճշմարտութիւնը *գեղեցի՛կն* է՝ տգեղին դիմաց, որ շլացուցիչ գոյներուն ետին սկսած է մթագնել մեր կեանքի երկնակամարը:

– Ճշմարտութիւնը *բա՛րին* է՝ չարին դիմաց, որ իր խայտաբղետ ձեւերով սկսած է մոլորեցնել մեր մտաւորականները, մեր հոգեւորականները, մեր պետական պատասխանատուները:

– Ճշմարտութիւնը *ոգի՛ն* է՝ նիւթին դիմաց, որ սկսած է արժեչափի վերածուիլ մեր կեանքի բոլո՛ր մարգերէն ներս:

– Ճշմարտութիւնը *յաւիտենակա՛նն* է՝ ժամանակաւորին դիմաց, որ հոգեպէս ու բարոյապէս ֆանդիչ վարժագիծով սկսած է մեր կեանքի նաւը առաջնորդել անորոշ ուղղութեամբ:

Այլ խօսքով, ճշմարտութիւնը հայ գրողին համար, հայո՛ւն համար արժէքներու այն համակարգն է, որ խարսխուած է Աստուածաշնչական սկզբունքներուն վրայ, մեր ազգին հոգեմտաւոր ժառանգութեան վրայ, համամարդկային արժէքներու վրայ: Ճշմարտութեան կենսագործման առաջնալը ու անոր պաշտպանութեան ֆաջ զինուորը ըլլալու կոչուած է հայ գրողը ամէ՛ն տեղ ու բոլո՛ր պայմաններուն մէջ:

Ճշմարտութեան դիմաց նահանջելը, նշմարտութիւնը ուրանալը համագօր է դասալիւնութեան. իսկ նշմարտութիւնը պաշտպանելը հերոսութիւն է:

Հերոս էր Պղատոն, երբ ըսաւ թէ Սոկրատը կը սիրեմ, բայց նշմարտութիւնը աւելի՛ կը սիրեմ:

Հերոս էր Վարդան Մամիկոնեան, երբ մերժեց Յագկերտի հաւատուրացութեան սպանալիքը:

Հերոս էր Գերմանացի մեծ աստուածաբան Պէնհոֆըր, երբ բանտային ահաւոր տանջանքներուն մէջ իսկ "ո՛չ" ըսաւ Հիթլերին:

Լեցուն է ազգերու պատմութիւնը յայտնի թէ անյայտ հերոսներով, որոնք իրենց գրիչով թէ խօսքով, իրենց կեանքով թէ արիւնով "ո՛չ" ըսին նշմարտութիւնը եղծելու կամ մերժելու փորձերուն ու փորձիչներուն, եւ ամբօրէն կառչած մնացին նշմարտութեան:

Պատմութիւնը հերոսներով կը կերտուի: Կեղծերը, վարձկանները, դասալիւնները կը փոշիանան պատմութեան գլանին տակ:

Այս օրերուն հշմարտութիւնը ուրիշ տեղեր կը փնտոնենք, դժբախտաբար: Կեղծիքը, շահը, ժամանակաւորը, անձը հշմարտութեան ենք վերածած: Յանախ ձեւը ու ձեւականը կը շփոթենք խորքին ու որակին հետ: Հշմարտութիւնը երբեմն կը նոյնացնենք հանգամանքին հետ: Հշմարտութիւնը այլափոխող մօտեցումներու ու արժեքափերու գերին ենք դարձած: Հշմարտութեան փնտոտուիքն մէջ յանախ երկդիմի չափեր ու չափանիշեր կը գործածենք: Իսկ հշմարտութեան պաշտպանութեան մէջ կը նահանջենք՝ շահադիտական մտահոգութիւններէ մեկնած...:

Եկե՛ք, լսենք խօսքը Սաղմոսերգուին.–

*"Հշմարտութեան նամբան ընտրեցի" (119.30), Տէր. "տրվեցուր ինձի եւ առաջնորդէ որ անխախտ մնամ հշմարտութեանդ մէջ" (25.5): Տէր, "թոյլ մի՛ տար որ հշմարտութիւնը խօսելէ դադրիմ" (119.43). որովհետեւ "Հշմարտութիւնը իրքեւ գրահ պիտի պաշտպանէ" (91.4) գիս:*

Սա իւրաքանչիւր մտաւորականին, գրողին ու դեկավարին ամենօրեայ աղօթքը պէտք է դառնայ՝

Որպէսզի ան կարենայ քաջաբար վկայել հշմարտութեան մասին, ամէ՛ն տեղ ու ամէ՛ն վայրկեան:

Որպէսզի ան կարենայ Նագովրեցի Յիսուսին նման մաքրել մեր ազգին ու հայրենիքին տաճարը նոր օրերու փերեզակներէ:

Որպէսզի ան կարենայ անվախօրէն խարագանել պետական պատասխանատուները, երբ անոնք կը կեղեքեն ժողովուրդը՝ փոխանակ անոր շահերը պաշտպանելու:

Որպէսզի ան կարենայ զգաստութեան հրաւիրել հոգեւորականները ու ազգային դեկավարները, երբ անոնք փառքի ու մամոնային կը ծառայեն՝ փոխանակ ժողովուրդի՛ն ծառայելու:

Իրաւ գրականութիւնը հշմարտութեան արձագանգն է, հշմարտութեան հայելին է, Պարոյր Սեւակի բառերով՝ հշմարտութեան "անլուծելի գանգակատուն"ն է: Իրաւ գրականութիւնը կեանքի երկունքներէն ու մաքրումներէն, տագնապներէն ու երազներէն իր հարագատ բոլորումը կ'առնէ: Հետեւաբար, ան հշմարտին՝ ո՛չ կեղծին, արժէքին՝ ո՛չ անձին, յաւիտենականին՝ ո՛չ ժամանակաւորին, ոգիին՝ ո՛չ նիւթին հաւատաւոր ինկարկուն է: "Ռէնտէնցաւոր" գրականութեան ժամանակը վաղոր՛ց անցած է: "Տուրք տալը" ոեւէ իշխանութեան, կառոյցի կամ անձի, գրողին համար հետացում է իր հշմարտ էութենէն, իր հարագատ կոչումէն:

Հշմարտութիւնը, արժէքը, յաւիտենականը վաւերականօրէն արտայայտելու համար գրականութիւնը կարիքը չունի էջերու. բառի մը, պատկերի մը մէջ խտացած հշմարտութիւնը աւելի կենդանի իրաւութեամբ կը ցնոգայթէ ու ջերմութեամբ կը փոխանցուի, քան հագարաւոր տողերու մէջ բանաձեւուած գեղեցիկ մտածումներ: Այսպէս, Նարեկացիին "նենների"ը, Շնորհալիին "առաւօտ լուսոյ"ն, Խրիմեանի "երկաթէ շերեփ"ը, Վարուժանի "վարդահեղեղ արշալոյս"ը սոսկ բառեր չեն, այլ դարերէն եկող ու դարերուն գացող անստուեր հշմարտութեան անլուծելի դոզանջներ:

Ճշմարտության վկան,  
 Ճշմարտության պաշտպանը,  
 Ճշմարտության արձագանգը:

Այսպէ՛ս պէտք է ըլլայ իրաւ գրականութիւնը՝ իր ոգիով ու խորքով, իր մօտեցումով ու նպատակով:

Այսպէ՛ս պէտք է ըլլայ կոչումի գիտակցութեամբ մտածող ու ստեղծագործող գրողը իր կեանքով ու գրականութեամբ:

Ահա այն ատեն միայն գրողը կը դառնայ հերոս եւ իր գրականութիւնը հերոսի հաւատքով կերտուած յաւերժախօս վկայութիւն՝ գեղեցիկին, արժէքին, բարիին, իրաւին, յաւիտենականին, այլ խօսքով՝ նշմարտութեա՛ն:

Որակով հարստացած ու նշմարտութեամբ հգօրացած, հայկականով ամրացած ու համամարդկայինով գեղեցկացած հայ գրականութիւնը թող աւելի՛ ծաւալի ու ծաղկի եւ յաւերժանայ, իր հետ յաւերժացնելով հայր՝ իր հաւատքով, իր մշակոյթով, իր ինքնութեամբ, իր երազներով, իր հայրենիքով:

Յարգա՛նք Թարգմանչաց Սերունդի հաւատքին ու տեսիլքին հաւատարմութեամբ ստեղծագործած բոլոր դարերու մեր մտքի հսկաներուն:

Պատի՛ւ նո՛յն ոգիով ու յանձնառութեամբ պայքարող ու ստեղծագործող հայ գիրի ու գրականութեան նոր ժամանակներու մշակներուն, նշմարտութեան ջահակիրներուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
 ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



## Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

### ԳՐՈՂՆԵՐՈՒԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ Գ. ՀԱՄԱԺՈՂՈՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻԻՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՈՒՄԻ ՄԱՐՏԱՀՐԱԲԷՐՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՅ

6-9 Ապրիլ 2006

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍ, ԼԻԲԱՆԱՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքին մէջ, հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, նախաձեռնութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան, Վեհարանի Դահլիճին մէջ գումարուեցաւ Գրողներու Համահայկական Գ. Համաժողովը, մասնակցութեամբ շուրջ հարիւր երեսուն գրողներու, Հայաստանէն եւ Սփիւռքի տարբեր երկիրներէն:

*Ողջոյնի խօսք յղած էին Հայաստանի Հանրապետութեան նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ազգային Ժողովի նախագահ Տիար Արթուր Պաղտասարեան, Վարչապետ Տիար Անդրանիկ Մարգարեան, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկի Հայկական Բաժնի Տնօրէն Դոկտ. Զաւէն Եկաւեան: Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեանի բացման խօսքէն ետք, ելոյթ ունեցաւ երիցագոյն գրողը՝ Ժազ Ս. Յակոբեան: Բացման հանդիսաւոր նիստին ներկայ էին յարանուանական, քաղաքական, ազգային, միութենական ներկայացուցիչներ:*

*Վեհափառ Հայրապետը փոխանցեց իր տեսիլք բացող պատգամը: Շեշտեց համահայկականը - Հայաստան, Արցախ,*

*Սփիւռք որ կը զօրացնէ ազգն ու հայրենիքը: Ընդգծեց Կիլիկեան Հայրապետական Ս. Աթոռին ազգաշէն դերը, մասնաւորաբար ցեղասպանութենէն ետք, համախմբելով հայ ժողովուրդի գաւակները, ջամբելով հոգեմտաւոր սնունդ, բարոյական արժէքներ եւ ազգային երագներ, զանոնք առաջնորդելով մահէն կեանք, քանի որ Անթիլիասի առաքելութեան առանցքին գտնուած են հայ մշակոյթը, հայ դպրոցը, բունբարուած իրաւունքներու վերատիրացման պայքարը: Կան համաշխարհայնացման սպառնալիքները՝ Հայաստան եւ Սփիւռք: Վեհափառ Հայրապետը նշեց. «...ինձի համար գրողը ամէն բանէ առաջ ու ամէն բանէ վեր ճշմարտութեան առաքելն է»: Ըսաւ որ համաշխարհայնացումը հզօր է եւ մեր առջեւ բացուող*

ամենն ապահով ճամբան դրական երկխոսուծիւնն է եւ հոն կարեւոր դեր վիճակուած է մեր մշակոյթին եւ գրականութեան, բացուելով դէպի ապագայ, օգտակար փոխ-յարարեբրուծիւն ունենալու համար շրջապատին հետ եւ ինքնավստահութեամբ մօտենալու համամարդկային արժէքներու: Իր պատգամը եղաւ. «Իրաւ գրականութիւնը ճշմարտութեան արձագանգն է: Որակով հարստացած ու ճշմարտութեամբ հզօրացած, հայկականով ամրացած ու համամարդկայինով գեղեցկացած հայ գրականութիւնը թող աւելի՛ ծաւալի ու ծաղկի եւ յաւերժանայ, իր հետ յաւերժացնելով հայը՝ իր հաւատքով, իր մշակոյթով, իր ինքնութեամբ, իր երազներով եւ իր հայրենիքով»:

Համաժողովը, յաջորդական տասը նիստերով, քննեց Հայ Գրականութիւնը համաշխարհայնացումի մարտահրաւերներու դիմաց ընդարձակ նիւթին առընչուող բազմապիսի հարցեր: Զեկուցաբերները իրենց կարելին բոլորէին հակիրճ կերպով հարցադրումներ կատարելու, դիւրացնելով վիճարկումները:

ա. Համաշխարհայնացումը եւ արդի հայ գրականութիւնը,

բ. Նոր կենսափորձ եւ նոր գրականութիւն,

գ. Ինքնութեան տագնապը սփիւռ-քահայ գրականութեան մէջ,

դ. Սփիւռքահայ գրականութիւնը՝ արդի Հայաստանի գրականագիտութեան գնահատմամբ,

ե. Արդի մտածողութիւնը սփիւռքահայ գրականութեան մէջ,

զ. Հայկական ցեղասպանութիւնը եւ արդի հայ գրականութիւնը,

է. Հայ գրականութեան միջազգայնացումը,

ը. Արդի մանկապատենական գրա-

կանութիւնը եւ ազգային դպրոցը:

Համաշխարհայնացման հարցերէն մեկնելով, ժողովականները առաջարկներ ներկայացուցին, որոնք կը ներկայացուին նաեւ Գրողներու Համահայկական Դ. Համաժողովին:

- Գրողներու միջեւ - անհատ եւ միութիւններ - կապերը սերտացնել:

- Իւրաքանչիւր Համաժողովի նախօրեակին կազմել անցնող երկամեակի նոր գործերէն առնուած ծաղկաքաղ մը:

- Երթալ դէպի ժողովուրդը, յառաջացնելու համար ընթերցող զանգուած:

- Յառաջացնել հիմնադրամ՝ հրատարակութիւններու, նաեւ համացանցի վրայ ներկայացնելու համար հայ գրականութիւնը:

- Աւելի մեծ հնարաւորութիւն ընծայել երիտասարդ գրողներուն՝ նման համաժողովներու մասնակցելու:

- Միջազգային հանրութեան ներկայացնելու համար հայ գրողներու գործերը, ընտրութեան համար կազմել ընթերցման եւ ընտրութեան յատուկ յանձնախումբեր, թարգմանութենէն ետք եւս երկը կարդալ տարբեր յանձնախումբի մէջ, հատորը հրատարակ հանելէ առաջ:

- Մտահոգութիւն յայտնուեցաւ միասնական ուղղագրութեան շուրջ, ինչպէս նաեւ՝ հայերէն լեզուի մաքրութեան:

Արտայայտուեցան այլ բազմաթիւ մտահոգութիւններ, զորս յաջորդ Համաժողովի կազմակերպիչները կրնան օրակարգի վրայ արձանագրել:

Անկախաբար կատարուած քննարկումներէն, ժողովականներու կողմէ եղան նաեւ հայ գրողը մտահոգող այլ առաջարկներ:

Համաժողովը չէր կրնար սպառել իր առջեւ դրուած բարդ հարցերը: Բայց գիտակցեցաւ որ ազգային-քաղաքական եւ գոյատեւման պայքարէն չանջատուիլ հայ գրականութիւնը եւ ան պար-

տի ունենալ առանցքային դեր, քանի որ մշակույթը քաղաքականութիւն է: Մասնակիցները իրաւութեամբ միասնաբար մտածեցին, շեշտեցին որակի անհրաժեշտութիւնը՝ ներազգային մակարդակի վրայ եւ երբ կը ներկայանանք միջազգային հրապարակ, որպէսզի գրականութիւնը հարստանայ երթալով դէպի աշխարհը, եւ զայն միջազգայնացնելով ծանօթացնել համաշխարհային ընտանիքին, ինչ որ երկխօսութեան համար պայման է:

Համաժողովը առիթ մը եղաւ որ աշխարհասփիւռ հայ գրողները զիրար ճանչնան եւ հաղորդ դառնան մէկգմէ-

կու դիմագրաւած խնդիրներուն եւ տազնապներուն, որ կարելի կը դարձնէ միութիւնը՝ զանազանութիւններու ենթահողին վրայ:

Մասնակիցները իրենց երախտիքը յայտնեցին Համաժողովի յաջողութեան համար՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ անոր Վեհափառ Հայրապետ Արամ Ա Կաթողիկոսին բերած անվերապահ աջակցութեան եւ գորակցութեան համար:

ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ  
Գ. ՀԱՄԱԺՈՂՈՎ



### ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՂԿԱԶԱՐԴԸ

Գրողներու Համահայկական Գ. Համաժողովը Սփիւռքի, նախընտրաբար Լիբանանի մէջ գումարելու ցանկութիւնը տեսանելի եւ ոգեշնչող իրականութիւն է արդէն: 2004ի Յունիսին, Երեւանի մէջ տեղի ունեցած Գրողներու Համահայկական Բ. Համաժողովի աւարտին, երբ տարբեր հայագաղութներու գրական միաւորներու եւ պատուիրակութիւններու ներկայացուցիչները ի մի խմբած խորհրդակցական հանդիպումը Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութեան կը փոխանցէր յաջորդ Համաժողովը Լիբանանի մէջ կայացնելու առաջարկը, կ'առաջնորդուէր յստակ ու հիմնաւորեալ հետեւեալ մտածումէն.- Հայաստան-Սփիւռք գրական կապերու սերտացման ճիգերը ամրապնդելու, հայագաղութներու գրական կեանքի աշխուժացման փորձերուն յաւելեալ ու համագային թափ տալու նպատակով՝ ճիշդ եւ արդար պիտի ըլլայ յառաջիկայ հանդիպումը կայացնել Սփիւռքի բարախուն սիրտը եւ մշակութային մայրաքաղաքը հանդիսացող Լիբանանի մէջ:

Աւելին. ժողովականները կ'եզրակացնէին, որ իր մշակութային աւանդով եւ հարուստ փորձառութեամբ, ունեցած լայն հնարաւորութիւններով եւ Սփիւռքի ո՛չ միայն հոգեմտաւոր, այլեւ մշակութային ճառագայթուն փարոսը հանդիսանալու հանգամանքով՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը արդարօրէն է՝ եւ կը մնայ նման հանդիպումի մը յարմարագոյն, աւելի ճիշդ՝ նպատակաւոր միակ վայրը: Պարտականութիւն կը տրուէր Լիբանանահայ Գրող-

ներու Համախմբումի եռանդամ քարտուղարութեան՝ այս բաղձանքը փոխանցելու հայ գիրի եւ մշակոյթի մեծ երկրպագու եւ սպասարկու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի:

Պատմութեան համար պէտք է աւելցնել, որ Պէյրութ վերադառնալէ ետք, յանուն Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութեան՝ Լիբանանահայ Գրողներու Համախմբումի քարտուղարութիւնը այս ցանկութիւնը կը փոխանցէր Վեհափառ Հայրապետին եւ կ'արժանանար համաժողովը հիւրընկալելու իր ամբողջական խոստումին: Աւելի ուշ, 2005 Մայիսին գումարուած Հայաստանի Գրողներու Միութեան ԺԳ. Համագումարին յղուած իր օրհնութեան գիրին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս պաշտօնապէս կը հաստատէր իր խոստումը: Նոյն տարուան Օգոստոսին, Պիքֆայայի մէջ տեղի ունեցած Հայաստան-Սփիւռք մտաւորականներու հանդիպումը առիթ կ'ընծայէր, որ Լիբանանահայ Գրողներու Համախմբումի քարտուղարութեան ընկերակցութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան ներկայանայ Վեհափառ Հօր՝ պաշտօնապէս փոխանցելու համար Հայաստանի Գրողներու Միութեան եւ սփիւռքահայ գրական միաւորներուն ցանկութիւնը:

Արամ Ա. Վեհափառ անգամ մը եւս կը հաստատէր յառաջիկայ Համաժողովը հիւրընկալելու իր ազնիւ տրամադրութիւնը: Հանդիպումէն կը բխէր կազմակերպիչ յանձնախումբը եւ, համախորհուրդ Հ.Գ.Մ.ի նախագահութեան հետ՝ կը սկսէին նախապատրաստական աշ-

խատանքները:

Ուզեցինք յատուկ կարեւորութեամբ արձանագրել այս մանրամասնութիւնները, միանգամընդմիջտ լռեցրնելու համար բոլոր անոնք, որոնք մշտքեր պղտորելու եւ գրական-մշակութային այս պատմական նախաձեռնութիւնը իր նպատակէն շեղեցնելու դիտաւորեալ շարամտութեամբ՝ փորձեցին անոր մէջ փնտռել... միայն իրենց վա՛ռ երեւակայութեան մէջ գոյութիւն ունեցող այսպէս կոչուած քաղաքական եւ այլ նպատակներ:

Պարզապէս կը ցաւինք: Կը ցաւինք իրենց հաշուոյն, որ «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» կարգախօս-կամարին ներքեւ հայրենի եւ սփիւռքահայ գրողներ միաձուլելու կոչուած այս պատմական նախաձեռնութեան համազգային նշանակութիւնն ու խորհուրդը կարգալու փոխարէն տակաւին կը շարունակեն միտք ու ժամանակ վատնել՝ աւագախրելով անցեալի արուեստական տաղնապներու վաղուց նեխած ճահիճին մէջ:

Կրկնապէս եւ երիցս կը ցաւինք: Եւ կ'անցնինք:

Ծաղկագարդին իւրայատուկ հմայք ու բովանդակութիւն պարզեւող հայ գրականութեան ծաղկագարդը, անկասկած, պիտի ջրդեղէ հայ գիրի մշակներուն հոգիներն ու մտքերը: Մեսրոպ Մաշտոցի արժանաւոր աւանդապահները յաւելեալ պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ պիտի վառեն իրենց հոգիներուն եւ մտքերուն մոմերը: Հաւատքի, յանձնառութեան եւ նուիրումի ազնիւ ծաղիկներուն բոյրերը վեհարանի դահլիճէն պիտի երկարին մինչեւ Հայաստան եւ Սփիւռքի հեռաւորագոյն գաղթօճախներ, պիտի յաղթանակեն գեղեցիկն ու ազնիւը, բարին ու վսեմը, վաւերականն ու յաւիտենականը եւ պիտի շարունակուի հայ գիրի ու մշակոյթի դարաւոր, բայց մի՛շտ երիտասարդ, հաստատաքայլ ու նպատակասլաց յաղթերթը:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ





## ԳՐՈՂՆԵՐՈՒ Գ. ՀԱՄԱԺՈՂՈՎԷՆ ԵՏՔ ԱՆԴՐԱԴԱՐՁ

Նախորդ շաբաթներուն տեղի ունեցաւ գրողներու համահայկական համաժողովը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի վեհարանի դահլիճին մէջ: Գրողներ եկած էին Հայաստանէն, Արցախէն, նոյնիսկ՝ Ջաւախքէն: Սփիւռքի բոլոր գաղութներէն ներկայ էին գրողներ, մտաւորականներ: Դահլիճին մէջ կային նաեւ հիւրեր, Հայաստանի դեսպանը՝ Վահան Տէր Ղեւոնդեան, իր բանանահայ ազգային, կրթական եւ մշակութային մարմիններու ներկայացուցիչներ:

Գրողներու երրորդ համահայկական համաժողովը կը վայելէր հովանաւորութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Արամ Ա. հայրապետին: Համաժողովին կը նախագահէր Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան:

Բացման օրը ընդարձակ դահլիճը կը յորդէր ներկաներով, կը լսուէր դպրեւանքի աշակերտներուն խմբերգը՝ «Որք գարդարեցին տնօրինարար»: Թարգմանչաց նուիրուած սքանչելի յօրինում մը, որ վեհարանին մէջ կը հնչէր գեղեցկօրէն հոգեթով: Սրահը լուռ կը հետեւէր յառաջացող թափօրին. Արամ Ա. կաթողիկոսին հետ դէպի ատեան ու կաթողիկոսական գահ կը յառաջանային միաբանական շքախումբը, այնքան տպաւորիչ Հայաստանեայց եկեղեցւոյ խորհրդասքող վեղարներու վեհութեամբ:

Ուրախութիւնը կ'ունենանք ներկաներուն մէջ տեսնելու սփիւռքահայ ծանօթ բանաստեղծ, ժողովին երիցագոյն անդամ Ժագ Ս. Յակոբեանը: Տէրունական աղօթքով օրհնուած համաժողովը ընթացք կ'առնէր Լեւոն Անանեանի բացման խօսքով, ապա՝ գեկուցարբերներու խօսքերով:

Անծանօթ դէմքերը շատ էին: Լիրանահայ ծանօթ դէմքերէն բացի, գրեթէ ծանօթ դէմքեր չկան: Առաջին բարեւոյրը կ'ըլլայ հայկահայ գրող Լեւոն Շառոյեան, որուն հետ ծանօթութիւն ունէինք վաղուց: Քիչ ետք բարեւոյ իր ներկայութիւնը կը փաստէ Հայաստանէն սեւակագէտ Սէյրան Գրիգորեան: Կողքիս նստած անձը անծանօթ մըն է: Համաժողովին երկրորդ օրն էր արդէն: Հիւրեր չկան, դահլիճը վերածուած էր սեղաններով շարուած դասարանի մը: Արդէն իւրաքանչիւր մասնակից գրողի յանձնած էին պայուսակներ, նոթագրութեան տետրով, մատիտով եւ գրացուցակով: Կագմակերպիչ Լիրանանի հայ գրողներու համախմբումը մանրակրկրտ պատրաստութեամբ կատարած էր իրենց պարտականութիւնը: Կողքիս նստած երիտասարդ գրողը չեմ ճանչնար: Կ'ակնկալեմ, որ «բարեւ» մը ըսէ, կը մտածեմ ես բարեւել իրեն, բայց օրակարգը սկսած էր արդէն եւ կողմնակի խօսակցութիւններու պահը չէ: Համաժողովը սկսած էր իր աշխատանքներուն, գեկոյցի ընթերցման պահն

էր: Քիչ ետք կողքիս նստած երիտասարդը սեղանին վրայ կը սահեցնէր ափի մեծութեամբ գրպանի գրքոյկ մը: Ռուպէրթ Եսայեան «Ռեքրիւիէմ»: Կը գարմանամ, իր քերթողագիրքերով ծանօթ է ինծի: Քանի մը տարի առաջ Ձաքար Քէչիչեան Արցախէն բերած էր մեզի արցախցի երկու բանաստեղծներու գիրքերէն: Անդրադարձած էինք «Ազդակ»ի էջերով: Ուրեմն Շուշիէն Ռուպէրթ Եսայեանն էր քովս նստողը: Քանի մը հարցում, ուրախութիւն՝ իր ներկայութեան համար: Ամուսնացած էր եւ հայր՝ երեք մանչերու. մէկը համալսարան աւարտած է, միւսը բանակային է, երրորդը՝ միջնակարգի աշակերտ: Կը բաւէ այսքան ծանօթութիւն, կը շարունակենք ունկնդրել ժողովին ներկայացուած գրոյցները, ելոյթները: Յետ գեկոյցի համաժողովին նախագահը կը յայտարարէր. ելոյթ ունենալու պահն է: Հերթով արտայայտուողներ կ'ըլլան ներկայացուած գեկոյցին մասին: Ելոյթ կ'ըսեն այս արտայայտութեան: Կը մտածեմ ԵԼՈՅԹ բառին մասին, որ կը շարշարուի մեր մօտ, Սփիւռքի մէջ, ու ամէն առիթով, տեղի - անտեղի կ'օգտագործուի, որովհետեւ բառապաշարի սովէն կը տառապին շատեր: Այս առնչութեամբ յօդուած ալ գրած ենք քանի մը անգամ՝ մեր խօսքը ուղղելով ԵԼՈՅԹ բառին իմաստը չգիտցողներուն: Անոնց ուշադրութեան յանձնած էինք, թէ ԵԼՈՅԹ բառը հանդէս կամ ձեռնարկ չէ, թէ՛ երգահանդէս կամ նուագահանդէս չէ, մէկ խօսքով՝ գեղարուեստական կամ այլ կարգի հանդիսութեան տրուած հոմանիչ մըն չէ: Ահաւասիկ փաստը այսօր մեր մատնանշումին: Ելոյթ կը նշանակէ խօսք, գոր կը ներկայացուի անձի մը կողմէ, ընդհանրապէս յանպատրաստից, «ելլել եւ խօսք ըսել, բացատրութիւն տալ կամ առաջարկ ներկայացնել»: Այնքան ուրախ եմ ԵԼՈՅԹ բառին ճիշդ ու ճշգրիտ օգտագործումին համար... Յուսանք՝ մեր այս

միջանկեալ ակնարկը լսող - կարդացող կ'ըլլայ...

Լուս բանաստեղծ մըն էր Ռուպէրթ Եսայեան, կրակէ բառեր ունի. ներսէն կրակ, դուրսէն՝ ի՞նչ... դուն որոշէ ընթերցող:

Դադար էր, կրծքապիտակներ կան ներկայ գրողներուն կուրծքերուն վրայ. անուն - մականուն եւ բնակած երկրի անուն: Առաջին դէմքը, որուն կը ծանօթանամ, Հալիպէն երիտասարդ բանաստեղծուհի Նանօր Ինճէճիկեանն է: Իր քերթողագիրքը՝ տպուած Հալիպ, 2006ին: Ստացած էի քանի մը օր առաջ՝ իր կողմէ մակագրուած:

- Բարե՛ւ, Նանօրն եմ, գիրքս ղրկած էի ձեզի, ստացա՞ք:

- Այո՛, շնորհակալ եմ, ուրախ եմ, որ ներկայ էք հոս...

Երկար գրոյցի ժամանակ չէր: Դադարի այս պահուն իւրաքանչիւրը ծանօթ (կամ անծանօթ) դէմք մը կը փնտռէր: Երիտասարդուհի մը արեւելահայերէնով կը բարեւէ ժպտուն:

- Հայրս՝ Ստեփան Այաճաճեան բարեւում է ձեզ եւ իր գիրքը ղրկեց ձեզի: Յանձնեց մակագրուած գիրքը: Բաժնրեցանք: Վայրկեան մը մտածեցի հայրենի նախկին երեւանցի գրագէտ, Հայաստանի Գրողներու Միութեան նախկին քարտուղար, գրական, կուսակցական, պետական այլ կարեւոր պաշտօններ վարած արձակագիր Ստեփան Այաճաճեանն է, որ հիւանդութեան պատճառով մեկնեցաւ Միացեալ Նահանգներ եւ հոն մնաց, որովհետեւ կը կարօտէր երկարատեւ բուժման: Այս մասին կը լսէինք անուղղակի լուրերով: Կը յիշեմ մեր հանդիպումը 1969ին, Երեւան, Գրողներու տան մէջ, կարճատեւ հանդիպումով մը: Կը յիշեմ նաեւ իր նշանաւոր վէպը՝ «Եղէգները չխոնարհուեցին»ը, ազգայնաշունչ երկը: Ու սա պահուն իր դուստրը կը դիմաւորէ գիտ բարեւային հանդիպումով:

Շնորհակալութիւն եւ առողջու-

թիւն՝ Ստեփան Արաճաճեանին, որ ի Լոս Անճելըս:

Մայրավանքի բակն ենք, գիրար կ'որոնենք, արդեօք ծանօթներ կա՞ն: Վեհանոյշ Թէքեանը կը փնտռեմ, նախկին լիբանանահայ բանաստեղծուհի-արձակագիր, այժմ Նիւ Ճըրզիի բնակիչ, Միացեալ Նահանգներ: Կը գտնեմ, կ'ողջագուրուինք: 30 տարիներէ աւելի չեմ տեսած նրբագեղ, խարտեաշ ու երկար ծամերով աղջիկը, ծամերուն հասակը կրճատուած է, նոր տեսքով կին մըն է արդէն:

- Կլորցած ես, Վեհանոյշ:

- «Տրնեսանս»ի կիներուն նմանած եմ, այո՛...:

Կարճատեւ գրոյց մը, արդէն երկու գաւակներու մայր է, ուրախ է իր գաւակներով, անոնց բարձրագոյն ուսման տիրացած ըլլալով: Կը շնորհաւորեմ իր մայրուհիները եւ գրական գործունէութիւնը: Անծանօթ կին մը կու գայ եւ իր գրոյցով կը բաժնէ մեր գրոյցը, որովհետեւ տեսնուելիք անձեր բազմաթիւ են, հարկ է այս ոսկի առիթը օգտագործել:

Ճաշի պահուն սեղանակից ենք երկու այր եւ մէկ կնոջ: Կը ծանօթանանք: Գրիգոր Ճանիկեան, Հայաստանէն: Անդրադարձը կ'ըլլայ արագ. - Ես ձեր գրութիւնները կարդացած եմ, ձեր ստորագրութեան շատ հանդիպած եմ:

Կը ժպտի ու կ'աճապարէ ճաշը հայթայթել վանքի սեղանատան մէջ գրուած ինքնասպասարկման սեղանէն:

Ճաշերը առատ են եւ ամէն մարդ կը գրուցէ բարձրաձայն: Կը հարցնեմ միւս սեղանակիցներու անունները.

- Գէորգ Սընրխճեան (Ժորա) Զաւախքէն: Կինը կողքիս նստած է ու կը գրուցէ ուրախ տրամադրութեամբ.

- Դո՞ւք, Երեւանէ՞ն էք:

- Ես Թիֆլիսէն եմ (Վրաստան), Անահիտ Պոստանճեան:

- Սայաթ Նովայի աշխարհէն կու

գաք. «Քանի վուր ջան իմ»...

Մըմունջով կ'երգեմ քանի մը նախադասութիւն: Անահիտ կ'ընկերակցի ինծի հազիւ մէկ տողով: Ես կը շարունակեմ ցած ձայնով: Սեղանատունը արդէն աղմուկով լեցուած է, մեզ լսող չկայ. կ'անցնիմ երկրորդ երգին.

- «Թամամ աշխարհ պտուտ եկայ, չթողի Հապաշ, Նագանի»...

Անահիտը կը փորձէ ընկերանալ ինծի, բայց կարծես չի կրնար, արդեօք բառերը չի՞ գիտեր. ան կը դառնայ Գէորգին ու կ'ըսէ.

- Գիտի երգել, լսո՞ւմ ես.

Գրող Գէորգ Սընրխճեան ժպտով հաւանութիւն կը յայտնէ:

Հիտա Գալֆայեան - Փանոսեան, նախկին պոլսահայ, այժմու Ֆրանսահայ գրողը իր գեկոյցին մէջ փառաբանեց պոլսահայ գրականութիւնը, անոր առաջատար ներկայացուցիչները հանդիսացող Զահրատը, Զարեհ Խրախունին, Իգնա Սարասլանը, իրեւ հանճարեղ բանաստեղծներ, սփիւռքահայ գրականութեան բարձրակէտին մատչող բանաստեղծներ: Ան քիչ բան ըսաւ պարսկահայ գրականութեան մասին, յիշելով միայն բանաստեղծ Վարանդի անունը: Այս եզակի մատնանշումը իրաւունք տուաւ ներկայ գրողի մը, թէ՛ «Պարսկաստանի մէջ միայն Վարանդ չկայ, այլ բազմաթիւ Վարանդներ»: Ուրիշ մըն ալ կողմնակի ձայնով ըսաւ. «Այս կինը կը թուի, թէ ծանօթ չէ սփիւռքահայ գրականութեան: Ան բաւականացաւ Ֆրանսահայ գրողներէն անցողակի կերպով մէկ - երկու գրողի անուն»:

\*\*\*

Ծիծաղի վարպետ Արամայիս Սահակեան ելումուտ ընելու պահերուն կը տեսնուի, քանի մը հպանցիկ բառեր, չի մոռնար զիս համբուրել: Բայց համաժողովի պահերուն լուռ մնաց՝ զարմացնելով մեզ: Ի վերջոյ, համաժողովի վերջին գեկոյցներէն ետք ելոյթ ունե-

նալով՝ ըսաւ․

«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո... ծիծաղի մէջ է... Եղիշէ Չարենցի այս նշանաւոր պատգամը փոխուած մէկ բառով արտասանելով՝ ան յայտնեց իր դժգոհութիւնը: «Գրական սեւերու բազմատեսակ գեկոյցներ ներկայացուեցան, բայց ցաւօք, երգիծանքը բնա՛ւ չլիչուեցաւ: Ծիծաղը անհրաժեշտութիւն է, կենսական: Եթէ մենք չծիծաղենք, կեանքը կը ծիծաղի մեր վրայ»: Ըսաւ ու տեղը գնաց:

\* \* \*

Երկրորդ օրուան դաղարին մեզի կը մօտենար մօրուսաւոր, հասուն տարիքի գրող մը՝ Խորէն Արամունի: Քիչ լսուած անուն մը՝ արդարեւ: Բարեհամբոյր խառնուածքի տէր ըլլալ կը թուի: Կը խօսէր արեւերահայերէն: Կը ներկայացնէր իր մէկ թատերախաղին տեսաերիզը (Տի. Վի. Տի.)՝ «Անվերադարձ ապագայ»: Կենսագրական հակիրճ ծանօթացում մը՝ տեղւոյն վրայ: Նախկին պարսկահայ, ապա Հայաստան ներգաղթած, այժմ Միացեալ Նահանգներու քաղաքացի: Խորէն Արամունի: Իր մականունը լիբանանեան մականուն կը յիշեցնէ, բայց մեր Արամը վաւերական է յետադասով:

Քիչ անդին Հրանդ Մարգարեանն է, որ ունեցած իր ելոյթին մէջ մատնանշեց ամերիկահայ թատերագիրներու ջանքերը, թատերական գրականութեան ճամբով հայկական գրականութիւն կամ գեղարուեստ ու մանաւանդ Յեղասպանութիւնը աշխարհին ծանօթացնելու նուիրումով:

- Միացեալ Նահանգներու մէջ ունինք 25 - 27 հայ, երիտասարդ թատերագիրներ, որոնք կը ստեղծագործեն անգլերէնով, կը բեմադրեն այս թատերախաղերը ամերիկացիներուն, բոլորին, ու յաջողութիւն կը գտնեն: Ոգիով

հայ այս տղաքը արժանի են մեր գուրգուրանքին, յարգանքին:

Դաղարին կը մօտենամ Հրանդ Մարգարեանին, կը շնորհաւորեմ իր ելոյթը, ուր անդրադարձաւ կարեւորութեամբ հարցի մը, որ նոր միտք թուեցաւ բոլորին: Առաջարկեց ՄԱԿի մէջ ունենալ գրականութեան լոպի մը, ինչ որ ունին ուրիշ ժողովուրդներ, նոյն պաշտօնական վայրի մէջ: Այս նախաձեռնութիւնը մեծ նպաստ պիտի բերէ հայ ժողովուրդի ծանօթացման՝ օտարներուն, մասնաւորաբար մեր Յեղասպանութեան եւ մեր դատին անժամանցելիութեան հարցը:

Հրանդ Մարգարեան, վաստակաշատ գրագէտը, բանաստեղծն ու թատերագիրը ինծի ձօնեց իր երկու գիրքերը. «Երբ արեւը կը լուսէ», եւ «Ենթասէն փշուած» թատերերկր:

Երեք տարի առաջ ան գրած էր «Քարաձայն պատարագ» յուշագրական գիրքը, իր տպաւորութիւնները Արեւմտեան Հայաստանէն, Անիէն ու Աղթամարէն, երբ իբրեւ գրօսաչափիկ այցելած էր ամերիկահայ եւ հայաստանցի խումբի մը հետ, առաջնորդութեամբ եւ նախաձեռնութեամբ հոգեւոյս Մեսրոպ Արք. Աշճեանի: «Քարերու ձայնով պատարագ մը» հնչած էր իր շուրջը հայոց պատմական այս աշխարհին մէջ: Այդ օրերուն «Ազգակ»ի էջերուն մենք անդրադարձանք Հրանդ Մարգարեանի սքանչելի գիրքին, գեղուն՝ հայրենասիրական զգացումներով, հոգեմտաւոր, ներհայեցողական տրամադրութեամբ ստեղծագործուած:

\* \* \*

Շաբաթ, 8 Ապրիլի դաղարի մէկ պահուն հանդիպեցանք հայրենի գրագէտ, վիպագիր, թատերագիր Պերճ Զէյթունցեանին, շնորհաւորեցինք զինք եւ ուրախութիւն յայտնեցինք իր ներկա-

յութեան համար: Հեզ ու համեստ անձնաւորութիւն մը, իր մշակած գրականութեան նման վեհ ու լրջախոհ: Ափսո՛ս, որ առիթ չունեցանք իրեն հետ երկար գրուցելու: Բաւարարուեցանք «հակիրճ» ծանօթութեամբ:

Նախկին լիբանանահայ Քանատայէն, Յարութիւն Պէրպէրեան ներկայ էր մեր մէջ: Հպանցիկ հանդիպումներ, ընդմիջումներուն ժպտուն բարեւներ, նախկին ծանօթներ ըլլալու հաստատման դրոշմով: Ամէն մարդ գրադած էր, կը փնտռէր իր բարեկամը, իր եղէկուան կորսնցուցածը: Հասկնալի տրամադրութիւն, հետեւաբար կը գոհանանք ժպտուն բարեւներով:

Յարութիւն Քիւրքճեան մեր գրականութեան որակին մասին դէպի միջազգային մակարդակ մատչելու մատնանշումներ կը կատարէ: Իր գեկոյցը կը լսուի ամենայն լրջութեամբ: Նոյն միջոցը՝ Գրիգոր Շահինեանի գեկոյցին ընթերցման պահուն: Ան ներկայացուց մանկապատանեկան գրականութեան ներկայ վիճակը, գատորոշեց այս գրականութեան նուիրուած գրողներու արհեստավարժ սիրողականէն, թելադրութիւններ եւ հեռանկարային կարելիութիւններու մասին նկատողութիւններ տուաւ:

Յակոբ Պալեան մեր մէջ էր՝ սփիւռքահայ գրող-մտաւորական: Երբեմն Սուրիա կ'ապրէր, ուր կազմաւորուած էր մասամբ իր ուսումը: Յետոյ լիբանանցի կերպարանք գգեցաւ, ապա դարձաւ Փրանսահայատակ քաղաքացի: Բայց ան միշտ մեր մէջն է միեւնոյն ոգեւորութեամբ, մամուլին իր յարատեւ աշխատակցութեամբ: Այս համաժողովին ալ գործօն ներկայութիւն է: Ինքն է ներկայացնողը համաժողովի միջոցը՝ տրամադրող հաղորդագրութեան, այնքան տպաւորիչ, որուն վերջին քննարկման պահուն ջիղերը պահեց հանդարտ, մինչեւ իսկ ստորակէտի մը, բովի մը մասին թելադրանքներ բանաձեւողներուն

ընդդէմ: Նախանձեցայ Յակոբ Պալեանի դաստիարակիչ համբերութեան:

Միասնականութեան «համեստութիւն» կը ծաւալի վեհարանի դահլիճին ու շրջապատին մէջ: Ամէն գաղափարի, տարբեր կողմնորոշման պատկանող հայ գրողը, մտաւորականը միաձուլուած տրամադրութիւն ունի: Այս հոգեբանութիւնը հաղորդական բնոյթ ունի, կը վերածուի ներքին ապրումի, ու կը խօսիս դուն քեզի հետ. ուրեմն ոչինչ կայ մեզ իրարմէ բաժնող: Հայաստանցի կամ սփիւռքահայ միեւնոյն տազնապն ու տառապանքը կ'ապրինք. գոյատեւել մեր լեզուով, մեր մշակոյթով, մեր ինքնութեան մաքուր, անաղարտ պահպանումով: Այս է հիմնականը, երբ կը կրկնենք ամէն առիթով. մէկ ժողովուրդ, մէկ ազգ, մէկ լեզու, մէկ մշակոյթ եւ մէկ ապագայ...

Հրաժեշտի օրն էր, իւրաքանչիւր գրող պիտի մեկնի իր բնակավայրը՝ շարունակելու իր առաքելութիւնը: Վերջին եզրափակիչ պատգամը Արամ Ա. կաթողիկոս կը փոխանցէր ներկաներուն. ըլլալ ճշմարտութեան առաքել, բարձր պահել որակը բոլոր մարգերու եւ ասպարէզներու մէջ, հեռու մնալ համաշխարհայնացումի վտանգներէն: Ու որքան հոգեթով են մեր երգերը, եկած՝ հեռուներէն, երբեմն մոռացութեան տրուած, բայց միշտ հնչուն՝ կիրիկիոյ միաբանութեան դպրեվանքին մէջ. «Հայ ապրինք եղբարք», «Բամբ որոտան», «Հիմի էլ լռենք», «Կիրիկիա» մաղթերգ, «Երբոր բացուին դռներն յուսոյ»: Ամբողջ դահլիճը կը ձայնակցի երգչախումբին, տրամադրութիւնները բարձր են: Ու առաւել կը բարձրանայ «Ի վեհ բարձանց» վեհափառին ձօնուած մաղթերգով:

Յտեսութիւն՝ բոլորին...

\*\*\*

Արդէն հրաժեշտ առած ենք Մայրավանքէն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարէն, սիրելի, ծանօթ եւ դեռ անծանօթ մնացած դէմքերէ:

Ի՞նչ մնաց չորս օրերու այս միասնական մեծ հանդիպումէն: Ըսե՛նք Վահան Թէքէեանի բառերով. «Արեւն ըմպած ըլլալու մխիթարանքը անհունն»: Գուցէ եւ այդպէս: Արեւ ու ճառագայթ ողողեցին մեր սիրտերը, լիացանք հայ գրականութեան եւ մշակոյթին ներ-

շնչած գեղեցկութեամբ: Ու սա մեկնումի պահուն կը լսեմ ձայնը սփիւռքահայ բանաստեղծներու նահապետին, ժազ Ս. Յակոբեանի «Մենք» արտասանութեան շիկացած հնչիւնները, իր իսկ, ալեհեր քերթողին շրթներէն: Այո՛, Մենք... Մենք պէտք է մնանք միասնական, մէկ նպատակով, մէկ տեսիլքով. «Հայ ապրինք եղբարք մարդկութեան մէջը»...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ



## ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԼՈՒՍԱՆՑՔԻՆ ՎՐԱՅ

Հանդիպումներ եւ ժողովներ, որոնք իրարու քով կը բերեն հայերը, Հայաստանէն եւ Սփիւռքէն, մտաւորական, քաղաքական գործիչ, գործարար, օգտակար են: Եթէ շօշափելի արդիւնքներու հասնին, աւելի լաւ: Կարգախօսները թերեւս բարի կամք կ'արտայայտեն, կը յուզեն, բայց յառաջդիմութիւն չեն:

Առանձին չենք աշխարհի վրայ, եւ ստիպուած ենք բաղդատուիլ: Գրողներու միութիւնն հասկացողութիւնը խորհրդային օրերու յատուկ էր: Առաւելութիւններ եւ ապահովութիւն կ'ընծայէր: Միաժամանակ կը ծառայէր գրողները հակակշռելու: Վարչակարգը փոխուած է, գրողները պետական պաշտօնեայ չեն, հետեւաբար անհրաժեշտ է սահմանել Գրողներու միութեան նպատակը: Ան արհեստակցական միութիւն չէ, որ իրաւունքներ պահանջէ կամ պաշտպանէ:

Այս մտածումներու ուղիղ գծին վրայ հարկ է քննել հրատարակչական, հեղինակի իրաւունքի եւ պատուագինի խնդիրները, յարաբերութիւնները այլ կառույցներու հետ, քաղաքական, մամուլի, մետիաներու եւ կրթութեան, որպէսզի գրողը օր մը կարենայ իր գրիչով ապրիլ: Այս հարցերը կապ չունին գգացականութեան, հայրենասիրութեան, ազգային միութեան եւ այլ կարգախօսներու հետ:

Կը խորհիմ, որ Գրողներու միութեան,

կամ միութիւններու (քանի որ Հայաստանի օրինակին հետեւելով կը ստեղծուին նաեւ դուրսը) աշխատանքը պէտք է մնայ այս սահմաններուն մէջ: Գրուածի քննութիւնը, զարգացած երկիրներ, կ'իրականացնեն երեք տարբեր շրջանակներու մէջ: Հրատարակչատուները կը ստանան հեղինակին աշխատանքը, յատուկ կոմիտէներ կը կատարեն ընթերցումը եւ ընթացք կու տան, կամ չեն տար, հրատարակութեան դիմումին: Երբ գիրքը լոյս տեսնէ, քննադատները կ'արտայայտուին եւ կը լուսաբանեն հանրային կարծիքը: Հետեւանքը կը չափուի գրատուներու մէջ, գիրքերու վաճառքով: Աւելի ուշ, ստեղծագործութիւնը, կրթական համակարգի ընտրութեամբ, կը դառնայ դասական ժառանգութիւն:

Հայ գրողները չեն գտնուիր այս շրջանակներուն մէջ: Գրողներու միութիւն(ներ)ը հրատարակչատուն չէ, չի հակակշռել գանգուածային լրատուամիջոցները եւ քննադատները, իրաւունք ալ չունի: Ան ուղղութիւն տուողի դեր չունի, քանի որ գրողը քարոզչական օղակ չէ, նոյնիսկ եթէ իր գրածի բովանդակութիւնը կը ծառայէ այս կամ այն գաղափարին: Այլ խօսքով, գրողը խօսափող չէ, ապսպրանքով չի գրեր, կամ պէտք չէ գրէ: Ուրիշներ ալ ապսպրողի փորձութիւնը պէտք չէ ունենան:

Գրողներու միութեան ժողովները,

խորհրդային կարգերու փլուզումէն ետք, այս հարցերու յստակացման եւ նոր ժամանակներու պատշաճելու ճիգ պիտի ընէին: Անոնք ուղղութիւն չեն կրնար ճշդել, այդ իրաւունքը չունին, մշակոյթի կամ ազգի մէկութեան խընդիրները գաղափարախօսական եւ քաղաքական են: Մեր իւրայատուկ կացութեան մէջ, անոնք սոսկ բարոյախօսական տարողութիւն ունին, մինչդեռ նախ պէտք է խօսիլ տարբերութիւններու մասին, որպէսզի մէկութիւնը, որ կը կրկնուի քիչ մը ամէն տեղ եւ ամէն առիթով, բովանդակութիւն ունենայ, նկատի ունենալով ժամանակի ընթացքին ստեղծուած պատմամշակութային տուեալները:

Հայաստանէն դուրս գումարուող այս արտակարգ ժողովը, մէկութեան եւ տարբերութեան յատկանշական կեդրոն հանդիսացող Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութեամբ եւ նեցուկով, յատուկ տարողութիւն ունենալու կոչուած է, քանի որ Սփիւռքի ճանաչումը հաճոյակատարութիւն չէ, այլ ճանաչումը ազգի միւս կէսին, որպէս alter ego, եթէ չբաւարարուի սկզբունքներու հռետորական տարագրերով: Պէտք է յուսալ, որ յաւելեալ իրաւունքի եւ յուզիչ խօսքի սահմաններու գերանցումով, կը խօսուի մէկութեան հաստատման պայմաններու եւ նախաձեռնութիւններու մասին, որոնք հրատապ են, երբ համաշխարհայնացումը ահեղ թափով կը յառաջանայ եւ կը սպառնայ ազգային ինքնուրոյնութիւններու, հետեւաբար՝ ազգային լեզուներուն, ուրեմն՝ նաեւ հայերէնի եւ անով արտայայտուող գրականութեան, միակը՝ որ ազգային ժառանգութիւն դառնալու կոչուած է: Այս վտանգին դիմաց, կենսական է մեր լեզուին վերականգնումը, խօսուող եւ գրուող, գտուած բառապաշարով եւ

չարահիւսութեամբ, ուղղագրութեան վերականգնումով հաշտեցումը ազգի երկու հատուածներուն եւ հայոց անցեալին հետ, որպէսզի փոխ հասկացողութիւնը սոսկ լողունգ չըլլայ:

Կը սիրենք հնչեղ բառերը: Խօսինք մարտահրաւէրի մը մասին: Յետխորհրդային շրջանին, հայերէն գիրքերու տպաքանակը ահաւոր անկում կրեց: Գիրքերը, Հայաստան եւ Սփիւռք, լոյս կը տեսնեն հեղինակին ծախսերով կամ մեկենասներու յատկացումներով: Յունեզոյն պարագան ալ կայ, երբ գիրքը կը սպառի միայն որպէս նուէր: Այսինքն, հայ գրողը իր գրիչով ապրելու չի կրնար յաւակնիլ: Այս պայմաններուն մէջ գրականութիւնը կը դառնայ գոհողութիւն, բառ՝ գոր շատ կը սիրենք: Գրողներու համագումար մը, թերեւս հրատարակչներու եւ հրատարակչական գործը հակակշռող ուժերու մասնակցութեամբ, պէտք է խօսի աւելի քան երեք միլիոն հայաստանաբնակներու եւ նոյնքան Սփիւռքի հայերու մօտ ընթերցանութեան փափաքը վերականգնելու մասին, վերականգնում՝ առանց որուն գրականութիւնը չ'ունենար ազգի իսկական նեցուկը, կը դառնայ սալոնային գուարճութիւն, գաղտնի, esoterique, ընկերութիւններու մտքի մարզանք:

Թիւերու լեզուն վէճ չի ստեղծեր: Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ, թէ աշխարհի շուրջ ութ միլիոն հայերը տարին քանի գիրք կը գնեն... Ինչո՞ւ չեն գներ, ի՞նչ չենք ըներ որ գնեն: Գիտենք գիրքերու տպաքանակը. հինգ հարիւր, վեց հարիւր, հազար, աւելին երազային բացառութիւն է ներկայիս: Այս հաստատումը մտածման եւ գործի մեկնակէտ կ'ըլլա՞յ... գրականութեան զարգացման համար:

ՅԱԿՈՒՔ ՊԱՒԵԱՆ



## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԵՐԵՒՅԹ ՄԸ

Անթիլիասի Մայրավանքը աննախընթաց եռուզեռ մը կ'ապրի այս օրերուն, ուր, յառաջիկայ շաբաթ, տեղի պիտի ունենայ Գրողներու Համահայկական Գ. Համաժողովը: Այս ուրախ առիթով, Հայաստանէն եւ արտասահմանէն պիտի ժամանեն բազմաթիւ գրողներ, որոնք պիտի համախմբուին նոյն յարկին տակ, մասնակից դառնալով հայ գիրի եւ մշակոյթի փառատօնին:

Սոյն Համաժողովին հիմնական արժանիքը կը կայանայ այն իրողութեան մէջ, որ այս տարողութեամբ եւ կազմակերպչական այս աշխատանքով ո՛չ մէկ համագումար տեղի ունեցած է ցարդ Պէյրութի մէջ, որ, աւելի քան յիսնամեակ մը առաջ, հակառակ մտաւորական կեդրոն ըլլալուն՝ երբեւիցէ չէ իրագործած միջ- գաղութային այսքան ծաւալուն, այսքան ոգեւորիչ եւ համապարփակ ձեռնարկ մը:

Համաժողովին ուշագրաւ մէկ յատկանիշը այն երեւոյթն է, որ հայրենիքէն եւ Սփիւռքի այլազան գաղթօճախներէն ժամանած եւ մեսրոպաւանդ դպրութեան տարիներ ծառայած հայ գրչեղբայրները պիտի ողջունեն գիրար՝ եղբայրական սիրայիւր միջնորդութիւններէ, ըմբոշանելով իմացական վայելքի անփոխարինելի պահեր: Նոյն յարկին տակ, իրենց հաճելի ներկայութեամբ, անոնք պիտի ջերմացնեն հայ մշակոյթի դարաւոր օճախը:

Մօտէն ծանօթանալով իրարու՝ անոնք պիտի մտերմանան եւ ըլլան հարգակից մէկգմէկու գրական խառնրածքին եւ ապագայ ծրագիրներուն ու դառնան մշակութային նոյն առաքելութեան լծուած վաղեմի բարեկամներ:

Աւելին. սոյն Համաժողովը դուրս պիտի բերէ հայ գրողները իրենց կղզիացած վիճակէն, մասնակից դարձնելով զանոնք արուեստի զարնանային տօնախմբութեան: Այս իրողութեամբ, հայ գրականութիւնը պիտի վերաշխուժանայ շնորհիւ հայ գրողներու միջեւ ծրնունդ առած բազմաձայն գրոյցներուն:

Վստահ ենք, որ սոյն համագաղութային ձեռնարկը գործնապէս պիտի արդիւնաւորուի այն համոզումով, որ համաժողովէն ետք, երբ գրողները մեկնին իրենց տուները, պիտի տանին անպայման փունջ մը տպաւորապաշտ ապրումներ, որոնք, անկասկած, պիտի ըլլան մղիչ ուժը հետագայ գրական իրագործումներու...

Արդարեւ, սոյն Համաժողովը պէտք չէ ներփակուի լոկ դասախօսութիւններու, գրոյցներու եւ ծանօթացումներու ծիրին մէջ, այլ հետապնդէ, մանաւանդ, գործնական նպատակներ:

Այս առաջադրութեամբ, հայրենի եւ սփիւռքահայ գրողները պէտք է ունենան իրենց գրական - գեղարուեստական պաշտօնաթերթը, որ լայն չափով տեղ


տայ ո՛չ միայն իրենց ստեղծագործ աշխատանքին, այլև ըլլայ արձագանգը արուեստի ժամանակակից շարժումներուն եւ ստանայ իր իմացական սնունդը՝ մեր ազգային հոգեմտաւոր ավանդույթներէն մրգաստանէն:

Այս առաջադրանքին իրագործման համար անհրաժեշտ է, սակայն, որ Հայաստանի մէջ, տասնամեակներէ ի վեր մոռացութեան տրուած Մեսրոպեան ուղղագրութիւնը դարձեալ ստանայ իր դասական նկարագիրը, որուն հիմամբ կատարուին բոլոր հրատարակութիւնները: Այս յղացքով, հայ լեզուն

պէտք է ըլլայ մէկ եւ անբաժանելի միասնութիւն, որուն շուրջ համախորժըրէին հայ ժողովուրդի զաւակները անխտիր:

Ուրախութեամբ կ'ողջունենք Գրողներու Համահայկական Գ. Համաժողովը, այն ակնկալութեամբ, որ իր իւրաքանչիւրութեամբ դուռ կը բանայ գեղեցիկ անակնկալներու, հանդիսանալով շքեղ մէկ նախընթացը եւ վարակիչ թելադրանքը՝ հետագայ համաժողովներու:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ



### ՏՊԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ...

Անթրիլիասի մէջ, 6-9 Ապրիլ 2006-ին գումարուած Գրողներու Համահայկական Գ. Համաժողովին մասնակցած հայրենի թէ սփիւռքահայ գրողներ իրենց տպաւորութիւնները եւ վկայութիւնները փոխանցեցին, որոնցմէ գլխաւորներուն արտայայտած մտածումները գրի առած կը փոխանցենք մեր ընթերցողներուն:

### ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՀԻՆ ԱՐԾԱՐԾՈՒՄՈՎ

*Ինծի պէս ամերիկարնակ սփիւռքորդի մը համար հաճելի ու գրաւիչ պատկեր մըն էր ականատես ըլլալ մէկ երգիքի տակ համախմբուած մեծ թիւով գրողներու, որոնք աշխարհի զանազան ծագերէն Լիբանան էին ժամադրուած, ազնիւ հրաւերովը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս՝ Արամ Ա.ին, մասնակցելու համար Համահայկական Գ. Համաժողովին:*

*Ինչ որ ուրախութիւն էր ինծի, ներկայութիւնն էր երկսեռ խոստմնալից երիտասարդներու՝ թէկուզ քիչ, երէցներու եւ վաստակաւորներու կողքին: Յոսանքովի երեւոյթ:*

*Հաճոյքով վերահանդիպեցայ երկար տարիներու բաժանումէ ետք՝ դէմքով ու անունով ինծի ծանօթ գրողներու:*

*Հաւաքին ստուար մասը թերեւս կը կազմէր խումբը դէմքով ու անունով անծանօթ գրողներուն, որոնց անունները, սակայն, ինծի շատ մօտ ու մտերիմ եղած են մամուլին ընդմէջէն կամ իրենց հրատարակուած գործերէն: Այս համախմբումը ուրախառիթ միջոց մը եղաւ, որպէսզի անոնց հանրածանօթ*

*անունները աչքերուս առջեւ ստանան դէմք, գիծ ու գոյն, եւ անոնց շուքերը մարմին դառնան:*

*Այս «յայտնաբերումը» հանդիսացաւ համագումարին բարիքներէն մէկը: Խօսքս կը վերաբերի մանաւանդ Հայաստանի գրողներուն, որոնք անմատչելի կը թուէին ինծի, քանի որ երբեք Հայաստան չեմ գտնուած:*

*Այս բարի եւ անուշ հանդիպումով բարի եւ անուշ սրտակցութիւն մը ծնաւ անոնց եւ իմ միջեւ: Այո՛, Մկրտիչ Պէշիկթաշլեանի բառերով՝ «Եղբայր եմք մենք, այլ մրրկաւ էինք գատուած»:*

*Պէ՛տք է նշեմ, որ յուսախար եղայ պոլսահայ գրողի բացակայութենէն: Անոնց ընդմէջէն գոնէ այցելած կ'ըլլայի՝ Հայաստանի հետ՝ Պոլիսն ալ մեծ փափաքներէս ու կարօտներէս մէկը...*

*Համաժողովի ընթացքին, ակնահաճոյ եւ արտայայտեալ տեսարան էր նաեւ հայերէն գիրքերու թուչկոտումը ձեռքէ ձեռք, երբ հեղինակները իրենց մակագրած հեղինակութիւնները իրարու կը նուիրէին, կը փոխանցէին:*

*Այս չորս օրերու ընթացքին, հայ*

գիրքը կը թագաւորէր Անթիլիասի Մայրավանքին մէջ:

Անշուշտ պէտք չէ ակնկալել, որ նման մշակութային ձեռնարկով մը հրաշք մը պիտի պատահէր հայ գրական աշխարհին մէջ:

Բայց վստահ եմ, որ ներկայ հայ գրողները գգացին, թէ տեղի ունեցաւ հրաշք մը իրենց սրտին մէջ. նո՛ր տեսիլք, վերանորոգ հաւատք, նորոգուած նուիրում:

Անոնք աւելի խանդով պիտի փարին իրենց մշակութային առաքելութեան ու աւելի խանդով պիտի շարունակեն ծաւալել իրենց ժողովուրդին՝ գրականութեան ճամբով, ի խնդիր հայութեան գոյատեւման ու հոգեմտաւոր վերելքին:

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ



Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հովանաւորութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքին մէջ գումարուող գրողներու համահայկական երրորդ համաժողովը, երեք հիմնական երեսներ կը յատկանշէ.-

Առաջին, Հայ Եկեղեցոյ Հայ գրողին եւ գրականութեան հանդէպ ունեցած աւանդական զօրակցութեան շարունակականութիւն՝ վերանորոգ ընձիւղումով եւ աճող նախանձախնդրութեամբ:


Երկրորդ, Հայաստան եւ հայկական սփիւռք համագործակցութեան խորացում՝ հայ մշակոյթի, դպրոցի, գրագէտի եւ ընթերցողի համայնական մտահոգութիւնները քննարկելով եւ հասարակաց տագնապները մարտահրաւէրներու վերածելով:

Երրորդ, հայ դպրութիւնը իր նեղ պարունակէն դուրս բերելու եւ մեր հայրենաբնակ ու աշխարհացրիւ ժողո-

վուրդին ամբողջական հոգեխառնութեան մէջ ընկալելու շարունակական գիտակից փորձ մը կը ցոլացնէ:

Մաղթանքս եւ անկնալութիւնս է որ մեր բազում խօսքերը անդրանցող թէկուզ նուազագոյն կարելիին իրագործումով պսակուի մեր համահայկական այս ճիգը:

ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՆՄԷՋԵԱՆ



Գրողների Գ. համաժողովը հրաշալի աւելի էր, որ հայրենի գրողները ծանօթանան իրենց սփիւռքահայ գրչակիցների հետ:

Այլապէս մեր փոխադարձ սիրոյ խոստովանութիւնները կը մնան որպէս գեղեցիկ խօսք:

Իսկ գեղեցկախօսութիւնը, ցաւօք, շատ յատկանշական է մեզ:


Հիմա մնում է, որ աւելի ուշադրութիւն դարձնենք ոչ այնքան տեղեկութիւնների վրայ, որքան բովանդակային հարցերի: Մի խօսքով առաջին քայլերն կատարուած են:

ՊԵՐՃ ԶԷՅՅՈՒՆՅԵԱՆ



Ես գոհ եմ գրողների համահայկական Գ. համաժողովի աշխատանքներից: Այն մեզ կրկին դէմ առ դէմ դրեց իրար եւ մեր հիմանխնդիրների: Դրանից շատերը մենք առանձին ու առանձին լուծել չենք կարող: Դրանք մէկիս կամ միւսիս խնդիրները չեն, որովհետեւ, այդ խնդիրների մէջ մենք մէկս կամ միւսը չենք, այլ մէկ ենք: Եթէ այս գիտակցութիւնը յաղթահարի մեր մէջ՝ մենք ամէն ինչ կը կարողանանք յաղթահարել:

ՅԱԿՈԲ ՄՈՎՍԷՍ



Ինչ վերաբերում է համաժողովին, ապա կարծում եմ մէջը մի կարեւոր բան կար, թերեւս անանձնական մտածումներ անելու առումով, երեւի այլ մեր ժողովների համեմատ՝ անկրկնելի էր: Կարծում եմ նաեւ հայ գրողի կերպարին հարիր ժողով էր, ոչ թէ աւանդական առումով, այլ ապագայի: Ամենայան այն էր, որ ապագայ հայրենիքի գաղափարի փնտռտուքը սթափ վերլուծումների վրայ էր խարսխուած: Պիտի շարունակվի եւ մի հայեցի տեղ կը հաստատենք աշխարհի վրայ՝ աշխարհի ոչ թէ մեր հայրենիքի մէջ:

ՌՈՒԱՆԴ ԾԱՌՈՅԵԱՆ



Գրողներու Գ. համաժողովը Մեծի Տանն Կիլիկիոյ Մայրավանքին մէջ, Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հովանաւորութեամբ, ինքնատիպ եւ հեռանկարային հանդիպում մըն էր: Համաշխարհայնացման հետեւանքով ստեղծուած նոր կացութեան լոյսին տակ քննուեցան բազմաթիւ հարցեր, տեղի ունեցան տեսակէտի փոխանակութիւններ: Պիտի ուզեմ փոխանցել տպաւորութիւն մը: Հայկական խճանկարը ներկայ էր, այս անգամ իր մտքի եւ մշակոյթի աշխատաւորներով որոնք գիրար ճանչցան եւ հաղորդ դարձան հայ գրողը յուզող հարցերուն, որոնք հայութիւնը ունին որպէս հասարակ յայտարար, որ ինքնութիւն է, բայց վտանգուած գանազան պատճառներով: Համաշխարհայնացումը, լեզուական տեղատուութիւն, համացանց եւայլն. Համաժողովէն ետք կապերու շարունակութիւնը կարեւոր է, որպէսզի ընդունելով հանդերձ մեր գանազանութիւնները, ստեղծուի հայկականութեան միութիւնը: Հայաստանէն եկած աւելի քան յիսուն գրողներու պատուիրակութեան մէջ, զարմանա-

լիօրէն չկային նորերը, որպէսզի բերեն նոր գգայնութիւնները:

Կը խորհիմ որ համաժողովէն ետք, արտայայտուած միտքերը եւ տագնապները հարկ է փոխադրել հայ հանրութեան, մամուլով եւ հանդիպումներով, որովհետեւ ընթերցողը միւս կէսն է գրողին:

ՅԱԿՈԲ ՊԱՒԵԱՆ



Հրաշալի՛ նախաձեռնութիւն: Աստուած երրորդութիւն կը սիրէ: Գրողների համահայկական 3-րդ համաժողովը Անթիլիասի Մայրավանքում աւանանանում է գործնապաշտ-առարկայական մօտեցումներով: Քիչ են ընդհանուր ուրուագծերով գեկոյցները:

Կայ միասնական մտահոգութիւն համաշխարհայնացման եւ գրականութեան առանցքը կազմող «ազգային կեղեկ» յարաբերութեան շուրջ: Երկու հակադիր տեսակէտներ համադրելու ջանացին համաժողովի մասնակիցները: Գլխաւոր եզրայնագումը մէկն է՝ պէտք է վախենալ համաշխարհայնացման նոր արշաւէն, մեր ինքնութիւնը վտանգող ոյժերը մե՛ր մէջ են, մենք գրականութիւնը պիտի միջնորդ դիտենք երկու բեւեռների միջեւ: Մեր ձայնը գրական միջազգային ընթացքների մէջ աւելի լսելի պիտի դառնայ: Մեր գրականութիւնը միշտ եղել է Արեւմուտքի եւ Արեւելքի սահմանագծում՝ բովանդակութեան ազգայինի ու համամարդկայինի տրոփով: Մեզ մօտ Շահնուրը եւ Համաստեղը, այս ելագծով իրարու հակադիր, սակայն միասնութեան, լրումի են հասցնում զեղարուեստական հզօր ներկայակալը՝ ծառայելով ժողովրդին, նրա բարոյագիտութեան բացայտումի առաքելութեանը:

Մի առաջարկ. տարիներ շարունակ կը փայփայեմ ասպարէզի վրայ տեսնե-

լու գրական համահայկական հանդէս, որը մեզ կը միաւորէր մեր շահերով, մեր նկարագրով, ապահովելով գրական հետաքրքրութիւնների միասնական դաշտ, որքան գիտեմ՝ նախագէտը չունեցող հայ գրականութեան պատմութեան մէջ: Ի հա՛րկ է, առաջարկը լուրջ ու ծանրակշիռ հիմնադրամի կը կարօտի, բայց կարծում եմ Յ-րդ համաժողովի ամբիոնը բարձր է, տեսանելի հայաշխարհին ու օրհնաբեր: Հանդէսը հայութեան երկու հատուածները համախմբող ոյժ կարող է դառնալ: Եւ այն կարելի կոչել «Գրական Համահայկական»:

ՍՈՒՐԷՆ ԳՆԻՒԷԼԵԱՆ



Արդարեւ Գ. համաժողովը ինքզինքը դրած էր՝ Հայ Գրողը եւ աւելի լայն շրջագիծով, Հայութիւնը յուզող լուրջ հարցերու քննարկման:

Ո՞ր գիտակից հայր, այն ալ հայ գրողը չէ՛ մտահոգուած, չի՛ մտահոգուելի՛ր՝ հայ գրողի՛ աշխարհի ուղղութիւններու բաղխումին հետ, հայ գրականութեան ներկայի եւ աւելին ապագայի՛՝ յատկապէս նոր սերունդի եւ անոր ընթերցելու պահասէն եւ տագնապէն:

Այս եւ նման հարցեր պարզ է՛ որ իրենց անդրադարձը ունեցած են անցեալին եւ կը յամենան մնալ այսօր եւ ցաւ ի սիրտ՝ վաղը...

Բայց պիտի քայենք: Պիտի քայենք ամէն գնով: Եթէ՛ մեր ոտքերը կքին, կը գտնենք անթացուպերը, որոնք պիտի գործածենք շատ խնամքով, որ չըլլայ թէ կէս մնայ մեր ընթացքը ...

Այս ընթացքին ... բոլորս միասին, բոլորս միասին հասնինք հոն ...

ՀՐԱՆԴ ՄՍՐԳՍՐԵԱՆ

Համաժողովի գումարումը բացառիկ առիթ էր Հայաստանի եւ աշխարհի աւելի հայութեան գրական դէմքերի հանդիպման, մերձեցման ու հարորդակցութեան: Խորհրդանշական է, որ այն կայացաւ Պէյրութում՝ երբեմնի ամենից հայահոծ գաղութում, որ ինքն էլ այսօր պէտք ունի ազգային-հոգեւոր ոյժերի գօրացման: Իմ տպաւորությամբ՝ ե՛ւ միջնորոտով, ե՛ւ ընթերցուած գեկուցումներով ու քննարկումներով, թէ՛ յարակից գրոյցներով՝ գրողների համահայկական համաժողովը հասաւ իր նըպատակին: Կ'ակնկալուի, որ այն հոգեբանական ազդակ դառնայ Հայաստանի, Միջին Արեւելքի եւ այլ տարածքների հայ գրողների համար՝ շարունակելու գրական-ստեղծագործական իրենց աշխատանքը, ստեղծելու բարձրարժեք բանաստեղծութիւններ եւ արձակ երկեր:

ՍԷՅՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Գրաճննադատ, Երեւանի պետական համալսարանի դասախօս



Հայաստանի Գրողներու Միութեան եւ Սփիւռքի հայ գրողներու մասնակցութեամբ, Պէյրութի մէջ գումարուող այս համաժողովը, թիւով երրորդը ըլլալով եւ նախորդ երկու համագումարները նկատի առած, կը կարծեմ թէ պիտի կարողանայ, ինքզինք արդարացնել իր արծարծած գրական նիւթերով ու հետաքրքրութիւններով:

Նախ, Սփիւռքի մէջ գայն կազմակերպելու գաղափարը իսկապէս խրախուսիչ եւ ոգեւորիչ է, թէ՛ հայրենիքի եւ թէ՛ Սփիւռքի համար: Այս համագործակցութիւնը կրնայ գրական ու շինիչ գործերու մղիչ ոյժը դառնալ, որոնց իրականացմամբ կրնայ շահիլ հայ գրականութիւնը, հայ գրողը, հայ գիրն ու գիրքը:

Պէտք է ըլլալ նաեւ զգոյշ, մանաւանդ առնուած որոշումներուն նկատմամբ, որոնց իրականացումը յանձնուեցաւ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութեան, որ երկամեայ տեւողութեան ընթացքին, պիտի ջանայ ամէն գնով ճշմարտութեան վերածել զանոնք:

Կարեւորը որոշելը չէ, այլ գանոնք գործի վերածելը: Ես սրտանց կ'ողջունեմ տարուած այս աշխատանքը՝:

ՄԱՐԳԱՐ ՇԱՐԱՊԽԱՆԵԱՆ




Գրողների համահայկական Գ. համաժողովը նախորդ երկու համաժողովների բաղադատութեամբ անցաւ աւելի կազմակերպուած ու նպատակասլաց: Սա, անշուշտ, առաջընթաց քայլ էր: Լաւ էր ընտրուած համաժողովի քննարկելիք հիմնական թեման՝ «Հայ գրականութիւնը՝ համաշխարհայնացման մարտահրաւէրներու դիմաց»:

Ուրիշ հարց, որ գեկուցումներում եւ ելոյթներում այդ յոյժ կարեւոր խնդիրը քննուեց ոչ այնքան խոր ու համակողմանի, եւ յարակից թեմաների շուրջ գեկուցումներն ու ելոյթները յաճախ շեղուեցին բուն խնդրից եւ եղան առաւել նկարագրական ու մակերեսային: Հաճոյքով ու հետաքրքրութեամբ ունկնդրեցի յատկապէս Վեհանոյշ Թեքեանի, Ալեքսանդր Թօփչեանի, մանաւանդ Գրիգոր Շահինեանի գեկուցումները: Անհամբեր սպասում էի լսել «Եղեռնը թուրք գրականութեան մէջ» գեկուցումը, որ պիտի կարդար Մկրտիչ Մարկոսեանը, որը, ցաւօք, ներկայ չեղաւ, ինչպէս նաեւ ինձ համար շատ ցաւալիօրէն համաժողովին ներկայ չգտնուեցին պոլսահայ իմ սիրելի գրողները, որոնք արդի սփիւռքահայ գրականութեան փայլուն ներկայացուցիչներն են ...

ՀԵՆՐԻԿ ԲԱՆՁԻՆԵԱՆ

Գրականութիւնը հայ ժողովրդի համար աւելին է քան գրականութիւնը, այն հոգեւոր եւ մտաւոր մի ոյժ է, որի շուրջը վերաստեղծում եւ վերակառուցում է ազգի ոգին, նրա կեցութեան անառարկելի հիմնաքարը: Գրողների համահայկական երրորդ համագումարը այս տեսանկիւնից կարեւոր իրադարձութիւն էր մե՛ր կեանքում: Նախ՝ աշխարհի տարբեր կողմերից եկած հայ գրողները հնարավորութիւն ունեցան հանդիպել միմեանց, խօսել միմեանց հետ, ապա՝ բարձրացուած հարցերը ունէին արդիական մեծ նշանակութիւն: Ի հարկէ, հարցերը վերջնական պատասխան չունեն, բայց գրականութիւնն ինքը մի՞թէ հարցեր առաջարկել չէ, իսկ պատասխանը մի՞թէ՞ չի մնում ժամանակին: Ես գոհ եմ այս համագումարից եւ հաւատում եմ, որ չորրորդ համագումարը կը լինի որպէս գեղարուեստական արժէքների իսկական «բերքահաւաք»:

ՀԵՆՐԻԿ ԷՌՈՅԵԱՆ



Երրորդ համաժողովը աննախադէպ էր թէ՛ ներկայցուցչական կազմով, թէ՛ քննարկուած հարցերի տարողութեամբ ու արդիականութեամբ:

Չորս օր շարունակ Պէյրութը վերահաստատեց հայ գրականութեան երկրորդ մայրաքաղաքը լինելու գեղեցիկ աւանդոյթը: Աշխարհի տարբեր ծագերից ժամանած գրողները ոչ միայն բացառիկ առիթ ունեցան միմեանց ճանաչելու, այլեւ հանգամանալի վերլուծեցին այն մարտահրաւէրները, որոնք այսօր ծառայած են մեր ժողովրդի եւ գրականութեան դիմաց: Հայ գրական դաշտում փլուեցին դեռ եւս առկայ Սփիւռքի եւ Հայրենիքի միջեւ բաժանարար պատնէշները:

Հնչեցին մտահոգություններ (գրական միասնացման, միասնական ուղղա-

գրույթեան, հայ գրականութեան միջազգայնացման եւ այլն), որոնց լուծմանը պէտք է լծուեն Հայաստանի գրողների միութիւնը եւ համայնքների գրական կազմակերպութիւնները, մինչեւ չորրորդ համաժողով, որը տեղի կ'ունենայ 2008թ. Երեւանում:

Պէջրութեան հաւաքը անցաւ արդիւնաւէտ ու գործնական մթնոլորտում, եւ պատեհ առիթ է՝ երախտիքի սրտազին խօսքեր ասելու կազմակերպիչ յանձնախումբին ու առաջին հերթին Արամ Ա. Կաթողիկոսին այս յիշատակաւ ձեռնարկի փայլուն իրագործման համար:

ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆ



«Համահայկական» իւրաքանչիւր բարձրաձայնում, անշուշտ, ոգեւորող է, մանաւանդ մեր՝ մենակատարներ, պրիմադոններ, առանձնաչորհաներ փայտալույս տեսակի պարագայում:

Երրորդ համահայկական համաժողովի լիբանանեան ձեւակերպն առաւել իրատեսական-կառուցողական է իր բովանդակութեամբ: Զեկուցումներն ու քննարկումները ոչ այնքան դարձաւորաւէրներ ընդունողի, այլ առաւելապէս ճանապարհ մատնանշողի եւ ինքնագնումի ելածի կեցուածքի մէջ են:

Միթերից, պատրանքներից թօթափուողի, համահայկական գրականութեան գիտակցականութիւն կրողի պատրաստակամութեան մի ինքնօրինակ կոչնակ է, հայ մտաւորականի հպարտ, չպարտադրուած խոստովանանք է, աշխարհի գրականութեանը ներդաշնակութիւն, սեփականն առանց տուայտանքի մատուցելու, անտեղի հեկեկոցից ու գոհապարտի ճակատագրից հրաժարուելու շարունակութիւն ենթադրող խոստովանանք է այս համահաւաքը:

ՅՈՎԻԿ ՀՈՎԷՅԵԱՆ

Գրողներու Համահայկական Գ. Համաժողովի Սփիւռքի մէջ գումարուիլը ողջունելի երեւոյթ է անկասկած եւ ակրնկալելի է, որ ապագային եւս կրկնուի:

Ուշագրաւ էր Հայէպահայ Գրողներու խումբին մէջ ընդգրկուած երիտասարդ տարրերու ներկայութիւնը:

Աւելի ուշագրաւ էր, Հայաստանի Գրողներու, աւելի քան յիսուն հոգի հաշուող խումբին մէջ երիտասարդ տարրերու բացակայութիւնը:

Մեր սպիտակահեր հայրենի գրողները մինչեւ ե՞րբ պիտի շարունակեն Հայրենի Գրականութեան անփոխարինելի եւ մնայուն ներկայացուցիչները ըլլալու իրենց յաւակնութիւնը: Ժամանակը չեկա՞ւ հին կոճղը նոր ոստերով պատուաստելու:

ՅԱԿՈՒ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



Գրական հաճոյք էր ներկայ ըլլալ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքին մէջ գումարուած Գրողներու Համահայկական Գ. Համաժողովին:

Դրական բազմաթիւ երեւոյթներուն կողքին կ'ուզեմ նշել ժխտական երեւոյթ մը, որ մեզի, երիտասարդ մասնակիցներուն համար յատուկ իմաստ ունեցաւ՝ բացակայութիւնը հայրենի երիտասարդ գրագէտներուն եւ բանաստեղծներուն, որոնց ներկայութիւնը կրնար այլ որակ եւ մեծ եռանդ ապահովել համագումարին:

Յոյս ունինք, որ յաջորդական հանդիպումները, սփիւռքահայ եւ հայրենի գրողներուն առիթ կը դառնան գործնական եւ արդիւնաւէտ քայլեր առնելու:

Համագումարին մեծ բացական սակայն իսթանպուլահայ գրականութիւնն էր, իր վաւերական ներկայացուցիչներով:



Շնորհակալուծիւն կազմակերպիչներուն:

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ



Այս համագումարը, ինչպէս իր նախորդները, սքանչելի առիթ մը եղաւ՝ որպէսզի Հայաստանի ու արտասահմանի տարածուն աշխարհագրութեան վրայ ապրող հայ գրչի մշակները ծանօթանան մէկգմէկու հետ, գիրքեր ու հասցէներ փոխանակեն, կամուրջներ հաստատեն:

Փորձառուները կ'ըսեն արդէն, թէ նմանօրինակ համագումարներուն գրեթէ միակ արդիւնքը ա՛յդ կ'ըլլայ: Օգտաշատ արդիւնք մըն է ատիկա, բնականաբար:

Բայց ես կը խորհիմ որ համագումարը առարկայական ու գործնական աշխատեալածե մըն ալ պէտք է որդեգրէր: Տեսական ու վերլուծական գեկոյցներէն անդին՝ օրակարգի պէտք է բերուէին հայ գրողը տազնապեցնող խընդիրները: Զոր օրինակ, երիտասարդ գրիչները քաջալերելու խնդիրը, հայ գիրքի տարածման հարցը, ուղղագրութեան միասնականութիւնը:

Մասնաւորաբար, ուղղագրութեան պարագան, գարմանայի է որ դեռ անլոյծ կը մնայ ու ամէն համագումարի՝ դուրս կը թողուի օրակարգէն ու կը «փոխանցուի» յաջորդ համագումարին, կարծէք անկարեւոր հարց մը ըլլար: Ժամանակն հասած է՝ որ գործնական լուրջ քայլեր առնուին այս ուղղութեամբ:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ



Յաջորդական չորս օրերու ընթացքին (6-9 Ապրիլ 2006) տեղի ունեցած սոյն համաժողովը աւարտեց իր աշխատանքները:

Առանց մտնելու մանրամասնութեան մէջ, տպաւորութիւններու լոյսին տակ, կ'ուզեմ ընդգծել յատկանշական հետեւալ կէտերը-

(ա) Ժամանակն ու վայրը մեզի յուշեցին Ապրիլեան նահատակներուն աճիւնները պարփակող խորհրդանիշ Յուշարձան-Մատուռը, եւ անցնող տարուան 90-ամեակը, իբրեւ անլուրի դօղանջ ազգային պահանջատիրութեան: Հայ գրողը գիտակից է իր կոչումին, եւ առաքելութեան: Հաւատքի քննութեան պահն է իւրաքանչիւր գիրք եւ համաժողով:

(բ) Ամէն ձիգ, իրագործումի ճանապարհին, կը բաղխի որոշ դժուարութիւններու: Ամբողջական ներկայութիւն եւ մասնակցութիւն՝ որքա՛ն ալ բաղձալի թուին, սակայն անհակալիւնելի պայմաններու պարտադրանքը կը ստիպէ մեզ ընդունիլ եւ համակերպիլ տիրող կացութեան:

(գ) Խթանպուլահայ գրողներու բացակայութիւնը անուղղակիօրէն դարմանուեցաւ Տիկ. Հիլտա Գալֆայան-Փանոսեանի ներկայութեամբ եւ իր կատարած գեկուցումով, որ համապարփակ վերլուծումի ենթարկեց խթանպուլահայ քերթողութեան բերած նորարարական շունչը հայ գրականութեան մէջ:

(դ) Համաժողովին հնչեցին նաեւ միասնական ուղղագրութեան նուիրուած ելոյթներ: Եղան առաջարկներ՝ հետագային կազմելու մասնագիտական յանձնաժողովներ, գիտական մօտեցումով միջին ու նոր եզրեր գտնելու, եւ պետական հրամանագիրի արժանացնելու կատարուելիք բարեփոխումները: Եւ այս՝ տրամաբանական լուծումներու ճանապարհով եւ առանց առճակատումի: Այժմ, Երեւանի կարգ մը վարժարաններ արդէն իսկ անցած են գործնական դասընթացներով ուսուցողական աշխատանքի, որուն մէջ հիմնական դեր կը վերցնեն Երեւանի «Սփիւռք» եւ

Փարիզի «Մաշթոց» գիտատևադաստիարակական կեդրոնները:

(ե) Համաշխարհային աստուածաբանական կոնգրեսները, սակայն եթէ կարենանք օգտագործել նորագոյն կարելիութիւնները համակարգչային դրութեան, կրնանք նոր լուսամասներ բանալ ու միջազգային գրական բեմահարթակներուն մօտեցնել մեր գրական ստեղծագործութիւնները:

(զ) Գրական ստեղծագործութիւնը, որքան ալ ծնունդ կ'առնէ գրողին անհատական ներոյժէն եւ իր իմացական կարողութիւններէն, սակայն մամուլն ու հեռատեսիլային հաղորդումները նրկատառերի մեծ դերակատարութիւն մը ունին գրական երկերու տարածումին մէջ:

(է) Համաժողովները ունին այն մեծ դերը, որ գրական ղեկները պիտի ծանօթացնեն իրարու, պիտի ստեղծեն մնայուն կապ մը՝ որուն կը ձգտինք բոլորս: Սակայն, անոնց ծրագրաւորումն ու իրագործումը կը կարօտին տնտեսական լայն հնարաւորութիւններու:

Պիտի գայ օր մը, երբ առարկայականորէն պիտի մտահոգուինք նաեւ այս գերիշնորհով: Զէ՞ որ Հայ գրողը տակաւին կ'ապրի մղձաւանջը իր երկերուն տպագրութեան մեծագումար ծախսերուն:

Ուրեմն, անհրաժեշտ է մտածել Հայ Գրական Հիմնադրամի մը ստեղծումին մասին:

ԱՐԱՄ ՍԵՓԷԹՅԱՆ



Համահայկական գրողներու 3-րդ Համագումարը, որ տեղի ունեցաւ 6-10 Ապրիլ 2006-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, կարելի է համարել իր տեսակին մէջ իր նախընթացը չունեցող գնահատելի եւ պատուաբեր իրագործում մը:


Ան բացառիկ առիթ մը հանդիսա-

ցաւ հայրենի եւ աշխարհով մէկ ցրուած Հայ գրողներու ստուար թիւը մէկտեղելու եւ իրարու ծանօթացնելու եւ անոնց միջեւ գոյութիւն ունեցող, այսպէս կոչուած «արուեստական պատուարները» վերացնելու նախափորձ մը: Նաեւ՝ եղաւ անհրաժեշտ պատեհութիւն մը, սեղան բերելու արդի Հայ գրողը տալանայեցնող հիմնահարցեր, ինչպէս Հայ գիրքի տարածումը, մեր գրականութեան մէջ անտեսուած մարգերու դարմանումը, Հայ գրականութեան միջազգայնացումը՝ համաշխարհայնացման արդի մարտահրաւէրներու դէմ հանդիման:

Անշուշտ, ունէինք այս անկնկալութիւնը, թէ շեշտուածօրէն օրակարգի վրայ կը գտնուին լեզուական, ուղղագրական, ինչպէս նաեւ այլ հրատապ նշանակութիւն ունեցող հիմնական հարցեր, որոնք քննարկման նիւթ դարձան տարերային եղանակով:

Մեր ցանկութիւնն է, որ Հայրենիք-Սփիւռք համաժողովները դառնան ականգնութիւն՝ կարենալ հաւաքաբար նուիրագործելու համար մեր գրողներու առջեւ ծառայած գրողական, զարգացման, տարածման եւ միջազգայնացման միջոցառումները արդի ժամանակներու համաշխարհայնացման մարտահրաւէրներուն դիմաց:

ՏՌՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ



Այս համաժողովը կու գայ անգամ մը եւս շեշտել, որ Սփիւռք-Հայրենիք համագործակցութիւնը այն միջոցառումն է, որ Հայ գրողներ կը միաւորէ, ծանօթութիւններու, միտքերու փոխանակումի լաւագոյն միջոց է, որպէսզի խթանուած նոր առաջարկներով, Հայ գրողը ներկայացնէ մեր ժողովուրդին բոլոր տեսչանքները, առաջին առիթով ամրապնդէ մեր միասնականութիւնը

ինչ որ պակասած է յաճախ:

Այս համագումարը տեւեց չորս օր զարմանալիօրէն բացակայութեամբը իսթանպուլահայ գրողներու: Ի՞նչ գրեմ այս համաժողովին մասին, երբ մեզի հետ չէին Ջահրատ, Հատտէճեան, Խրախունի, Իգնա Սարրասյան եւ ամբողջ հոյլը իսթանպուլահայ գրողներու:

Մենք լսեցինք շատ գեկոյցներ՝ մանկապատանեկան գրականութեան մասին - գեկուցողներ էղուարդ Միլիտոնեան եւ Գրիգոր Շահինեան - Կլոպալիզացիան եւ Հայ գրականութիւնը, գեկուցող՝ Գառնիկ Անանեան - ու բազմաթիւ այլ ելոյթներ:

Եղբայրական էր մթնոլորտը: Տպաւորիչ էր բացման արարողութիւնը, Ամենայն Հայոց Հայրապետի ողջոյնի գիրը, բացման ոգեւորիչ խօսքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհափառ Հայրապետ՝ Արամ Ա. - ողջոյնի գիրերը Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Ռ. Քոչարեանին եւ այլ պետական դէմքերու:

Ներկաներու միջեւ սրտակցութիւն մը յառաջացաւ. այս եւս օգտաշատ երեւոյթ մը:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ



Սփիւռքահայ եւ հայրենի գրողներու համաժողովին կայացումը Լիբանանի մէջ ընդգծելի նշանակութիւն ունի: Ան կ'արժեւորէ Սփիւռքը ընդհանրապէս, որպէս հայրենիքի լրացուցիչ իրականութիւն եւ Լիբանանը՝ մասնաւորապէս, որպէս Սփիւռքի բարախուն սիրտը, որուն պարգեւած մշակութային ազատութիւնը եւ մայրենի լեզուն անկաշկանդ կերպով ուսուցանելու կարելիութիւնը մեր կրթական հաստատութիւններէն ներս՝ իւրաքանչիւր կարեւորութիւն կ'ընծայեն Լիբանանին: Այսպիսի մթնոլորտի մէջ Գրողներու Հա-

մահայկական Գ. Համաժողովին գումարումը Անթիլիասի Մայրավանքին մէջ, Կիլիկիոյ կաթողիկոսութեան բարեխնամ հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսի հովանաւորութեան տակ, պատմութեան կողմէ պիտի գնահատուի եւ արձանագրուի հայ մշակոյթի եւ գրականութեան ոսկեմատեանին մէջ՝ իր բացառիկ նշանակութեամբ եւ տարողութեամբ:

Երբ ազգին գրողները կը մէկտեղուին յստակ օրակարգի շուրջ՝ հարցերը քննարկելու, կարծիքներ արտայայտելու եւ լուծումներ առաջադրելու համար, կը նշանակէ, թէ մեր գրականութեան հոգեմտաւոր ճանապարհը անշեղ կ'ընթանայ: Մէկզմէկ ճիշդ լսելով, աշխարհի մշակոյթներուն աւելի՛ լսելի կը դառնանք: Մենք մեզ լաւ պատրաստելով, հայ ընթերցողին աւելի՛ մատչելի կ'ըլլանք, մեր հոգևոյն աշխարհը աւելի պայծառ կերպով կը մատուցանենք:

Համաժողովին աշխատանքը՝ իր նպատակաուղղուածութեամբ, կարող է մեր առկախ հարցերուն լուծումներ առաջադրել, ինչպէս օրինակ, հայրենիքի մէջ մեսրոպեան ուղղագրութեան վերահաստատման ի խնդիր գործնական մօտեցումներ, որոնք կրնան բարեփոխել ուղղագրութիւնը որոշ ժամանակահատուածներու ընթացքին, աստիճանաբար, առանց խուճապ ստեղծելու:

Ակնարկելով Համաժողովին առթիւ յարուցուած հարցումին, թէ ի՞նչ կ'ակընկալուի հայ գրականութենէն՝ համաշխարհայնացման մարտահրաւէրներու դիմաց, հարկ է նշել, որ այս հարցը աշխարհի տարբեր-տարբեր մտաւորական շրջանակներու մէջ ծեծուած մերօրեայ նիւթերէն է՝ իր քաղաքական, տրնտեսական եւ մշակութային տարբերակներով: Քաղաքական խորքի վրայ եւ միահեծան ուժի «բարոյականութեամբ» հարթուած ուղեգիծ: Հայրենիքը՝ իր աշխարհագրական դիրքով, պետական կառոյցով եւ համախումբ հայութեամբ,

տարբեր ուղղութիւններէ եկած հոսանքներուն ազդեցութիւնները սերտելու, անոնց հետ շփուելու, ապա մերժելու կամ օգտուելու դարաւոր փորձառութիւնը ունի անկասկած: Ան ի վիճակի է դէմ դնելու նաեւ համաշխարհայնացման փորձութեան, քանի որ ան գիտցաւ եւ գիտէ՛ աչքի լոյսի պէս պաշտպանել ու պահպանել հայ ոգին ամենադաժան ժամանակներուն իսկ. հեռաւոր եւ մօտաւոր մեր պատմութիւնը վկայէ:

Գիտնանք նայիլ հայելիներու մէջ ցոլացող մեր ներկայութեան, բայց երբեք չմոռնանք մեր իրական դէմքն ու ինքնութիւնը... Երբեք չեմ գգար, որ առաջին անգամ կը մասնակցիմ նման համաժողովի մը, որովհետեւ այստեղ ամէն բան ինձի ծանօթ կը թուի եւ կարծես անոր կը պատկանէի ի սկզբունէ...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ



Կիլիկեան Հայաշխարհի մշակութային ու գրական օրրանին տարագիր կեդրոն՝ Անթիլիասի պարզունակ շուքին տակ կայացած Գրողներու Համահայկական Գ. Համագումարը բնական մէկ օղակն է մեր մշակոյթի եւ գրականութեան երկար շղթային:

Ապացոյց մը, որ մեր եկեղեցին ու մանաւանդ անոր տարագիր մէկ թեւը, ինքզինք լայնօրէն կը տարածէ հայ մշակոյթի բոլոր մարզերու իսկական ծառաներուն թէ՛ իշխաններուն վրայ:


Հայկեան տոհմի մեծ ընտանիքի մէկ օճախը՝ հայ գրականութիւնը եւս ունի իր ժամանակակից մտահոգութիւնները: Այդ մտահոգութիւնները միասնաբար դիմակալելու եւ միասնաբար փարատելու ճիգ մըն էր այս համագումարը:

Առիթ մը՝ միասին մտածելու, միասին աշխատելու եւ միասին յղթանակ ապահովելու: Առիթ մը՝ մեր ժողովուրդի

դի երկու հատուածներու մտահոգ ներկայացուցիչներուն, գիրար ճանչնալու եւ իրարմով գօտեպնդուելու: Առիթ մը ինքնաքննութեան: Առիթ մը գիտակցելու, թէ՛ մտաւորականը կամ գրողը ուղեցոյց եւ կողմնացոյցն է ժողովուրդի բոլոր խաւերուն՝ վերէն վար թէ՛ վարէն վեր:

Նման համագումարներ լուծումներ չեն բերեր հարցերուն այլ՝ որոնումներու ճամբայ կը հարթեն: Կը յուսամ եւ կը հաւատամ, որ մօտ օրերուն համագումարի որպէս արդիւնք գործնական արտայայտութիւններ կամաց-կամաց կը ծագին մեր գրական երկնակամարին վրայ, որ ըսել է մեր ազգային կեանքի երկնակամարին վրայ:

Վ.ՐՈՒԺԱՆ ԱՐԲ. ՀԵՐԿԵԼԵԱՆ



Բոլոր այն հանդիպումները, որոնց նպատակն է կապերի խորացումը Հայաստանի եւ Սփիւռքի մտաւորականութեան, գրողների եւ արուեստագէտների միջեւ, շատ կարեւոր են: Եւ գրողների պէյրութեան հանդիպումը այդ հանդիպումների մէջ, կարծում եմ, յաջողուածներից էր: Հեռակայ ծանօթութիւնները վերածուեցին ուղղակի ծանօթութեան, երբեմն մտերմութեան, համագործակցութեան: Չեմ կարող չասել, որ հանդիպումը լաւ էր կազմակերպուած: Դրսից եկած գրողները հնարավորութիւն ունեցան ծանօթանալու Լիբանանի պատմական յուշարձաններին, բնութեանը: Պաալպէքի համալիրը իսկապէս անջնջելի տպաւորութիւն էր գործում առաջին անգամ տեսողի վրայ: Մեզ համար ոչ միայն հետաքրքրական, այլեւ ուսանելի - անհրաժեշտ էր հանդիպումը Այնճարի բնակչութեան հետ, հանդիպում, որն օգնում է հայկական սփիւռքի խնդիրները աւելի խորն հասկանալու:

Այս հանդիպման ինձ համար կարեւոր արդիւնքներից մէկը ուղղադրութեան խնդրում փոխըմբռնման հասնելու հնարաւորութեան ուրուագծումն էր: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Առաջինի պատգամը այն մասին, որ սփիւռքը պէտք է աւելի քիչ ագրեսիւ, յարձակողական լինի այս խնդրում, շատ օգտակար եմ գտնում: Ի հարկէ, հայաստանեան մտաւորականութիւնը եւս պէտք է աւելի մեծ ըմբռնում ցուցաբերի սփիւռքահայութեան մտահոգութիւնների հանդէպ: Եւ պէտք է միասին, առանց հապճեպի, փորձենք գտնել ամբողջ հայութեան համար լաւագոյն ելքը:

Ուղղադրութեան խնդիրը միայն ապացոյցներից մէկն է այն բանի, թէ ինչքան ներքնապէս բարդ են մեր ժողովրդի երկու հատուածների յարաբերութիւնները: Եւ այստեղ անսպասելի կամ անհասկանալի ոչինչ չկայ: Ապրել եւ ապրում ենք միանգամայն տարբեր պայմաններում, լուծում ենք յաճախ շատ տարբեր խնդիրներ, եւ փոխըմբռնումը ձեռք է բերում նաեւ այսպիսի հանդիպումների միջոցով:

Այժմ գոտս գրական խնդիրների մասին: Գոնէ ինձ համար շատ օգտակար եղան շփումները սփիւռքի երիտասարդ եւ միջին սերնդի գրողների հետ, եւ շատ բան իմացայ երիտասարդների ստեղծագործութիւնների մասին եւ մի անգամ եւս համոզուեցի, որ հայաստանեան եւ սփիւռքեան գրականութեան զարգացման շատ միտումներ ընդհանուր են: Զեկուցումներում եւս հետաքրքրական շատ բան կար: Բայց գրական խնդիրների քննարկումը այս հանդիպման ժամանակ չեղաւ եւ չէր կարող լինել այնքան հանգամանալից եւ խորը, ինչքան սպասւում էր: Նախ, գեկուցումները շատ էին: Եւ յետոյ, մենք բոլորս վերջնականապէս համոզուեցինք, որ գրական կամ գիտական լուրջ խնդիրների քննարկումները բազմա-

մարդ հաւաքներին անհնար են: Պէտք է մտածել աւելի նեղ կազմով հանդիպումների մասին, որոնք նուիրուած կը լինեն գրական ֆոնէրէթ խնդիրների, եւ այստեղ եւս Արամ Վեհափառը իրաւացի էր: Ընդ որում, սա մի մտահոգութիւն է, որ բնորոշ է նաեւ Հայաստանի գրական կազմակերպութեանը:

Բայց ինչ մասնակի թերութիւններ էլ նշենք, Պէյրութը հայ մշակույթի կարեւոր օճախներից է, եւ այնտեղ հանդիպելու գաղափարը լաւ գաղափար էր:

Պէյրութում տեղի ունեցած այս հանդիպումը պատուաւոր տեղ է ունենալու հայկական գրական շարժման պատմութեան մէջ: Նախորդ երկու հանդիպումները եւս շատ կարեւոր էին. բայց այս մէկը իր կազմակերպութեամբ գերազանցում էր դրանց:

Մեր մէջ խկապէս ծնուեց մի ընդհանուր գրական դաշտի գաղափարութիւնը:

Բայց աւելի յստակ երեւացին նաեւ հանդիպումների ծնած խնդիրները: Գրականութեան զարգացման բուն խնդիրները բազմամարդ ժողովներում քննարկելը շատ դժուար է: Ապագայում երեւի պէտք է լինեն աւելի նեղ հանդիպումներ ըստ գրական հետաքրքրութիւնների:

Ինձ համար այս հանդիպման ամենազնահատեղի արդիւնքներից մէկը ուղղադրութեան հարցում ուրուագծուած աւելի հաւասարակշիռ մօտեցումներն են, մէկը միւսին ընդառաջ գնալու ձգտումը: Մէկուկէս տասնամեակ մեզ յոգնեցրած վէճը կարծես թէ գտնում է իր ճիշդ արդիւնաւէտ ճանապարհը:

Ա.Զ.Ա.Տ ԵՂԻԱ.Զ.Ա.ՐԵԱՆ



Գրողներու Համահայկական Գ. Համաժողովը տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մայրա-

վանքի Վեհարանի դահլիճին մէջ 6-9 Ապրիլ 2006ին, մասնակցութեամբ 130 գրողներու, մտաւորականներու:

Անոնք եկած էին Հայաստանէն, Արցախէն, Զաւախքէն եւ Սփիւռքի բոլոր գաղութներէն: Ինծի համար այս Համաժողովը եղաւ հոգեկան ու մտային նոր հաղորդութեան մը, դէպի նոր հորիզոններ սեւեռելու լաւ առիթ մը: Երբ հոն կը տեսնեմ ներկայութիւնը տարեց ու երիտասարդ գրողներու, հաւատքս կը զօրանայ մեր լեզուին եւ մեր գրականութեան ապագային նկատմամբ, թէ՛ «Մահ չկայ հայոց ազգին»:

Ու ինչպէ՞ս չյուզուիլ, չուրախանալ, երբ հոն կը հանդիպիս ժազ Ս. Յակոբեան բանաստեղծին, Սփիւռքի բանաստեղծութեան նահապետին, որ այնքան առոյգ է իր 89 տարիներու «թեթեւ» բեռով ... Երբ ան կ'արտասանէ իր «Մենք» հիւանայի բանաստեղծութիւնը, որ բանահիւստութիւն մըն է ինքնին նուիրուած հայոց պատմութեան հանգրուանային փուլերուն, մաղթանքներ կը բանաձեւես աղօթքի բառերով, որպէսզի առոյգ ու առողջ մնայ Ազգն հայոց, ամէնուր, աշխարհի բոլոր անկիւններուն:

Իրարու հետ նոր ծանօթացում գիտենք անունները գրողներու, իրենց բացակայութեան, բայց այսօր կը տեսնենք զանոնք մեր մօտը, նստած մեր կողքին: Կը մտածես. ուրեմն բոլորս ունինք միեւնոյն տագնապը, այրող տառապանքը. հայ մնալ: Արդէն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի աշակերտները կ'երգեն «Հայ ապրինք եղբարք»ը, որ լուռ եւ խօսուն պատգամ մըն է բոլորիս: Որքա՛ն կարիքը ունինք նման յորդորներու, յիշեցումներու. այո, հայ ապրինք, եղբարք: Հին օրերէն կու գայ այս դասը, որովհետեւ եղած ենք երբ պարբերաբար՝ (կամ՝ յաճախ) եղբայրութենէ՛ հեռու, որ ոչինչ բերաւ մեզի:

Արցախի բանաստեղծ Ռոպէրթ Ե-

սայեանը մօտս նստած է ու չեմ գիտեր թէ ինքն է. սեղանիս կը սահեցնէ իր բանաստեղծութեան գրքոյկը, ափի ծաւարով: Անունը լսած եմ, կարդացած եմ իր քերթուածները հիւանայի, բայց ինչ գիտնայի թէ քովս նստողն է: Ողջագուրումը կ'ըլլայ անխուսափելի:

Արամ Ա. Կաթողիկոս ներկայ է մեր մէջ, բացման եւ փակման հանդիսաւոր պահերուն: Ան կ'ողջունէ բոլորս, Համաժողովը կը վայելէ իր բարձր հովանաւորութիւնը, կը յիշէ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան ժրաջան անդամ, հայկական բաժնի տնօրէն Դոկտ. Զաւէն Եկաւեանը, որ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հրատարակչական թէ՛ հայապահպանման այլազան հարցերու եւ աշխատանքներուն նուիրուած խորհրդականն է:

Վեհափառը շեշտը կը դնէ ժողովավարական թէ՛ գրական ներկայացումներու կարգ մը հարցերու, թէ՛ «Սօսքը պէտք է ըլլայ կարն, քննարկումը՝ երկար»: Թէ՛ հարկ է ուշադիր ըլլալ որակի բարձրացման, որովհետեւ որակի անկում կայ բոլոր մարգերու մէջ: Թէ՛ հարկ է առաւել գուրգուրանք ցուցաբերել երիտասարդ տարրերու, որովհետեւ անոնք «միայն մեր ապագան չեն, այլ ներկան իսկ են»:

Ո՞ր մէկուն մասին արտայայտուի՞նք, սիրոյ սեղաններուն, իրարու հետ ստեղծագործական գիրքերու, հասցէներու փոխանակման, Վեհափառին կողմէ՛ բոլորին տրամադրուած հաստատիւր հատորներուն ...

Անթիլիաս, Հայաստանն ու սփիւռքը հոս են, կը վայելենք ներկայութիւնը Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեանի եւ իր գործընկերներուն: Անոր գեկոյցները եղան միշտ բարեխուս սրտի ջերմ արտայայտութիւն: Արամ Ա. Վեհափառը Համաժողովի փակման նիստին մեծարեց Համաժողովի նախագահ Լեւոն Անանեանը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկո-

սուլթան «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Բաժանումը յուզիչ էր, տեսանք, ճանչցանք գիրար, սիրայիր մաղթանքներով հրաժեշտ առինք մինչեւ յաջորդ համագումար:

Թող միշտ փայլի հայոց լեզուն, անհնչէ իւրաքանչիւր հայու շրթներէն, որպէսզի ապրի նաեւ հայ դարաւոր գրականութիւնը:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ



Գրողներու Համահայկական Գ. Համաժողովը իր աւարտին հասած իրագործում մըն է արդէն, որուն մասնակցած հայրենի եւ սփիւռքահայ գրողները, անկասկած, յառաջիկայ օրերուն իրենց տպաւորութիւնները պիտի յանձնեն սպիտակ թուղթին՝ վեր առնելով այս բացառիկ հանդիպումին պատմական նշանակութիւնն ու արժէքը: Աւարտած: Իրողապէս՝ անկասկած, բայց իբրեւ խորհուրդ եւ գալիք օրերուն հետ կենսագործուելու կոչուած ապագայատես ծրագիր ու մշակութային-գրական հոգեմտաւոր պարտականութիւն եւ հաւաքական ուխտ՝ ոչ երբեք: Փաստօրէն, կարելի չէ աւարտած իրագործում մը նկատել հայրենաբնակ եւ սփիւռքահայ գրողները անմնացորդ ծառայութեան եւ ամէնօրեայ նուիրումի գոհասեղանին շուրջ համախմբած այս եզակի հաւաքը, որովհետեւ թէ՛ համախմբումին առաքելութիւնը կողմնորոշող Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եզրափակիչ խօսքով եւ թէ՛ աւելի քան 125 գրողներու մտածումները, ապագայի պարտաւորութիւնները եւ պատկերացումները խտացնող հաղորդագրութեամբ՝ համաժողովը եկաւ հաստատելու, որ դէպի ցանկալի ապագայ աղեղուած այս անվերջակէտ երթը ճիշդ չէ ամփոփել չորս

օրերու վրայ երկարած բեղուն եւ օգտաշատ գործունէութեան մը կադապարին մէջ: Կեանքի հոլովոյթին գուգահեռ ամէն օր ա՛յլ աւելի զարգանալու, նորանոր նուաճումներ արձանագրելու կոչուած կենդանի գործընթաց մըն է Գրողներու Համահայկական Գ. Համաժողովը, որուն յաղթերթին հաւատարիմ՝ հայ գիրի եւ մշակոյթի անխոնջ ծառաները անկարելին կարելի պիտի դարձնեն, որպէսզի հայ գրականութեան նաւը շարունակէ ընթանալ վճռակամ ու նպատակասլաց՝ ի փառս հայ գրականութեան եւ ի պանծացումն Մեսրոպաւանդ դարաւոր արժէքներուն: Մաշտոցեա՛ն կտակին:

Այս իմաստով՝ կրնանք անվարան հաստատել, որ Մեծի Տանն Կիլիկիոյ օրհնեալ կամարներուն ներքեւ գումարուած գրողներու Համահայկական Գ. Համաժողովը եղաւ բառին ամբողջական առումով մշակութային բացառիկ յաղթանակ մը, հայ գիրի եւ դպրութեան նորագոյն յաղթանակը:

ՍԱՌԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



Հոգեպէս՝ ինծի համար շատ կարեւոր է, որ սոյն համագումարը տեղի կ'ունենայ Սփիւռքի, մա՛նաւանդ Լիբանանի մէջ: Իբրեւ սփիւռքահայ եւ լիբանանահայ բանաստեղծուհի՝ հպարտ եմ, որ Գրողներու Համահայկական Գ. Համաժողովը այս անգամ (եւ վերջապէս) պիտի ծաւալի սփիւռքեան «հողեր»ու վրայ: Կարծես իմ իրաւունքս է, որ ինծի կը վերադարձուի, նկատի առած նաեւ համայնավար հին վարչաձեւի պարտադրած բոլոր կաշկանդումներն ու արգելքները:

Այո՛, համաշխարհայնացումը այսօր կը սպառնայ մեր գրականութեան ու մշակոյթին: Հարթացման եւ միօրինա-

կանացման սոյն քաղաքականութիւնը վտանգաւոր է առաւելաբար փոքրաթիւ ազգերու պարագային: Բայց ես ապահով եմ, որ շարժումը անցողիկ է ու պիտի երբեք չկարողանայ տապալել կամ նուազեցնել մեր մշակոյթը, հայերէնով ստեղծուած մեր ոսկեղնիկ գիրն ու գրականութիւնը: Մենք (արեւմտահայ թէ՛ արեւելահայ) միշտ պիտի՝ պահպանենք մեր ուրոյնութիւնը, այն տարբերութիւնը՝ որ մերն է լոկ: Սա է մեր ուղին, մեր լինելու կերպը, որ կը բխի մեր իրականութենէն եւ իւրատիպ փորձառութենէն:

ՇՈՒՇԻԿ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ



Չարդ դար թեւակոխած է համայն մարդկութիւնը: Հրաշքներու հաւատացողներու թիւը, ընդունելու ենք, որ նօսրացած է զգալիօրէն:

Գրողներու Համահայկական Գ. համաժողովը, որուն նախաձեռնութիւնը կը պատկանի Հայաստանի Գրողներու Միութեան Վարչութեան եւ որուն կ'աջակցի Լիբանանահայ Գրողներու Համախմբումի եռանդամ քարտուղարութիւնը, կը վայելէ բարձր հովանաւորութիւնը Կիլիկիոյ մշակութանուէր գահակալին՝ Արամ Ա. կաթողիկոսին:

Հրաշքներ ակնկալել այս համագումարէն, ոչ միայն անտեղի, այլեւ ծիծաղելի պիտի ըլլայ:

Սակայն, այս առիթով, կ'արժէ կատարել քանի մը մատնանշումներ կամ հաստատումներ:

Հայրենամերձ երկիրներու հայ հաւաքականութիւնները, թէկուզ քաղաքական, տնտեսական եւ ընկերային բազմազան պատճառներով կոտորակուած, կը շարունակեն իրենց արմատներուն կառչած մնալ աւելի ուժգին, քան հեռաւոր ասիաներուն տարածուած հաւաքականութիւնները: Թէկուզ նահանջի

մթնոյորտին եւ իրականութեան, տակաւին Միջերկրականի այս ասիաներուն յոյսը կը մնայ աւելի առկայ՝ քան այլուր:

Բնաւ պատահական չէ, որ առաջին անգամ ըլլալով հայրենիքէն դուրս գումարուող Գրողներու Համահայկական Գ. համաժողովը իբրեւ նստավայր ընտրած է Պէյրութը, Լիբանանը: Վաղը, յաջորդ համաժողովներէն ոմանք կրնան գումարուիլ սփիւռքահայ այլ կեդրոններու մէջ: Սակայն, այս ուղղութեամբ առնուած առաջին քայլը՝ Լիբանանի իբրեւ հաւաքավայր ընտրութիւնը, խորհրդանշական, միաժամանակ խօսուն երեւոյթ է, եւ հաստատումն է լիբանանահայութեան բազմաթիւ տասնամեակներու վրայ երկարող մշակութային, հոգեմտաւոր հարուստ աւանդութիւններուն եւ շարունակուող ճիգերուն:

Հարցումին երկրորդ մասը կը վերաբերի «Համաշխարհայնացում»էն բխած մարտահրաւէրներուն եւ հայ գրականութեան կեցուածքին՝ անոնց նկատմամբ:

Համաշխարհայնացումը կարծէք ըլլայ եօթը գլխանի հրէշ մը, որուն դէմ գրահաւորուելու է ամէն ոք, անհատ թէ՛ հաւաքականութիւն:

Համաշխարհայնացումին հարկ է մօտենալ զգուշաւորութեամբ, մանաւանդ եթէ գայն դիմագրաւողները փոքր հաւաքականութիւններ են, փոքրաթիւ ժողովուրդներ, ինչպէս է պարագան հայ ժողովուրդին: Օգտուիլ, հնարաւորին չափ համաշխարհայնացումի դրական կողմերէն, բացուելով ընդհանուրին, առանց վտանգելու ինքնուրոյն առանձնայատկութիւնները սեփականին, եւ դրժել անոր պարտադրած բացասական երեսակները եւ հաւաքաբար դիմադրել հայ ժողովուրդի ընդհանրական շահերուն վնաս հասցնող նկրտումներուն:

Հրաշքներու հաւատալու չէ: Սակայն պէտք է անտեսել Գրողներու



Համահայկական Գ. համաժողովի ընձեռած առիթը կամարելու հայ գրողներու - հայրենի թէ՛ Սփիւռքի տարածքին սփռուած - գրական ու անհատական ներաշխարհները, կամրջելու հոգեկան ու շօշափելի ապրումները անոնց, որոնք, վերջին հաշուով, ե՛լ հայ գրականութեան ե՛լ հայ ժողովուրդին պիտի նպաստեն զգալիօրէն:

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ



Գրողների համահայկական Ա. Համաժողովը, անկախ իր արձանագրած դրական եւ ոչ դրական արդիւնքներից, ինքնին համայն աշխարհի ինքնորոշումը հաստատող բացառիկ երեւոյթներից մէկն էր, որին յաջորդեց երկրորդը եւ այս օրերին կայանում է երրորդը: Այս երրորդը Սփիւռքի սիրտը հանդիսացող Լիբանանի մէջ տօն է, յաղթանակ է, որը երկար ու յամառ պայքարից յետոյ ձեռք բերուեց այն ուժերի դէմ, որոնք տասնեակ տարիներ շարունակ փորձում էին, ինչ որ ետին նպատակների համար ջլատել ու տարանջատել այն մտաւորականներին, որոնք իրենց լիարժէք ներուժով նուիրուել էին Հայ Դատին, հայապահպանման ու հայակերտման սուրբ գործին, ի մասնաւորի հայ արուեստին ու գրականութեանը:

Այսօր հայ գրականութիւնը պատահական ընտրեալների մենաշնորհը չէ:

Գրողների Համահայկական Գ. համաժողովը այս ամբողջում նաեւ ուխտագնացութիւն է այն սուրբ վայրին, որտեղ Եղեռնի վերապրողների մի հրակայ գանգուած, անկախ իրենց հաւատամքային, մշակութային ու քաղաքական ուղղութեան, ոչ միայն գոյատեւեց, այլեւ բաց ճակատով դուրս եկաւ երկրում տեղի ունեցած տարբեր տեսակի քաղաքական իրադարձութիւն-

ների բովից եւ նուիրուելով մեսրոպաշունչ, սրբատառ գիր ու գրականութեանը, առաւել եւս իր հոգեւոր կենտրոնով համայն սփիւռքի համար դարձաւ վարակիչ ուժ:

«Հայ գրականութիւնը՝ համաշխարհայնացման մարտահրաւէրների դիմաց»ը ժամանակակից ու հրատապ այն հարցերից է, որը եթէ ոչ անլուծելի, ապա ոչ պակաս բարդ է, քան «Ղարաբաղեան հարցը» ազերիների համար:

Մենք, թէ՛ մեր առօրեայ կենցաղով, թէ՛ պետական քաղաքականութեամբ կամայականայ համաշխարհայնացում ենք, ուրեմն մեր գրականութիւնը չի կարող գերծ մնալ դրանից:

Եթէ նկատի առնենք այն միջոցներն ու հնարաւորութիւնները, որոնք ազդում են սերունդի զարգացմանն ու մարդ-հայ ձեւաւորմանը, նաեւ գիտութեան տարբեր բնագաւառներում օգտագործուող գիտական ու տեղեկատուական միջոցների օրրստօրէ առաջընթացն ու տարածումը, ինչու ոչ, նաեւ երկրի սահմանների թափանցիկութիւնը, փոխադրամիջոցների հնարաւորութիւնները, մեզ միայն կը մնայ մտածելու, գտնելու մի այնպիսի ելք, որը ոչ թէ կ'առնի համաշխարհայնացման առաջը, այլ ինչ - որ տեղ կը դանդաղեցնի ազգակործան այդ գործընթացը, մինչեւ մեր լիարժէք համախրմբումը, ազգային գաղափարախօսութեան որդեգրումն ու անկախութեան լիարժէք ամրապնդումը:

Այսօր մեզ անհրաժեշտ է մի նոր «Մերոպ Մաշտոցի» կախարդական փայտիկ, որ մէկ հարուածով ստեղծենք մի այնպիսի ուղղագրութիւն, որոշ հնարաւորութիւն ունենանք այսօրուան «ղալամ ու դաւթար» հանդիսացող համակարգիչով պարզ ու հանգիստ հարդարակցուել միմեանց հետ: Մեզ մտահոգող ու ամենահրատապ հարցը պիտի լինի համակարգչային հայերէնի ուղղագրութիւնն ու միատեսակ ստեղները,

դա կը լինի «Ոսկեայ եղէզ» ու այն միջոցը, որով առաջին քայլերը կ'առնեն համաշխարհայնացման դէմ, կամ առնուազն հիւանդագին ու կուրորէն չենք խարխափի օտար ամայի ճամբէքի վրայ... Յաւօք, մեր այս համաժողովում ոչ մի նիւթ կայ այս մասին...

Որոշ մտահոգ մասնագէտների հատուկենտ լուրջ յողուածներով ու ոչ մասնագէտների զգացական գրուծիւնների հեղեղումներով, փորձում ենք, թէ՛ հայրենիքում, թէ՛ սփիւռքում, արդէն իսկ ետ քայլ ապրող մայրենի լեզուի երկփեղկուած ուղղագրուծիւններով պատնէշել անխուսափելի դարձած համաշխարհայնացման մոտքը, որը ինքնին ապացոյցն է մեր իսկ երկփեղկուածութեանն ու ազգային ոգու տկարութեանը:

ԽՈՐԷՆ ԱՐԱՄՈՒՆԻ



Մեղքս ինչ թաքցնեմ, գրողների համահայկական ժողովին գնացի «երկիր տեսներու» դրամամբ՝ Պէյրուծի հայ գաղութին հաղորդակցուելու վաղուցուայ ցանկութիւնս իրականանում էր եւ, ինչու չէ, «միաժամանակ» մասնակցելու ժողովին: Բարեբախտաբար սխալուեցի «միաժամանակի» առումով: Հենց առաջին օրը:

Համաժողովը սկսուեց ինչպէս պիտի սկսուէր: Զեռնարկումի վարկանիչին վայել հեռագրերը ընթերցուեցին, մասնաւորապէս ՀՀ նախագահի ողջոյնը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի օրհնութեան գիրը, որն ի դէպ յաւուր պատշաճին էր նշանի առումով:

Առաջին օրուայ նիստը աւարտուեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ոգեշունչ ելոյթով, որը յայտագրում «պատգամ» էր ձեւակերպուած: Յիրաւի ոգեշունչ էր Վեհափառի խօսքը, որ հնչեց ճար-

տասանական արուեստի բարձր կանոններին համաձայն, բայց թերեւս գլխաւորը «պատգամի» մէջ էր տեղաւորուած՝ մարտահրաւէրների մեր ժամանակներում, երբ նոյնիսկ հարեւանիդ չես կարող դիտողութիւն անել՝ տեղդ ծուխ է՝ էն կողմը կաց, որովհետեւ ինքնասիրութեան (սուվէրէնութեան) բարդոյթն է տեղահան լինում, երբ այս խառն ու խրթին ժամանակներում մարդիկ (ազգերն ու ժողովուրդները) կարծես սառուցի վրայ են քայլում, քանի որ սայթաքելու վտանգը ամէն պահ է, նոր իմաստ ու նպատակ է դառնում չարենցեան ձեւակերպումը, որ Կաթողիկոսի բերանից հնչեց որպէս պատգամ եւ կոչ: Մենք լցուած էինք նրա խօսքով:

Հարկաւ զեկուցողները իրենց թէքութերը գրել էին մինչեւ Վեհափառ Հայրապետի պատգամը, դրանք գրուել են խնամքով, գուցէ թէ ընդգծուած ձեւով հաւասարակշռուած, բայց համաժողովի ամբողջ ընթացքում ուղորդողը ոչ միայն զեկուցումների մէջ արծարծուած խիստ արդիական հիմնախնդիրներն էին, այլեւ այն բարձր յորդորը, որ համաժողովին առաջարկել էր Արամ Ա. Կաթողիկոսը: Թէ զեկուցողները, եւ թէ ելոյթ ունեցողները կողմեր չէին, այլ լծակիցներ, որոնց օրաւուր գործը հայ գրականութեան սայլը առաջ տանելն է, մեր ազգային դիմագիծը աշխարհին ներկայացնելը՝ համաշխարհային շուկայ արտահանուող մեր գլխաւոր «ապրանքը»:

Այս ամէնը համաժողովի ձեռքբերումն է, նրա գլխաւոր արդիւնքը: Բայց գլխաւոր արդիւնք էր նաեւ այն, որ մեր շփումների մէջ օրէ ցօր աւելանում էր հիւմրի, սրամտութեան, սրախօսութեան «տեսակարար կշիւր», մենք անմիջապէս անցանք դու-ի, իւրաքանչիւրս փորձում էր իւրովսանն իր հիւմրը բերել որպէս դիտողութիւն, որպէս կարծիք ու այդպէս ստեղծուել էր մտերմիկ, ընկերական՝ թերեւս ճիշդ կը լինի ասել՝ բարեկամական, իսկ աւելի

ճիշդ՝ հարագատական միջավայր: Այս վերջինը, գոնէ ինձ համար, աւելի քան կարեւոր էր եւ համաժողովի կարեւոր արդիւնքը:

Համաժողովի ծրագիրը փայտուն էր կազմուած, արդէն ժողովներէս յոգնած, յաջորդ օրերին կազմակերպիչները մեզ ծանօթացրին Լիբանանի տեսարժան վայրերին: Հեքեաթային քարանձաւներէս սկսած մինչեւ մարդկային հանճարի ու ոգու պուժկումի մի այնպիսի իրողութեան, որ աշխարհին յայտնի է «Պալալէք» անունով: Բայց եւ այնպէս, եւ այնուամենայնիւ ինձ վրայ անմարերի տպաւորութիւն թողեց այցելութիւնը հայկական Այնճար՝ լեզուս չի գնում գիւղ ասել: Երանի թէ Արցախում այդպիսի մի Այնճար ունենայինք: Քայլելով Այնճարի փողոցներով, գրուցելով նրա մարդկանց հետ, ես այն զգացողութիւնը ունեցայ, որ մեծ ուտոպիստ Կամպանելան հենց այդպիսի «արեւային քաղաք» էր երագում, պատանեկութեան մեր տարիներին կոմունիստական այդպիսի ապագայ էին գուշակում մեզ:

Այնճարում ես հանդիպեցի տղաների եւ հոգեւոր այրերի, որոնք եղել են Արցախում, նոյնիսկ սրանցից մէկը մեր տանը օթեւան էր գտել եւ ես հասկացայ, որ չարենցեան այն պատգամը, որ մեր յաղթանակի ապաւէնը մեր հաւաքական ոյժն է, հաստատումը գտաւ նաեւ այստեղ: Ես ներքուստ հպարտացայ նաեւ, որ հայ մարդու ստեղծարար ձեռքը անապատը կարող է վերածել ծաղկուն այգեստանի, ձեւաւորել բարեկեցիկ կեանք: Այնճարը դրա պերճախօս վկայութիւնն է:

Մինչեւ այսօր էլ իմ մտքի մէջ ծաւալուում է Այնճարի գլխաւոր փողոցը՝ զարմանալի, գեղեցիկ, այնճարցիների ձեռքով կառուցած եւ մեր ազգային տաղանդի թելադրանքով հիւսուած:

ՄՄՔՄՄՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Հայ գրողների համահայկական համաժողովը, որը կայացաւ Պէյրութում, նշանակալից երեւոյթ էր: Նշանակալից ոչ միայն աշխարհագրական իր ընդգրկումով, քանակով, նոր ծանօթութիւններով ու մտերմութիւններով, այլեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջին Կաթողիկոսի անմիջական ու գործօն մասնակցութեամբ:

Խնդիրները, որ բարձրացուում էին նախորդ համագումարներում, համարեայ թէ կրկնուում ու անցնում էին համագումարից-համագումար եւ, ի վերջոյ, յանգում էին հայ գրողներին յղուած կոչերով եւ որեւէ առաջընթաց չէին արձանագրում մի պարզ պատճառով, որ չէին գտնուում ցանկութիւնը գործ դարձնող անհրաժեշտ նիւթական միջոցներ: Մանկական գրականութեան կարեւորութեան մասին մեր պետական այրերի մտահոգութիւնները տարբեր առիթներով շատ ենք լսել: Սակայն մինչեւ հիմա ոչինչ, համարեայ թե ոչինչ չի արուել: Ընդհակառակը՝ կրճատուել են գրախանութներ, փակուել են գրադարաններ, նուազագոյնի է հասել տրպաքանակը: Գրքերը չեն հասնում գոնէ պահպանուած գրադարաններին: Սա մի վիճակ է, որը հրամայաբար յուշում է ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

ստեղծելու կարեւորութեան մասին: Մասնաւոր հրատարակիչը պարտաւոր է մտածել գրականութեան տեսականու մասին: Նա հրատարակում է այն, ինչ շահութաբեր է: Պետական հրատարակչութիւնը պարտաւորուած կը լինի հրատարակել ոչ միայն լաւ բանաստեղծութիւններ ու հեքեաթներ, այլ կը փորձի մեծացնել մանկական երեւակայութեան սահմանները կեանքի տարբեր ասպարէզներ ներկայացնող ուշագրաւ գրականութեամբ:

Պետութիւնը պիտի նոյնքան շահագրգռուած լինի մանկական գրականութեան ասպարէզում, որքան շահագրգռուած է բանակի կայացման ու

մարտունակութեան բարձրացման հարցում: Մեր վաղուայ բանակի ոգին մեծապէս պայմանաւորուած է լինելու այսօրուայ լսելու, ընկալելու, հրապուրուելու, կարդալու պատրաստ սերունդով: Բարեբախտութիւն է, որ այդ գործում պատրաստ է իր Հայրապետական ներդրումն ունենալ Վեհափառ Արամ Առաջին Կաթողիկոսը՝ ստեղծելով մանկագրութեան համար յատկացուած յատուկ ֆոնտ եւ բանիմաց ու բարձրաճաշակ յանձնախումբ:

Յաջողութիւն մաղթենք այդ չափազանց կարեւոր նախաձեռնութեանը - սպասենք առաջին արդիւնքներին:

ՓԱՓԱՔ

Վեհափառ Հայրապետ Արամ Առաջին Կաթողիկոսին՝ սիրով

Արարատի դէմ մի քաղաք լինէր՝  
 Արարատի պէս վեհ ու սիգապանծ,  
 Այդ քաղաքի մէջ ապրէին մարդիկ  
 Անկողմնակալ, անսուտ, աննախանձ,  
 Ապրէին իրար նեցուկ լինելով՝  
 Մոռացած կասկած, վտանգներ, ահեր  
 Ու պարծենային միայն գործերով՝  
 Արարատին ու քաղաքին վայել:

ԵՌԻՐԻ ՍԱՀԱԿԵԱՆ



Առանց չափազանցութեան կարող եմ վկայել, որ ի թիւս բազմաթիւ հայ գրողների, ես եւս 2006 թ. Ապրիլի 6-ից 9-ը Պէյրուսում հայ գրական կեանքի մի աննախադէպ իրադարձութեան ականատեսն ու մասնակիցը դարձայ հայաստանցի գրողների այդպիսի մեծաթիւ պատուիրակութիւն երբեւէ չէր մեկնել արտասահման գրական միջոցառման մասնակցելու համար եւ իմ կեանքի ընթացքում երբեւէ Հայաստանից դուրս տեղի չէր ունեցել հայ

գրողների այդպիսի իրադարձային կարեւորութեան համաժողով այսօրինակ ներկայացուցչական կազմով... Կուսակցութեանների մասնատուած հայ գրողները երբեւէ այսքան միասնական չէին եղել թէ համաժողովի նախապատրաստման եւ թէ անցկացման ընթացքում, այսքան համախմբուած հոգեւոր հովուապետի հովանու տակ...

Յիշարժան ու տպաւորիչ էր ամէն ինչ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի խօսքով բացուած հանդիսութեան առաջին պահից մինչեւ վերջին օրուայ հրաժեշտի ձեռքսեղմումներն ու գրկախառնութիւնները...

Ժամանակի հետ շատ բաներ կը մոռացուեն, սակայն, համոզուած եմ, որ մեր յիշողութեան մէջ անջնջելի կը մնան հանդիպումները Մուսա լեռցիների շէն ու կոկիկ Այնճարում, Ծաղկազարդի սքանչելի տօնակատարութիւնը Մայրափանքում, Մայրափանքն հենց ինքը, Դպրեվանքն իր սաներով ու հոգեւոր դասով, աշխատաւոր հայ մարդկանց հետ հանդիպումներն ու գրոյցները Պէյրուսի հայաբնակ Պուրճ Համուտի փողոցներում, Պալպէքն ու Պիպլոսը, Միջերկրական ծովն ու լոյսերի մէջ ողողուած Պէյրուսի իր արեւմտեան ճարտարապետութեամբ եւ արեւելեան խառնիխուռն երթեւեկութեամբ:

Քիչ է ասել, թէ համաժողովն անցաւ բարձր մակարդակով, այն պարզապէս հրաշալի էր կազմակերպուած, եւ կարծում եմ, երախտագիտութեամբ պիտի յիշատակել կազմակերպիչ յատուկ յանձնախմբի անդամներ Նարեկ Եպիկոսոս Ալեքսէմէզեանի, Սարգիս Կիրակոսեանի, Ժիրայր Դանիէլեանի, Պէպօ Սիմոնեանի - Արամ Սէփէթեանի ջանադիր աշխատանքը, որը ներդաշնակուեց Հայաստանի գրողների միութեան արդիւնաւէտ գործունէութեամբ, ինչի բարձր գնահատականը պիտի համարել «Ար. Մեսրոպ Մաշտոց շքանշան»ը, որը

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կոն-  
դակով շնորհուեց ՀԳՄ նախագահ Լեւոն  
Անանեանին:**

Եւ անշուշտ, եւ առաջին հերթին  
շնորհակալութեան բարձր խօսքով պի-  
տի յիշատակվի Արամ Ա. Կաթողիկոսի  
անունը, որի բարձր հովանաւորու-  
թեամբ, օրհնութեամբ եւ մաղթանքնե-  
րով օծուած այս հրաշալի իրադար-  
ձութիւնը այնքան կարեւոր գօրավիզ  
դարձաւ նոր ժամանակների փորձու-  
թիւնների առաջ կանգնած հայ գրող-  
ներիս համար:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ



Գրողներ էին՝ գրականութեան  
մշակներ, հայ մարդիկ, որ եկել էին  
Հայրենիքից ու Սփիւռքից, եկել հաւաք-  
ուել էին՝ մասնակցելու Մեծի Տանն  
Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթո-  
ղիկոսի բարձր հովանաւորութեամբ եւ  
Հայաստանի գրողների միութեան նա-  
խաձեռնութեամբ կազմակերպուած  
«Գրողների համահայկական Գ. համա-  
ժողովին»:

Անշուշտ, նպատակն ազնիւ է ու  
դրուատելի. քննել հայ գրականութեան  
ներկայի ու ապագայի խնդիրները, ճա-  
նաչել միմեանց, հարագատի սրտացա-  
լութեամբ մատնանշել բացթողումները,  
բանիմաց խորհուրդներով պատուել  
իրար, որպէսզի շահի բոլորիս գործը,  
համընդհանուր ոյժերով մշտանորոգ  
պահել հայ դարաւոր գրականութեան  
կանթերը:

Այս ամէնից ի՞նչն իրականացաւ,  
որտե՞ղ ձեռքբերումներ ունեցանք, - որ-  
տեղի՞ց դատարկաձեռն հեռացանք՝ հե-  
տագայում ինչ-ինչ խնդիրներ շտկելու,  
մեր իսկ սխալների վրայ սովորելու  
մտադրութեամբ: Այս առնչութեամբ  
Պէյրութում՝ Անթիլիասի Մայրավանքի  
պատերից ներս ու դուրս, շատ բան

հասցրինք անել 2006 թուականի Ապրիլի  
6-9-ի ընթացքում, շատ բան էլ չհաս-  
ցրինք, կամ գուցէ դեռ պատրաստ  
չէինք:

Ուղեւորութիւնից առաջ մտքովս  
չէր անցնի, թէ Սփիւռքում ոչ միայն  
կարդում, այլեւ իւրովի են արձագան-  
գում Հայաստանում ստեղծուող ժա-  
մանակակից հայ գրականութեանը. ո-  
մանք՝ գրախօսելով կարդացածը, ամ-  
բողջական գործեր ու հատուածներ  
տպագրելով ու ներկայացնելով սփիւռ-  
քահայ ընթերցողին, ոմանք՝ կարդա-  
ցածի տպաւորութեամբ մտապահելով  
այս ու այն անուն-ազգանունը (հետա-  
գայում հանդիպելու, ձեռքսեղմումի ու  
անաչառ, ջերմ խօսք ասելու ակնկա-  
լութեամբ), ոմանք էլ պարզապէս հին  
օրերի հին ընկերների, հաւատարիմ  
ընթերցողի սիրով ու կարօտով յիշելով  
այս ու այն գրողին, մեծ ափսոսանքով  
նկատելով նրանց բացակայութիւնը  
համաժողովին, երբեմն էլ կրքոտ նա-  
խայարձակ լինելով ու այդ բացակա-  
յութիւնը բաց համարելով: Կեանք է,  
գրակա՛ն կեանք է, ու ամէն բան ճիշդ ու  
լաւ է այնպէս, ինչպէս է:

Օրուայ ձեռքբերում էր գիրքդ մէկ-  
նումէկի սեղանին տեսնելը - գրակա-  
նութեան ներսն ու դուրսը իրար բերե-  
լու ճիգով գրուցելը, որ ամէնեւին էլ  
պարտադիր ու գրանցուած հերթական  
ելոյթի չէր նմանում, այլ ճիշդ հակա-  
ռակը՝ անկեղծանալու, իրենցից մինչեւ  
քեզ ձգուող ճանապարհին գրականու-  
թիւնն առանձնացնելու, նոյն գործի  
հոգսերով ծանրաբեռն՝ մտորելու առիթ  
էր: Բայց այդպէս իմիջիայլոց ու այդ-  
քան կարճ միջոցն արդեօ՞ք կը բաւէր եւ  
միթէ՞ բոլորին տրուեց՝ սպառելու կամ  
գոնէ մասամբ սպառելու բազմաթիւ  
անհրաժեշտ ու գործնական խնդիրների  
քննարկումը:

Էլի ու դարձեալ երախտիքի տող է  
ծնւում՝ ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.  
Կաթողիկոսի խօսքի ու գործի վեհու-

Թեան, բայց ինձ համար առաւել շատ ու ամէն ինչից վեր՝ այդ տողը ծնւում է յանուն այն անաչառ գնահատանքի, որին արժանացաւ մեր համաժողովը՝ **չահեկան**, ինչպէս նաեւ այն ակնկալութիւնների, որոնք հայրական սրտացաւութեամբ ու հոգատարութեամբ մատնանշուեցին իբրեւ բարեմաղթանք. երկար ու բարակ ճառասացութիւնները կուռ ու ամփոփ քննարկումներով փոխարինելու, պատուիրակների շարքում աւելի մեծ թուով երիտասարդ գրողներ ընդգրկելու, առաւել համապարփակ գրական խնդիրներ առաջ քաշելու եւ նոր հանդիպման ապսպրանք:

ՏԻԱՆԱ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ



Երագի պէս եկան ու անցան հայ գրողների լիբանանեան համաժողովի օրերը՝ լեցուն, տաք, յագեցած, արդիւնաւէտ: Անթիլիասի Մայրավանքի պատերից ներս, Հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական սիրով համախմբուեցին համայն հայ գրչեղբայրները՝ ժամանած աշխարհի տարբեր ծագերից՝ հայ գրող լինելու դժուարին, բայց պատուական առաքելութեան բարձր գիտակցումով: Մասնաւորապէս յուզիչ էին բացման արարողութեան ժամանակ Դպրեվանքի սաների «Տէրունական աղօթքի» եւ «Որք գարդարեցին» շարականի երգչախմբային կատարումները:

Համաժողովին առանձնայատուկ շունչ ու ոգի տուեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի «Հայ գրողը ճշմարտութեան ջահակիր» խորագրով իմաստուն, տրամաբանուած, բացման եւ անաչառ, հեղինակաւոր, ուսուցողական փակման խօսքերը: Նրա ներկայութիւնն ընդհանրապէս առանձնայատուկ շուք ու փայլ հաղորդեց համաժողովին: Հոգիս պայծառացաւ ու խայտաց Մաղկազարդի

օրը տօնականօրէն գուզված-գարդարուած այդքան մանուկ, երիտասարդ հաւատացեալ հայեր տեսնելով եկեղեցու բակում: Համաժողովի կազմակերպիչ յանձնախումբը՝ Նարեկ եպիսկոպոս Ալեքմէզգեանը, Սարգիս Կիրակոսեանը, ժիրայր Դանիէլեանը, Պէպօ Սիմոնեանը եւ Արամ Սէփէթեանը ամէն ինչ արել էին, որ համաժողովին մասնակից գրողներս Լիբանանում լիովին զգանք ու տեսնենք այն ամէնը, ինչ յիշարժան է հետաքրքիր ու բացառիկ. «Նիկոլ Աղբալեան» կեդրոնը, Դպրեվանքը, Անթիլիասի Մայրավանքի թանգարանը, «Տէմիրճեան» կեդրոնը նպաստում են հայ գաւակին կրթուելու եւ դաստիարակուելու որպէս ազգային ոգու արժանաւոր կրող: Ինչ խօսք, որ հիացմունք պատճառեցին, թէ Պապլէքը, թէ հեքիաթային ժահլիթա քարանձաւն ու Այնճարի մօտի քաղաք – իջեւանատան աւերակները, սակայն ինձ վրայ անմոռաց տպավորութիւն թողեց հենց Այնճարը՝ իր բնակիչներով:

Փառահեղ Մուսա լեռցիների ժառանգներդ, որ հաստատուած էք Այնճարում, բացառիկ հայեր էք: Այնճարը, որ Դուք համարում էք գիւղ, շատ աւելի քաղաք է յիշեցնում. հրաշալի եկեղեցիով, մաքրամաքուր ու կանաչապատ փողոցներով, հայերէն ցուցանակներով, ճաշակով կառուցուած առանձնատներով: Գիւղը մեզ ներկայացնող այնճարցին չգիտեմ պատահմամբ, թէ գիտակցաբար ասաց. «Սա էլ մեր գիւղի քաղաքապետն է»: Գիւղի քաղաքապետ կարծես ամէն ինչ ասուած է եւ ճշգրիտ է ասուած:

Դուք՝ նահատակուած անմահ Մուսա լեռցիների որդիներդ ու թոռներդ, ձեր հայրերի ու պապերի գեներով փոխանցուած լաւագոյն որակների կրողներն էք. կրակոտ, խիզախ ու համարձակ, հայրենասէր հայեր եւ ձեզնից կարելի է սովորել գաւակին հայ մեծացնելու կերպը:

Այնճարը Մուսա լեռի կործանուած վեց գիւղերի տեսլապատրանքն է՝ արծուի կերպարանքով, որը կարող է նաեւ ձերձայնաբաններին, կեցութեան եւ ոգու խորհրդանիշը լինել:

Այնճարը իր կուռ, ամբողջական գործող համակարգերով փոքրիկ, շատ փոքրիկ, բայց զօրեղ պետութիւն է յիշեցնում օտար պետութեան մեջ: Ամէն ինչ հայկական է ու հայեցի. անուներ՝ գեղեցիկ, հայկական անուներ- Արամ, Տիգրան, Շողեր, Նանօր: Նանօր... ու առաջին անգամ յատկօրէն վատ զգացի եւ շփոթուեցի իմ ոչ հայկական անուան համար, երբ այնճարցի աղջնակը հետաքրքրութեամբ հարցրեց՝ «Գրագէտ, անունդ ի՞նչ է»...

Որ ձերձայնաբաններին հայեցքը յոյսով եւ հաւատով դէպի հայրենիք է ուղղուած - հրաշալի է:

Իմ համոզմամբ համաժողովը կայացաւ: Քննարկուեցին հայ գրողներին յուզող շատ ու շատ հարցեր, կայացան հետաքրքիր ծանօթութիւններ, գրքերի փոխանակութիւն:


Նոյնիսկ հայաստանցի գրողներս աւելի մօտիկից ճանաչեցինք միմեանց եւ մտերմացանք: Թէեւ հայաստանցիներս ապրում ենք քարքարոտ երկրում, այնուհանդերձ ինձ զարմանալիառն հիացմունք պատճառեց Պէյրուի քաղաքի դիրքը՝ վեր ու վեր - մինչեւ անտառոտ լեռներն ու բարձրաբերձ ամպերը, բնակելի շէնքերի տանիքների պարտէզները, իսկ պէյրուի հայերի բարեհամբոյր, գուարթի դէմքերն ու պատրաստակամ վերաբերմունքը մէկընդմիջտ սիրելի դարձրին բոլոր նրանց, ում տեսանք եւ ճանաչեցինք:

Լիբանանեան համաժողովին մեկնեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ եւ վերադարձանք Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հարապետի օրհնութիւնն ստացած: Այս փաստը նոյնպէս ինքնին ոգեւորող է:

Վստահ եմ, որ համաժողովի բոլոր

մասնակիցները ինձ նման ոգեւորուած են - շնորհակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին՝ բարձր հովանաւորութեան համար, ՀԳՄ նախագահ Լեւոն Անանեանին՝ նախաձեռնելու եւ կազմակերպչական հարցերով զբաղուած մեր բոլոր գրչընկերներին:

ՆԵԼԼԻ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ



Իրականութիւն դարձաւ միասնութեան կարեւորութիւնն ամբարբող իմաստուն մի ձեռնարկ, որի նմանը դեռ չէր եղել մեր իրականութեան մէջ, եւ որի նմանների համար մինչեւ այժմ շատ առիթներ ենք ունեցել նախանձով նայելու ուրիշ ժողովուրդներին:

Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հեռաւտես քաղաքականութիւնը աշխարհի տարբեր ծագերից ի մի հաւաքեց մեր բազմաթիւ գրչակից քոյրերին ու եղբայրներին, գուրգուրեց ու երես տուեց գրականութեան մշակներին, որոնց սովորաբար կեանքը քիչ է շփացնում:

Անձամբ ինձ համար Անթիլիաս երեւոյթը, Այնճար գիւղը, Նիկոլ Աղբալեան մարգար-մշակութային համալիրը, Դպրեւանքը, Տէմիրձեան կեդրոնը աւելի մեծ հրաշքներ էին, քան Պապլէքն ու Ժաշիթայի քարանձառները, որովհետեւ սրանցում գործող անձինք են հայերը՝ մեծից մինչեւ փոքր՝ տարեց Մուսա լեռցի Յակոբ Այնթապեանից մինչեւ մտերահասակ երեխաներ, որոնց գոյատեւման փաստն իսկ վեր է ամէն մի տրամաբանութիւնից:

Իմ հոգին փառաւորութեամբ էր ամէն մի երեխայի յաջողութեան մասին լսելիս՝ ճատրակի, երաժշտութեան, սպորտի այլ ձեւերի ուսման մէջ: Իմ արեան մի մասնիկը հոսում ու յորդանում է այստեղ ուրեմն՝ Լիբանանում. գիտէի, բայց աչօք տեսնելը բոլորովին նոր մտա-

ծումներ ու այսուհետև ապրելու նոր ձև է հաղորդելու կեանքիս:

Այնճարում ունեցայ մի տեսիլ. «Արեւ» ճաշարանում փառաւոր կիլիկեան հիւրասիրուծիւնը ճաշակելիս, ականջիս հասաւ բոլոր այն հարիւրաւոր մանուկների առաջին ճիչը, որ գիւղի հիմնաւորման օրից լսել է գիւղը: Ինձ զգացի այն այնճարացիներից մէկը, որոնց համար մանուկներից իւրաքանչիւրի ծննդեան աւետիսը յոյսի ու նորոգման մի նոր զանգակ է հնչեցնում: Թէեւ կեանքիս ընթացքում բազմաթիւ անգամներ արդէն առիթ էի ունեցել աննկուն ազգակիցներին հետ վերապրելու ձեպել Մուսայում երեսունութ օր կեանքի ու մահուան կռիւ տալը եւ յետոյ ծովի վրայ երեւացած փրկարար հաճանաւը տեսնելու ցնծութիւնը, բայց այսօրուայ ցնծութիւնս իմ բարեկիրթ լուսթեան մէջ պահելը, կարծես մի ներընթաց ժայթքում էր դէպի մեր էութեան ընդերքը՝ դէպի իմացութեան զարմանահրաշ անձանները ճանապարհ բացող:

Ա.Լ.ԻՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի բարձր հովանաւորութեամբ Անթիլիասում տեղի ունեցած հայ գրողների համաժողովը աներկրայ վերջին տասնամեակների համահայկական հաւաքներից լաւագոյնն էր: Նման դէպքերում տեղին է ասել՝ կատարուածը սպասուածից չափազանց էր՝ բացառիկութեան առումով: Համաժողովի հոգեբանական, գրական, ազգային, մարդասիրական մթնոլորտը յագեցած էր դրական լիցքերով, որոնք երաշխիք էին հայոց հնադարեան մատենագրութեան նորօրեայ կենդանի ու արդիւնաւէտ գոյութեան եւ նրա հետագայ յարատեւութեան:

Համաժողովի ունկնդիրները կլան-

ուած լսեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.ի եւ բացման արարողութեան ելոյթը, եւ համաժողովի աւարտի ջերմ խօսքը: Այդ դիմումների մէջ Վեհափառ Հայրապետը համաժողովի մասնակիցներին յղեց պատգամներ, որոնք ուղենիշային արժէք ունեն աշխարհի տարբեր ծագերում մայրենի լեզուով ստեղծագործող գրողների համար: Կենդանի շփումները, առաջադրուած հարցերի քննարկումները վկայում են, որ հայ ժողովուրդը հիմա ընթանում է մէկ ազգ, մէկ գրականութիւն կարգախօսով՝ բնակաւարար հայեացքը սեւեռուն պահելով դէպի մայր հայրենիքը: Ինձ համար որպէս համաժողովի մասնակցի չափազանց հաճելի էր լիբանանահայութեան ազգային ոգին, նրանց ճաշակը դէպի հայրենի արուեստը, նկարչութիւնը, երաժշտութիւնը, գրականութիւնը: Սիրով դիտեցի Անթիլիասի վանքի թանգարանում պահպանուող մեր եկեղեցու սրբազան մասունքները: Ամէն ինչ խնամուած ու բարեկարգ էր, արժանապատիւ եւ ներշնչող:

Մեծագոյն նուէր եմ համարում այն գրքերը, որոնք Վեհափառ Հայրապետը նուիրեց համաժողովի մասնակիցներին: Այդ գրքերը զարդարելու եւ մեր գրադարանները:

Երեւակայութիւնից վեր ու յուզիչ էր Այնճար կատարած այցելութիւնը. հայկական շէն բնակավայր արաբական հողի վրայ՝ առհաւատչեան հայ մարդու ստեղծագործ էութեան, գնահատական Մուսա լեռան փառապանձ հերոսների շառաւիղների յարատեւելու ձգտման - աննկուն ոգու:

Ես վերապրեցի Սսի կաթողիկոսութեան փառապանձ ժամանակների մասին ունեցած պատմական անցեալի պատճառած հմայքը, հպարտացայ, որ սուրբ էջմիածնի կողքին, որին իրաւամբ պաշտում են բոլորը հայերը, մեր ժողովուրդն ունի նաեւ մէկ ուրիշ -



նոյնքան կարեւոր ու սրբազան ուխտատեղի:

Ձերմ շնորհակալութիւն եմ յայտնում Վեհափառ Կաթողիկոսին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.-ին, սրտաբաց ու արժանապատիւ ընդունելութեան, Լիբանանի տեսարժան վայրերը հայ գրողներին ցուցադրելու, մեծ երկրին յատուկ ընդունելութիւն կազմակերպելու համար:

ԱՆԼԻՍԱ ՏՈՒՌԻՒՍԱՆԵԱՆ



Պէջրութեան հանդիպումը՝ որպէս գրողների համահայկական համաժողով, ըստ հուլիսեան երեւոյթ էր: Երբեւէ անհնար էր պատկերացնել, թէ այդքան հայ գրող աշխարհի չորս ծագերից կարող են հաւաքուել հայրենիքից դուրս եւ քննարկել իրենց օրախնդիր հարցերը: Դա, նորից եմ կրկնում, որպէս երեւոյթ, շատ տպաւորիչ էր եւ յիշարժան:

Ինձ պարզապէս գերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի բացման խօսքը: Ինձ համար ճիշտ եւ ընդունելի են նրա բոլոր հարցադրումները: Այո՛, գրողը ոչ թէ սովորական մահկանացու է, այլ մեծ առաքելութեան կրող, ինչ եւ նշանակում է լինել ճշմարտութեան ջահակիր եւ ոչ թէ հարմարուել իրականութեան այս անբարոյ ընթացքին: Նոյնքան տպավորիչ էր նաեւ Վեհափառ Հայրապետի փակման խօսքը՝ առանձին հարցերի - հարցադրումների տուած իր ընդհանրացնող գնահատականներով ու առաջարկութիւններով:

Այսքանից յետոյ, այնուամենայնիւ, մնում է մի մեծ անբաւարարուածութիւն, որի մեղաւորը արդէն մենք ենք՝ գրողներս ու քննադատներս: Զեկուցումների մեջ կային նաեւ յաջողութեանները, բայց ընդհանուր տպավորութիւնն այն է, որ գեկուցումները պէտք է սպառէին իրենց նիւթը - որոշակի հար-

ցադրումների շուրջ լարէին դահլիճի ուշադրութիւնը: Յանկութիւնս է, որ առաջիկայ հաւաքների ժամանակ հանդէս գան նոր գեկուցողներ, քանի որ նոյն մարդիկ արդէն սպառել են իրենց, ամբիոնները փոխելով՝ իրենք չեն փոխուում: Վեհափառ Հայրապետի առաջադրած որակի պահանջը համաժողովի շրջանակներում նախեւառաջ վերաբերում էր գեկուցումներին:

Պակասեց նաեւ շահագրգիռ բաց քննարկումը: Կաշկանդուածութիւն կար, որ գալիս էր թերեւս պահի հանդիսաւորութիւնից: «Բնական վայրենին» (Հ. Կարապենց) ներկայ չէր:

Ես դէմ եմ ստեղծագործողներին սերունդների բաժանելու պոլշեւիկեան աւանդոյթներին: Դա «կոմսոմոլ» գրողների ժամանակներից է. Յ. Թումանեանի կամ Գ. Զօհրապի գործունէութեան շրջանում այդպիսի բան չկար: Ճիշդ կը լինի ոչ թէ սերունդները հեռացնել իրարից - հակադրել իրար, ինչը ժամանակին անում էին որոշակի ծրրագրով, այլ սերտացնել սերունդների կապն ու յաջորդականութիւնը: Ի վերջոյ, բոլորիս համար էլ պարզ է, որ անկախ տարիքից, անկախ «երիտասարդ», «միջին», եւ «աւագ» սերունդ յորջորջումից կա՛յ գրող եւ չկա՛յ գրող՝ ուզում է երիտասարդ լինի, ուզում է՝ ծեր: Գրականութիւնը չի հանդուրժում ո՛չ տարիքային մենաշնորհ, ո՛չ էլ սեռային: Կին գրողս ո՞րն է: Գրողը գրող է, լինի երիտասարդ, թէ կին:

Մաղթում եմ գրական սխրանք, արդարամիտ վերաբերմունք իւրաքանչիւր իրաւ գրողի հանդէպ: Ո՛չ մի ճշմարիտ գրող երբեք չպէտք է մոռացուի կամ շրջանցուի: Մեր բոլորի պարտքն է վերականգնել գրականութեան, գեղարուեստական խօսքի ընկած հեղինակութիւնը հանրային գիտակցութեան մեջ: Իսկ զրա համար երբեք չպէտք է մոռանանք, որ գրականութիւնն առաջնորդում է միմիայն բարձր չափանիշ-

ներով - միջակույթեան առաջնորդումն ու մերձգրականութեան հովանաւորութիւնը հենց այդ չափանիշների անկման առաջին նախապայմանն են ու հանրային կեանքում գրականութեան դերի նուազեցման նախանշանը:

Մեզ բոլորիս պակասում է նաեւ ամենակարեւորը՝ կարդալ իրար: Գրողը գրողին չի կարդում, գրական քննադատութիւնը չի սպառում եղած արտադրանքը եւ չի տալիս իր վերլու-

ծական գնահատականը: Կոչ եմ անում թէ՛ Հայաստանի, թէ՛ սփիւռքի գրողներին իրար ճանաչել ոչ թէ տպաւորութեամբ, այլ ըստ էութեան: Իսկ դրա համար մեզ անհրաժեշտ է մի շատ կարեւոր բան՝ իրար կարդալ եւ իրար հանդէպ կրել գրական, որ նոյնն է թէ պատմական մեր այս ժամանակի պատասխանատուութիւնը:

ԴԱԻԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Այստեղ շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր անոնց որոնք ընդառաջեցին եւ իրենց կարծիքները փոխանցեցին, միաժամանակ ներողամտութիւն կը խնդրենք անոնցմէ, որոնց տպաւորութիւնները չկրցանք ունենալ կամքէ անկախ պատճառներով:

Խմբ.



ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

**ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԱԿԱՆ  
ՏԵՍԻԼՔԸ ՊԷՏՔ Է ՈՒՆԵՆԱՆՔ\***

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. կրօնապետ է: Միաժամանակ՝ մտաւորական, ներգործօն կերպով ունկնդիր մեծ հարցերուն որոնք կը խոռվեն ԻԱ. դարը եւ կանխատեսել կու տան գուպար եւ բախում: Անոնք կը բխին արժէքներէ եւ գաղափարներէ, կրօնական, իմաստասիրական, ընկերային թէ տնտեսական: Անոնց միջեւ անթափանց պատնէշներ հաստատել արուեստական է, քանի որ մարդը կը գտնուի անոնց առանցքին վրայ, անոնք առանձին չեն զարգանար, կ'ընթացան զուգահեռ գիծերով, կը հակադրուին, կը բախին, զիրար կը հարստացնեն, կը հանդիսանան ընկերութեան, քաղաքակրթութիւններու եւ մշակոյթներու շարժիչը: ԲԱԳԻՆ, Իմացական Աշխարհ բաժնին մէջ, զրոյցէ մը քաղելով, տեղ կու տայ Արամ Ա. կաթողիկոսի մտածումներուն, դատումներուն, որդեգրած ուղղութեան եւ աշխատանքին, որոնք մասնակցութեան հրաւեր են: Վեհարանի իր գրասենեակին մէջ ԲԱԳԻՆի խմբագրութիւնը ընդունուեցաւ Արամ Ա. Կաթողիկոսի կողմէ եւ տեղի ունեցաւ զրոյց:

ԲԱԳԻՆ

- Վեհափառ, ժամանակակից խնդիրները բարդ են, կ'առթեն մտահոգութիւններ: Ի՞նչ են հեռանկարները անոնց լուծման: Դուրս գալու հայկական միջավայրէ դուրս լայն հորիզոն ընդգրկող մտաւորական է՞: Կ'ուզենք լսել Ձեզ: ԻԱ. դարը, նախորդի հակասութիւններու ուղիղ գծին վրայ, լուծումներ գտնելու իրաւանցումին մէջ, կը սրէ կացութիւնները, ինչ որ կրնայ առաջնորդել բազմերես բախումներու:

- *Շատեր՝ փիլիսոփայ, աստուածաբան, քաղաքագէտ թէ ընկերաբան, ԻԱ. դարը կը բնորոշեն որպէս բախումներու դար: Համաձայն չեմ վճռագիր տալու սովորութիւնք*

\* Սոյն հարցազրոյցը բաղկացած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին ԲԱԳԻՆի խմբագրութեան հետ ունեցած մտերմական զրոյցէն ֆաղուած հատուածներէ: Ան տպուած է ԲԱԳԻՆի Մարտ 2006-ի (ԽԴ. տարի, թիւ 1) թիւին մէջ: Այստեղ կ'արտատպենք գայն, Վեհափառ Հայրապետին կողմէ կատարուած մանր բարեփոխումներով:

մօտեցումով դարը այդպէս բնորոշելու: Սակայն, միևս կողմէ, երբ իրապաշտ մօտեցումով կարդանք մարդկային պատմութեան ներկայ ժամանակաշրջանի ցուցանիշները եւ փորձենք վերլուծել տեղի ունեցող զարգացումները, պիտի տեսնենք թէ բախումներ սկսած են դառնալ յաճախակի ներկայութիւն քիչ մը ամէն տեղ: Այդ բախումները երբեմն կրօնական տարագաւորում, երբեմն քաղաքական-տնտեսական-ընկերային արտայայտութիւն ունին: Աշխարհը հանգիստ չէ: Բախումներու ցանցին մէջ ենք: Չանոնք ես պիտի չ'որակեմ որպէս կրօններու, քաղաքակրթութիւններու եւ մշակոյթներու բախումներ, այլ՝ արժէքներու: Կարծէք ներկայ աշխարհը արժէքներու նոր համակարգ փնտռելու ընթացքին մէջ է եւ ինչ որ տեղի կ'ունենայ հոս ու հոն (օրինակ վերջերս Դանիտոյ մէջ տեղի ունեցած Մուհամէտ մարգարէի նկարներու հարցը), արտաքինապէս կրօնական է, սակայն միջուկը արժէքներու բախում է:

– Ի՞նչ է այդ արժէքները...

– Ի՞նչ է արժէքը եւ ո՞ւր է արժէքը: Տարբեր հասկացողութիւններ, արժէքի տարբեր ըմբռնումներ գոյութիւն ունին: Օրինակ, իսլամութեան համար արժէքը իր էութեամբ գերազանցօրէն կրօնական է. արժէքը աստուածակեղրոն իրականութիւն է: Նման հասկացողութեան մեկնելով, արժէքը քննարկելի նիւթ չի կրնայ դառնալ: Քրիստոնէութիւնը արժէքի տարբեր սահմանում ունի: Կը կարծեմ որ մենք լայն քննարկումներու պէտք ունինք, կրօններու, մշակոյթներու, քաղաքակրթութիւններու միջեւ լուրջ երկխօսութեան կարիքը ունինք, հասկնալու համար թէ ի՞նչ է արժէքը, այլ խօսքով՝ ճշմարտութիւնը, տարբեր կրօններու ու մշակոյթին հայեցակէտով, եւ թէ ինչպէս կարելի է արժէքի հասարակաց ըմբռնում մը զարգացնել:

– Որո՞նք են այդ «Մենք»ը:

– «Մենք» ըսելով կը հասկնամ կրօններ, մշակոյթներ, քաղաքակրթութիւններ: Ներքին յարակցութիւն մը գոյութիւն ունի այս երեք իրականութիւններուն միջեւ: Իսկ անոնց խորքը ժողովուրդն է: Այս շրջագծէն ներս արժէքներ գոյութիւն ունին կազմաւորուած դարերու ընթացքին: Ոմանք շեշտը կը դնեն առաւելաբար կրօնականի վրայ, ուրիշներ՝ մշակոյթի մեր պարագային՝ կրօնի եւ մշակոյթի, միասնաբար: Իսլամութեան պարագային կրօնը ամէն բան է. մշակոյթը՝ կրօնի մէջ է, քաղաքակրթութիւնը՝ կրօնի մէջ է, քաղաքականութիւնը՝ կրօնի մէջ. կրօնն է որ կը պայմանաւորէ բոլորը, ընդհանրապէս մարդկային կեանքը, իր բոլոր երեսներով: Աստուածակեղրոն մօտեցում ունի իսլամութիւնը. ամէն բան կրօնով կը սկսի ու անով կը վերջանայ: Իր կրօնական արժէքներուն նկատմամբ իսլամը անգիջող է: Օրինակ, իսլամին համաձայն Գուրանը արաբերէն գրուած է եւ արաբերէն պէտք է կարդացուի. Իսլամը, ամերիկացի ըլլայ թէ չինացի, Գուրանը պէտք է արաբերէնով կարդայ: Մինչեւ յիսուն տարի առաջ, օտարներ միայն թարգմանած էին Գուրանը, որովհետեւ Գուրան թարգմանել իսլամներուն համար հերետիկոսութիւն էր: Վերջին տասնամեակներուն մտածման նոր հոսանք մը սկսաւ զարգանալ աւելի չափաւոր իսլամութեան մէջ, ըստ որուն կարելի է Գուրանը թարգմանել, բայց ոչ կարդալ օտար լեզուով: Իսլամութեան մօտ արժէքներու համակարգը ճշդուած է կրօնի կողմէ: Վերջերս Դանիտոյ մէջ պատահածը պէտք է դիտել այս ծիրէն ներս: Իսլամութիւնը կ'ըսէ թէ ինչ որ պատահած է մեր արժէքներու համակարգին չի համապատասխաներ. իսկ արեւմտեան արժէքներու համակարգը կ'ըսէ թէ կրօնի կողքին գոյութիւն ունին այլ արժէքներ, մարդկային

իրաւունքներ՝ ազատութիւնը, արդարութիւնը եւն։ Հոս արժէքներու բաղխում մը կայ։ Ուրեմն ըստ հոսի հոսի կրօնական բաղխում չէ։ Արժէքներու ըմբռնումի եւ համակարգի հարց է։

– Վեհափառ, դուք մօտէն շփուած էք աշխարհը առաջնորդող դեմքերու եւ կանոններու։ Հետաքրքրական է լսել մեր անմիջական ներկայ յուզող խնդիրներու մասին։ Այսպէս, երկու Աշխարհամարտերը խաղաղութիւն չբերին մեր մոլորակին։ Ազգերու Լիկան եւ ՄԱԿը անգորութեամբ կը բնորոշուին։ ՄԱԿը իր ուխտագրի առաջին տողը երբեք չյարգեց։ Ինչպէս երբեմն կ'ըսեն, ՄԱԿը կը կատարէ հրշէջի դեր։ Ըստ Ձեզի, ո՞ւր կը գտնուի թնկուկը կամ ի՞նչ բան է թնկուկը, գործն առանձնացներ, լուծում գտնելու համար։

- Երեք առիթներով ՄԱԿի ընդհանուր քարտուղարին հետ խօսած եմ այս մասին։ Տասներկու տարի առաջ նախկինին հետ եւս խօսած էի այս խնդիրներուն մասին։ ՄԱԿը շարք մը միջազգային ուխտեր եւ համաձայնագիրներ հաստատած է բոլոր պետութիւններու մասնակցութեամբ եւ անոնց գործադրութեան ինք պատասխանատու է։ Առաջինը եւ հիմնականը մարդկային իրաւանց համաձայնագիրն է։ Հոս հարց կայ, սակայն։ 1948ին հռչակուած այս համաձայնագիրը կարելի՞ է համարել համաշխարհային բնոյթ ունեցող համաձայնագիր։

– Միթէ՞ մարդկային իարւանց յայտարարութիւնը տիեզերական չէ։

- Կ'ըսուի, եւ արդարօրէն, որ արեւմտեան երկիրներու կողմէ պատրաստուած է ան եւ անոնց արժէքներուն, մշակոյթին, քաղաքական շահերուն կը համապատասխանէ։ Եւ հետեւաբար արեւմտեան դիմագիծ ունեցող այս համաձայնագիրը լուրջ վերանայումի կը կարօտի։ Հոս է որ ես կը կարծեմ թէ ՄԱԿը կարեւոր ընելիք ունի։ Ան պէտք է այս հարցին թղթածրարը բանայ, եւ գործընթաց մը ճշդէ բոլոր պետութիւններու, կրօններու եւ ընկերութեան մէջ գործող կառույցներու մասնակցութեամբ, սահմանելու թէ ի՞նչ են մարդկային իրաւունքները այսօր։ Ի՞նչ կը հասկնանք «մարդկային իրաւունք» ըսելով։ Ի՞նչ ազդու միջոցներով կարելի է հսկել մարդկային իրաւունքներու գործադրութեան։ 1998ին, Հռոմի մէջ, ցեղասպանութեան դժով միջազգային դատարանի ստեղծումը հռչակուեցաւ։ Հոն եւս տրամադրութիւններ կան որոնք երկդիմի են։ Արդարեւ, համաձայնագիրներ կը կնքուին պետութիւններու կողմէ, ՄԱԿի հովանաւորութեամբ, որոնք երբեմն թերի են, անորոշ են եւ կը կարօտին յստակացման։ Համաձայնագիրներ կան որոնց գործադրութիւնը, դժբախտաբար, ՄԱԿը ի վիճակի չէ ապահովելու։ 2000 թուականին ՄԱԿը ուրիշ համաձայնագիր մը կնքեց, բոլոր անդամ երկիրներու մասնակցութեամբ «Երրորդ Հազարամեակի Նպատակները» անունով, millennium goals, որոնք շատ գեղեցիկ են։ սակայն ՄԱԿը պիտի կարենայ զանոնք գործադրութեան մէջ դնել...։

– ՄԱԿը կ'որոշէ, բայց ունի՞ գործադրութեան ուրոյն միջոցներ։ Խօսքը կը բաւէ՞։

- Հոս է հարցը։ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին՝ Քոֆի Անանին հարց տուի թէ՛ ՄԱԿը որքանով կրցաւ որոշ գործնական քայլերու դիմել, որքանո՞վ կրնայ, ի՞նչ է ՄԱԿի դերակատարութիւնը։ ՄԱԿը տե՞ղ մըն է, միջազգային շրջագիծ՝ մըն է, ուր ազգերը քով քովի կու գան միասին խօսելու ու հարցեր քննելու, թէ տե՞ղ մըն է ուր

բացի հարցերը քննել է որոշումներ կը տրուին եւ ապա անոնց գործադրութեան հսկողութիւն կը կատարուի յատուկ գործընթացներու ճամբով: Փաստօրէն ՄԱԿը չկրցաւ այդպէս ըլլալ. փաստերը յստակ են: ՄԱԿը կոչուած է բազմակողմանիութեան (Multilateralism) վայր մը դառնալու, բայց կը տեսնենք որ այսօրուան աշխարհին մէջ միակողմանիութիւնը (unilateralism) կը շարունակուի գերապետութիւններու կողմէ: ՄԱԿը հրամայական անհրաժեշտութիւն ունի վերանորոգման, վերադասաւորման, վերակառուցման: Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի վերջին համաժողովին, այս ուղղութեամբ երկար յայտարարութիւն մը կատարեցինք: Ուրիշ կէտ մը եւս ՄԱԿը խաղաղութիւնը պահելու մէջ դերակատար է (peace keeping), եթէ ոչ խաղաղութեան գործընթացներ ստեղծելու մէջ (peace making): Կը կարծեմ որ ՄԱԿի դերը պէտք է ըլլայ առաւելաբար խաղաղութիւն ստեղծել, իսկ խաղաղութիւն ստեղծել կարելի չէ առանց արդարութեան:

- Կէս դար անցած է ՄԱԿի ստեղծումէն ի վեր, եթէ ցարդ չէ կրցած այդ ընկել, երաշխիք կա՞ որ յառաջիկայ տարիներուն պիտի ընէ, եթէ ուժ չունի:

- Կը խորհիմ թէ ՄԱԿի դերը կը կարօտի հիմնական բարեփոփոխութեան: ՄԱԿը ոչ թէ որպէս կառույց ինքզինք պէտք է ներքին վերանորոգման ենթարկէ, այլ նաեւ ու մանաւանդ որպէս առաքելութիւն: Ան պէտք է դառնայ բազմակողմանիութեան կեդրոն եւ իր հիմնական դերը պէտք է ըլլայ արդարութեան հիմերուն վրայ հաստատուած խաղաղութիւնը եւ մարդկային իրաւունքներու ամբողջական գործակցութիւնը հետապնդել: Յատկապէս կարգ մը երկիրներու մէջ հսկայ խրամատ մը կայ դեկավարութեան եւ ժողովուրդին միջեւ: Չեմ կրնար երեւակայել դեկավարութիւն մը հեռու ժողովուրդէն. դեկավարութիւնը ժողովուրդին ձայնն է, կամքն է, կեցուածքն է: Ճշմարիտ դեկավարութիւնը ժողովուրդէն եկող եւ դէպի ժողովուրդ ուղղուածութիւն ունեցող դեկավարութիւն պէտք է ըլլայ, այլապէս կը դառնայ բռնատիրութիւն: Կան երկիրներ, որոնք իրենց ձեւին մէջ իբրեւ թէ ժողովրդավար են, բայց իրականութեան մէջ իրենց հովիտեամբ բռնատէր են, ժողովուրդը անտեսուած է ու ճնշուած: Մարդկային իրաւունքները չեն յարգուիր. ժողովրդավարութիւնը, դժբախտաբար, լողունգի վերածուած է: Ժողովրդավարութիւնը ինքզինք կ'արտայայտէ երբ ժողովուրդն է տէրը իշխանութեան, եւ կը մասնակցի իշխանութեան, եւ հոն ներկայ է իր տագնապներով, խնդիրներով, սպասումներով: Շատ մը չարիքներու՝ տնտեսական, ընկերային, մշակութային թէ կրօնական աղբիւրը դեկավարութեան եւ ժողովուրդին միջեւ գոյութիւն ունեցող խրամատն է: Ղեկավարութիւնը պէտք է մնայուն ու անմիջական կապ հաստատէ ժողովուրդին հետ, որովհետեւ ժողովուրդն է մնայունը, դեկավարութիւնը գնայուն է: Կը կարծեմ թէ քաղաքացիական ընկերութեան մէջ, (civil society), գործող կառույցները վճռական դեր ունին կատարելիք այս ուղղութեամբ:

- Վեհափառ, հարուստ կենսափորձ ունիք, ոչ միայն տեղեակ էք, այլ նաեւ կը փորձէք ազդել դէպքերու ընթացքին վրայ: Մարդկութիւնը տագնապ կ'ապրի, քաղաքական լուծումները ցարդ սոսկ տնտեսական եղան, ինչպէս Մարշալի ծրագիր եւ ընկերային օրէնքներ: Ի՞նչ կը մտածէք, որպէս հոգեւոր աշխարհի վրայ բացուած մտածող, այն մասին որ ինչո՞ւ խաղաղութեան կառուցումը չի յաջողիր, ի՞նչ բան կը պակսի:

- Պէտք է յստակ ըմբռնումը ունենանք խաղաղութեան: Ի՞նչ է ան. ներդաշնակ գոյակցութիւն թէ՛ արդարութեան ներկայութիւն: Իրաւ մնայուն ու ամբողջական

խաղաղութիւն կարելի է հաստատել երբ արդարութիւն կայ, երբ մարդիկ զրկուած, անիրաւուած, լուսանցքայնացած չեն, գործնապէս կը մասնակցին իրենց համայնքին, ընկերութեան կամ երկրի կեանքին. երբ մարդկային իրաւունքները լիովին յարգուած են: Դժբախտաբար, ընկերութիւններու կեանքին մէջ գոյութիւն ունի մայր էջ եւ լուսանցք: Ամէնէն մեծ վտանգը լուսանցքն է: Երբ լուսանցքներ կը ստեղծենք, անոնք կը դառնան չարիքի աղբիւր: Անգլիոյ ներկայ վարչապետին առիթով մը ըսի, թէ երկրին մէջ լուսանցքներ (getho) ստեղծած էք, երբ Լոնտոնէն դուրս կ'ելլէք, այն սպաւորութիւնը կ'ունենաք թէ Փաքիստանի կամ Հնդկաստանի մէջ էք: Այս կացութիւնը, ուր integration-ի պակաս կայ, կրնայ վտանգել ընկերութեան մը ամբողջականութիւնը եւ ապահովութիւնը:

– Ֆրանսան սուղ վնարեց այս ընկերային լուսանցքին համար:

- Ճի'շդ: Ուստի ամէն տեսակ լուսանցքներ, կէթոններ ու պատեր պէտք է քանդուին: Ընկերութիւնը ինքզինք պէտք է զգայ մէկ ամբողջութիւն: Այդ մէկ ամբողջութեան ծիրէն ներս տարբերութիւնները պէտք է պաշտպանուին ու յարգուին: Տարբերութիւնները վտանգաւոր չեն դառնար, երբ ներդաշնակ փոխ յարաբերութեամբ իրենց զիրենք մէկ շրջագիծի մէջ կ'արտայայտեն: Այս ուղղութեամբ պէտք է զարգանան համայնքներու կազմաւորումը եւ ժողովրդավարական սկզբունքներու գործադրութիւնը: Այսպէս մնայուն խաղաղութիւն չի կրնար ըլլալ՝ երբ ցանկապատեր կան, լուսանցքներ կան մեր մտքերուն եւ հոգիներուն մէջ: Երբ մարդիկ զգան թէ իրենք լուսանցքայնացած են, բռնութեան կը դիմեն եւ բռնութիւնները մեզ կ'առաջնորդեն այնպիսի կացութիւններու, որոնք կը դառնան վտանգաւոր մարդկութեան ապագային համար:

– Վեհափառ, համաշխարհայնացումը, ձեռով մը, իր ընդհանրութեան մէջ կը խմբէ խնդիրները: Նոյնիսկ երբ բացորոշ կերպով չ'ըսուիր, ան գուտ տնտեսական հեռանկար չէ, է նաեւ մշակութային եւ քաղաքակրթական խնդիր, քանի որ միատեսակ կենցաղ կը ստեղծուի մոլորակի տարածքին, ձեռով մը *Բոճա-ժոյայի* եւ *համպրկըրի*, կ'ընթանամ դէպի միատեսակ լեզու, որուն կրողն են արհեստագիտութիւնը եւ համացանցը, որոնք տեղ չեն ձգեր հոգեւորին, մտածման, գլխագրուած մարդուն: Ամէն օր լեզուներ կը մեռնին, կը նշանակէ որ ինֆնուրոյն հաւաքականութիւններ կը դատապարտուին անհետացման, կ'ընթանամ դէպի մէկ լեզու իսուելու հանգրուան: Այս պայմաններուն մէջ արդարութիւն եւ խաղաղութիւն կարելի<sup>6</sup> են:

- Ես կը մօտենամ այդ խնդրին արժէքներու հայեցակէտով: Արժէքներու, կենցաղակերպերու, մտածելակերպերու, գործելակերպերու տարբերութիւն կայ: Դժբախտաբար, կրօնական ականդրութիւններ եւ հաւատալիքներ աւելի սրեցին տարբերութիւնները եւ զանոնք վերածեցին հակադրութեան: 1991ին անգլերէն լեզուով գիրք մը հրատարակեցի, ուր տողատակի մը մէջ կը հաստատէի թէ արեւմտեան ընկերութեան մէջ տակաւ աճող ծայրայեղ ազատամտութիւնը (liberalism) եւ աշխարհայնացումը (secularism) լաւ աչքով չեն դիտուիր իսլամական աշխարհին կողմէ, որովհետեւ անոնք ընկերութիւնը կը հեռացնեն հոգեւոր եւ բարոյական արժէքներէ: Այս երեւոյթին որպէս հակադարձութիւն, ըսի թէ Իսլամութիւնը պիտի փորձէ կրօնական, հոգեւոր, բարոյական արժէքներու վերադարձ մը կատարել: Մէկուն փորձը դէպի ծայրայեղ աշխարհայնացում ու ազատամտութիւն, միւսին փորձը դէպի ծայրայեղ կրօնամոլու-

թիւն, արժէքներու բախում կրնայ յառաջացնել: Այժմ նո՛յնը կը պատահի: Հոս կ'ուզեմ երեք կէտերու անդրադառնալ:– Առաջին, Եթէ ազատութիւնը սահման չունի, սանձարձակ է, հարց է: Բացարձակ ազատութիւնը Աստուծոյ կը պատկանի: մարդուն տրուած ազատութիւնը սահմանափակ է եւ պայմանաւոր: Մարդը իր ազատութեան առնթեր պէտք է ունենայ համարատուութեան զգացում՝ նաեւ Աստուծոյ եւ ապա իր նմանին հանդէպ: Մենք իրարու կապուած ենք համարատուութեան եւ պատասխանատուութեան սկզբունքներով: Ազատութիւնը չենք կրնար ինքն իր մէջ բացարձակ արժէքի վերածել: Ազատութիւնը պէտք է համարատուութեան շրջագծէն ներս արտայայտել եւ փոխադարձաբար: Երկրորդ, արեւմտեան ընկերութեան մէջ յստակ բաժանում մը կայ քաղաքական, տնտեսական եւ ընկերային կեանքի եւ բարոյական ու հոգեւոր արժէքներու միջեւ: Մինչ արեւելեան ընկերութեան մէջ եւ յստակապէս իսլամութեան մօտ անոնք սերտօրէն ազդուցուած են իրարու հետ: Այս երեւոյթը, անշուշտ իր դրական եւ ժխտական երեսները ունի, որոնց կարելի է այլ առիթով անդրադառնալ: Երրորդ, արեւմտեան ընկերային կամ քաղաքական-պետական համակարգին մէջ բարոյական արժէքներ ու սկզբունքներ գոյութիւն չունին: Անոնք հիմնուած են միայն մարդկային իրաւունքներու վրայ:

– Ըմբռնումները յստակ են: Երկխօսութեան յաջողութիւնը հաւանակա՞ն է:

– Երկու ծայրայեղութիւններու, արժէքներու հասկացողութեան ու արժեքափեռութեան միջեւ ես կը տեսնեմ բախում: Կրօններու երկխօսութիւնը գուտ աստուածաբանական իմաստով մեզ տեղ չի հասցներ: Աստուածաբանական հարցերու տեսական քննարկումը աղերս չունի մեր առօրեայ կեանքին հետ: Փաստօրէն այնքան այլ չի հետաքրքրեր ներկայ դարու մարդը: Երկխօսութիւնը ինչպէ՞ս կարելի է ընկերութեան կեանքին մէջ փոխադրել: Ժողովուրդը կեանքի երկխօսութեան ինչպէ՞ս կարելի է մասնակից դարձնել: Կը կարծեմ թէ հասարակաց արժէքներու համակարգ մը զարգացնելու մասին պէտք է մտածենք: Եթէ բոլոր կրօնները կրցան ասիկա ընել միասնաբար, ազգերը, կրօնները, մշակոյթներն ու քաղաքակրթութիւնները դրած կ'ըլլանք այնպիսի ընթացքի մը մէջ, ուր իրենց գանազանութիւնը պահելով հանդերձ հասարակաց արժէքներու շուրջ կը համախմբուին: Հասարակաց արժէքներու վրայ է որ մենք կրնանք հաւաքական համայնքներ ստեղծել, ուր գանազանութիւնները պահելով հանդերձ հարցերը կրնանք դիտել հաւաքական մօտեցումով ու ընդհանրական հայեցակէտով: Հետեւաբար, կարեւորութեամբ կ'ուզեմ շեշտել, հաւաքական արժէքներու համակարգի մը զարգացումը կրօններու, մշակոյթներու եւ քաղաքակրթութիւններու միջեւ:

– Վեհափառ, աշխարհի ֆակտագիրը կ'որոշեն հօգրները: Ինչպէ՞ս կարելի է լսուիլ անոնցմէ: Այս բոլոր գարգացումներուն մէջ ի՞նչ ֆակտագիր եւ դեր վերապահուած են մեր ժողովուրդին, մեր փոքրիկ ածուիւն, կամ ինչպէ՞ս նուագագոյն վնասով դուրս կրնանք գալ այս գուպարէն:

– Համաշխարհայնացումը դրական երեսներ չատ ունի, անկասկած: Սակայն, իր բոլոր դրական երեսներով հանդերձ, համաշխարհայնացումը աշխարհը կ'առաջնորդէ դէպի մէկ մշակոյթ, ուր համայնքներ, գանազանութիւններ, ինքնութիւններ կը դադրին գոյութիւն ունենալէ: Երրորդ կ'ըլլայ միաձեւութիւնը, միակերպութիւնը, միօրինակութիւնը, միատեսակութիւնը: Բոլոր ընկերութիւնները դէպի հոն կ'երթան: Արեւմտեան համաշխարհայնացած մշակոյթի նշանները ամէն տեղ թափանցած են: Դրժ-



բախտարար Գոֆա-գոլայի եւ փիցցայի մշակոյթ է համաշխարհայնացած այս մշակոյթը՝ անորակ ու անդիմագիծ: Ինչպէ՞ս կարելի է պայքարիլ անոր դէմ: Մենք չենք կրնար հակազդել, ո՛չ կրօնները, ո՛չ եկեղեցիները, ո՛չ փոքր ազգերը կրնան փոխել համաշխարհայնացման ընթացքը: Իսլամութիւնը կը փորձէ հակազդել. բայց մինչեւ ո՞ւր: Համաշխարհայնացումը այնքան զօրեղ է որ կը փշրէ եւ կը չէզոքացնէ ամէն տեսակ հակազդեցութիւն ու արգելք: Մենք պէտք է երկխօսութիւն ստեղծենք համաշխարհայնացման հետ: Ինչպէս կ'ըսեն անգլերէն, reactive պէտք չէ ըլլանք, այլ proactive. միայն չհակազդել, այն նաեւ կանխել: Համաշխարհայնացման հետ երկխօսութիւն պէտք է ստեղծենք, քննադատական մօտեցումով եւ ոչ թէ համակերպումի ոգիով: Համաշխարհայնացումէն պէտք է առնենք ինչ որ դրական է եւ դուրս ձգենք ինչ որ բացասական է: Այս ընելու համար մենք մեզ պէտք է զօրացնենք, մեր արմատները պէտք է ամրացնենք: Համաշխարհայնացումը մարտահրաւէր մըն է ուղղուած մեզի՝ մեր ինքնութիւնը, մեր արժէքները, մեր անհատականութիւնը շեշտելու: Փոքր ազգ մը ըլլալով յաճախ ապրած ենք գերհզօր պետութիւններու իշխանութեան ներքեւ, առած ենք ինչ որ դրական է, հայացուցած ենք: Հայացման այդ ընթացքը մեր պատմութեան ամէնէն դրական երեւոյթներէն մէկը եղած է. ուրիշներէն առած ենք ինչ որ գեղեցիկ է եւ հարստացնող, բայց վերամկրտած եւ ազգային դիմագիծ ու նկարագիր տուած ենք: Այժմ, դժբախտաբար, մէկ կողմէն՝ դռները լայն բացած ենք օտար բարքերու առջեւ. իսկ միւս կողմէն՝ մեզ շրջապատող պայմանները այնպիսին են որոնք չեն նպաստեր հայացման ներքին ընթացքին: Հոս է խնդիրը: Պէտք է զգոյշ ըլլանք: Չենք կրնար մեր շուրջ ցանկապատեր ստեղծել: Այսօրուան ընկերութիւնը ցանկապատ չի ձանձնար, անցանկապատ ընկերութեան մէջ կ'ապրինք: Սակայն, պէտք է ստեղծենք մեր ներքին, հոգեկան, իմացական ցանկապատերը՝ մեր արժէքներու ամրապնդումով ու բերեղացումով ու մեր ինքնութեան վերահաստատումով:

– Միշտ ուզած եմ պատշաճիլ, կապելի, եւ հետեւանիքները ծանօթ եմ:

– Ուրիշները կապելի ես ճիշդ չեմ նկատեր: Ինչ որ համաշխարհայնացումը մեզի կ'ընծայէ հարկ է մաղէ անցնել: Եկեղեցին ու մեր մշակութային կազմակերպութիւնները մեր «մաղերը» պէտք է ըլլան, ապա թէ ոչ շատ դիւրին կերպերով համաշխարհայնացման հոսանքը մեզ կը քշէ եւ կը տանի իր հետ: Հետեւաբար, համաշխարհայնացման հետ երկխօսութիւնը կենսական է, ուրիշ ելք չկայ: Պէտք է մասնակից դառնանք այսօրուան աշխարհի կեանքին, բոլոր կալուածներէ ներս, բոլոր մակարդակներու վրայ: Ինքնակողմացումը մահն է փոքր ժողովուրդներուն: Այսօրուան աշխարհը մեզի լայն առիթներ կ'ընծայէ, նոր ատարածքներ կը բանայ, նոր կարելիութիւններ կը ստեղծէ. պէտք է ներկայ եւ մասնակից դառնանք ամէն տեղ: Այսօրուան աշխարհը փոքրացած է: Բազմակրօն եւ բազմամշակոյթ ընկերութեան մէջ կ'ապրինք, մեր զրուներն ու պատուհանները չենք կրնար փակել, խեղդամահ կ'ըլլանք: Ուզենք թէ ոչ, պէտք է բացուինք: Նոր պատնէշներ չենք կրնար ստեղծել, իսկ հիները՝ վաղուց քանուղուած են:

– Բայց կրօնները եղած են, պատմութեան ընթացքին, պատնէշ ստեղծող ուժերը:

– Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին Յրդ Համաժողովին, ամիս մը առաջ, ուղղած իմ խօսքիս մէջ հետեւեալը ըսի, թէ եկեղեցին ինքզինք պահելու համար պատնէշներ ստեղծեց, աստուածբանական, ծիսական, դաւանաբանական պատնէշ-

ներ: Այսօրուան աշխարհին մէջ այդ պատնէշները չեն կրնար գոյատեւել, չեն կրնար այլեւս մեզ պաշտպանել, ուստի եկեղեցին իր պատէն անդին պէտք է երթայ, երթայ դէպի ժողովուրդը, ուրիշ մշակոյթներ, ուրիշ կրօններ եւ երկխօսութեան մէջ մտնէ: Երկխօսութեամբ է որ կարելի է մեզ պաշտպանել, մեր ինքնութիւնը պահելու աւելի բիւրեղացնել ու հզօրացնել:

- Ձե՞ն վտանգուի՞ր փոքր ժողովուրդները եւ մասնաւորաբար հայկական Սփիւռքը:

- Մենք փոքր ազգ ենք: Մեր ինքնութիւնը ապահովող ազդակ եղած են մեր եկեղեցին, մեր մշակոյթը, մեր արժէքները: Մեզի համար, որոշ իմաստով, պայքար է երկխօսութիւնը մեր շրջապատին հետ, մեր հայութիւնը պահելու պայքար: Ինքնութիւնը ի վերուստ տրուած չէ, ան պայքարով կը կերտուի ու պայքարով կը պահուի: Այսօրուան աշխարհին մէջ, յատկապէս Սփիւռքի պարագային, ինչ կը նշանակէ հայ ըլլալ եւ հայ մնալ: Հայաստանի մէջ, ուզենք թէ ոչ, հայ ենք, հայ ըլլալ ընտրութեան հարց չէ. սփիւռքի մէջ հայ ըլլալ ընտրութեան հարց է. մենք այդ ընտրութիւնը կատարած ենք: Սփիւռքի պատմութիւնը հայ մնալու պատմութիւն է, գոյապայքարի պատմութիւն. միթէ այդ չէ՞ եղած իր ողջ պատմութիւնը: Այսօր, պայմանները նպաստաւոր չեն. մեր կեանքի իւրաքանչիւր վայրկեանին, հայ ըլլալու եւ հայութիւնը պահելու մարտահրաւէրին առջեւ ենք: Համաշխարհայնացման ահարկու ալիքներուն դիմաց ի՞նչ ձեւով մեր հայութիւնը պիտի պահենք: Այս պայքարին մէջ մենք ուրիշ ընելիք չունինք եթէ ոչ՝ մէկ կողմէն մեր շրջապատին հետ երկխօսութեան մէջ մտնել, իսկ միւս կողմէն՝ մեր կառույցներուն ճամբով վերաշէշտել ներկայ կեանքի իրականութիւններուն պատշաճեցնելով, այն արժէքներն ու սկզբունքները, որոնք մեր հայութիւնն ու ինքնութիւնը կ'ապահովեն:

- Այս միտքերը, կեցուածքները եւ նոր ժամանակի սպառնալիքներու գիտակցութիւնը, ազգային, մշակութային, բարոյական եւ հոգեւոր, որպէսզի փակ շրջանակի մէջ չմնան, ո՞վ եւ ինչպէ՞ս պիտի բացատրէ մեր ժողովուրդին: Անօրեայէն տարբեր մակարդակի վրայ ո՞ւր կը փնտրուի այս խնդիրները, ղեկավարութիւնները կը փնտրուին: Հարկ է մտածել Ե դարու հրաշքի մասին, երբ կրօնական, քաղաքական եւ մտաւորական առաջնորդները նոյն ձեւով զգացին, մտածեցին եւ գործեցին, որպէսզի ազգը չընկղմի, եւ ունեցանք մեր այբուբենը: Հրաշքը կրնա՞յ կրկնուի:

- Խօսելով սփիւռքի մասին, իրապաշտ մօտեցումով, հարկ է յիշեցնել որ մեր կառույցները կարծրացած վիճակի մէջ են, անոնք փակ տուփերու վերածուած են, դարձած են ինքնանպատակ ու ինքնավախճան: Անոնց մօտեցումը մեր ազգը յուզող հարցերու նկատմամբ ընդհանրապէս ռոմանթիք է, տեսական է ու աւանդապահ: Իւրաքանչիւր համայնք ինք իր մէջ փակուած է, իր գոյութիւնը կ'ուզէ զանազան ձեւերով պահել: Տակաւին չենք կրցած թէ համասփիւռքեան եւ թէ համահայկական խնդիրներուն համազգային ու համապարփակ ձեւով մօտենալ: Փորձեր եղան, Հայաստանի մէջ երկու համահայկական համագումարներ տեղի ունեցան, որոնք ոչինչ կրցան ընել եւ ոչինչ փոխել կացութենէն: Անցնող տարի Անթիլիասի մէջ խումբ մը մտաւորականներ համախմբեցինք Սփիւռքէն եւ Հայաստանէն, կարեւոր հարցերու մասին խօսեցանք, բայց չկրցանք արտայայտուած մտածումները ու մտահոգութիւնները գործնա-

կանացներ: Մենք լուրջ մարտահրավերներու դիմաց ենք, այնպիսի գործընթացներ հարկ է յառաջացնել, որ կարելի ըլլար այս մարտահրավերներու մասին լրջօրէն խօսիլ: Պէտք է, եկեղեցիէն սկսեալ, ինքնաքննական եւ իրապաշտ մօտեցում որդեգրենք մեր ազգը յուզող խրոխտներու նկատմամբ: Այլեւս չենք կրնար հինցած-մաշած ձեւերով մօտենալ մեր հարցերուն: Պէտք է բացուիմք, դուրս գանք նեղ սահմաններէ, նեղ պատեանէ, նեղ մտածելակերպերէ: Տարբեր աշխարհի մէջ կ'ապրինք, պէտք է փոխուիմք: Սփիւռքի մէջ կ'ապրինք փոքր-փոքր կղզիներու նման, մեր բոլոր կառույցները պէտք է քով-քովի գան: Ճիշդ է, տարբեր պայմաններու մէջ կ'ապրինք. հասարակաց մտահոգութիւններ, արժէքներ եւ սկզբունքներ, ձգտումներ կան, որոնք մեզ պէտք է համախմբեն ընդհանրական նպատակներու շուրջ: Հարկ է նոյնը կատարել Հայաստան-Սփիւռք մակարդակի վրայ:

– Կ'ըսեմք՝ հասարակաց մտահոգութիւններ: Առանձնացուած են անոնք:

– Այս մտահոգութենէն մեկնած փորձեցի որոշ նախաձեռնութեան մը դիմել եւ ամէն տարի մեր կեանքը յուզող հարցի մը շուրջ հրաւիրեցի մեր ժողովուրդի գաւակները, խօսելու, քննելու եւ մտածելու եւ ապա գործնական աշխատանքներու դիմելու: Այս տարի, օրինակ, հայ դպրոցի տարի հռչակեցի: Հայ դպրոցը միջնաբերդն է մեր գոյութեան: Մեր կեանքին մէջ շատ հարցեր կան. անոնց մասին կը խօսինք տան մէջ, դուռ եւ պատուհան գոցած. եկեղեցին, մեր կառույցները, ամէն մէկը ինք իր մէջ անփոփոռ կը խօսի. ինքն իր հետ խօսի. մենախօսութիւնը մեզ գործնական արդիւնքներու չ'առաջնորդեր: Տարբերութիւններ կան մեր կեանքէն ներս. սակայն կան նաեւ հասարակաց մտահոգութիւններ: Ժողովուրդ մը չի կրնար իր կեանքը կազմակերպել երբ յստակ օրակարգ մը չունի: Ես հարց կու տամ այսօր. մեր ազգին օրակարգը ի՞նչ է: Ո՞ր պիտի ճշդուի այս օրակարգը: Համահայկական երկու խորհրդաժողովներուն միայն ճառեր արտասանուեցան եւ պտոյտներ կազմակերպուեցան: Եթէ ազգ մը, կառույց մը, ընկերութիւն մը իր օրակարգը չունի, իր առաջնահերթութիւնները չունի եւ իր կեանքին ու գործին նպատակը յստակ չէ, փաստօրէն կը կորսնցնէ իր գոյութեան իրաւունքը: Առաջարկս պիտի ըլլայ Հայաստանի պետութեան ու մեր բոլոր կառույցներուն միասնաբար, մեր ազգի օրակարգը ճշդել, օրակարգի հարցերը քննելու ընթացքները ճշդել, եւ մեր տուած որոշումները կեանքի վերածելու աշխատակերպեր եւ գործընթացներ որդեգրել: Այլապէս, համաշխարհայնացած աշխարհը մեզ պատմութեան լուսանցքի մէջ պիտի ձգէ:

– Վեհափառ, վերլուծումներէ ետք, ինչպէ՞ս կը տեսնէք կարելիութիւնը ազգային հարազատ մշակոյթով եւ որակով ազգովին վերականգնելու:

– Անցեալէն ժառանգած հարուստ մշակոյթ մը ունինք. մեր մշակոյթը այլ մշակոյթներու հետ երկխօսութեան մէջ պէտք է դնենք, ինչ որ մեր մշակոյթը կը բիւրեղացնէ, կ'ամրացնէ: Երկխօսութիւն չի նշանակեր միայն առնել, այլ նաեւ տալ: Ես իմ մշակոյթիս արմատները պէտք է գօրացնեմ, արժէքներս բիւրեղացնեմ, որպէսզի գայն ինքնավստահութեամբ երկխօսութեան մէջ դնեմ: Անցեալը դրամագլուխի վերածելը մեզ տեղ չի հասցներ: Մեր դրամագլուխը պէտք է հարստացնենք: Պէտք է տեսնենք թէ ինչ ձեւով մեր արժէքները կը համապատասխանեն ներկայ աշխարհի մտահոգութիւններուն, պայմաններուն, նաեւ մեր երիտասարդութեան սպասումներուն: Մեր հոգեւոր եւ մշակութային արժէքները երիտասարդութեան համար պէտք է գրաւիչ դարձնենք, երիտասարդներու լեզուով պէտք է խօսինք, այլապէս անոնք մեզմէ պիտի

Հեռանան: Եկեղեցին չի կրնար ըսել՝ ինձի հետեւեցէ՛ք, նախ եկեղեցին ինք պէտք է դէպի ժողովուրդ երթայ, Քրիստոս նախ ինք մօտեցաւ ժողովուրդին, անոր համապատասխան լեզուով խօսեցաւ, իր օրինակները ժողովուրդի կեանքէն առաւ, եւ յետոյ ըսաւ՝ «ան որ ինձի կը հաւատայ ետեւէս թող գայ»: Մենք բերդերու վերածուած ենք, եկեղեցին միջնաբերդ, մշակոյթը միջնաբերդ, դպրոցը՝ միջնաբերդ, եւ կը սպասենք որ երիտասարդութիւնը մեզի մօտենայ: Ո՛չ: Մենք պէտք է երիտասարդութեան մօտենանք, մենք մեր արժէքները տարբեր մօտեցումներով պէտք է մատուցենք ժողովուրդին, յատկապէս երիտասարդութեան՝ մատչելի եւ ըմբռնելի դարձնելով: Արժէքները ինքնանպատակ չեն, անոնք տեսիլքի մը ծառայող նպատակ պէտք է ունենան: Տեսիլքն է որ կը պայմանաւորէ ազգի մը կամ կազմակերպութեան օրակարգը: Օրինակ, եթէ օր մը հայ դատը լուծուի, ինչ պիտի ըլլայ մեր տեսիլքը: Հայաստանի մէջ ի՞նչ է մեր տեսիլքը: Ներկայ աշխարհին մէջ ինչպէ՞ս կ'ըմբռնենք մենք մեզ: Մեր ինքնահասկացողութիւնը ի՞նչ է: Այս հարցերուն մասին հարկ է խօսիլ: Ուշացած չե՞նք արդեօք: Մեր ազգային ձգտումները եւ տեսիլքը պէտք է յստականան, որպէսզի մեր ազգի օրակարգին մասին խօսինք: Ազգային եւ պետական օրակարգերու եւ տեսիլքներու միջեւ տարբերութիւն կայ. գանոնք պէտք չէ շփոթել: Պետութեան տեսիլքները կրնան փոխուիլ, բայց մեր ազգային գաղափարախօսական տեսիլքը պէտք է ունենանք, եւ անոր համապատասխան՝ մեր օրակարգը, մեր գործընթացքը, մեր աշխատելակերպը:



**ՏՕՆԱԿԱՆ**

**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐՉԻ ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊԻ ՏՕՆԸ  
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻՍ ՈՒԽՏԻ ՕՐԸ**

*Կիրակի, 2 Ապրիլ 2006-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ հաւաքուած բազմութիւնը հոգեկան մեծ գոհունակութիւն ապրեցաւ, համբուրելով մեր Հաւատոյ Հօր Ս. Գրիգոր Լուսաւորչի Օրհնարաչի Աջը:*

*Տակաւին քանի մը տասնամեակներ առաջ, աւագ սերունդին պատկանող հայ մայրեր, Պէյրութի զանազան շրջաններէն Կաթողիկոսարանի Ուխտի Օրը, բոպիկ ոտքերով կը քայլէին ամբողջ*

*ճամբան մինչեւ Անթիլիաս, համբուրելու Ս. Աջը: Անոնք սորված էին իրենց նախորդ սերունդէն, որոնք Կիլիկիոյ մէջ, Սիսի պատմական Մայրավանքը կը բարձրանային, վերանորոգելու իրենց հաւատքը՝ համբուրելով դարերու սրբութիւն եղող Ս. Աջը Հայոց Երկրորդ Լուսաւորչին: Նոյն այս սովորութեան հետեւողութեամբ, Դպրեվանեցի խումբ մը սարկաւագներ ու սաներ, Պիքֆայայէն Անթիլիաս քայլեցին, հաւատքի*



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐՉԻ ԱՋՈՎ ԿԱՏԱՐՈՒԿԾ ԶՐՕՐՅՆԷՔԷՆ ՏԵՍԱՐԱՆ ՄԸ, ՄԱՅՐ ԽՈՐԱՆԻՆ ՎՐԱՅ

վերարթնութեան ու հոգեկան գօտեպնդումի իբրեւ նշան, արժանի դառնալու համար Ս. Գրիգոր Լուսաւորչի Սրբազան Աջի հետ հաղորդութեան: Ազգային այս սրբութիւնը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ տարագիր, անցաւ Չարդի ու աքսորի ճամբաներէն, ու այսօր դարձեալ իր հովանին կը տարածէ մեր ժողովուրդի գաւակներուն վրայ:

Մուտն ի Վիրապի եւ Կաթողիկոսարանիս Ուխտի Օրուան առիթով, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց Գերշ. Տ. Տիրայր Եպս. Փանոսեան: Եկեղեցական արարողութեան ու Ս. Աջին եւ այլ Սրբոց Աջերուն ու մասունքներու թափօրին հանդիսապետեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս: Աջերու թափօրին մասնակցեցան Միաբան Հայրեր, Լիբանանի Թեմի քահանայից դասը, հիւր հոգեւորականներ եւ մեծ թիւով հաւատացեալներ:

Պատարագիչ Սրբազանը իր քարոզին մէջ վեր առաւ Հայկական Յեղապանութենէն վերընձիւղած Կիլիկեան Ս. Աթոռի պատմութիւնը, երբ Ուխտի այս օրը Չարդէն վերապրելու եւ հաւատքի մէջ գօտեպնդուելու սքանչելի առիթ իբրեւ հաստատուած էր Երջնկյ. Տ.Տ. Սահակ Բ. Վշտակիր Կաթողիկոսին կողմէ: Սրբազանը յիշեց նաեւ որ այն օրէն երբ Սահակ Հայրապետ Սրբայոյս Միւռոն հեղուց Անթիլիասի գետին մէջ ու հարիւրաւոր հայ որբեր մկրտեց, Անթիլիասի հողը նուիրականացաւ, եւ այդ հողէն ծրեցան նոր ծիւրեր, ու Ս. Լուսաւորչի հաւատքով զօրացած նուիրուեցան մեր ազգի եւ եկեղեցւոյ առաքելութեան:

Ս. Պատարագի երգեցողութիւնը քառաձայն կատարուեցաւ Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբին կողմէ:

Պատարագէն անմիջապէս ետք, Միաբան Հայրերէ, Քահանայից դասէն



ՀԱԲԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՍԵԾՈՎ ՈՒ ՓՈՔՐՈՎ, ՋԵՐՄԵՆԱՆԴՈՒԹԵԱՍԲ ԿԸ ՀԱՄԲՈՒՐԵ ԻՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՒԹԻՒՆՆԵՐԸՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՋԸ

*ու Դպրեվանքի սաներէն կազմուած մեծահանդէս թափօրը, գլխաւորութեամբ Վեհափառ Հայրապետին, Մայր Տաճարին մէջ շրջեցաւ, տեղատարափ անձրեւին պատճառաւ: Վեհափառ Հայրապետը Ս. Լուսաւորչի Աջով, իսկ Միաբան Հայրեր այլ սուրբերու Աջերով ու մասունքներ պարունակող խաչերով օրհնութիւն բաշխեցին հաւատացեալներուն, որոնք ջերմեռանդութեամբ կը համբուրէին զանոնք, ջանալով գէթ իրենց թաշկինակները հպեցնել անոնց, նաեւ իրենց հետ տանելու անոր սրբութենէն ճառագայթող օրհնութիւնը:*

*Մայր Տաճարի խորանի Ս. բեմին վրայ տեղի ունեցաւ Զրօրհնէք «Ս. Աջովն Գրիգորի Լուսաւորչին...»: Վեհափառ Հայրապետը ընթերցեց հիւանդաց բժշկութեան եւ հաւատքի ամբապնդման յատուկ աղօթք մը, ուր կ'ըսուէր. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն քեզի կը դիմենք, մենք ուխտաւոր գաւակներս, Բարձրեալ Աստուծոյ մեծանուն ուխտաւորիդ, ո՛վ Գրիգոր Սուրբ Հայրապետ: Ո՛վ Լուսաւորիչ մեծ Հայրապետ, Ս.*

*Աջիդ հովանիին տակ օրհնէ մեր ազգը ամբողջ՝ ի Հայաստան եւ սփիւռս աշխարհի: Օրհնէ մանաւանդ Անթիլիասի Մայրավանքին մէջ հաւաքուած ուխտաւոր ժողովուրդդ: Սրբէ՛ մեր մեղքերը, մաքրէ մեր հոգեկան ու Ֆիզիքական ախտերը. առողջութիւն շնորհէ բոլոր հիւանդներուն. լուսաւորէ՛ մեր կեանքի խաւար ցամաքները. երկնային բարիքներով ծաղկագարդէ մեր ժողովուրդի գաւակներուն, մեր ընտանիքներուն եւ մեր Մեծ Ընտանիքին՝ քու պատուական ժողովուրդիդ կեանքը՝ ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական եւ Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ եւ յաւերժութիւն ազգիս Հայոց»:*

*Զրօրհնէքէն յետոյ, Ս. Լուսաւորչի Աջը դրուեցաւ Մայր խորանի բեմին վրայ Միաբան Հայրերու հսկողութեան ներքեւ, ու հայ թէ՛ օտար հաւատացեալներ մինչեւ ուշ գիշեր եկան Մայրավանք համբուրելու համար զայն, իրենց խնդրանքները մատուցելով Աստուծոյ, ապաւինելով բազմաչարչար Սուրբին բարեխօսութեան:*



## ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԸ ԾԱՂԿԱԶԱՐԴՈՒԹՅԱՒ ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՎ

Կիրակի, 9 Ապրիլ 2006ին, հազարավոր հայ մանուկներ իրենց ծնողներուն հետ Անթիլիասի Մայրավանքը եկած էին Ծաղկազարդի տօնին մասնակցելու, իրենց ներկայութեամբ ծաղկազարդելով Կաթողիկոսարանը:

Անթիլիասի մէջ մատուցուած Սուրբ եւ անմահ պատարագի ընթացքին, կազմուեցաւ յատուկ թափօր մանուկներու մասնակցութեամբ, որ դուրս եկաւ Մայրավանքի հիւսիսային դարպասէն, ու ծովեզերեայ մայրուղիէն ամբողջ Կաթողիկոսարանին շրջանը ընելով, վանքի մայր դարպասէն վերջապահ ներս մտաւ:

Ս. պատարագը մատուցեց Գերշ. Տ. Նարեկ Եպս. Արքեպիսկոպոս: Արքեպիսկոպոս Արամ Ա. Կաթողիկոս ներկայ բազմահազար ժողովուրդին իր պատգամը ուղղեց Վեհարանի պատշգամէն, շուրջը ունենալով հայրենիքէն ու Սփիւռքի զանազան երկիրներէն ժամանած հայ գրողներ, որոնք նոյն օրերուն Անթիլիասի մէջ կը մասնակցէին Գրողներու Համահայկական Գ. Համաժողովին:

Նորին Սրբութիւնը ողջունեց բոլոր հայ երեխաները, աշխարհի ամէն անկիւններուն, Յիսուսի Երուսաղէմ մուտքի խորհուրդը կապելով մեր հայրենիքին, որ մեր ժողովուրդին համար «նոր



ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ԳԱՅՈՐԴԻՆԵՐ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ԵՐԱՓՈՒԿՆԵՐ





ՀԱՅ ՍԱՆՈՒԿՆԵՐ ԵՐԿԻՂԱԾՈՒԹԵԱՄԲ ՁԱՏԿԱԿԱՆ ՆՈՒԲՐՆԵՐ ԿԸ ՍՏԱՆԱՆ ՎԵՅՈՓԱՌ ԶՕՐՄԷ

*խմն Երուսաղէմ է» ինչպէս ըսաւ Արամ Ա. Կաթողիկոս: Ապա, Վեհափառ Հայրապետը բազմահազար հայ մանուկներ Վեհարանին մէջ ընդունեց, օրհնելով ու գատկական նուէրներ բաշխելով բոլորին:*

*Յետմիջօրէին տեղի ունեցաւ նաեւ Դռնբացէքի խորհրդալից արարողութիւնը, հանդիսապետութեամբ Վեհափառ Հայրապետին: Արարողութիւնը կատարեց Նարեկ Եպիսկոպոս, որ նաեւ քարոզեց, Քրիստոսի Երկրորդ Գալստեան խորախորհուրդ պատգամը*

*փոխանցելով ներկայ հաւատացեալներուն:*

*Ծաղկագարդի տօնով ու Դռնբացէքի արարողութեամբ Հայ եկեղեցին կը մտնէ Քրիստոսի տնօրինական կեանքի վերջին Շաբաթը, Աւագ Շաբաթը, երբ հայ հաւատացեալը իբրեւ հոգեւոր ուխտաւոր, կը հետեւի Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջալոյսին պատահած դէպքերուն, ու մարդու փրկագործութեան ի խնդիր Անոր կրած չարչարանքներուն, որուն պսակումը պիտի ըլլար սակայն Յաղթական Յարութիւնը:*



## ԱԲԱԳ ՇԱԲԱԹ-Ը ԵՒ Ս. ԶԱՏԻԿՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

ՏԱԱԸ ԿՈՒՍԱՆԱՑ ՅԻՇԱՏԱԿԻ ԺԱՄԵՐ-ԳՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Երեքշաբթի 11 Ապրիլ 2006-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Տասր Կուսանաց Յիշատակի Ժամերգութիւն: Մայր Տաճարի Լուսարարապետութեան հրաւերով, Ազգ. Եղիշէ Մանուկեան Վարժարանի 6-րդ դասարանի աշակերտուհիներէն 10 հոգի, իրրեւ առակին մէջ յիշուած 10 կոյսերը, մասնակցեցան արարողութեան եւ մոմեր բռնեցին: Անոնցմէ հինգը վառ

պահեցին իրենց մոմերը, իսկ հինգը մարեցին, խորհրդանշելով Աւետարանի «խմաստուն» եւ «յիմար» կոյսերը:

Եկեղեցական արարողութենէն ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Վեհարանի զահասրահին մէջ ընդունեց հայ պարմանուհիները, եւ անոնց նուիրեց խաչեր, քաջալերելով մեր եկեղեցւոյ կեանքէն ներս անոնց մասնակցութեան ոգին:

Ա.Ի.Ա.Գ ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ՈՏՆԼՈՒԱՅ



ԱԶԳ. ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻՆԵՐԸ, ՏԱԱԸ ԿՈՒՍԱՆԱՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԵՆԵՆ ԵՏՔ ՎԵՅԱՓԱՌ ՅԱՅՐԱՊԵՏԻՆ ՇՈՒՐՋ

*Քրիստոսի տնօրինական կեանքին վերջին՝ Աւագ Շաբթուան արարողութիւնները Անթիլիասի Մայր Տաճարին մէջ սկսան Շաբաթ օր՝ Ղազարու Յա-*

*րութեան յիշատակին նուիրուած ժամերգութեամբ: Ապա յաջորդ շաբաթ՝ Երկուշաբթի 10 Ապրիլէն սկսեալ ամէն օր տեղի ունեցան ժամերգութիւններ եւ*



«ՅՕՂԵԱ՝ ՅԻՍ ՄՇՏԿԱԲ ԵՒ ՍՈՒՐԲ ԵՂԷՑ...»



ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ՈՏԵԼՈՒԱՅԻ ԱՐԱՂՈՒԹԵՆԵՆ

**Ս. Գրային ընթերցումներ:**

Աւագ Հինգշաբթի առաւօտուն, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Ս. Հաղորդութեան պատարագ, զոր մատուցեց Հոգչ. Տ. Անանիա Աբղ. Գուճանեան: Ս. պատարագի ընթացքին ներկայ հաւատացեալներ հաղորդուեցան, սոյն Խորհուրդի հաստատման նշանակալից օրուան յատուկ ապրումով:

Յետ միջօրէին, Մայր Տաճարը լեցուցած խուռներամ բազմութեան ներկայութեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս կատարեց Ունըլուայի խորիմաստ արարողութիւնը, եւ այդ առիթով տուաւ իր հայրապետական պատգամը: Վեհափառ Հայրապետը իր պատգամին առանցքը դարձուց սիրոյ գաղափարը, «որուն քաղցրահամ պտուղներէն մին է խոնարհութիւնը: Երբ ուշադրութեամբ հետեւիք այս արարողութեան ընթացքին երգուած շարականներուն, Սուրբ Գրոց ընթերցումներուն, կատարուած աղօթքներուն, այդ բոլորը մէկ բան կը յիշեցնեն, Սէր եւ միայն սէր: Միթէ այս բառը քրիստոնէական մեր կեանքին էութիւն չի՞ կազմեր: Միթէ սէրը մեր քրիստոնէական հաւատքին առանցքը չի՞ կազմեր: Կարելի չէ՞ հասկնալ մարդկային կեանքը առանց սիրոյ: Նոյնիսկ ոչ բանական աշխարհին մէջ, այդ բառը, բնագոյային իր ըմբռնումով, որոշ ձեւով ներկայ է: Աստուած իր երկնային փառքէն խոնարհեցաւ մարդուն համար, մարդը սիրելուն համար: Ան այնքան սիրեց մարդը, որ անոր համար իր արիւնը թափեց, որպէսզի մարդը վերամարդացնէ» ըսաւ Նորին Սրբութիւնը:

ԽԱՒԱՐՄԱՆ ԿԱՄ ԼԱՑԻ ԳԻՇԵՐ

Երեկոյեան ժամը 7-էն սկսեալ մինչեւ ուշ գիշեր՝ ժամը 11.30, Անթիլիասի Մայրավանքը լեցուցած հազարաւոր հաւատացեալներուն մէջ կարեւոր թիւ կը կազմէին երիտասարդներ եւ երիտասար-

դուհիներ: Խաւարման Գիշերուան հոգեթով արարողութիւնները կատարուեցան հանդիսապետութեամբ Վեհափառ Հայրապետին, եւ մասնակցութեամբ միաբան հայրերու եւ Դպրեվանքի սաներուն:

Լացի գիշերուան խորհրդաւոր մըթութեան մէջ քարոզեց Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիճթճեան: Հայր Սուրբը խօսեցաւ մեղաւոր մարդկութեան դարձին մասին, յիշելով Քրիստոսի աջակողմը խաչուած աւագակին դարձը, իբրեւ ներկայացուցիչը մեղաւոր մարդկութեան:

Նոյն գիշեր ընթերցուած եօթը Աւետարաններուն թիւով, յատկապէս Կիլիկեան աշխարհէն եկած աւանդութեան համաձայն, հաւատացեալներ եօթը հանգոյցներ կապեցին, զայն ամրացնելու համար իրենց դաստակին, մինչեւ Համբարձման տօնը:

ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ  
ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԸ

Քրիստոնեայ աշխարհին համար նուիրական Աւագ Ուրբաթը, իւրայատուկ գրաւչութեամբ կատարուեցաւ Անթիլիասի Մայր Տաճարին մէջ, Վեհափառ Հայրապետին հանդիսապետութեամբ: Մայր Տաճարի բեմին առջեւ վարդերով ու զանազան բուրուճակաւ ծաղիկներով յարդարուած Քրիստոսի խորհրդանշական գերեզմանին առջեւ ծնկաչօք, Վեհափառ Հայրապետը եւ միաբան հայրեր «Սուրբ Աստուած»ը երգեցին, կատարելով Քրիստոսի Թաղման խորհրդանշական Կարգը:

Վեհափառ Հայրապետը ներկայ բազմութեան ուղղելով իր հայրապետական պատգամը, օրուան խորհուրդին ընդմէջէն ցոյց տուաւ Քրիստոսի դատարկ գերեզմանին գօրութիւնը եւ անկէ ճառագայթող յարութեան շունչը: «Քրիստոսի դատարկ գերեզմանն է մեր քրիստոնէական հաւատքին հիմքը: Քրիստոսի յարութեան վրայ կը կանգնի



«ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԹ ... ՈՐ ԽԱԶԵՅԱՐ ՎԱՍՆ ՍԵՐ...»  
 ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԳԵՐԵՁՄԱՆԻՆ ԱՌՋԵՒ ԾՆՐԱԳԻՐ

եկեղեցին քրիստոնէական, այն հաստատ համոզումով ու յոյսով, որ բոլոր Անոր հաւատացողները նոյնպէս, յարուժեան երանութեան պիտի արժանանան: Անմահը մահկանացու բնութիւն զգեցաւ մարդուն համար, որպէսզի իր մահով՝ մահը պարտութեան մասնէ, ու իր յարուժեամբ մարդուն անմահութիւն պարգեւէ, ինչպէս կը գրէ աղօթասաց վարդապետը ժամագիրքին մէջ: Տառապանքէն ետք՝ յարութիւն, մահէն ետք՝ անմահութիւն: Ահա քրիստոնէական հաւատքէն բխած յոյսը՝ տրուած իւրաքանչիւր քրիստոնեայ մարդուն» շեշտեց Վեհափառ Հայրապետը:

Եկեղեցական արարողութեան աւարտին, Վեհափառ Հայրապետը Քրիստոսի գերեզմանին վրայ դրուած «Կենաց Փայտ»ի մասունքով օրհնեց ներկայ հազարաւոր հաւատացեալները: Հին աւանդութեան համաձայն հաւատացեալ

ժողովուրդը անցաւ Քրիստոսի դատարկ գերեզմանին տակէն, ապա ստացաւ Ս. Գերեզմանէն բաշխուող ծաղիկները, յարութեան ու անմահութեան յոյսը իր հետ տանելով իր տունը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ  
 Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի 16 Ապրիլին, Քրիստոսի Հրաշափառ Յարութեան Տօնին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Հայրապետական Ս. եւ Անմահ պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս: Մայր Տաճարի գանգերու ղօղանջով Վեհաբանէն ծայր առած թափօրը գլխաւորելով, Նորին Սրբութիւնը բարձրացաւ Մայր Տաճար, Ս. Զատիկուան առաւօտուն Մայրավանք հաւաքուած հաւատացեալներու բազմութեան մէջէն:



ՀԱԻՍՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԶԱՏԿԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ

*Ձատկական Հայրապետական իր պատգամին մէջ, Վեհափառ Հայրապետը Յարուցեալ Փրկչին յաղթանակով գօտեանդեց մեր ժողովուրդի զաւակները: Յատկապէս ներդրեանց ու*

*դժուարին ժամանակներու բովէն անցնող գաղութներու կեանքը նկատի ունենալով, Հայրաբար թելադրեց տոկուն ըլլալ, գորացնելով հաւատքը Քրիստոսի յարութեան վրայ հիմնուած, յաղթահա-*



ՎԵՂԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ՊԱՏԱՐԱԳԷՆ ԵՏՔ ՎԵՂԱՐԱՆԻ ՇՔԱՍՈՒՏՔԷՆ ԿՕՐՅՆԷ ՆԵՐԿԱՅ ԲԱԶՄՈՒԹԻՒՆԸ

*րելու համար ամէն դժուարութիւն: Մահուան վրայ տարած Քրիստոսի յաղթանակը, ամէն ժամանակներուն ապրող քրիստոնէաներու համար, Վեհափառ Հայրապետը նկատեց մնայուն յաղթանակ: «Քրիստոս պատմութեան մէջ օր մը յարութիւն առաւ, նիշդ է, սակայն Ան ամէն օր յարութիւն կ'առնէ Իրեն հաւատացողներու սրտին ու հոգիին մէջ: Մենք ամէն օր մեր հաւատքին գօրութեամբ Իր հետ կրնանք գերեզման մտնել մեր մեղքերով, ու բոլորին Յարութեան՝ Քրիստոսի հետ յարութիւն կ'առնենք անապականաբար, նոր մարդ դառնալով» ըսաւ Նորին Սրբութիւնը: Ի վերջոյ ազգովին Յարուցեալով գօրանալու եւ մեր ժողովուրդի յարութեան ճամբան շարունակելու կոչ ուղղելով, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Պէտք է ամուր պահենք մեր դաւանած հաւատքը, ինչպէս ամուր պահեցին գայն մեր նահատակները*

*նոյնիսկ իրենց արիւնով: Պէտք է ամուր պահենք մեր հաւատքը՝ հաւատարիմ մնալով աստուածաշնչական սկզբունքներուն, նշմարտութիւններուն ու արժէքներուն. հաւատարիմ մնալով Աւետարանը իրենց կեանքին մէջ թարգմանած մեր հայրապետներուն ու սուրբերուն: Պէտք է ամուր պահենք մեր դաւանած հաւատքը, որպէսզի քրիստոսաւանդ հաւատքով մեր կեանքը իմաստաւորենք ու պայծառացնենք Աստուծոյ յաւիտեանական փառքին համար» ըսաւ Վեհափառ Հայրապետը:*

*Ս. Զատիկուան առիթով Վեհափառ Հայրապետը շնորհաւորութիւններ ըտացաւ Հոգեւոր պետերէ եւ պետական ու քաղաքական ղեկավարներէ, որոնց շարքին Լիրանանի Հանրապետութեան նախագահ Էմիլ Լահուտ, Վարչապետ Տուատ Սինիորա, Հայաստան նախագահ Րոպերթ Քոչարեան եւ այլք:*



## ԱՊՐԻԼ 24-Ը ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Երկուշաբթի 24 Ապրիլ 2006-ին Անթիլիասի Մայրավանքին մէջ, Ապրիլեան Նահատակաց համար բարձրացուած աշխարհի առաջին կոթողին դիմաց, հարիւրաւոր հայորդիներ անգամ մը եւս ուխտեցին պահանջատէր մնալ մեր նահատակներու անմեռ կտակին:

Անթիլիասի Մայր Տաճարին մէջ մատուցուած Սուրբ եւ Անմահ պատարագէն ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի գլխաւորութեամբ հանդիսաւոր թափօրը ուղղուեցաւ դէպի Նահատակաց աճիւններով սրբազործուած մատուռը, ուր տեղի ունեցաւ Հոգեհանգրստեան Պաշտօն:

Լիրանանահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Եպս. Խաչերեան, որ Սուրբ

Պատարագը մատուցեց, ընթերցեց նաեւ Աւետարանը եւ ապա Վեհափառ Հայրապետը տեղացող անձրեւին տակ պատգամեց ներկայ հարիւրաւոր հայորդիներուն. «Նահատակներու օր է այսօր, ազգային պահանջատիրութեան օր եւ հաշուետուութեան օր: Այսպէս կը բնորոշեմ Ապրիլ 24-ը մեր ժողովուրդի օրացոյցին վրայ: Հաւաքուած ենք հաշուետուութեան ոգիով եւ պահանջով: Պահանջատիրութեան կը նշանակէ հաշուետուութիւն: Այսօր մեր նահատակները մեզմէ հաշիւ կը պահանջեն: Հայ աշակերտը պատրաստ է արդեօք հաշիւ տալու: Պատրաստ է հայ երիտասարդութիւնը հաշիւ տալու, թէ՛ ինք իր առօրեայ կեանքին մէջ ամբօրէն խարսխուած է



ՀԱՄԱՏԱՐԻՄ ՆԱԴԱՏԱԿՆԵՐՈՒ ԱՆՄԵՌ ԿՏԱԿԻՆ





ԿԸ ՔԱԼԵ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՅԱՐԹԱԿԱՆ, ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԿԱՆՉԻՆ ԱԿԱՆՋԱԼՈՒՐ

մեր նահատակներու անմեռ կտակին վրայ: Մեր նահատակները կը յիշեցնեն մեզի, թէ մենք պէտք է հաշիւ պահանջենք ցեղասպան թուրքիայէն, որ պետական ծրագրաւորումով ցեղասպանութիւն գործադրեց մեր ժողովուրդին դէմ 1915

թուականին: Եթէ ցեղասպան թուրքիան շարունակէ ուրանալ իր հայրերուն գործած ցեղասպանութիւնը՝ փաստեր կան, նոյնիմէն ցեղասպանին դարակներուն մէջ փակուած, որոնք կը վկայեն մարդկութեան դէմ գործուած այդ ոնիրին մասին:



ԱՒԵԼԻ ՔԱՆ 50 ՀԱԶԱՐ ՀԱՅՈՐԴԻՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՔԱՅԼԱՐՇԱԻՆ

Հարց կու տանք՝ ո՞ւր է արդարութիւնը, ո՞ւր է մարդկային իրաւունքներու յարգումը, ո՞ւր է նշմարտութեան բացայայտումը: Սակայն մենք պիտի շարունակենք ազգային պահանջատիրութեան մեր պայքարը, հաշիւ տալով մեր նահատակներուն եւ հաշիւ պահանջելով ցեղասպանէն: Ապրիլ 24-ը օր մը չէ մեր օրացոյցին վրայ. ամէն օր Ապրիլ 24 է ինքզինք հայ նկատող ու հայօրէն ապրող հայուն համար: Այսօր մեր ուխտը կը վերանորոգենք Հայաստանէն մինչեւ Անթիլիաս՝ մեր նահատակներու անիւններուն շուրջ համախմբուած: Աշխարհի ամէն անկիւններուն

մէջ կը վերանորոգենք մեր ուխտը, քալելու մեր նահատակներու քամբէն, հաւատարիմ մնալով անոնց կտակին: Այն քամբէն, որ մեզի պիտի տանի դէպի արդարութիւն, որովհետեւ այդ է նշմարտութեան տանող քամբան» *ըսաւ Վեհափառ Հայրապետը:*

*Ներկայ հազարաւոր բազմութիւնը այնուհետեւ հետեւեցաւ ծաղկեպսակի գետեղման, ու ապա ժողովրդային համախումբ քայլարշաւով ուղղուեցաւ դէպի Պուրճ Համուտի մարզադաշտը, մասնակից դառնալու ազգային հանդիսութեան:*



## ԱՊՐԻԼ 24՝ ՀԱՇՈՒԵՏՈՒՌԹԵԱՆ ՕՐ

Սույն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին պատգամին, զոր տուաւ Ապրիլ 24-ի առաւօտուն, սուրբ եւ անմահ պատարագէն ետք՝ Ապրիլեան Նահատակներու Մատրան առջեւ հոծ բազմութեան ներկայութեան: Վեհափառ Հայրապետի պատգամէն ետք սկսաւ ժողովրդային քայլարշաւը՝ Անթիլիասի Մայրավանքէն դէպի Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտը:

Ապրիլ 24 է դարձեալ. նահապակներու օր. ազգային պահանջաբիրութեան օր. այլ խօսքով՝ հաշուեպուրութեան օր:

Այսպէս կը բնորոշեմ եւ Ապրիլ 24-ը հայ ժողովուրդի կեանքի օրացոյցին վրայ: Այսպէս կը սահմանեմ այս օրը հայ ժողովուրդի պարմութեան գնացքին վրայ:

Ահա հաշուեպուրութեան գիպակցութեամբ դարձեալ հաւաքուած ենք Անթիլիասի Մայրավանքին մէջ, մեր նահապակներու անթաղ աճիւններուն շուրջ: Արդարեւ, 91 փարիներ առաջ, ցեղասպանութեան զոհ զացած մեր մէկուկէս միլիոն նահապակները այսօր մեզմէ հաշիւ կը պահանջեն: Պարբա՛սպ ենք հաշիւ փալու հաւաքքի ու հայրենիքի, իրենց մարդկային ու ազգային իրաւունքներուն համար արիւն թափած մեր նահապակներուն:

Պարբա՛սպ է հայ **աշակերտը** հաշիւ փալու մեր նահապակներուն, թէ՛ ինք դպրոցի գրասեղանին առջեւ ուսում ու գիտութիւն սրբանալու կողքին նաեւ կը սորվի, երբեք չմոռնալու համար, թէ իր ազգը 91 փարիներ առաջ զոհ է դարձած ցեղասպանութեան:

Պարբա՛սպ է հայ **երիտասարդը** հաշիւ փալու մեր նահապակներուն, թէ՛ իր կեանքի առօրեայ փաղպուկներուն ու հեփաքրքրութիւններուն մէջ իսկ իր գիպակցութեան խորքը անխախտ կը մնայ նահապակներուն անմեռ կրակը:

Պարբա՛սպ է հայ **մտաւորականը** հաշիւ փալու մեր նահապակներուն, թէ՛ իր գրիչով ու խօսքով արթուն ու քաջ պաշտպանը կը մնայ մեր նահապակներու իրաւունքներուն:

Պարբա՛սպ է հայ **հոգեւորականը** հաշիւ փալու մեր նահապակներուն, թէ՛ մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներուն հեփապնդումը նաեւ իր

հաւարքի առաքելութեան մաս կը կազմէ. եւ հերեւեաբար, քարոզիչն է ան մեր ժողովուրդի մարդկային իրաւունքներուն ու ազգային արժանապարտութեան:

Պարբանսը է ազգային **դեկալարը**, համայնքային թէ կուսակցական, պետական թէ հասարակական, հաշի փալու մեր նահապականներուն, թէ՛ ինք կոչուած է մեր նահապականներուն սրբազան դասը իր կեանքին ու գործին առաջնահերթութիւնը նկատելու ու պայքարելու ի խնդիր մեր ժողովուրդի իրաւունքներու ձեռքբերման:

Վերջապէս, պարբանսը է **խրատանջիւր հայ**, ինչ հանգամանքի փեր ալ ըլլայ, ինչ փարիք ալ ունենայ, այս երկրագունդին վրայ ուր որ ալ գտնուի, հաշի փալու մեր նահապականներուն, թէ՛ ինք չէ մոռցած ու երբեք պիտի չմոռնայ մեր նահապականները՝ անոնց յիշատակը պայքարի վերածելով, անոնց կրակը պահանջարկի թաղանթով, անոնց նահապականութենէն եկող պարգաւը իր ամենօրեայ կեանքին հետ շաղախելով:

Հայ ըլլալ կը նշանակէ մեր նահապականներուն կրակին հաւարարիմ մնալ:

Հայ ըլլալ կը նշանակէ մեր նահապականներու կրակին հաւարարմութեամբ՝ հաշի փալ մեր նահապականներուն:

Հայ ըլլալ կը նշանակէ մեր նահապականներու կրակին հաւարարմութեամբ՝ նաեւ հաշի պահանջել:

Այս խոր գիտակցութիւնը ու ամուր յանձնառութիւնը մեր ինքնութեան, մեր գոյապայքարին, մեր ներկային ու ապագային ամենէն զօրեղ հիմքերէն ու հզօր երաշխիքներէն մէկն է:

Արդ, այս օրը նաեւ հաշի պահանջելու օր է: Այն ազգը որ քաջութիւնը չունի հաշի փալու իր նահապականներուն ու միաժամանակ հաշի պահանջելու ցեղասպանէն, դարապարտուած է առյաւելը հեռանալու պարմութեան թարերաբեմէն:

Արդարեւ, մեր նահապականներու հաւարքով ու վճռակամութեամբ հզօրացած, 91 փարիներ մենք հաշի պահանջեցինք աշխարհէն: Նոյնիսկ մեր կեանքի ամենէն դժխեմ օրերուն, դժուար պահերուն ու ճակատագրական վայրկեաններուն չդադրեցանք երբեք հաշի պահանջել մեր ժողովուրդի իրաւունքներուն ի խնդիր:

Այսօր, մեր նահապականները դարձեալ կը յիշեցնեն մեզի, թէ՛ պէտք է հաշի պահանջենք թորք ցեղասպանէն, որ 1915-ին պետական մաշտապով ծրագրեց ու գործադրեց հայ ժողովուրդի ցեղասպանութիւնը: Պարմութեան փաստերը, նոյնիսկ ցեղասպանի փրամադրութեան փակ գրնուող փաստաթուղթերը, աղաղակող ու անժխտելի վկայութիւններ են ցեղասպանութեան պարմական իրողութեան: Որքան ալ ցեղասպանը փորձէ մոռացութեան մշուշին փակ պահել ցեղասպանութիւնը, որքան ալ ան փորձէ կեղծ վկայութիւններով այլափոխել ցեղասպանութեան իրողութիւնը ու փարողութիւնը, հայկական ցեղասպանութիւնը պիտի մնայ սեւ էջ սը Թուրքիոյ ժամանակակից պարմութեան մէջ: Հերեւեաբար, Թուրքիան պէտք է քաջութիւնը ունենայ իր իսկ պարմութեան հաւարարիմ մնալու՝ ընդունելով իր պատերուն կողմէ գոր-

ծաղրուած 20-րդ շարու առաջին ու ցարդ անպարիժ մնացած ցեղասպանութիւնը:

Այսօր, մեր նահապականները դարձեալ կը յիշեցնեն մեզի, թէ՛ պէտք է հաշիւ պահանջենք աշխարհէն: Մենք միշտ պիտի մնանք երախտագետ այն բոլոր պետութիւններուն ու եկեղեցիներուն, պարամբաններուն ու քաղաքական դէմքերուն, որոնք հաւարարիմ մարդկային իրաւանց միջազգային սկզբունքներուն ու արժէքներուն, պաշտօնապէս ճանչցան հայկական ցեղասպանութիւնը ու զօրակից դարձան հայ ժողովուրդի իրաւունքներուն: Մենք սակայն հաշիւ կը պահանջենք բոլոր այն պետութիւններէն, որոնք փակաւին չեն ճանչցած հայկական ցեղասպանութիւնը՝ ոմանք մարդկային իրաւանց նկատմամբ ունեցած իրենց անտարբերութեան պատճառաւ. իսկ ուրիշներ ցեղասպանը չնեղացնելու շահադիտական մօտեցումներէ մեկնած: Եթէ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը, եթէ պետութիւններ ու ազգեր հաւարարիմ են իրենց ստորագրած մարդկային իրաւանց, ցեղասպանութեան ու միջազգային օրէնքներուն առնչուած միջազգային ու միջ-պետական դաշնագիրներուն եւ ուխտերուն, պարտաւոր են ճանչնալու հայկական ցեղասպանութիւնը:

Այսօր, մեր նահապականները դարձեալ հարց կու փան. ինչո՞ւ հրէական հոլոքոստը, փասներկու փարիներ առաջ փեղի ունեցած Ռուսական ցեղասպանութիւնը, նախկին Եուկոսլաւիոյ ցեղասպանութիւնը, անցեալ դարու բոլոր ցեղասպանութիւնները միջազգային արեաններու կողմէ քննարկումի նիւթ դարձան եւ արդար պարիժ ու հարուցում ստացան, մինչ հայկական ցեղասպանութիւնը փակաւին անտեսումի կ'նշարկուի: Ինչո՞ւ ՄԱԿի հսկողութեան փակ հաստատուած միջազգային դարական արեանները կը շարունակեն լուռ մնալ հայկական ցեղասպանութեան նկատմամբ: Ինչո՞ւ, ինչո՞ւ ՄԱԿի հովանաւորութիւնը վայելող Ինեստրոն մակերեսային մօտեցում կ'որդեգրէ նոյն ջարդարարին կողմէ շարունակուող մշակութային ցեղասպանութեան նկատմամբ: Օրինակի համար, ինչո՞ւ ան Կիպրոսի Սուրբ Մակարայ վանքին ճաշարանի վերածումը, Նախիջեւանի Հին Զուղայի շրջանի պարամական խաչքարերու քանդումը, պարամական Հայաստանի ու Կիլիկիոյ հայկական վանքերու, եկեղեցիներու ու պարամական եւ մշակութային կոթողներու փճացումը կասեցնելու գծով գործնական քայլերու չի դիմեր ...:

Ապրիլ 24-ը հաշուետւութեան օր է: Ու հայուն համար ամէ՛ն օր Ապրիլ 24 է:

Այս հաւարարութեամբ ու յանձնառութեամբ պէտք է ապրի ու գործէ իւրաքանչիւր հայ: Մեր նահապականներու կրակը պէտք է մնայուն ներկայութիւն դառնայ մեր կեանքին մէջ, մեր կեանքին իմաստ ու նպատակ, խորք ու ընթացք փոռող ուժական ներկայութիւն:

Անցնող 91 փարիներու ընթացքին, մեր նահապականներու զաւակները ու թոռները ա՛յս գիտակցութեամբ գործեցին, պահանջեցին ու պայքարեցան: Պարի՛ իրենց:

Այսօր, մեր հաւաքական ուխտը կը վերանորոգենք շարունակելու մեր ազգային պահանջարիւրական պայքարը:

Մեր հաւաքական ուխտը կը վերանորոգենք մեր հայրենիքի հողին վրայ, Ծիծեռնակաբերդի բարձունքին:

Մեր հաւաքական ուխտը կը վերանորոգենք Անթիլիասի Մայրավանքին մէջ, համախմբուած մեր նահապականերու աճիւններուն շուրջ:

Մեր հաւաքական ուխտը կը վերանորոգենք աշխարհի բոլոր անկիւնները, ուր որ հայեր կ'ապրին հայօրէն:

Մեր հաւաքական ուխտը կը վերանորոգենք՝ մեր նահապականերուն միշտ հաշիւ փալու եւ ցեղասպանէն ու աշխարհէն միշտ հաշիւ պահանջելու վճռակամութեամբ:

Այս ոգիով ու փեսիլքով մասնակից դարձէք, սիրելի՛ հայորդիներ, քիչ յետոյ Մայրավանքէն ընթացք ստանալիք ժողովրդային մեծ քայլարշաւին:

Քալեցէք պահանջարհրական ոգիով՝ սակայն գուսպ կեցուածքով, Հայու անունը ու արժանապատուութիւնը միշտ բարձր պահելու գիտակցութեամբ:

Քալեցէք վառ յոյսով, ամուր կամքով ու խոր հաւատքով.

Քալեցէք միշտ միասնաբար.

Պայքարեցէք միասնաբար՝ ի խնդիր մեր ժողովուրդի երագներու իրագործման:

Այս է ճամբան հայութեան,

Այս է ճամբան յաղթութեան:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

Ապրիլ 24, 2006

Անթիլիաս



**ԼՈՒՐԵՐ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ**

**ԴՊՐԵՎԱՆՔԻՆ ՄԷՁ  
ԱՐԵՒԱԳԱԼԻ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՄԲ  
ԻՐ ԱԻԱՐՏԻՆ ՀԱՍԱԽ ՄԵԾ ՊԱՀՈՅ ՇՐՋԱՆԸ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին մէջ, Ուրբաթ 7 Ապրիլ 2006-ի առաւօտուն տեղի ունեցած Արեւազալի հանդիսաւոր ժամերգութեամբ, փակուամբ կատարուեցաւ այս տարուան մեծ պահոց ժամանակաշրջանին:

Ամէն Զորեքշաբթի եւ Ուրբաթ օրեր, Դպրեվանքի սարկաւազ եւ ժառանգաւոր սաներ վանական մենութեան մէջ, պահոց շրջանի հոգեթով ժամերգութիւնները վերածեցին խոկումի ու ինքնահարստացման առիթի:

Յատկապէս նորեկ սաներուն հա-

մար, այս շրջանը առիթ մը եղաւ իւրացնելու ժողովուրդին մատչելի եկեղեցական երաժշտութիւնը, եւ փորձառական շրջանի մը համար կատարելու զայն արարողութեանց ընթացքին: Նախկին սաները, նոյնիսկ փոքր դասարաններու ժառանգաւորներ, կանոնաւոր փորձերէ ետք երգեցին ծանր մեղեդիները՝ յորդորակները, անսխալ կատարումով:

Այս առիթով Դպրեվանքի Տեսչութիւնը իր գնահատանքը յայտնեց բոլորին, հայ եկեղեցական երաժշտութեան նկատմամբ անոնց ցուցաբերած բծախնդրութեան ու յաւելեալ ճիգին համար:

**ՏԱՍԸ ԿՈՒՍԱՆԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ  
ՏԱՍԸ ԴՊՐԵՎԱՆԵՑԻՆԵՐ ԼԱՊՏԵՐՆԵՐՈՎ ՄՏԱՆ ԵԿԵՂԵՑԻ**

Երեքշաբթի 11 Ապրիլ 2006-ի երեկոյեան, ՊիքՖայայի Ս. Աստուածածին մատրան մէջ տեղի ունեցաւ Տասը Կուսանաց Յիշատակի ժամերգութիւն: Հայ Եկեղեցւոյ ժամակարգութեան համաձայն տեղի ունեցած արարողութեան ընթացքին, ընթերցուեցան Ս. Գրային հատուածներ, երգուեցան օրուան խորհուրդը ներկայացնող շարականներ եւ կատարուեցան մասնաւոր աղօթքներ:

Աւագ Երեքշաբթիի խորհուրդը,

Յիսուսի պատմած մէկ առակին՝ Տասը Կուսանաց Յիշատակը կը խորհրդանշէ: Առ այդ, տասը նորեկ Դպրեվանքիներ, առակը պատմող Աւետարանի ընթերցման պահուն, յապտերներ ի ձեռին թափօրով մտան եկեղեցի եւ խորանի բեմին առջեւ շարուեցան: Իսկ այն պահուն երբ Աւետարանի ընթերցումը հասաւ այնտեղ ուր կ'ըսուէր թէ այդ տասը կոյսերէն հինգը իմաստուն էին եւ հինգը յիմար, իրենց բաժնուած թղթիկ-



ՏԱԱԸ ԿՈՒՍԱՆԱՑ ԴԵՐՈՎ, ՏԱԱԸ ԴՊՐԵՎԱՆԵՑԻՆԵՐ  
ՎԵՂԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՑԱՆ

ներուն վրայ «յիմար» բառը տեսնող աշակերտներ, մարեցին իրենց լապտերները: Իսկ «իմաստուն» թղթիկներ ունեցողները վառ պահեցին իրենց լապտերները եւ իրենց հետ վանքի սեղանատունը բերին գանոնք, Աւագ Երեքշաբթիի խորհուրդի վայելքը տարով վանարնակ բոլոր սաներուն:

Եկեղեցական արարողութենէն անմիջապէս ետք, ՊիքՖայայի Հայրապետական իր ամարանոցին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Տասը

կոյսերու դերը կատարող դպրեվանեցիները, եւ իր հայրական օրհնութիւնը տուաւ անոնց:

Խորհրդանշական խորունկ իմաստ ունեցող այս արարողութիւնը քրիստոնէական եկեղեցւոյ կեանքէն ներս, զգուշաւորութեան ու արթնութեան կոչմըն է համայն մարդկութեան ուղղուած, զգաստ եւ արթուն ըլլալու՝ Քրիստոսի Բ. գալստեան նախապատրաստուելով:



**ՀԵՀՈՄ**

**ՀԵՀՈՄ-Ի ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ  
ԾԻՊԷՅԼԻ ՄԷՋ**

Հայաստանեայց Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութիւնը (ՀԵՀՈՄ), «Թուչնոց Բոյն»ի մէջ, 29-30 Ապրիլին գումարեց իր տարեկան համագումարը: Շուրջ 25 երիտասարդ երիտասարդուհիներ, որոնք իրենց մասնակցութիւնը կը բերեն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընդմէջէն Հայ Եկեղեցւոյ առաքելութեան, քովքովի եկած հարստացուցին իրենց եկեղեցական ու կրօնական գիտելիքները, առաւել գիտակցութեամբ շարունակելու իրենց երթը:

Համագումարի ընթացքին դասախօսութիւն տրուեցաւ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեքմէզեանի կողմէ (Վարիչ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեկեղեցական Բաժանմունքին): Սրբազանը ներկայացնելով Քրիստոնէական եկեղեցիներու գլխաւոր ընտանիքները, սկսաւ անոնց ծագման պատմութենէն, հասնելով մինչեւ Հայ Եկեղեցւոյ հետ անոնց ունեցած տարբերութիւններուն: Նարեկ Սրբազան իր դասախօսութեան երկրորդ բաժնով խօսեցաւ Միջ-եկեղեցական շարժումին եւ Մեծի Տանն



ՉԵՐՈՍ-ԱԿԱՆՆԵՐ, ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՄԻՆ ՀԵՏ, ԾԻՊԷՅԼԻ ՄԷՋ

Կիրիկիրոյ Կաթողիկոսութեան ղերակատարութեան մասին: Ան բացատրեց թէ ինչպիսի՞ պատճառներով Եկեղեցին այսօր ունի զանազան ընտանիքներ: Սրբազանը ուսուցողական ոճով խօսեցաւ եկեղեցական տարբեր խմբաւորումներուն աստուածարանական գլխաւոր տարբերութիւններուն եւ միջ-եկեղեցական շարժումի պատմութեան եւ անոր գլխաւոր նպատակին՝ եկեղեցիներու տեսանելի միութեան մասին: Ան լայնօրէն անդրադարձաւ նաեւ այս համաշխարհային շարժումին կատարած կրօնական, մարդկային, ընկերային եւ այլ բազմերես աշխատանքներուն: Այս նիւ-

թերուն շուրջ ՀԵՀՈՄ-ականներու ունեցած հետաքրքրութիւնը, տրուած դասախօսութիւններուն տուին երկխօսութեան ու հարցազրոյցի բնոյթ: ՀԵՀՈՄի հոգեւոր խորհրդատու՝ Յուսիկ Վրդ. Մարտիրոսեան, յատուկ դասախօսութեամբ անոնց ներկայացուց Հայ Եկեղեցոյ եօթը խորհուրդները, անոնց պատմականը ու դերը քրիստոնէական կեանքին մէջ, միաժամանակ բացատրելով իւրաքանչիւրին կատարման եւ առնչուած զանազան գիտելիքներ: Երկօրեայ համագումարի ընթացքին տեղի ունեցան նաեւ Աստուածաշունչի սերտողութեան հարստացուցիչ պահեր:

**ՄԻՋ-ՎԱՐՓԱՐԱՆԱՅԻՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՑՈՒՄ**

Հայաստանեայց Եկեղեցոյ Համալսարանական Ուսանողական Միութիւնը (ՀԵՀՈՄ), գեղեցիկ գաղափարը ունեցաւ լիբանանահայ վարժարաններու աշակերտութիւնը քով-քովի բերելու եւ ընկերային միջոցառումի մէջ ունենալու ընդհանուր զարգացման մրցում մը:

Շարաթ 1 Ապրիլ 2006-ի երեկոյեան ժամը 5-ին Կաթողիկոսարանէն ներս, տեղի ունեցաւ մրցումը, որուն մասնակցեցան Ազգ. Եղիշէ Մանուկեան, Ազգ. Լ. եւ Սոփիա Յակոբեան, Ազգ. Յառաջ-Կիւլպէնկեան, Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան, Հայ Կաթողիկէ Հռիփսիմեանց, Հայ Կաթողիկէ Մեսրոպեան, Հայ Աւետարանական Գոլէճի (Պէյրուիթ), եւ Հայ Աւետարանական Շամլեան-Թաթիկեան վարժարանի

աշակերտներէն ներկայացուցչական խումբեր:

Դպրոցական դասաժամի պահերէն տարբեր, սակայն դաստիարակչական իմաստով նոյնքան կարեւոր միջոցառումի մէջ, մասնակից աշակերտներ զարգացման մրցումին ճամբով հարստացուցին իրենց կրօնական, աշխարհագրական, գրական, գիտական, մարզական, պատմական եւ Ֆիլմարուեստի մասին ունեցած ծանօթութիւնները:

Առաջին հանդիսացաւ, Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարանի աշակերտութիւնը ներկայացնող խմբակը, երկրորդ՝ Հայ Կաթողիկէ Ս. Հռիփսիմեանց վարժարանը եւ երրորդ՝ Ազգ. Եղիշէ Մանուկեան վարժարանը:

**ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ**

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՏՈՀԱՅԻ (ՔԱԹԱՐ) ԿՐՕՆՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

25-27 Ապրիլի 2006, Տոհայի մէջ, Քաթարի համալսարանի օրէնսգիտութեան եւ իսլամական ուսումնասիրութեան բաժանմունքի կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ Քաթարի էմիր Շէյխ Համատ Խալիֆա Ալ-Թանիի, տեղի ունեցաւ կրօններու երկխօսութեան միջազգային 4-րդ համագումարը՝ քրիստոնէական, իսլամական եւ մոսլիսական կրօններու արաբական աշխարհէն, Միջին Արեւելքէն, Եւրոպայէն, Ամերիկայէն ու Ծայրագոյն Արեւելքէն աւելի քան 135 ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Համագումարին գլխաւոր թեման էր «կրօնին դերը մարդու եւ ընկերութեան կերտման մէջ»:

Սոյն համագումարին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ մասնակցեցաւ Սեպուհ Արք. Սարգսեան (Առաջնորդ Թեհրանի Հայոց եւ անդամ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Քրիստոնէայ-Իսլամ Երկխօսութեան Յանձնախումբի), որ էմիրին եւ համագումարի կազմակերպիչներուն փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի ողջոյններն ու գնահատանքը այս համագումարի կազմակերպման համար:

Համագումարը քննարկեց համաշխարհայնացման, կրօնական ազատութեան, ընտանեկան դաստիարակութեան, կրօնական զանազանութեան եւ փոխադարձ յարգանքի, բնապահպանութեան, մարդկային իրաւունքներու եւ գիտական արդի նուաճումներուն



ՍԵՊՈՒՀ ՍՐԲԱԶԱՆ  
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՊԱՅՈՒՆ

**առնչուած հարցեր:**

Սեպուհ Արք. Սարգսեան դասախօսեց «կրօնն ու մարդկային իրաւունքները» նիւթին շուրջ, ընդգծելով մարդկային իրաւունքներու աստուածատուր հանգամանքը եւ Հայ Եկեղեցւոյ դերակատարութիւնը այս կալուածին մէջ: Սրբազանը նաեւ անդրադարձաւ Հայկական Յեղասպանութեան պատմական իրողութեան եւ կոչ ուղղեց Թուրքիոյ քաջութիւն ունենալու զայն որպէս պատմական իրողութիւն ճանչնալու:

Սեպուհ Արք. Սարգսեան նաեւ հանդիպում մը ունեցաւ քաթարահայութեան հետ եւ 27 Ապրիլի երեկոյեան դասախօսեց Հայկական Յեղասպանութեան մասին: Դասախօսութեան աւարտին, Սրբազանը պատասխանեց Կիլիկեան Հայրապետական Ս. Աթոռի դերակատարութեան մասին եղած հարցումներուն:

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ**

**Ս. ԶԱՏԿՈՒՎԱՆ ՇՆՈՐՀԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ս. Յարութեան Տօնին առթիւ, Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ստացաւ շնորհատրութիւններ եկեղեցիներու հոգեւոր պետերէ, նախագահներէ եւ բարձրաստիճան անձնատրութիւններէ: Ստորեւ կը ներկայացնենք անոնցմէ գլխատրներուն անուանացանկը.-

- Զօր. Էմիլ Լահուտ, Լիբանանի Հանրապետութեան Նախագահ
- Պրն. Նեայի Պրրի, Լիբանանի Խորհրդարանի Նախագահ
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց
- Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Պատրիարք Երուսաղէմի Հայոց
- Ամեն. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան, Պատրիարք Կ. Պոլսոյ
- Ն.Ս. Յովհաննէս-Պօղոս Բ. Պապ Հռոմէական Կաթոլիկ եկեղեցոյ
- Ամեն. Տ. Բարթողիմէոս Պատրիարք Կ. Պոլսոյ Յոյն Ուղղափառ եկեղեցոյ
- Ամեն. Տ. Թէոդորոս Պատրիարք Աղեքսանդրիոյ եւ համայն Ափրիկէի
- Ամեն. Տ. Զազգա Ա., Պատրիարք Անտիոքի եւ համայն Արեւելքի Ասորի եկեղեցոյ
- Ամեն. Տ. Ալեքսի Բ. Պատրիարք Ռուսիոյ Ուղղափառ եկեղեցոյ
- Ամեն. Տ. Գրիգորիոս Գ. Լահիամ Պատրիարք Անտիոքի եւ համայն Արեւելքի Յոյն Կաթոլիկ եկեղեցոյ
- Ամեն. Տ. Թէոկտիսթ Պատրիարք Ռումանիոյ Ուղղափառ եկեղեցոյ
- Ամեն. Տ. Անասթասիոս Պատրիարք Ալպանիոյ Ուղղափառ եկեղեցոյ
- Ամեն. Տ. Խանանիա Մարտինքա Դ. Պատրիարք Մալաբարի Ուղղափառ եկեղեցոյ
- Գերշ. Քրիսթոսոս, Արքեպիսկոպոս Աթէնքի եւ համայն Յունաստանի
- Գերշ. Էլիաս Աուտէ, Արքեպիսկոպոս Պէյրութի Յոյն Ուղղափառ եկեղեցոյ
- Գերշ. Մետրոպոլիտ Հերման, Արքեպիսկոպոս Ուաշինկթընի, Ամերիկայի ու Գանատայի
- Գերշ. Սոփրիոս Եպիսկոպոս, Մեու, Քորիա
- Գերշ. Դոկտ. Ուալֆկանկ Հիպեր եւ Դոկտ. Ռոլֆ Գոփփէ (EKD)
- Գերշ. Մետրոպոլիտ Քիրիլ, Մոսկուա
- Գերշ. Ապպա Մարկոս, Ֆրանսայի Ղպտի եկեղեցի
- Հոգշ. Ֆիլոպաթրո Հովի Լիբանանի Ղպտի Համայնքի
- Հոգշ. Ալեքսանդր, Ռուս Ուղղափառ եկեղեցոյ ներկայացուցիչ Արեւելքի
- Կրկէս Սալէհ, Ընդհանուր Քարտուղար ՄԱԵԽ-ի
- Պրն. Ռէմոն Ազար, Տնօրէն գաղտնի սպասարկութեան
- Կիլիկեան եւ Էջմիածնական Աթոռներու Թեմակալ Առաջնորդներ, դեսպաններ, Լիբանանի պետական երեսփոխաններ, նախարարներ եւ այլք

**ՆԱԽԻՋԵԲԱՆԻ ԽԱՉՔԱՐԵՐՈՒ ԳԾՈՎ  
ԻԲՆԵՍՔՈՅԷՆ ՆԱՄԱԿ՝  
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Այս ամսուայ ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ճամակ մը ստացաւ Իւնեսքոյի տնօրէնէն, Նախիջեւանի Հին Ջուղայի շրջանէն ներս Ազերիներու կողմէ քանդուած խաչքարերու հարցին շուրջ: «ՀԱՍԿ»ի նախորդ թիւով տուած էինք, թէ Ս. Աթոռիս Վեհափառ Հայրապետը, խաչքարերու քանդումին նոյն օրն իսկ, Ատրպատականի Հայոց Առաջնորդ Նշան Ծ. Վարդապետէն իմացած էր այս մասին ու խիստ ճամակ մը ուղղած՝ Իւնեսքոյի տնօրէնին, պահանջելով իր անմիջական եւ ազդու միջամտութիւնը:

Վեհափառ Հայրապետին ուղղուած ճամակին մէջ կ'ըսուի, թէ Իւնեսքոյի տնօրէնութիւնը «յատուկ կարեւորութեամբ նկատի ունեցած է Ձեր ճամակը եւ Ազրպէյճանի պատկան իշխանութիւններուն հետ կապի մէջ է տեղեկութիւններ եւ լուսաբանութիւններ ստանալու համար, ի խնդիր այս կարեւոր մշակութային ժառանգութեան պահպանման: Յարմար ժանամակին մենք տեղեակ պիտի պահենք Ձեզ Ազրպէյճանի հետ մեր ունեցած խորհրդակցութիւններու մասին»:



ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ



## ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՐԴ (ԳԱԶԱՆՃԵԱՆ)


1928-2006

Լիբանանահայ մտաւորական, հասարակական գործիչ եւ կրթական մշակ Յարութիւն Գեղարդ (Գազանճեան) իր մահկանացուն կնքեց 14 Մարտ 2006-ին Փարիզի մէջ: Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ ժան Կուժոնի Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ, Երեքշաբթի 21 Մարտ 2006-ին:

Յարութիւն Գեղարդ ծնած էր 1928-ին, Գոնիա: Փոքր տարիքին ընտանիքին հետ փոխադրուած է Հայէպ, ուր կարճ ժամանակ մը մնալէ ետք ընտանեօք հաստատուած են Պէյրութ: Նախակրթութիւն ստացած է Ս. Նշան Ազգային Վարժարանին եւ Համազգայինի Ճեմարանին մէջ: Տարի մը յաճախած է Ֆրանսական Լիսէ, ուրկէ շրջանաւարտ ըլլալէ ետք 1954-ին, Պէյրութի Ֆրանսական համալսարանէն վկայուած է իրբեւ ատամնաբոյժ-վիրաբոյժ:

Ազգային միութենական կեանքին սկսած է մաս կազմել շատ փոքր տարիքէն: 1936 թուականէն սկսաւ եղած է անդամ Հ.Մ.Ը.Մ.-ին, ապա դառնալով անոր ղեկավար մարմնի գործօն անդամներէն մին:

1965-1985, երկու տասնամեակներ շարունակ, Յարութիւն Գեղարդ մաս



կազմած է Լիբանանի Ազգային Իշխանութեան գանազան մարմիններուն: Եղած է Ազունիէի Ազգային Բուժարանի խնամակալ, «Ճոն Կուրճ» համալսարանական կրթաթոշակի յանձնախումբի եւ «Գէորգ Մելիտինեցի» Գրական Մրցանակի դատակազմի անդամ: Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը յաճախակիօրէն ընտրած է զինք իրբեւ իր ղեկավար անդամներէն մին:

Յարութիւն Գեղարդի զրական վաստակը կը բաղկանայ եօթ հատոր-

ներէ՝ պատմուածքներ, բանաստեղծութիւններ, առակներ եւ յուշեր: Իր գրչին կը պատկանին «Օտար երգիքներու տակ», «Ուռկանը», «Լիրանանեան համանուագ», «Գայլի աւետարան», «Ակօս հունձքը եւ հնձուորները», «Յիշատակի խնկաման», եւ «Ի խորոց սրտի»: Խմբագրած է նաեւ Տիգրան Ա. Քհնյ. Խոյսեանի «Նահատակ ցեղի անմահներ» գիրքը: Գեղարդ ունի բազմաթիւ անտիպ գործեր:

Իբրեւ հրապարակագիր, Յարութիւն Գեղարդ աշխատակցած է «Ազգակ Շարաթօրեակ»ին, «Ազգակ» օրաթերթին, «Ազգ»ին, «Սփիւռք»ին, «Յուսաբեր»ին եւ «Մարգիկ»ին: Խմբագրած է «Ակօս» (1948-1953) եւ «Բժիշկ» (1955-1985) թերթերը: Մաս կազմած է «Բագին»ի եւ «Մարգիկ»ի խմբագրութեանց: Հակառակ իր բազմազբաղ առօր-

եային, Յարութիւն Գեղարդ նաեւ ուսուցչական ասպարէզի ճամբով իր ծառայութիւնը մատուցած է մեր նոր սերունդին, դասաւանդելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին մէջ:

1988 թուականէն ի վեր Յարութիւն Գեղարդ հաստատուած էր Փարիզ: Անցնած տարուան ամբան, ՊիքՅայայի Ս. Աստուածածին վանքին մէջ կայացած յատուկ հանդիսութեան մը ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանով պատուեց Յարութիւն Գեղարդը, զնահատելով վաստակաշատ մտաւորականին բազմերես ծառայութիւնը մեր ազգին:

Հանգի՛ստ իր վաստակաբեկ աճիւններուն:



## **Մեծի ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆՈՒԷՐ ՍՏԱՅԱԾ ԳԻՐՔԵՐԸ**

(Մարտ - Ապրիլ 2006)

- «ԱԶԳԱՅԻՆ ՏՈՄԱՐ», Գեղամ Վարդանեան, Լոս Անճելըս, 1992:  
 «ԱԻԱԳ ՇԱՐԱԹ», Շնորհք Արք. Գալուստեան, Թեհրան, 2005, 2օր.:  
 «ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ», Ստանպոլ, 2006 :  
 «ԻՆՔՆՈՒՄՈՅՑ ՅԱՅԵՐԷՆ», Ստանպոլ, 2006:  
 «ԻՄԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐ», Վարդ Շիկահեր, Իսթանպոլ, 2006:  
 «75 ԱՄԵԱՅ ՅՈՒՇԱՍԱՏԵԱՆ ԼՈՒՍԱԴՈՐԻՉ ԴՊՐԱՑ ԴԱՍ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ», Երուանդ Գովան, Ստանպոլ, 2005:  
 «ԹԱՏԵՐԱՆԿԱՐՔ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ», Ամերիկա, 1914:  
 «ԵՐԳԱՐԱՆ», Կոստանդնուպոլիս, 1892:  
 «ԿԱՐՏԱՌՕՏ ԺԱՄԱԳԻՐՔ», Ամսդրտամ:  
 «ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՈՐ ԿՈՉԻ ԿԻՊՐԻԱՆՈՍ»  
 Ամերիկայի Արեւմտեան Թեմէն  
 «ԴԵՊԻ ԱՂԲԻՐԸ ԼՈՅՍԻՆ», Ամերիկա, 2005, 2 օր.:  
 «...ԻՍԿ ԾԱՓԵՐԸ ԵՐԿՆՔՈՒՄ», Նելլի Շահնազարեան, Երեւան, 2003:  
 «ՍԱՐԵՐԻԴ ՆՄԱՆ ԴՈՒ ՀՊԱՐՏ ԱՊՐԻՐ», Հրաչօ, 2004:  
 «ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՏ», Անդրանիկ Տաղլեան, Երեւան, 2004:  
 «ԽՈՐԱՆԱՐԴ», Շահպան, Պէյրութ, 2006:  
 «ՊՐԵՋԻԴԵՆՏԸ», Շահպան, Պէյրութ, 2006:  
 «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՇՇԱՑՈՂ ԲԱՐՏԻՆ՝ ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ», Թորոս Թորանեան, Հայլէպ, 2006:  
 «ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏ ԳՐՈՂԸ՝ ԳԵՈՐԳ ԱՃԵՍԵԱՆ 1932-1998», Թորոս Թորանեան, Հայլէպ, 2006:  
 «ՎԱՐԴԱՆԱՆՔ», Հրանդ Մարգարեան, Նիւ Եորք, 1978:  
 «ԵՆԹԱԵՍԷՆ ՓՇՐՈՒԱԾ», Հրանդ Մարգարեան, Երեւան, 2004:  
 «ՍՈՂՈՍՈՆ ԹԵՂԻՐԵԱՆ», Հրանդ Մարգարեան, Նիւ Եորք, 1980:  
 «ԵՐԲ ԱՐԵԻԸ ԿԸ ԼՈՒ», Հրանդ Մարգարեան, Երեւան, 2005:  
 «ԿԱՒ ԵՒ ԿԵԱՆՔ , ՈՒՂԵՒՈՐԸ», Կարէն Ա. Սիմոնեան, Հրանդ Մարգարեան, Պէյրութ, 2004:  
 «ԱՆՎԱԻԵՐ», Խորէն Արամունի, Երեւան, 2004:  
 «ՄԱՅՈՒՄՆ ԴԱՐ», Խորէն Արամունի, Լոս Անճելըս, 1996:  
 «ԴԱՐԻ ԾԱՆԱՊԱՐՅԸ», Խորէն Արամունի Կլէմտէյլ, 1999:  
 «ԹԱՏՐՈՆ», Խորէն Արամունի, 2002 :  
 «ՄԻ ԲՈՒՌ ԱՌՕՐԵԱՅ», Խորէն Արամունի, Լոս Անճելըս, 1996:  
 «ԱՆՎԵՐԱԴԱՐՉ ԱՊԱԳԱՅ», Խորէն Արամունի, Լոս Անճելըս, 2004:  
 «ԴՊՐՈՑԻ ԾԱՄԲԱՆ», Խորէն Արամունի, Կլէմտէյլ, 2005:  
 «ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ ԱՇԽԱՐՀԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՒ ԱՐՈՒԵՍԸ», Անահիտ Արամունի, Քէշիշեան, Երեւան, 1999:  
 «ՄԱՅՈՒՄՆ ՎԵՐՋԻՆ ԺՊԻՏԸ», Նուպար Չարխուտեան, Լոս Անճելըս, 2004:  
 «ԿԱՄՈՒՐՅԸ», Նուպար Չարխուտեան, Գալիֆորնիա, 2003:



- «ՍԻՐՈՎ», Չրաչօ, Երեւան, 2003:
- «ԴԵՊԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ ՀԱՄԱՏՔԻ ԵՒ ԱԶԳԻ», Ժագ Յակոբեան, Լոս Անճելըս, 2002:
- «ԳՐԻԳՐ ԵՎ ԵՎԵՆՏՈՒ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ, ՊՈՆԵՄԻ ԵՒ ՍԱՂՍՈՍՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ», Ժենիա Քալանթարեան, Ս. Էջմիածին, 1997, 2 օր.:
- «ԱՆԴՐԱԴՂԱՐՉՆԵՐ», Ժենիա Քալանթարեան, Երեւան, 2002:
- «ԱԼԵԿՈՇ ԽՈՐՔԵՐ», Նանոր Ինճեճիկեան, Հալէպ, 2006, 2 օր.:
- «ԴԻՏՈՒՄՆԵՐ ԴԱՏՈՒՄՆԵՐ», Երուանդ Ազատեան, Երեւան, 2006:
- «ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԱՂՕԹՔՆԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ», Պերճանուշ Պասմաճեան, Պէյրութ, 1984:
- «ԱՆՎԵՐՉ ՎԵՐԱԴՂԱՐՉ», Վարդան Մատթեոսեան, Երեւան, 2005:
- «ՍԻՐՏ ԲԱՆԱԿԱՆ », Համլետ Կարճիկեան, Երեւան, 1988:
- «ՍԻՐՈՅ ԵՐԿԻՐ», Համլետ Կարճիկեան, Երեւան, 2005:
- «ՍԻՐՈՅ ԲՈՅՐԸ... ՀԱՅԱՍՏԱՆԻ», Համլետ Կարճիկեան, Երեւան, 2003:
- «ՓՐՈՖ. ԽԱՉԵՐ ԳԱՆՈՒՍՏԵԱՆ ՍԱՐՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ», Խմբագիր՝ Անդրանիկ Տազետեան, Պէյրութ, 2005:
- «ՀԱՅ ԳՐՈՂԸ՝ ԾՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԶԱՅՎԿԻՐ», Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 6 օր.:
- «ՀԱՆԳՐՈՒՄՆԵՐ», Արեւշատ Աւագեան, Երեւան, 2003:
- «ԳՐԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄՆԵՐ», Սամուէլ Մուրադեան, Երեւան, Գիրք Ա., 2003:
- «ԵՐՈՒՄՆԵՐ ՕՏԵԱՆ», Սամուէլ Մուրադեան, Երեւան, 1996:
- «ԱՐԴԻ ՀԱՅ ՎԵՊԸ», Սեւակ Արզումանեան, Հատոր 5, Երեւան, 2004:
- «ՕՂԱԿԸ ՓԱԿՈՒՄ Է», Ալիս Յովհաննիսեան, Երեւան, 2003:
- «ԱՐԵԵԼՔԸ ՀԱՅ ԱՐՉԱԿՈՒՄ», Լիլիթ Արզումանեան, Երեւան, 1998:
- «ԷՋԵՐ ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ», Ասպետ Յ.Ս. Տօնապետեան, Պէյրութ, 2006, 2 օր.:
- «ԲԱՅ ՆԱՄԱԿ ԳՐՉԱԿԻՑ ԸՆԿԵՐՈՋՍ», Օքրո Օքրոյեան, Երեւան, 2004:
- «ՎԻՐԱՅԱՅ ԱՐՉԱԿԸ», Օքրո Օքրոյեան, Երեւան, 1997:
- «ՆԱՄԱԿՆԵՐ ԱՇԽԱՐՀԻՆ», Բոգդան Գեմբարսկի, Երեւան, 1990:
- «ԸՆՏՐԵԱԼՔ», Յովսէփ Ղազարեան, Պէյրութ, 1991:
- «ԺՈՒՄՆԱԳՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ», Դաւիթ Մուրատեան, Երեւան, 2005:
- «ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԷՆ ՆԵՐՍ», Սեւակ Յակոբեան, Պէյրութ, 2006:
- «ԳՐԱԲԱՐ ԱՒԵՏԱՐԱՄՆԵՐԻ ՇԱՐԱՅԻՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ», Մարտիրոս Մինասեան, Ժնեւ, 2006:
- «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԵԹՈՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ», Աշոտ Մարկոսեան, Երեւան, 2005:
- «ՄԵՍՐՈՊԵԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ», Հիլտա Փանոսեան, Երեւան, 2005:
- «ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ», Յովիկ Յովեան, Երեւան, 2004:
- «ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ», Անահիտ Աբրահամեան, Երեւան, 2004:
- «ԹԵՆԹԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ», Վա(Գ)ր, Գահիրէ, 1995, 2 օր.:
- «ԽԵԼՔԻՍ ՓՉԱԾՆԵՐԷՆ ԵՒ ԱՅԼ ԷՋԵՐ», Արմէն Ս. Մուրատեան, Պէյրութ, 2005, 2 օր.:
- «ԸՆԴԴԷՄ ԵՄՎԱՏԱԳՐԻ», Ղալամքեարեան, Կարապետ, Երեւան, 2005:
- «ՀԱՅԿԸ ԵՒ ՆՐԱ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ», Վ. Ղարիբեան, Երեւան, 2001:
- «ՀԱՅ ԵՍ ԴՈՒՆ», Վա(Գ)ր, Գահիրէ, 2001:
- «ԲԱՆԱՄԷՐ ՓԵՍԱՑՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԽՕՍԱԿԱՆԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ», Վա(Գ)ր, Գահիրէ, 2001:
- «ՆՍՏՈՒԿԸ ՄՆՏՈՒԿԻՆ ՎՐԱՅ», Վա(Գ)ր, Գահիրէ, 2001:
- «ՄԱՋԱՊՈՒՐԾ», Վա(Գ)ր, Գահիրէ, 2001:
- «ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԴԱՍԸ», Վա(Գ)ր, Գահիրէ, 2001:

- «ՆԵՐՔՆԱԶԳԵՍՏՈՎ ԿԻՆԸ ԵՒ ԿԵՍ ԱՌ ԶԱՐԻԻՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ», Վա(Գ)ր, Գահիրե, 2001:  
 «ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ», Վա(Գ)ր, Գահիրե, 2001:  
 «ՊՐԵԶԻԴԵՆՏԸ», Շահպան, Պէյրուք, 2006:  
 «ՄԹՆԱԼՈՅԱ», Շուշիկ Տասնապետեան, Պէյրուք, 2006:  
 «ՍԻՈՆԻ ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՐՈԹՈՔՈՆՆԵՐԸ», Երեւան, 2006.  
 «ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԻՒՍՆԵՐԸ», Թորգոմ Փօքթաճեան, Լուս Անճելոս, 2005, 3 օր.:  
 «ՄԱՐԿՈՍԻ ԵՒ ՂՈՒԿԱՍԻ ԳՐԱԲԱՐ ԱԲԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԼԵԶՈՒԱՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ», Մարտիրոս Մինասեան, Ժնեւ, 2005:  
 «ԳՐԱԲԱՐ ՏՊԱԳԻՐ ԱԲԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՅՈՒՆԱՐԷՆԻՑ ԵՒ ԻՐԱՐԻՑ, ԹԱՐԳԱՆԱԿԱՆ ԻՐԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ», Մարտիրոս Մինասեան, Ժնեւ, 2005:  
 «ARMENIAN HISTORY TIMELINE», Hagop and Marylyn Arshagouni, California, 1998.  
 «POSTAGE STAMPS OF ARMENIA», Artashes Taroumian, 2005.  
 «THE ARMENIAN CHURCH AND THE OTHERS», Torkom Postajian, 2005.  
 «MIRRORS», Herand M. Markarian, New York, 1996.  
 «SELECTED POEMS», Jacques Hagopian, Cairo, 1988.  
 «ԽՈՐՀՈՒՐԴ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ DIVINE LITURGY», Պատրաստեց Կոմիտաս Քին. Փանոսեան:  
 «ԿԻԼԻԿԻԱՅԷՆ...ԱՆԹԻԼԻԱՍ ԱՄԱՅՈՒԹԵՆԷ...ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՈՐԲԱՆՈՅԷ...ԴՊՐԱՆՈՅ, Չոլոյեան, Օշական Արք., 2005:  
 «ԾՐԱԳԻՐ PROGRAM», էջՄԻԱԾԻՆ, 2003 :  
 «ՔԱՐԱԶԱՅՆ ՊԱՏԱՐԱԳ», Հրանդ Մարգարեան, Նիւ Եորք, 1998:  
 «ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ », հատոր 1, Երեւան, 1986:  
 «ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ », հատոր 2, Երեւան, 1986:  
 «ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ », հատոր 3, Երեւան, 1987:  
 «ԲԱՆ Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ ԱՌ ՆԱՐԵԿԱՅԻ», Երեւան, 2003:  
 «ԱՊԱՐԱՆՔԻ ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ», Սուրբ Գրիգոր Նարեկացի, Երեւան, 2005:  
 «ԱՅԲԵՆԱԿԱՆ ԱՍՈՅԹՆԵՐ», Լիբանան, 2006:  
 «ՍՈՂՈՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ», Անահիտ եւ Ընտանիքի Պաշտպանութիւն Միավորում, Երեւան, 2003:  
 «ՍԱՏԱՆԱՅԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ», Անահիտ եւ Ընտանիքի Պաշտպանութիւն Միավորում, Երեւան, 2003:  
 «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՇՏԱՍՈՒՆՔՆԵՐԸ, Անահիտ եւ Ընտանիքի Պաշտպանութիւն Միավորում, Երեւան, 2006:  
 «ՀԱՅԵՐԷՆԸ ԱՆԱԴԱՐՏ», Վալերի Միրզոյեան, Երեւան, 2005:  
 «ՅՈՒՇԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ», Խոսրով Թիւֆիւնճեան, Իտալիա, 2006:  
 «ԿԱՍՈՒՐՁԸ 2004 - 2005», Տարեգիրք, 2005:  
 «RANDOM AGENDA», Los Angeles, 2005:  
 «ORTHODOXIA 2006», 2c.  
 «DIRECTORY OF THE ORIENTAL ORTHODOX CHURCHES OF THE MIDDLE EAST COPTIC - SYRIAN - ARMENIAN.  
 «WORLD COUNCIL OF CHURCHES »  
 «LA SAINTE MESSE THE DIVINE LITURGY», MONTREAL, 2005.  
 - "مختارات من الشعر الأرمني عبر العصور"، الترجمة فاروجان كازانجيان، القاهرة، 1997، نسختين.

**ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ**

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ԱՐԽԻԻԱՏՈՒՆԸ  
ՎԵՐԱԳԱՍԱԽՈՐՄԱՆ  
ԸՆԹԱՑՔԻ ՄԷՋ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի արխիւատունը գիտական մօտեցումով ամբողջական ու հիմնական վերադասաւորման ընթացքի մէջ է՝ Ն.Ս.Օ. Տ.Տ Արամ Ա. Կաթողիկոսի անմիջական հսկողութեան տակ: Կաթողիկոսարանին ընդհանուր վերանորոգման ու բարեզարդման աշխատանքներու ծիրէն ներս, առաջին անգամ ըլլալով, յատուկ բաժանմունք մը հաստատուեցաւ արխիւներուն համար: Արխիւատան հաստատման ու անոր ներքին կահաւորման բարերարութիւնը ստանձնեց Գալուստ Կիւլպէնկեան հաստատութեան Հայկական Բաժանմունքը անոր երկարամեայ տնօրէնին՝ Դոկտ. Զաւէն Եկաւեանի քաջալերանքով: Արխիւատունը կը գտնուի Կաթողիկոսարանի մայր մուտքին աջ կողմը, լայն տարածութեան վրայ հաստատուած: Ան օժտուած է յատկապէս Իտալիայէն եկած արխիւներու յատուկ պահարաններով: Արխիւատան շինութեան առաջ, արխիւներու ընդհանուր դասաւորումը կատարեց Տիար Գրիգոր Շահինեան, այժմ արխիւատան ընդհանուր պատասխանատուն է Եղիշէ Ծ. Վրդ Մանգիկեան, իսկ անոր օգնականն է Մովսէս արեղայ Պոյաճեան:

Շուրջ հինգ ամիսներ առաջ Վեհափառ Հայրապետին հրաւերով Անթիլիաս ժամանեց Հայաստանի պետական արխիւատան ընդհ. տնօրէն Ամատունի Վիրապեան: Պարոն Վիրապեան ընդհանուր ուսումնասիրութեան ենթարկեց ար



խիւատունը եւ ապա Վեհափառ Հայրապետին գրաւոր իր առաջարկները ներկայացուց արխիւատունը հիմնական դասաւորումի ենթարկելու գծով: Այժմ պարոն Վիրապեան դարձեալ կը գտնուի Անթիլիաս իր եօթը աշխատակիցներով: Անոնք լծուած են արխիւատան ընդհանուր դասաւորման մանրակրկիտ աշխատանքին, որ պիտի աւարտի Մայիս ամսը վերջաւորութեամբ:



Կիլիկիոյ Կաթողիկոսարանը հարուստ արխիւներ ունի կապուած Հայոց Յեղասպանութեան, անոր յաջորդող տարիներու մեր ժողովուրդի պարգած վիճակին, Հայ Դատի գծով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կատարած աշխա-

տանըներուն, Վեհափառ Հայրապետներու ունեցած թղթակցութիւններուն, ազգային ղեկավարներուն ու մտաւորականներու աշխատասիրութիւններուն ու թղթակցութիւններուն եւ ընհանրապէս Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերակատարութեան Սփիւռքի մէջ: Նաեւ Արխիլատունը ունի նկարներու ու ֆիլմերու ճոխ հաւաքածոյ մը: Ան արդէն իսկ բաց է հանրութեան առջեւ: Հայաստանէն ու Սփիւռքէն Հայ թէ՛ օտար բանասէրներ, գիտնականներ Անթիլիաս կուգան ուսումնասիրութիւններ կատարելու արխիլատունէն ներս:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԳԷՏ  
ՏՈՆԱԼՏ ՊԼՈՔՍԱՄԸ**

Հինգշաբթի 27 Ապրիլ 2006-ի առաւօտուն, Վեհափառ Հայրապետը իր գրասենեակին մէջ ընդունեց ցեղասպանութեան մասնագէտ Տոքթ. Պլոքսամը: Էտիմպուրկի համալսարանի մէջ ցեղասպանութեան դասախօս Տոքթ. Պլոքսամ հեղինակ է բազմաթիւ յօդուածներու ու գիրքերու, որոնց կարգին նաեւ` Հայոց Յեղասպանութիւնը շօշափող հատորի մը` «The Great Game of Genocide – Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians»: Դասախօսը հրաւիրուած էր Լիբանան Ամերիկեան համալսարանի Հայ ուսանողներու վարչութեան կողմէ` դասախօսութիւն մը տալու Հայոց Յեղասպանութեան մասին:

Ամերիկեան համալսարանի Հայ ու-



սանողներու վարչութեան ներկայութեան Տոքթ. Պլոքսամը ընդունելով` Արամ Ա. Կաթողիկոս նախ իր գնահատանքը յայտնեց Հայ ուսանողներուն, որոնք գեղեցիկ գաղափարը ունեցած էին հանրածանօթ եւ օտարազգի դէմք մը հրաւիրել Լիբանան, խօսելու համար Հայոց Յեղասպանութեան մասին: Վեհափառ Հայրապետը նաեւ իր ջերմ գնահատանքը յայտնեց դասախօսին, որ յատուկ տեղ է տուած իր ուսումնասիրութիւններուն ու հրապարակային թէ՛ համալսարանական դասախօսութիւններուն մէջ` Հայոց Յեղասպանութեան:

Ապա Վեհափառ Հայրապետը շուրջ ժամ մը տեւող հանդիպման ընթացքին իր տեսակէտները պարզեց Հայոց Յեղասպանութեան ուսումնասիրութեան, միջազգային ընտանիքի ծանօթացման ու անոր ճանաչման գործընթացին առնչուած: Այս ծիրէն ներս` Վեհափառ Հայրապետը շեշտեց անհրաժեշտութիւնը յատուկ կարեւորութիւն տալու անպատժելիութեան հարցին, միջազգային օրէնքի տրամադրութիւններուն, ինչպէս նաեւ Հռոմի եւ Պրիքսէլի միջազգային դատական ատեաններու եւ անոնց ընծայած կարելիութիւններու լոյսին տակ` վերաբեւոյնի ենթարկելու Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը, անկէ հանգրուանային կերպով անցնելու համար հատուցման հարցի քննարկման:

Տոքթ. Պլոքսամ բաժնեց Վեհափառ Հայրապետին մօտեցումները, իր կարգին շեշտելով` Հայոց Յեղասպանութեան քննարկման մէջ նաեւ մատնանշելու այն պետութիւնները, որոնք իրենց լռութեամբ մեղսակից կը նկատուին Հայ ժողովուրդին դէմ գործադրուած ցեղասպանութեան:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ  
ԽՈՐՀՈՒՐԳԻ ԸՆԴՀ. ՔԱՐՏՈՒՂԱՐԸ**

Ուրբաթ 28 Ապրիլ 2006-ի առաւօ-

տուն, Վեհափառ Հայրապետին հետ երկար հանդիպում մը ունեցաւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի ընդհ. քարտուղար Դոկտ. Կրկէս Սալէհը: Հանդիպման ընթացքին քննարկուեցան երկու հարցեր: Առաջին՝ Եգիպտոսէն ներս վերջին շրջանին ստեղծուած կացութիւնը՝ քրիստոնէայ-իսլամ յարաբերութեանց ծիրէն ներս: Անցնող երկու շաբաթներուն ընթացքին Աղեքսանդրիոյ մէջ Ղաթի եկեղեցիներ հրկիզուած էին եւ որոշ բախումներ տեղի ունեցած՝ քրիստոնէաներու ու իսլամներու միջեւ: Այս ուղղութեամբ, Շնուտա Գ. Պատրիարքը ընդհանուր քարտուղարին ճամբով Վեհափառ Հայրապետին կը յայտնէր իր շնորհակալութիւնը՝ Նորին Սրբութեան ցուցաբերած զօրակցութեան համար, այս առիթով նաեւ իր կարգ մը տեսակէտները կը փոխանցէր Վեհափառ Հայրապետին: Արամ Ա. Կաթողիկոս կարեւորութեամբ շեշտեց քրիստոնէայ-իսլամ համակեցութիւնը աւելի ամուր հիմերու վրայ դնելու անհրաժեշտութիւնը՝ առաջը առնելու համար նման տխուր դէպքերու:

Հանդիպման ընթացքին նաեւ քննարկուեցան Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին առնչուած խնդիրներ: Ընդհ. քարտուղարը Վեհափառ Հայրապետին պարզեց Խորհուրդին դիմագրաւած գլխաւոր մտահոգութիւնները՝ ունենալու համար Նորին Սրբութեան տեսակէտները: Արամ Ա. Կաթողիկոս թելադրեց, որ Խորհուրդին ներկայ կառոյցը պէտք է իր պաշտօնէութեամբ ու վարչական կառոյցներով աւելի փոքրանայ՝ շեշտը դնելով դէպի եկեղեցիներ ուղղուած ծառայութեան վրայ: Այս ծիրէն ներս Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ նկատեց հիմնական փոփոխութիւններու ենթարկել Խորհուրդի ծրագրային առաջնահերթութիւնները ու աշխատանքային ոճը: Նաեւ Վեհափառ Հայրապետը շեշտեց՝ շրջանային ու միջազգային յարաբերութիւնները աւելի

կազմակերպելով հանդերձ առաջանահերթութիւն տալու տեղական մակարդակին, «որովհետեւ եկեղեցին ինքզինք կ'արտայայտէ տեղական մակարդակի վրայ ու ժողովուրդի կեանքին մէջ» ըսաւ ան:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ  
MIDDLE EAST ՕԳԱՆԱԽԱՅԻՆ  
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆԸ**

Երեքշաբթի 18 Ապրիլ 2006-ի առաւօտուն, Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ իր գրասենեակին մէջ ընդունեց այցելութիւնը Middle East օդանաւային ընկերութեան ընդհանուր տնօրէն Սոհամմէտ Հուֆին: Հանդիպման ներկայ էր նաեւ Լիբանանի թեմի քաղաքական ժողովի ատենապետ Յարութիւն Սամուէլեան:

Հանդիպման ընթացքին խօսակցութիւնները առաւելաբար կեդրոնացան Middle East ընկերութեան առնչուած հարցերուն եւ այդ ծիրէն ներս Հայ համայնքի զաւակներուն ստանձնած զանազան պաշտօններուն: Վեհափառ Հայրապետը յիշեցուց, թէ անցեալին Middle East-ի մէջ մեծ թիւով Հայեր կ'աշխատէին թէ՛ որպէս օդաչու եւ թէ՛ վարչական եւ այլ պատասխանատուութիւններով: Վեհափառ Հայրապետը իր զարմանքը ու մտահոգութիւնը յայտնեց Հայերու թիւի նուազումին գծով եւ պահանջեց, որ անհրաժեշտ կարեւորութիւնը տրուի Հայ համայնքի զաւակներուն կողմէ կատարուող դիմումներուն:

Middle East-ի ընդհ տնօրէնը մեծ գնահատանքով արտայայտուեցաւ Հայ պաշտօնեաներու ցուցաբերած պարկեշտութեան ու աշխատասիրութեան մասին եւ խոստացաւ իր կարելին ընել նոր Հայ պաշտօնեաներ ընդունելու համար: Middle East-ի օդանաւային ընկերութեան ներս պաշտօնի մը դիմելու համար անհրաժեշտ է Լիբանանեան պետական Բ. Պաքալորեան:

**ՀՆՁԱԿԵԱՆ, Հ.Յ.Գ. ԵՒ ՌԱՄԿԱՎԱՐ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՆԵՐԿԱՅԱ-  
ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ  
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄՕՏ**

Այս ամսուան ընթացքին, մեր ազգային կեանքէն ներս գործող երեք կուսակցութեանց՝ Հնչակեան, Հայ Յեղափոխական Դաջակցութեան, եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի վարիչ մարմինները առանձնաբար հանդիպումներ ունեցան Վեհափառ Հայրապետին հետ: Հանդիպումներուն ընթացքին յատուկ քննարկումի միջոց դարձան ընդհանրապէս մեր ազգային կեանքը յուզող հարցեր, Հայաստան-Սփիւռք գործակցութեան հետ աղերս ունեցող խնդիրներ, եւ յատկապէս Լիբանանի այժմու կացութիւնը: Անոնք տեղեակ պահեցին Վեհափառ Հայրապետը իրենց կուսակցութեանց մտահոգութիւններուն ու մօտեցումներուն մասին:

Վեհափառ Հայրապետը իր կարգին մեծապէս գնահատեց երեք կուսակցութիւններու գործօն ներկայութիւնը ու դերակատարութիւնը մեր ազգային կեանքէն ներս, ողջունեց Լիբանանեան երկխօսութեան երեք կուսակցութեանց միասնական մասնակցութիւնը, կարելորութեամբ շեշտեց մեր հաւաքական կեանքէն ներս գործակցութեան հրամայական անհրաժեշտութիւնը՝ թէ՛ գաղութներու կեանքէն ներս, թէ՛ համասփիւռքեան մակարդակի վրայ, եւ թէ Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց ծիրէն ներս: Վեհափառ Հայրապետը յիշեցուց դարձեալ, թէ միասնականութիւնը միաձեւութիւն չէ. տեսակէտներու ու մօտեցումներու տարբերութիւնը բնական է ու հարստացուցիչ, պայմանաւ որ մեր ազգը յուզող հիմնական հարցերու շուրջ մեր բոլոր կառոյցները ըլլան միասնական:

Եւ այսօր, Հ.Յ.Գ. եւ Ռամկավար կուսակցութեանց վերին մարմիններու

ներկայացուցիչները եւս այցելած էին Վեհափառ Հայրապետին եւ խորհրդակցութիւններ ունեցած՝ իր հետ:

**ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ  
ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ  
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Լիբանանի երիտասարդական միութիւնները ներկայացնող կեդրոնական վարչութիւնը երեքշաբթի 18 Ապրիլ 2006-ի առաւօտուն պաշտօնական այցելութիւն մը տուաւ Վեհափառ Հայրապետին: 14 հոգիներէ բաղկացած վարչութեան մաս կը կազմեն Լիբանանի բոլոր համայնքներուն ներկայացուցիչները: Վարչութեան ներկայ ատենապետն է Փօլ Այանեան:

Հանդիպման ընթացքին արծարծուեցան առաւելաբար Լիբանանի ներկայ կացութեան հետ աղերս ունեցող հարցեր: Արամ Ա. Կաթողիկոս ընդհանուր գիծերով պարզեց ներկաներուն Հայ համայնքին սկզբունքային տեսակէտները Լիբանանը յուզող հարցերու շուրջ: Ան շեշտեց երկխօսութեան կարեւորութիւնը ներքին հարցերը փոխադարձ հասկացողութեամբ լուծելու համար, ինչպէս նաեւ Վեհափառ Հայրապետը յիշեցուց, որ կառավարութիւնը անհրաժեշտ է որ այնպէս գործէ որ կարենայ բարւոջ լուծում մը տալ ժողովուրդին տնտեսական ու ընկերային դժուարութիւններուն:

**ԼԻԲԱՆԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ (ԷԼ. ԷՅ. ԵՈՒ.)  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԱՅՑԵԼԵՑԻՆ  
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Լիբանանի Ամերիկեան համալսարան (Էլ. Էյ. Եու. Պէյրութ) յաճախող շուրջ 80 հայ ուսանող - ուսանողուհիներ երեքշաբթի 18 Ապրիլի երեկոյեան

այցելեցին Վեհափառ Հայրապետին: Անոնք եկած էին Անթիլիասի Մայրավանք՝ ստանալու համար Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը, իբրև անդամներ շուրջ տարիէ մը ի վեր վերոյիջեալ համալսարանէն ներս գործող Հայկական Ուսանողական Ակումբին:

Անոնք եկած էին նաև ստանալու օրհնութիւնը Վեհափառ Հայրապետին, նախքան իրենց Ակումբին պատկանող շուրջ 36 ուսանողներուն Հայաստան մեկնիլը: Սոյն շրջապտոյտին նախաձեռնած էր 3 հոգինոց յանձնախումբ մը, որուն անդամներն են Պրն. Յակոբ Փանոսեան (համալսարանի դասախօս եւ ակումբի խորհրդատու), օրդ. Ռոզալին Կէօզիլպէօյիւքեան (էլ. էյ. Եու. Պէյրուք

- ուսանող) եւ պրն. Կի Մարգարեան (էլ. էյ. Եու. Ժիպէյլ - ուսանող):

Նորին Սրբութիւնը հայրական սիրոյ ընդունելով ուսանողները, մեծապէս գնահատեց նախաձեռնութիւնը, եւ իր հայրապետական օրհնութիւնը փոխանցելով, կատարեց շարք մը թելադրութիւններ:

Տարբեր շրջանակներէ ու միջավայրերէ եկած այս ուսանողները՝ համախմբուած, խորապէս գիտակից իրենց հայկական պատկանելիութեան ու արմատներուն, Հայրենիքի մէջ մօտէն պիտի ծանօթանան իրենց մշակոյթին ու պատմութեան: Անոնք պիտի այցելեն տեսարժան վայրեր, վանքեր ու յուշարձաններ:



**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ**  
**Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ**

ՇԱԲԱԹ, 1 ԱՊՐԻԼ, 2006: Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց Հոգչ. Տ. Սիփան Վրդ. Քէչէճճեան:*

ԿԻՐԱԿԻ, 2 ԱՊՐԻԼ, 2006: ԳԱԼՍՏԵԱՆ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց Գերշ. Տ. Տիրայր Եպս. Փանոսեան:*

ԿԻՐԱԿԻ, 9 ԱՊՐԻԼ, 2006: ԾԱՂԿԱԶԱՐԴ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեմէմէգեան:*

ԱԽԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, 13 ԱՊՐԻԼ, 2006: ՅԻՇԱՏԱԿ ՎԵՐՁԻՆ ԸՆԹՈՒԲԻ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց Հոգչ. Տ. Անանիա Աբղ. Գուճանեան:*

ՇԱԲԱԹ, 15 ԱՊՐԻԼ, 2006: ՀՐԱԳԱԼՈՅՑ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց Գերպ. Տ. Նորայր Ծ. Վրդ. Աշրգեան:*

ԿԻՐԱԿԻ, 16 ԱՊՐԻԼ, 2006: Ս. ԶԱՏԻԿ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ իր հայրապետական պատգամը փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս:*

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 17 ԱՊՐԻԼ, 2006: ՄԵՌԵԼՈՑ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց Հոգչ. Տ. Յուսիկ Վրդ. Մարտիրոսեան:*

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ, 23 ԱՊՐԻԼ, 2006:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց Հոգչ. Տ. Յուսիկ Վրդ. Մարտիրոսեան:*

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 ԱՊՐԻԼ, 2006: ՅԻՇԱՏԱԿ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց Գերշ. Տ. Գեղամ Եպս. Պաչերեան:*

ԿԻՐԱԿԻ, 30 ԱՊՐԻԼ, 2006: ՅԻՇԱՏԱԿ ԱՇԽԱՐՀԱՄՍՏՐԱՆ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց Հոգչ. Տ. Մակար Աբղ. Աշգարեան:*